


ԷԶՄԻԱԾԻՆ



Դ
2013




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

Երեւ

2013

Ս. Էջմիածին



Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ



ԽՄԲԸԳՐԱԿԱՆ

«Եւ աւել Աստուած ց'ապին.
“Ո՛ր է Նաբէլ եղբայր քո”» (Ծննդ. Դ. 9):

1915-2015 թթ....Նայոց Մեծ Եղեռնի հարյուրամյա տարելիցին մնացել է ողիղ երկու տարի: Մեկ դար առաջ գործված սոսկալի հանցագործության պարմական բովանդակությունը թեև փոխված է, սակայն իր դիպրոմնավորությամբ մարդկային *ցեղի* հանդեպ նախնին աշօր դեռևս շարունակում է արյունով պղծել ցավից ու վշտից աղաղակող Մայր հողը՝ Նոթբոստ, Բոսնիա, Ռուանդա...

Եւ այս բոլոր սահմեկեցուցիչ տեսարաններին ինչպես ոչ վաղ անցյալում, այնպես էլ այսօր ականապես ենք քրիստոնյաներս, ում համար սպանությունը, մարդու ոչնչացումը ոչ թե լոկ իրավաբանական-քրեական հանցագործություն է, այլ մարդու մեջ արարչավանդ գործությամբ դրված աստվածային պարկերի ուրնահարում: Այս իմաստով քրիստոնեական հավաքի սկզբունքային դրույթը շար հստակ է. ցեղասպանություն է ինչպես մեկ միլիոնի, այնպես էլ մեկի բնաջնջումը: Չէ՞ որ Աբելի սպանությունը լոկ մեկ մարդու ոչնչացում չէր. Աբելի մեջ մարմնացած աստվածաշարությունը, սերն ու հավաքն արմատախիլ անող ձեռքին նույն հաջողությամբ կարող ենք անվանել ցեղասպան յաթաղան, բաբբարոս, անտիսեմիտ, հայապոյաց, կոմունիզմ, շովինիստ եւն:

Շար հաճախ Նայոց Եկեղեցու՝ ցեղասպանության հանդեպ դիրքորոշումը «սահմանափակում» ենք լոկ Նայ ազգի արդար պահանջարիքության ու իրավափորության ծիրից ներս: Անշուշտ, մեկ ու կես միլիոնից ավելի հայերի աննախադեպ սպանող ազգայնական պարկանկության հողի վրա ծավալվող ծրագրված ու կանխամտածված սպանություն էր: Բայց հայի ցեղասպանությունը, քրիստոնեական հավաքի ու բարոյականության տեսակերից, նաև եղբայրասպանություն էր՝ Կայենի ու Աբելի փոխհարաբերության պարկերին արված ողիղ համեմատականով. «Ամենայն որ արեւայ գեղբայր իր մարդասպան է» (Ա. Յովհ. Գ. 15): Ցեղասպանության իրականությունը, հետևաբար, չի վերջանում միայն 1915-1923 թթ. գործված սոսկալի ոճիւրներով: Ապա ի՞նչ անուն տանք 1950-ական թվականներից մինչև այսօր Թուրքիայում եւ նրա կրթներ եղբոր՝ Ադրբեջանի բնակչության մեջ ծավալվող եւ օրըսօրե անագնացող արեւոյանը՝ մարդասպանությո՛ւն, պարերագմի ու նոր ցեղասպանության նախադրո՛ւ, թե՛ պարզապես

պարամական և կրոնական ճշմարտությունները կուրորեն ու մոլեռանդորեն թաքցնող կրոնախնություն... Մի՞թե արդեն ցեղասպանություն չէ մոլեռանդությամբ բորբոքվող ու եփվող մարքերի մեջ հարեւան ազգի, մարդու, մարդկային նույն ընդհանրությունը պարկանող եղբոր հանդեպ որոճացող արելությունը, մի՞թե միայն գործվելուց հետո է այն դառնում մարդկային ցեղի հանդեպ հանցանք՝ *Յեղասպանություն*:

Թուրքիան այսօր կանգնած է մեկ այլ, ավելի վրանգավոր ցեղասպանություն գործելու վրանգի առաջ: Յոթ րասնյակ միլիոնից ավելի մարդկանց մեջ սերմանվող արելությունն իրեն Իսլամի բարոյական սկզբունքների, երոպական ու համամարդկային արժեքների կրող հոջակած Թուրքիային ուղղակիորեն դարձնում է ցեղասպանության գաղափարի փոխանցման ու հրահրման ջարագով: Այսօր Թուրքիայում կարծես վերածնվում են Իսլամի կրոնական սկզբունքները, աշխուժանում մահմեդական համայնքները, որոնց ուղղափառ մոտավման *եղբայրները* բոլոր մարդկանց իրար եղբայր են համարում: Նարց է ծագում. ինչ կասեն, ուրեմն, թուրք ներկայիս ղեկավարները (որոնց ի դեպ մի ժամանակ ցույցերի ընթացքում արարասանած կրոնական բանասարեղծությունների համար բանոք էին նսրեցնում և որոնք այսօր շար հաճախ իրենց *խթթիհարական* երիտրորքական ժողովրդավարության ժառանգներ են համարում), եթե իմանան, որ Ղուրանում Ալլահի գրքում, անմեղի սպանությունը նույնպես դարասարելում է՝ իբրեւ մեծագույն հանցանք: Ինչ կզգան, եթե լսեն Մուհամմեղի խոսքերը.

«Նա, ով կսպանի հոգի մի կենդանի
Երկրավոր փառքից ու նախանձից դրդված,
Անմանվի ողջ մարդկությունն սպանողի:
Իսկ նա, ով կփրկի հոգին այն,

Անմանվի ողջ մարդկությունը փրկողին» (Մուրահ Ե. 32):

Նայոց ցեղասպանության հարյուրամյա րարելիցը ժամանակային առումով շար բան չի փոխի հայ կյանքում: Բայց ավելի իրական ու րեսանելի կդարձնի Թուրքիայի հորիզոններում սավառնող ցեղասպան-մարդասպանի ուրվականին, որն ինչքան սովի թուրքական իշխանությունների ժիտրդական ու կեղծ «պարմասիրությամբ», այնքան ավելի ինքն իրեն գորացած ու ամրագրված պիտի զգա թուրքական հասարակության մեջ: Կրոնական զարթոնք սարող Թուրքիայում այսօր թերեւս առավել բարձր պիտի հնչեն այդ նույն կրոնական արժեքների ու սկզբունքների մաքրագործման անհրաժեշտությունը, սեփական կրոնամշակութային գիտակցության պարպումն ու ախրագերծումն ազգայնամոլ րարրերից ու սկզբունքներից: Ամենայն Նայոց Նայրապերի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի համարելո հայրարարությունը թերեւս լավագույն առիթ պիտի դառնա՝ առավել վճռականորեն արթնացնելու միլիոնավոր թուրք մահմեդականների կրոնական խղճմարները: Նայոց սրբարելիների ու եկեղեցիների, բռնագրավված մյուս կալվածքների ու մշակութային-եկեղեցական արժեքների վերադարձը հայ ժողովրդին կարող է դառնալ մինչև ու օրս ցեղասպանի կայենական պիտակով որակված Թուրքիայի ներքին, արդեն զենեպիկ դարձած ցեղասպանական բարդույթի վերացման առաջին քայլը: Նամենայն դեպս, եթե Թուրքիան որոշել է ընթանալ Ալլահի ուղեգծած ճանապարհով և երոպական համամարդկային արժեքների ջարագովությամբ, ապա պերք է նրան հնարավորինս ցույց րալ այդ ուխտով սրանձնած պարպավորություններն ու դեռեւս չիրականացրած պարպականությունները Նայ ազգի և համայն մարդկության առաջ:



**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՆ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԵՐԴՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,
Հարգարժան Նախագահ Ազգային Ժողովի,
Բարձրաշնորհի և Գերաշնորհի հոգևոր հայրեր,
Պարվարժան պետական այրեր, դիվանագիտական առաքելությունների ներկայա-
ցուցիչներ,

Միևնույն ժամանակ և ներկաներ.

Հայրենիքի լուսաճև կյանքի աղոթքն ու մաղթանքը մեր շուրթերին՝ ողջունում և
Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ Հայաստանի Հանրապետության
Նախագահի երդմնակալության առիթով:

Փառք և գոհություն ենք մատուցում Երկնավորին մեր ժողովրդին պարգևած անպա-
սպանելի շնորհների համար, որոնցով ապրել, սպեղծել ու մաքաթել է և այսօր աննկուն ու
լավարես՝ հայրենյաց սիրով կերպում է իր ազապ կյանքի նոր օրը:

Անկախ պետականության վերականգնումից ի վեր մեր երկիրը ահռելի դժվարություն-
ներ է հաղթահարել, վերակառուցումների ու բարեփոխումների ոչ դյուրին ճանապարհ
անցել: Այս պահին գնահատանքով և աղոթքով ենք հիշում հայրենի անկախ պետակա-
նության հաստատման և կայացման գործին իրենց նվիրյալ ծառայությունը բերած ազգի
բոլոր գավակներին: Պետականաշինության ընթացքներում Դուք, Հայաստանի Հանրա-
պետության մեծարգո Նախագահ, ծանրագին ավանդ եք բերել՝ լինելով կերպողներից
մեկը մեր պարմության այս հուսաբեր ժամանակաշրջանի: Ձեր նվիրյալ ծառայությունը
Հայրենիքին ու ժողովրդին առաջնորդեց Ձեզ պետական ամենաբարձր պարասխա-
նարվության: Նախագահի պաշտոնը հինգ տարիներ առաջ Դուք ստանձնեցիք երկրում
ներքին լարվածության բարդ պայմաններում և, սակայն, աներեր կամքով և հաստա-
պում քայլերով ամենայն ջանք գործադրեցիք, որպեսզի պահպանվի կայունությունը և
շարունակվեն բարեփոխումներն ու բնականոն զարգացման ընթացքը մեր Հայրենիքի:

Ձեր նախագահության շրջանը եղավ պայքար եւ ծառայություն դժվարությունների եւ մարտահրավերների դիմագրավման, Լեւոնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ եւ արդար կարգավորման, արտաքին քաղաքականության ոլորտում այլ պետությունների հետ հարաբերությունների ամրապնդման եւ գործակցության արդյունավորման:

Այսօր Վեհամոր Ավերարանի եւ Նայասարանի Նանրապետության Սահմանադրության վրա երդվելով՝ Դուք նորոգեցիք ծառայական Ձեր ուխտը ազգին եւ Նայրենիքին: Նախագահական նոր շրջան է սկսվում՝ որոշակի նոր պահանջներով ու ակնկալիքներով: Մեր երկրում նախորդ տարիներին արձանագրված դրական փոփոխություններով ու բարի արդյունքներով հանդերձ՝ տրամադրված կենսական նշանակություն ունեցող եւ վճիռների կարգով բազում խնդիրներ ու հարցեր կան, որոնք այսօր եւս պահանջում են հայրենի իշխանությունների եւ համայն մեր ժողովրդի հետեւողական ջանքերը՝ պահպանելու համար մեր խաղաղ ու ապահով կյանքը եւ առաջընթացի հույսն ու հեռանկարը: Ամենօրյա փոփոխություններ, որ մեր անկախ պետականության ուղին պարզելի արգասիքներ շեն ու ծաղկուն կյանքի՝ բարօրությամբ ու բարեկարգությամբ լեցուն, զարգացող փոփոխությամբ, գիտությամբ ու մշակությամբ: Նախագահի բարձր առաքելությամբ Դուք կոչված եք իրագործման առաջնորդելու այս փուլականը: Անարարակույս է, որ ժողովրդի բարօրությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, հոգեւոր-բարոյական արժեքներով հասարակական կյանքի առաջընթացը առավել ամրություն պիտի բերեն մեր երկրին, հեղինակություն՝ մեր պետության վարկին եւ առավել գործունեություն՝ մեր ազգային կյանքին: Մեր Եկեղեցին ինչպես միշտ իր գորակցությունն է բերելու հայրենի պետությանը եւ Ձեզ՝ հայրենաշեն ու ազգանվեր առաքելության իրականացման գործում:

Երդմնակալության այս առիթով Մեր հորդորն ենք ուղղում մեր ժողովրդին ի Նայրենիս եւ ի Սփյուռս՝ հայրենի իշխանությունների հետ միասնական ջանքեր գործադրել հանուն մեր Նայրենիքի եւ ազգային մեր կյանքի պայծառության, մեր հույսերի մարմնավորման: Միակամ ու միախորհուրդ ձգտելով ավելի իրագործել այն, ինչ ազգի եւ հայրենի երկրի հանդեպ մեր նվիրական պարտքն ու պարտականությունն է: Չփկարանալով դժվարությունների առջև: Առաքյալի խոսքի համաձայն՝ «հոգ տանե՛ք միմյանց՝ սիրո եւ բարի գործերի հորդորելով» (Եբր. Ժ. 24), որպեսզի օր օրի շենանա ու բարգավաճի մեր Նայրենիքը՝ այսօր եւ միշտ մնալով ամուր պարվարն ու գործության ակունքը աշխարհասփյուռ հայության:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր Նայրենիքի անսասանության, մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքի հայցով: Աղոթում ենք Ձեզ համար, մեծարգո Նախագահ. թող Բարձրալի օրհնությունը եւ Սուրբ Նոգու առաջնորդությունը միշտ լինեն Ձեզ հետ, գորացնեն Ձեզ, պահպանեն հաստատուն ու վճռական՝ կյանքի կոչելու Ձեր եւ մեր ժողովրդի բարի սպասումներն ու հույսերը: Թող Տերը օրհնի ազգս աշխարհասփյուռ, միշտ պահպանի Իր շնորհների մեջ՝ հավատքով հայցելու. «Տեր Աստված մեր, առաջնորդի մեզ եւ ուսուցանի մեզ արդարությամբ գնալ Բո ճանապարհներով, պահիր մեր կյանքը խաղաղության մեջ եւ մեր ընթացքը՝ Քեզ հաճելի. ամեն» (Ժամագիրք):

**ԹՈՒՐԲԻԱՅԻՑ ՊԱՏԱՆՋՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ
ԲՈՆԱԳՐԱՎԱԾ ՆԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ
ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱՎԱԾՔՆԵՐԸ**

2015 թ. հայ ժողովուրդը Նայասարանի Նանրապետությունում, Լեռնային Ղարաբաղի Նանրապետությունում և ի սփյուռս աշխարհի նշելու է 100-րդ տարելիցը Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված Նայոց Ցեղասպանության:

1915 թ. Ցեղասպանությանը գոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն հայեր, արքայի ճանապարհներին վերադարձ հայերը ապաստան գտան Արևելյան Նայասարանում՝ ներկայիս Նայասարանի Նանրապետությունում, Սիրիայում, Լիբանանում, արաբական այլ երկրներում ու աշխարհի տարբեր պետություններում:

Անհատական սեփական կալվածքների հետ Օսմանյան կայսրության ենթակայության ներքո գտնվող Արևմտյան Նայասարանում և Կիլիկիայում, ինչպես և Թուրքիայի այլ շրջաններում ապրող հայությունը կորցրեց նաև եկեղեցապարկան կալվածքներ՝ եկեղեցիներ, սրբատեղիներ, վանքեր, կրոնական, կրթական ու բարեսիրական կենտրոններ, մշակութային ու կրոնական մեծ արժեք ունեցող իրեր՝ խաչքարեր, ձեռագրեր, սրբանկարներ և այլն: Ցեղասպանության ենթարկված ու բռնի միջոցներով տեղահանված հայ ժողովրդին պարկանոջ բոլոր կալվածքները սեփականացվեցին Թուրքիո պետության կողմից՝ «լքյալ կալվածքներ» անվան տակ:

Ցեղասպանությունից 98 տարիներ անց Թուրքիո ներկա պետությունը՝ որպես իրավահաջորդը Օսմանյան կայսրության, ոչ միայն մերժում է իր նախորդների ծրագրած ու իրագործած Ցեղասպանությունը, այլև շարունակում է իր հակահայ բաղադրականությունը՝ բռնագրավված պահելով հայ ժողովրդի կրոնական ու մշակութային արժեքները՝ եկեղեցապարկան կալվածքներն ու իրերը:

Ներկառար, կոչ ենք ուղղում Թուրքիո պետությանը և պահանջում.

- 1) Ճանաչել Նայոց ցեղասպանությունը
- 2) Ամբողջապես հապուցել հայ ժողովրդի կրած կորուստների և մարդկային ու ազգային ունեւահարված իրավունքների դիմաց
- 3) Անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավարիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապարկան կալվածքները և հոգևոր-մշակութային արժեքները:

Աղոթքով հիշելով Նայոց ցեղասպանության գոհերին՝ դատապարտում ենք ամեն բռնարարք՝ ուղղված աստվածապարզ և կյանքի, մարդու արժանապարտության և մարդկության խաղաղ համակեցության դեմ, քանզի «Աստված խոտովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (Ա. Կորնթ. ԺԴ. 33), որ մարդկանց կոչել է սիրո, համերաշխության և գործակցության:

Երախտագիտությամբ ենթ հիշում բոլոր ժողովուրդներին ու պետություններին, որոնք Յեղասպանության օրերին ապաստան փնտրեցին Կոնստանդնուպոլիսում և հոգաբարձություն ու եղբայրական սեր ցուցաբերեցին հայրենագրված ու փարագրված հայերի հանդեպ:

Նայ ժողովուրդը հավեր երախտագետ է լինելու նաև այն բոլոր պետություններին, որոնք մարդասիրության և արդարության սկզբունքներով առաջնորդված՝ դատապարտել և պաշտոնապես ճանաչել են Նայոց Յեղասպանությունը:

Նայոց Յեղասպանության հարյուրամյակի նախասեմին մեր բոլոր կարելիությունները ի գործ պիտի դնենք՝ միասնաբար իրականացնելու հայ ժողովրդի պահանջները՝ հանուն արդարության և հայության իրավունքների պաշտպանության:

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՊՐԵԼ 24, 2013



ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՄՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՆԱՏԻ ՆԱԽԱԳԱՆՆԵՐ

Ապրիլի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ճայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի Խորհրդարանի պարզամավորների պալատի նախագահ Վալերիու Շպեթան Զգոնեային:

Նանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների պարզամական բարեկամական կապերին՝ նշելով նաև, որ ռումին ժողովրդի խորը հավատքի, մարդասիրական ազնիվ ոգու շնորհիվ է, որ հայ ժողովրդի զավակները Ռումինիայում կարողացել են կերպով իրենց հոգևոր մշակության արժեքները, նշանակալի ներդրում ունենալ Ռումինիայի կյանքի փառքեր ուրարներում և որպես եղբայրներ ապրել ռումին ժողովրդի կողքին: Վեհափառ Հայրապետը ընդգծեց նաև, որ երկու ժողովուրդների բարեկամության ակունքներում կանգնած է նաև Եկեղեցին:

Իր հերթին Ռումինիայի Խորհրդարանի պարզամավորների պալատի նախագահը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, կարևորեց երկու երկրների հարաբերությունների առավել ամրապնդումը՝ նշելով, որ պարզամայությունն ու մշակույթն արդեն իսկ մոտեցնում են երկու ժողովուրդներին: Վալերիու Շպեթան անդրադարձավ նաև եկեղեցու կարևոր դերակատարությունը ժողովուրդների կյանքում խաղաղության հաստատման գործում:

Նանդիպմանը ներկա էին Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս Կալիսկապոս Ներսիսյանը, Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Ս. Տաթև Կալիսկապոս Նալբանդյանը և Հայաստանում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Կրիստա Ռոդիկա Պրոնարիուն:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՄՆԵՑ
ԲՈՒԽԱՐԵԱՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Ապրիլի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ճայրագույն Պատրիարք և Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուխարեստի (Ռումինիա) քաղաքապետ Սորին Միլչեսա Օպրեսկուի գլխավորած պարվիրականությանը:

Ողջունելով քաղաքապետի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու պետությունների գործակցությանը և երկու հավաքակից ժողովուրդների՝ դարերի պատմություն ունեցող բարեկամական կապերին: Վեհափառ Նայրապետը նշեց, որ Ռումինիա կատարած երկու հովվապետական այցերի ընթացքին ականատեսն է եղել այն ջերմության ու հարգանքի, որ ռումին ժողովուրդը փառում է հայ ժողովրդի գավակների նկատմամբ:

Զրույցի ընթացքում խոսվեց Ռումինիայի հայ համայնքի ազգային և եկեղեցական կյանքի, ինչպես նաև Նայ Առաքելական և Ռումին Ուղղափառ եկեղեցիների եղբայրական հարաբերությունների մասին:

Նանդիպման ավարտին Ամենայն Նայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բաբեմադրանքները հղեց Ռումինիայի ժողովրդին՝ հայցելով, որ Երկնավոր Տիրոջ օրհնությամբ միշտ խաղաղության ու բարօրության մեջ ապրի Ռումինիան և իր հավաքավոր ժողովուրդը:

Նանդիպմանը ներկա էր Նայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև ևպս. Նակոբյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՎՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց Նայաստանի Նանրապետությունում Բրազիլիայի Նանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Կիկ. Մարսելա Մարիա Նիկողեմոսին:

Նանդիպմանը Նորին Սրբությունը հրաժեշտ փոխեց դիվանագիտական առաքելությունը Նայաստանում ավարտող դեսպանին՝ իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնելով անցած չորս փարիների ընթացքում կատարած աշխատանքների համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Բրազիլիայի հայ համայնքի և Բրազիլիայի հայոց թեմի կյանքին, նշվեց, որ թեմն ու համայնքը կարևոր կամուրջ են երկու երկրների միջև և նպաստում են երկուստեք հարաբերությունների ու համագործակցության առավել սերպացման:

Վերջում Ամենայն Նայոց Կաթողիկոսը հաջողություն մաղթեց Կիկ. դեսպանին՝ իր հեղափոխական ծառայության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիելին Բ. Ծայրագույն Պապրիհարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Իսլամական Տանրապե-
պոթյան մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարար Սեյեդ Մոհամմադ Տոսեյ-
նիի գլխավորած պարզվիրականութանը՝ ուղեկցութեամբ ՏՏ մշակույթի նախարարի պաշ-
պոնակաւարար Տասմիկ Պողոսյանի:

Տանդիպմանը Վեհափառ Տայրապեպոն ուրախութեամբ արձանագրեց, որ երկու
երկրների միջեւ առկա ջերմ հարաբերութեաններն առաջընթաց են ապրում եւ գործնա-
կան արդյունքներ արձանագրում: Տորին Սրբութեանն ընդգծեց նաեւ երկու երկրների
մշակույթի նախարարութեանների միջեւ սերտ համագործակցութեան կարեւորութեանը՝
նշելով, որ այն նպաստում է երկու ժողովուրդների մշակութային կյանքի փոխադարձ
հարստացմանն ու զարգացմանը:

Անդրադառնալով Իրանի հայկական համայնքին՝ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ի
դեմս Մոհամմադ Տոսեյնիի իր գնահատանքն ու շնորհակալութեանը հայրնեց Իրանի
Իսլամական Տանրապեպոթյան իշխանութեաններին՝ ինչպէս հայ ժողովրդի զավակնե-
րի նկատմամբ ցուցաբերվող ջերմ վերաբերմունքի, այնպէս էլ հայ հոգեւոր-մշակութային
արժեքների, մասնավորաբար եկեղեցիների հանդէպ դրսեւորվող հոգաւար վերաբեր-
մունքի համար:

Տորին Սրբութեանը գոհունակութեամբ ընդգծեց նաեւ Մայր Աթոռի եւ Տայաստանում
Իրանի դեսպանապան միջեւ առկա համագործակցութեանը մշակութային ոլորտում:

Ջրույցի ընթացքում կարեւորվեց միջկրոնական երկխոսութեանների խթանումը՝ ի
բարօրութեան մարդկութեան խաղաղ կյանքի, ինչպէս նաեւ հոգեւոր կենսութեանների հա-
րաբերութեանների սերտացումը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ ՆՎԻՐԱԿԻՆ

Ապրիլի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիելին Բ. Ծայրագույն Պապ-
րիհարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Անդրկովկասում պապական նվիրակ
Տորին Սրբագնութեան Մարեկ արքեպիսկոպոս Սուլչինսկուն:

Տանդիպմանը Մարեկ արքեպիսկոպոսն Ամենայն Տայոց Կաթողիկոսին փոխանցեց
Տոմի Ֆրացիսկոս պապի նամակը, որով Սրբազան Քահանայապետը շնորհակալութե-
ան է հայրնում Վեհափառ Տայրապեպին իր ընտրութեան առիթով հղված շնորհավո-
րական գրութեան, ինչպէս նաեւ գահակալութեան արարողութեանն անձնապէս ներկա
գտնվելու համար: «Առանձնակի ուրախութեան էր ինձ համար կարողանալ ողջունել Ձեզ
Տոմում իմ առաքելութեան գահակալութեանը...: Ակնկալում ենք շարունակել գորացնել

այն բարեկամությունը, որ մենք մի քանի տարի արդեն վայելել ենք», - ասված է Ֆրանցիսկոս պապի նամակում:

Իր խոսքում շնորհակալություն հայտնելով ջերմ գրության համար՝ Ամենայն Տայոց Կաթողիկոսը վերհիշեց իր հանդիպումները Տոմի Ֆրանցիսկոս պապի հետ ինչպես Արգենտինայում նրա առաջնորդության շրջանում, այնպես էլ Վատիկանում: Նորին Սրբությունը պապական նվիրակի միջոցով Տոմի պապին փոխանցեց եղբայրական իր ողջույնները և արդյունաշար գահակալության բարեմաղթանքները:

Զրույցի ընթացքում նաև անդրադարձ կատարվեց Տայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Տոմի Կաթողիկ Եկեղեցու ջերմ հարաբերություններին, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Վատիկանի միջև ձեռնարկված սերտ համագործակցությանը:

Տանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փնթիկ, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՏԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷԿԼՕՖ ՏԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Ապրիլի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Շայրագույն Պապրիխարը և Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց ԷԿԼՕՖ միջազգայինի գլխավոր փնթիկ Փաթ Գլխունին՝ Տայաստանյան ԷԿԼՕՖ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանի և հիմնադրամի գլխավոր փնթիկ Տիգրան Նովիանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով ԷԿԼՕՖ-ի գլխավոր փնթիկին այցը Մայր Աթոռ՝ Ամենայն Տայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Տայաստանյան ԷԿԼՕՖ հիմնադրամի գործունեության և ԷԿԼՕՖ միջազգայինի կողմից վերջինիս ցուցաբերվող աջակցության համար: Անդրադառնալով Տայաստանի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակին՝ Վեհափառ Տայրապետն ընդգծեց, որ հիմնադրամն իր գյուղատնտեսական ու կրթական ծրագրերով հնարավորություն է ընձեռում անհատների և համայնքների՝ հաղթահարելու իրենց առջև ծառացած գաղազան խնդիրներ: Նորին Սրբությունը նաև նշեց, որ հիմնադրամը բարենպաստ ներդրում ունի միջեկեղեցական հարաբերություններում:

Տանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց տարածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Վերջում Ամենայն Տայոց Կաթողիկոսը հաջողություններ մաղթեց փառ Գլխունին Տայաստանյան ԷԿԼՕՖ-ի ղեկավարության հետ ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպության նոր ռազմավարության մշակման գործում:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

**Տ. ԳԵԻՐԳ ԵՊԻՄԵՆՈՎՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ
ԵՒ ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ
(21 ապրիլի, 2013թ.)**

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն
երկնից այսօր հաճեցաւ բնակիլ ի թեզ»:
Սահակ Գ. Չորսփորեցի, Շարական

Սիրելի բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ

Նայաստանայաց Առաքելական Մայր Եկեղեցին վերստին ցնծության եւ բերկրանքի մեջ է: Դժվար է բառերով փոխանցել այն ոգևորությունը, որ համակել է այս պահին Քրիստոսի անունով ժողովված հավաքացյալների բազմությանը, հոգևորական թե աշխարհական, ծեր թե երիտասարդ, ինչպես Եկեղեցու հայրերն են աւամ՝ սա անպարմելի ուրախություն է, քանզի մարդկային խոսքն ի գործի չէ արտահայտելու այն հոգևոր փորձառությունը, որ այս պահին ապրում են հավաքացյալները երկրի վրա, հրեշտակները երկնքում:

Եկեղեցում նոր առաքյալներ են ծնվում Տիրոջ Խոսքի ծառայության համար, հավատքի վկայության նոր առաջնորդներ:

Մեր քրիստոնեական պարմության բոլոր ժամանակներում է հոգևոր դասի գորացումը կարևորվել: Դրա մասին են վկայում հայ ժողովրդի պարմության հերոսական էջերը, որտեղ բազմիցս առանցքային դերակատարություն է ունեցել Նայոց Եկեղեցին իր ծառայասեր հոգևորականության միջոցով, հայ գրականության այն հիշարժան դրվագները, որոնք վերաբերում են նվիրյալ հայ եկեղեցականի կերպարին, մաքրանշում նրա ազգապահպան առաքելությունը, անմնացորդ քաջարի ոգին, վերջապես հայ ժողովրդի կյանքում Եկեղեցու անուրանալի դերը փաստող ավելի մեծ վկայություն չկա, քան հայ մշակույթն ինքնին եւ հայ ժողովրդի գոյապայքարը:

Նայ հոգևորականի ներկայությունն էական է ոչ միայն Մայր հայրենիքում, այլև ողջ սփյուռքում: Պարմական ճակատագրի բանուց բշված հայության մեծամասնությունն այսօր ապրում է հայրենիքից հեռու, օտարության մեջ: Նայոց Եկեղեցին է այն հոգևոր կամուրջը, որը հայությանը կապում է իր հայրենիքի հետ, ներշնչում նրան պահպանելու իր հոգևոր ինքնությունը, կրթում խոսելու հայերեն: Նա է այն անխախտ հասարակությունը, որը կոչված է միավորելու աշխարհասփյուռ հայության ջանքերը ի սպաս համագային մեծ վերածննդի, դարերի անդուլ փորձություններից վերապրած ոգու միասնության արևելքի իրագործման:

Ներկա պարահական չէ, որ Նայ Եկեղեցում յուրաքանչյուր նոր հոգևորականի ձեռնադրությունը Կոն Է աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար, մեծ ոգևորության առիթ:

Այսօրվա իրադարձությունը երկար սպասված էր ոչ միայն մեր ընծայացուների, որոնք քիչ առաջ հավաքացյալների վկայությամբ արժանացան Տիրոջ սպասավորության ամենապարզավոր շնորհին, այլև Եկեղեցու համար առհասարակ: Թեև մեր նորընծաները Կոն Է շարունակ մասնավոր կրթություն և դաստիարակություն են ստացել, հոգևոր և մարմնավոր առումով պարզապես այս իրադարձություն, վկայվել իրենց ուսուցիչների կողմից, սակայն Եկեղեցին էլ իր հերթին հարապել աղոթք Է բարձրացրել, որպեսզի այս օրը Տիրոջ ողորմությամբ ժամանի: Միևնույն հավաքացյալներ, այսօր դուք ստանում եք ձեր աղոթքի պարասխանը, խորհեք մի պահ, կա՞ր աղոթք ավելի մեծ շնորհ, քան այն վստահությունը, որ մեր աղոթքները լսելի են Տիրոջ առջև, այն հավաքը, որ Նոգին Է առաջնորդում Եկեղեցուն: Ավելի մեծ հոգևոր վայելք չես պարզելի քրիստոնյային, քան այն փորձառությունը, երբ գգում Է Նոգու առաջնորդությունը, Սուրբ Նոգու շնորհաբաշխ ներկայությունը Եկեղեցու կյանքում:

Այս պահը ողջ Եկեղեցու համար հավաքի վերահաստատման սրբազան առիթ Է, առաքելական սպասավորության վերանորոգության ներշնչման աղբյուր, հոգևոր կյանքի նոր հորիզոնների բացահայտման հրավեր:

Միևնույն Կոն Է եղբայրներ,

Յուրաքանչյուր քրիստոնյա ապրում Է իր կյանքը ոչ միայն Եկեղեցու մեջ, այլև հանուն Եկեղեցու առաքելության: Այդ առաքելությունն իրականում արտահայտվում Է ողջ քրիստոնեական համայնքի հավաքի կյանքում, բոլոր նրանց, որոնք մկրտության խորհրդի միջոցով դարձել են քրիստոնյա, կոչվել սպասավորելու Տիրոջ Խոսքի փարածմանը, յուրաքանչյուրն իր հավաքի գործերով, իր կարողության ներածին չափով:

Եկեղեցին, հավաքացյալների ժողովն այս իմաստով շար կարևոր դեր Է վերապահել հոգևորականներին, հին Եկեղեցու ավանդույթը վկայում Է, որ նրանք հավաքացյալների կողմից են ընտրվել համայնքից հատուկ առաքելությամբ, նրանց Է փրկված առաջնորդելու պարիով, նրանք կոչված են ղեկավարելու քրիստոնեական համայնքները հանուն Ավերարանի քարոզչության, և ամենակարևորը առաջնորդելու քրիստոնեական հավաքի վկայությունն աշխարհին, վկայելու այն նոր կյանքի մասին, որ Քրիստոս խոստացավ իրեն հուսացողներին: Այն թյուր պարկերացումն Է ձեռավորվել ժամանակի ընթացքում, մանավանդ խորհրդային շրջանում, թե Եկեղեցին միայն հոգևորականությունն Է, որ հավաքի վկայությունը իրականում միայն հոգևորականին Է վերապահված, սակայն ըստ Երթյան վկայողը Եկեղեցին ինքն Է, հավաքացյալների ժողովը, համայնքը: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ կոչված Է իր ծառայությունը բերելու հավաքի վկայության այդ առաքելությանը: Սրանից հոգևորականի դերը բնավ չի նվազում, այլ ընդհակառակը ավելի բարձրանում Է, քանի որ այս առաքելության մեջ նրան Է վերապահված ամենամեծ պարասխանավորությունը, հավաքի վկայության առաջնորդությունը:

Իսկ ի՞նչ Է հարկավոր առաջնորդ լինելու համար, կամ ինչպիսի՞ն պիտի լինի առաջնորդը:

Ավերարանների հեղեղողական ընթերցումը, Եկեղեցու ավանդության խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին հերթին համայնքը պետք է բացարձակ վստահություն տալիս Կաթողիկոսին, որ նա անվերապահ հավատալի խոսքերով, անվերապահ համոզմունքով իր առաջնությունը: Իսկ որպեսզի քահանան կարողանա այդ վստահությունը ներշնչել իր առաջնությունից հանդեպ՝ գերագույն նախապայման է, որ նա հավատալի խոսքերով լինի բացարձակ անկեղծ իր կոչման հանդեպ, ունենա գոհաբերության ոգի և կամք: Եթե նա չհավատալի խոսքերով, որովհետև նա չի կարող հավատալ ներշնչել դրա հանդեպ: Այսօր մեր ժողովուրդը ամենաշատը այդ վստահությունն է փնտրում Եկեղեցում. դա է այն միակ երաշխիքը, որ կարող է հավատալ ներշնչել Կաթողիկոսի առաջնությունից հանդեպ, օգնել հայ մարդուն դառնալու Եկեղեցու հեղեղող բառի ամբողջական իմաստով: Մեր շրջապատում կան բազում քրիստոնյաներ, որոնք պարզապես երազում են իրենց լուսնի ներքին Եկեղեցու առաքելության մեջ, իրենց ուժերի չափով մասնակցի լինել նրա ծառայական կյանքին, քանի որ մեծ հավատ ունեն Եկեղեցու դերակատարության հանդեպ, համոզված են, որ այն կարող է դրական ազդեցություն ունենալ հասարակական շարժիչի հաղթահարման գործում, նպաստել հանրային կյանքի բարելավմանը, դարձնել մարդուն ավելի ազնիվ: Այսպես է, որ Կաթողիկոսի առաջնությունը պետք է օգնության հասնի, բացահայտի և ընդգրկի նրանց համայնական կյանքում, հնարավորություն ստեղծի, որպեսզի լիարժեք կերպով կարողանան արտահայտել իրենց նվիրումն ու հավատը, ի սպաս դնել իրենց շնորհները Եկեղեցու ծառայական կյանքում:

Միայն ճշմարիտ առաջնությունը կարող է համապատասխան Կաթողիկոսի միջավայր ձևավորել Եկեղեցու առաքելության լիարժեք իրագործման համար:

Սիրելի նորընծաներ,

Նոր առաքելություն է սկսում ձեր կյանքում, մի յուրահատուկ Կաթողիկոսի ծանփողություն, որն այս պահին ինձ հիշեցնում է Ավերարանում նկարագրվող աշակերտների առաքման հայրնի դրվագը: Ամենահզոր գաղափարը, որ խորապես տպավորում է ինձ այդ պարկերում Նիսիսի հեղեղող պարզամիտ է. «Ճանապարհի համար ոչինչ մի վեցրեք. ոչ գավազան և ոչ մախաղ, ոչ հաց և ոչ արծաթ դրամ» (Ղուկ. Թ. 3-4): Ի՞նչ նկատի ունի Նիսիս այսպես, արդյո՞ք պարզ իրերը, որոնք անհրաժեշտ են ծանփողության համար: Բնականաբար ոչ: Ես հեղեղող կերպ եմ հասկանում Նիսիսի խոսքերը, նա ընդամենն ասում է Աստծուն ապավինեք, մոռացեք ամեն ինչ, այս վայրկյանից սկսած ձեր հավատը դարձրեք ձեր համար գավազան, մախաղ, հաց և դրամ: Այլ խոսքով նա կարողանալ նվիրում է պահանջում առաքելության համար, և ամենակարևորն անհրաժեշտ պայման է նկատում այդ առաքելությունն ստանձնել աստվածային օգնականությանն ապավինելով: Իմ այսօրվա պարզամիտ է նորո՞ք քահանաների, որ մարդկանցից ոչինչ չսկսեցին ձեր առաքելության ընթացքում, Աստծուն դարձրեք ձեր ապավին, հիշեք որ դուք առաքված եք բառի ամենալայն իմաստով, և ամենակարևորը դուք առաքված եք Աստծու կողմից, այս գիտակցության մեջ է թաքնված ձեր հավատի ուժը, այս ոգու առջև փուլավորում են բոլոր փեսակի պարսկերենները, բացվում փակ դռները, այս ներշնչմամբ էր աստվածային Պաշտոնը հայարարում հայտարարում՝ «Եթե Աստված մեզ հետ է, ով կարող է մեզ դնել լինել»:

**Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՆ
(24 ապրիլի, 2013թ.)**

Ամեն հայի մարմուն հրով ու սրով խորագրված անջնջելի պարկեր եւ մշտակենդան պատմությունն է Ապրիլյան եղեռնը:

Մեր ժողովրդի դեմ կատարված Յեղասպանությունը լոկ պարմական արեղեկություն կամ ճշգրիտ փարեթիվ չէ, այլ ապրող, բարախող եւ պարգամող իրականություն:

Մեր պատմության սեւ էջերը, դժբախտությունները, ավերն ու կործանումը, գերությունն ու աքսորը, գաղթն ու ջարդը մահվան սրվերով մեզ երբեք չեն ծանրացրել, որովհետեւ կարողացել ենք մեր հոգիները թերթն ու պայծառ պահել լուսավոր արեղեկներով, որովհետեւ մենք եղել ենք եւ կանք կյանքին ու լույսին նվիրված ժողովուրդ:

Եզեկիել մարգարեն արեւով, թե ինչպես բարեկեցական գերության մեջ ժողովրդի հավարքը օրեցօր նվազում էր: Որքան հավարքի կապերն էին թուլանում, այնքան նաեւ որպես մարդ եւ ժողովուրդ նրանց գոյությունն էր թայքայվում ու լուծարվում: Նրանք ի վերջո ցամաքած ոսկորների կույրի վերածվեցին, որովհետեւ կորցրին իրենց կյանքի նպատակը, գոյարեւելու եւ պայքարելու հույսը եւ մեռան:

Ապա որպես խոսքում հնչեց Աստվածային ձայնը. «... *Ես ձեզ կենդանության շունչ պիտի տամ, իմ հոգին պիտի տամ ձեզ...* »:

Աստվածապարգաւ այս արեղեկը կրո՛ւմ է իր մեջ ժողովուրդների գոյարեւման գաղափիրը:

Յեղասպանությունից փրկվեցինք, ներկվեցինք սփյուռք: Մահը հեղափոխեց մեզ ամեն կերպ, ամենուր: Բայց մենք մահվանից փախանք ու կյանք փնտրեցինք, կյանքից կառչեցինք եւ ապրեցինք, վերապրեցինք մինչեւ այսօր:

Ժողովուրդները կարող են գաղթական կամ աքսորական լինել, կարող են բռնի արեղահանվել, արմատախիլ արվել, դա դեռ մեռելության նշան չէ: Կարելի է աշխարհով մեկ բաժան-բաժան եղած լինել, բայց կյանքով առաքացած մնալ:

Այն ժամանակ միայն կմեռնենք, երբ կկորցնենք կյանքի մեր նպատակը, հավարքը եւ հույսը:

Ժողովուրդը չի մեռնում հալածվելով եւ փրկվելով, ջարդվելով եւ կոտորվելով, ժողովուրդը մեռնում է, երբ ենթարկվում է թշնամու կողմից պարտադրված դավին, երբ թուլացնում են նրա սրտի լարը, կոտորում են սրտի բաջությունը եւ դարձնում պարտապարհ կամ բոլոր արեւակի գիշումների:

Ժողովուրդը չի մեռնում նույնիսկ, երբ երկար ժամանակ հայրենագուրկ է մնում, առանց հայրենիքի ապրում: Որքան էլ դժվար լինի՝ ժողովուրդը դիմանում է եւ մեռնում է միայն, երբ իր սրտից հանում են հավարքը, լեզուն, ինքնությունը, մշակույթը, հոգեւոր գանձերը:

Կարելի է հեռու լինել արշաւանոք անապարներից:

Կարելի է ապրել ծաղկած ափերում եւ բարօրության մեջ գերեզմաններ փորել:

Բարգավաճ կյանքը հաճախ աղոտացնում է գոյության նպատակի գիտակցումը, թուլացնում ու պակասեցնում է հույսը, հավարքը առ այն, որ հեռացվել ենք մեր երկրից հա-

կառակ մեր կամքին, որ անպայմանորեն մի օր այդ երկիր պիտի վերադառնանք՝ այնպեղ հաստատվելու մեր քաղաքում, որովհետև անհնարին է ապրել առանց արմատի, առանց հողի:

Չէ՞ որ հոգին երկրի պեղքն է զգում ու միտքը սնունդ է առնում հողից. «Պիտի հանեն ձեզ ձեր գերեզմաններից, կենդանության շունչ պիտի քամ, Իմ հոգին պիտի քամ ձեզ, եւ ձեզ ձեր երկիրը պիտի վերադարձնեմ»:

Այս պարզամտ պեղք է ամուր դռնովի մեր մտքերում, որովհետև ներկա պայմաններում միայն դա կարող է մեզ կենդանացնել: Եւ այդ դեպքում Մեծ Եղևոնի քարեկիցը կղաղարի լինել տոսկ ցեղասպանողի մոայլ պարկեր, այլ կղաղա կյանքի փոփոխ՝ հղի գոյապայքարի վճռականությամբ:

24 - ապրիլյան ամեն մի քարեկից մեր նպատակի ճանապարհին գիտակցության եւ կամքի համար մի նոր առիթ պիտի դառնա: Պիտի դառնա առիթ դաստիարակության՝ իսկական՝ հայերեն լեզվով խոսելու, լսելու, սերտելու մեր պարմությունը: Այսօր ճիշտ ժամանակն է, որ հարյուրամյակի շնմին ամեն հայ աշխարհի չորս ծագելու գոնե 2015-ին մայրենի լեզվով պահանջարկ լինի: Նենց սա՛ պիտի դառնա առիթ արթնության, ինքնաճանաչման եւ սրբագրության:

Անցյալում այնքան անփութ է անխոհեմ գրավեցինք, որ չզգացինք մեր դեմ նյութավոր դավը եւ այսօր նույն սխալի մեջ կմնանք, եթե չսեր Ապրիլյան հրավերը:

Մեկ ու կես միլիոն եւ ավելի նահապետներ ակնդեպ մեզ են նայում եւ ամեն քարի ու ամեն օր ձայն են բարձրացնում ու կոչ ուղղում մեզ՝ մեր խղճին, մեր գիտակցությանը, մեր կամքին: Կոչ են անում, որ մեր հայախոս ձայնը միացնենք իրենց ձայներին:

Քրիստոս Իր չարչարանքների նախաբայկին, Իր առաքյալներին ու աշակերտներին դեպի աշխարհ նոր առաքելության ուղարկելուց առաջ պարզամտ՝ ասելով. «*Նմա, ու, որ կարող է, թող սուր վերցնի իր ձեռքը*» (Ղուկ. ԻԲ. 36):

Աստված կոչում է մեզ գինվելու, գինվելու՝ ներքնապես, հոգեպես եւ հոգեւորապես, եւ այսօր օրն է, որ բոլորս լսենք այդ հրավերը, հրավերը՝ սթափվելու, արթնանալու, զգաստանալու, ներքնապես գործնալու եւ պարտաւորվելու այն անդուլ եւ անխոհ պայքարին, մտքի եւ հոգու բախումին, որ անհրաժեշտ է արդարության եւ խաղաղության պայքարին գինվորագրվելու, հանուն նրա պայքարելու եւ մարտնչելու համար:

Այսօր այն օրն է, սիրելիներ, որ աշխարհի բոլոր հայերը քաղեր կերպերով միաբանվում են՝ մեծարելու հիշատակը նահապետների: Միաբանված են հաղթողների հիշատակի շուրջ՝ ճանաչելով նրանց նվիրումը այն մեծ հավաքին եւ համոզմունքներին, նրանց թողած այն մեծ ավանդին, որը երբեք չկորավ նույնիսկ իրենց մարմինները կորցնելով:

Այսօրվա հավաքը, ինչպես ամեն քաղվա մեր հավաքարիմ ներկայությունը, դարապարտությունն է անընդունելի այն ոճիներին, որոնք ուղղված են առհասարակ մարդ անհարի, մարդկության, որն է ժողովրդի, նրա մշակույթի, մարդկային կյանքի նվիրական արժեքների, սրբությունների դեմ:

«*Վա՛յ այն ազգին, որ իր դեմքը կորցնում է եւ աղավաղում է իր հոգին: Նրան մահ է սպասում*» (Ա. Զարյան):



ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱՂԱՄ ԲՆ. ՄԱԿԱՐՅԱՆ

ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Ազգովի պատրաստվում ենք ոգեկոչելու Նայոց Յեղասպանության հարյուրամյա տարեկիցը եւ որպես քրիստոնյա ժողովուրդ՝ դատապարտելի ենք համարում մարդկության դեմ գործված ոճրագործությունները, ժողովուրդների բնաջնջման արյունալի հանցագործությունները: Մեր այս դիրքորոշումը գալիս է ոչ միայն ցեղասպանության ենթարկված մեր ազգի հանդեպ արդարության ու արարադատության պահանջից, այլև կրոնական ըմբռնումից, քանզի արարչագործության պսակ հանդիսացող մարդ արարածի, առավել եւս ժողովուրդների կյանքի ու ապրելու իրավունքի հանդեպ ուրնձգությունները հակառակ են քրիստոնեության սկզբունքներին, Սուրբ Գրքի հայկություններին, որոնք բացահայտում են Աստծո անսահման սերը մարդու հանդեպ: Սակայն մեր հավաքքի հիմք ծառայող Աստվածաշունչը բերում է առաջին գրավոր վկայությունները մարդկության պատմության մեջ ցեղասպանության եւ իրականացված եղեռնագործությունների:

1. «Յեղասպանություն» եզրի ծագումը եւ գործածումը.

«Յեղասպանություն» եզրն սկսեց գործածվել Երկրորդ աշխարհամարտից, հրեական Նոյեթուրից (բոց.՝ Ողջակիզում) հետո: Այն առաջինը կիրառել է լեհ, ծագումով հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկին իր «Axis Rule in Occupied Europe» գրքում, որը հրատարակվեց 1944 թ.¹: Լեմկինը ցեղասպանությունը սահմանում է որպես ազգային, կրոնական կամ ցեղային խմբի համակարգված եւ ծրագրված բնաջնջում, որն իրականացվում է տարբեր ճանապարհներով եւ ուղղված է այդ խմբի հարստեման հիմունքների դեմ²: Լեմկինն իր գրքի իններորդ գլուխն սկսում է «Յեղասպանություն» վերնագրով եւ բացատրում, որ ցեղասպանություն՝ genocide բառը կազմված է հին հունարեն genos [γένος] (տեսակ, ցեղ) բառից եւ լադիներեն eide-ից, որը սպանելու նշանակությունն ունի³: Ռաֆայել Լեմկինն աշխարհանք էր փնտրում Նյուրեմբերգի դատավարությունում Երկրորդ համաշխարհային պատերազմը վերապրած նացիստներին ցեղասպանության հանցագործության մեջ մեղադրելու ուղղությամբ: Չնայած որ 1946 թ. Նյուրեմբերգի Միջազգային ռազմական փորձունալի դատավարության ընթացքում նացիստների դեմ հանդես եկող բրիտանացի եւ ֆրանսիացի մեղադրողները գործածեցին «ցեղասպանություն» նորակազմ եզրը⁴, սակայն սեպտեմբեր 30 - հոկտեմբերի 1-ի դատավճռում «ցեղասպանություն» բառը չներառվեց: Այդ մասին իմանալով՝ Ռաֆայել Լեմկինը խոր հիասթափություն ապրեց⁵: Բայց 1948 թ. Միացյալ ազգերի կազմակերպություն-

1 R. Lemkin, Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress (Carnegie Endowment for International Peace 1944).

2 Տե՛ս Ռ-իպա Ք. Կուլումջյան, XX դարի առաջին ցեղասպանությունը. Նայկական հիշողության վերադարձը, Sirar Ediciones, 2012, էջ 59:

3 “Axis Rule in Occupied Europe”, p. 79. :

4 Տե՛ս “The Genocide Convention, The legacy of 60 years”, edited by H. G. van Der Wilt, J. Vervliet, G. K. Sluiter, J. Th. M. Houwink ten Cate, Martinus Nijhoff publishers, 2012, էջ 17:

5 Տե՛ս Raphael Lemkin, A hero of humankind, edited by Agnieszka Bieńczyk-Missaia, Sławomir Dębski, Warsaw 2010, էջ 47:

նը, նաև Լեմկինի ջանքերի շնորհիվ, պաշտոնապես օրինականացրեց «ցեղասպանություն» եզրը՝ ընդունելով «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պարփի մասին կոնվենցիան»⁶: Ըստ այդ համաձայնագրի 2-րդ հոդվածի՝ ցեղասպանությունը ներառում է հետևյալ բոլոր ձևերը, որոնց նպատակն է ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնել ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խումբ.

1. խմբի անդամների ջարդը,

2. խմբի անդամների ֆիզիկական կամ մտային ամբողջականությանը հասցրած ծանր վնասը,

3. խմբի մասնակի կամ ամբողջական ֆիզիկական ոչնչացման հանգեցնող միությունավոր գործունեությունը,

4. խմբում ծնունդների կանխմանն ուղղված քայլերը,

5. խմբի երեխաներին այլ խումբ բռնի տեղափոխելը⁶:

Այս սահմանումները, որոնք հետագայում միջազգային օրենքների անբաժանելի մաս դարձան, հիմնված էին Լեմկինի աշխատության մեջ տեղ գրած բանաձևումների վրա⁷: Բայց պետք է նշել, որ «ցեղասպանություն» բառը այս երևույթը նկարագրող ամեննեին էլ նոր եզր չէ: Եւ հետաքրքրական է, որ «ցեղասպանություն» եզրն ստեղծվեց՝ դատապարտելու հրեաների մասսայական կոտորածները, մի ժողովրդի, որն ինքն էր, ըստ Աստվածաշնչի, բազում անգամներ իրագործել այնպիսի սպանություններ, որոնք լիովին կարող են համապատասխանել ցեղասպանության բոլոր սահմանումներին: Աստվածաշնչում նկարագրվող զանգվածային մարդասպանությունները կատարվում էին ազգային կամ էթնիկական խմբի ոչնչացման նպատակով, եւ ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիայի չորրորդ եւ հինգերորդ կետերը՝ խմբում ծնունդների կանխմանն ուղղված քայլերը կամ խմբի երեխաներին այլ խումբ բռնի տեղափոխելը, հրեական վաղ շրջանի պատմության մեջ նույնիսկ փոխաբերված են այլ ժողովրդի երեխաների արյունալի սպանություններով: Ըստ Աստվածաշնչի՝ էթնիկական որևէ խմբի ոչնչացմանն ուղղված հրեաների գործողությունները հրահանգվում էին Աստծո կողմից, որով էլ եւ ցեղասպանության սահմանման նկարագրումով կարող ենք տեսնել ցեղասպանության մեկ այլ տեսակ՝ Աստծո կողմից պարվիրված կամ աստվածայնորեն հրահրված ցեղասպանություն: Բայց պետք է նշել, որ ցեղասպանությունը՝ իբրեւ երևույթ, այն նկարագրող բառի նման ամեննեին էլ նոր չէ:

Այս ձեւակերպումները, իհարկե, կարող ենք կիրառել կրոնական տեսակետից՝ նկատի ունենալով միայն մարդ-մարդ հարաբերությունները եւ ոչ երբեք մարդ-Աստված հարաբերությունները, քանի որ անպարսեհ է Աստծուն որևէ ցեղասպանության հեղինակ համարել՝ հաշվի առնելով աստվածային կամքով նաև հավիտենության մեջ մարդկային գոյության առկայությունը: Այդ իսկ պարճառով հարկ է տարբերակել ցեղասպանության իրավաբանական սահմանումն աստվածաբանական ընկալումից:

2. Տինկտակարանյան ցեղասպանությունների աստվածաբանական ընկալումը.

Սուրբ Գրիգոր Տաթևացին, անդրադառնալով Սուրբ Դիոնեսիոսի աստվածաբանությանը, աստվածաբանության չորս տեսակ է առանձնացնում՝ տալովորական, պարճառաբանական, նշանական, խորհրդական: Տալովորական աստվածաբանությունը քննում է Սուրբ Երրորդության եւ մի Աստվածության որպիսությունը, Սուրբ Երրորդության Անձերի միջեւ հարաբերությունները: Պարճառաբանական աստվածաբանությունը քննում է պարճառելի-

⁶ Տե՛ս Ռ.Իրա Բ. Կոյունջյան, նշվ. աշխ., էջ 60:

⁷ “Axis Rule in Occupied Europe”, p. 79-89.

ների, այսինքն՝ Արարչի կողմից արարածների ստեղծմանը, արարչագործությանն առնչվող իրողությունները: Նշանական աստվածաբանության նյութն է զգալի կերպարանքների իմանալի տեսությունը՝ երեւելի արարածների նշանակությունը, ինչպես նաև Աստծո վերաբերյալ գործածվող անթրոպոմորֆիկ⁸ մարդաձևակազմական հատկությունների քննությունը: Իսկ խորհրդական աստվածաբանությունն այն է, որ երբ ամեն զգալի եւ իմանալի էություն մի կողմ ենք թողնում եւ մտքով ավելի խորքն ենք ընթանում, մտնում ենք ամպի եւ մեզի մեջ Մովսեսի նման⁹ եւ ապա տեսնում ենք Աստծուն՝ վեր ամեն էությունից, քանզի ո՛չ հոգի է, ըստ մարդկային ընկալման, ո՛չ միտք եւ ո՛չ էլ մարդու իմացած որեւէ այլ բան: Նենց այս էլ կոչվում է խորհրդական աստվածաբանություն, որովհետեւ խորհրդով ու հավաքով է տեսնվում, եւ ոչ թե մտքի քննությամբ¹⁰: Սուրբ Գրիգոր Աստվածաբանն ասում է, որ մի ժամանակ ավելորդ, քաղցրախոսք եւ խորամանկ աստվածաբանումը տեղ չունի քրիստոնեության մեջ: Ընեհակառակը, Աստծո մասին միայն հեղաբերությունը բավարարող ինչ-որ նոր բան անել կամ լսել, նշանակում էր նույնը, ինչ խաղալ քարերով եւ դրանց վեր ու վար նեղման արագությամբ խաբել տեսողությունը կամ զվարճացնել հանդիսատեսներին մարմնի տարբեր, կանացի շարժումներով¹¹: Սակայն աստվածաշնչյան սպանությունների առնչությամբ իրապես անհրաժեշտություն է առաջանում հարցը քննել առավել չափով պարզաբանական եւ նշանական աստվածաբանության տեսանկյուններից: Ինչպե՞ս բացատրել «Աստված սեր է» (Ա. Նովի. Դ. 16) սուրբգրական արտահայտությունն սպանությունների պատվերների հետ համեմատությամբ. կարո՞ղ է արդյոք Աստված-Սերը մղել սպանությունների կամ առավել եւս՝ ցեղասպանությունների: Այստեղ վեր է հառնում նաև մահապարժի խնդիրը, որը, ըստ Նին Կրակարանի, Աստված սահմանեց մարդասպաններին եւ աստվածային պատվիրաններին չհնազանդված մարդկանց խստորեն պարժելու համար (հմմտ. Ծննդ. Թ. 6, Ելք ԻԱ. 12, Դևտ. Ի. 4, 9-21, ԻԴ. 17, 21, Թվոց ԼԵ. 33, Բ. Օր. ԺԹ. 16-21):

Նին Կրակարանում Աստծո խստությունը եւ այլ ժողովուրդներին սպանելու կարգադրությունները հիմք դարձան մանիքեական դուալիստական աստվածաբանության ըստ որի՝ գոյություն ունեն բարի աստված եւ Նին Ուխտի չար աստվածը, ու բոլոր ժպարական, մարդակերպական հատկանիշները վերագրվում են չար աստծուն: Դուալիստական այս տեսակետի դեմ Դավիթ Անհաղթը խոսում է իր «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության մեջ¹²՝ նշելով Աստծո ստեղծագործություններին, արարածներին, աշխարհի կարգավորված շարժմանը նայելու եւ մրաժողության ու մրահայեցողության միջոցով Արարչին հասու լինելու¹³, ինչպես եւ Աստծո՝ արարչագործության վրա գերիշխանություն ունենալու մասին¹⁴: Այս աշխարհի դաժան ու չար Աստծո վերաբերյալ տեսակետները սխալվեցին գնոստիցիզմի միջոցով, որը ուշ հելլենիզմի շրջանի կրոնափիլիսոփայական ուղղությունների ամբողջությունն էր, արտահայտվում էր դեռեւս երկրորդ դարից սկիզբ առած համակարգված ուսմունքներով՝

8 Անթրոպոմորֆիզմը մարդկային հատկանիշների վերագրումով անձնավորումն է որեւէ իրի, կենդանու կամ աստվածության: Այս եզրը կազմված է հունարեն *άνθρωπος* (*anthrōpos*)՝ մարդկային, եւ *μορφή* (*morphe*)՝ կերպ, ձև բառերից:

9 Ելք ԻԴ. 15-18:

10 Տե՛ս Գրիգոր Տառնաղի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 122-123:

11 Տե՛ս «Творения иже во святых отца нашего Григория Богослова Архиепископа Константинопольскаго», «Творения Святых Отцевъ» въ русскомъ переводе издаваемая при Московско́й Духовно́й Академіи, томъ второй, Москва, въ типографіи В. Готье, 1851, էջ 186:

12 Տե՛ս Առաքել Սյունեցի, Ամբողջ չարք տանջանքի ենթակա է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1996, էջ 13:

13 Տե՛ս Դավիթ Անհաղթ, Երկեր, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունը Ս. Արեւշապյանի, Երևան, 1980, էջ 42:

14 Տե՛ս Դավիթ Անհաղթ, նշվ. աշխ., էջ 85:

նյութական աշխարհի ստեղծումն առնչելով չար սկզբի գործունեության ոլորտի հետ¹⁵: Գնոստիկյան մրքի առանձնահատկությունն է դուալիզմը, որը բացասաբար է արտահայտվում ստեղծված աշխարհի մասին, քանի որ այն համարում է աստվածային ոլորտից անկում ապրած ուժերի կողմից արարված: Նյութականության եւ խավարի աշխարհին հակադրվում է լույսի աստվածային աշխարհը, որը գլխավորում է արարված աշխարհի հետ առնչություն չունեցող անիմանալի Աստված: Երկնային ոլորտները գտնվում են Աստծո եւ մարդու հանդեպ թշնամական դիրքորոշում ունեցող ուժերի՝ արիստոսների իշխանության ներքո: Նրանց միությունը նկարագրվում է որպես թագավորություն, որը գլխավորում է արարված փիեզերքի արարիչ եւ փրակալ դեմիուրգը (հուն.՝ *δημιουργός*-արարիչ), որը հաճախ նույնացվում է Տին Կրակարանի Աստծո հետ¹⁶: Այսպիսով, փիեզերագոյացության գնոստիկյան տեսություններն արարված աշխարհի ծագումը պատկերացնում են որպես աններդաշնակություն կամ սխալի հետեւանք (*παράπτωμα*)՝ կարարված աստվածային ոլորտում, եւ այս ողբերգության պատասխանատվությունը կրում է մի էություն, որը սովորաբար անձնավորում է աստվածային Իմաստությունը: Գնոստիկյան տեսությունը համապատասխանաբար են մեկնում Ադամի մեղսագործության վերաբերյալ աստվածաշնչյան պատումը (Ծննդ. Բ.): Կենաց ծառի պտղից ուտելով՝ մարդն իմանում է դեմիուրգի հանդեպ իր գերազանցության մասին: Այդ մեկնաբանությամբ Օձը դրական նշանակություն ունի եւ գործում է բարձրագույն աստծո հանձնարարությամբ, ով ցանկանում է մարդուն փրկել արարչից եւ նյութական աշխարհի փրակալից¹⁷: Գնոստիկների կամ մանիքեականության բացատրությամբ տրամաբանական են թվում աստվածային «ցեղասպանությունների» վերաբերյալ սուրբգրային տեղեկությունները. քանի որ դաժան արարիչն է նյութական աշխարհի փրակալը, ապա եւ իր հովանավորյալներին պաշտպանելու եւ նրանց հակառակորդներին բնաջնջելու, իր կամքին չենթարկվողներին սպանելու պատվերները զարմանալի չեն: Այս տեսակետների կողմնակիցները հակադրություն են դնում Տին եւ Նոր Կրակարանների միջեւ, պնդում Տին Ուխտում եւ Նոր Ուխտում տարբեր՝ չար եւ բարի աստվածների գոյությունը: Մակայն Քրիստոս Ինքը այդպիսի տարբերակում չարեց, ավելին՝ մեջբերումներ կատարեց Տին Կրակարանից, որով եւ ընդունելի չեն գնոստիկների կամ մանիքեականների տեսակետները, որոնք հաշվի չեն առնում Քրիստոսի եւ առաքյալների դիրքորոշումը Նոր Կրակարանում: Քրիստոս հիշատակում է Աստծո կողմից Ադամի եւ Եվայի ստեղծումը (Մատթ. ԺԹ. 4-5), մարդկության մեղքերի համար աստվածային պարիժ ջրհեղեղը եւ Նոյի փրկվելը (Մատթ. ԻԴ. 37-39), անապատում հրեաներին մանանայով կերակրելը (Յովհ. Զ. 31) եւ այլն: Այս վկայություններն ինքնին համապատասխան չեն գնոստիկների, մանիքեականների՝ չար սկզբի կողմից աշխարհի ծագման, հինկրակարանյան ու նորկրակարանյան չար եւ բարի աստվածների գոյության պնդումներին:

Նակորոս առաքյալի խոսքով՝ «Ոչ ոք, երբ փորձության մեջ լինի, թող չասի. Աստծուց եմ փորձվում, քանի որ Աստված չարից չի փորձվում եւ Ինքն էլ չի փորձում ոչ ոքի» (Նակ. Ա. 13): Այս նախադասության հունարեն տարբերակը հետեւյալն է. «Μηδεις πειραζόμενος λεγέτω ὅτι ἀπὸ Θεοῦ πειράζομαι: ὁ γὰρ Θεὸς ἀπειραστός ἐστι κακῶν, πειράζει δὲ αὐτὸς οὐδένα»: Այստեղ հեղափոխական է *ἀπειραστός* *ἐστι κακῶν* արտահայտությունը, որը հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս **չարից չի փորձվում** տարբերակով: *ἀπειραστός* բառը գործածված է այն իմաստով, որ Աստված բացարձակորեն **անմասն է** չարից: Այս բացատրությամբ

15 Տե՛ս «Православная энциклопедия», под редакцией Патриарха Московского и всея Руси Алексия II, т. XI, Церковно-научный центр, էջ 628:

16 Տե՛ս «Православная энциклопедия», էջ 633, 634:

17 Տե՛ս անդ, էջ 635::

որևէ չար բան Աստուծոց չի կարող առաջանալ: Բայց Ամուսի մարգարեության մեջ հակառակն է ասվում՝ «Չարիք կապարահի՞, եթե Տէրը չի արել այն» (Գ. 6), ինչպես նաև Նաայու մարգարեության մեջ՝ «Ես եմ, որ խաղաղություն եմ անում եւ հասարարում եմ չարք» (ԽԵ. 7), Միքիայի մարգարեության մեջ՝ «Տիրոջ կողմից չարիք իջավ Երուսաղեմի դռների վրա» (Ա. 12): Մարգարեների խոսքերի առնչությամբ պետք է նկատի ունենալ, որ **չարիք** բառը երկու իմաստ ունի. առաջինը՝ մարդկային վարմունքի եւ բարոյականության՝ չարից հրահրվող արարքներ, եւ երկրորդ՝ չարիք են կոչվում նաև քաղցը, հիվանդությունը, բնական աղետները, որոնք չեն կարող իրական նպատակային չարիք լինել, որովհետև դրանք Աստուծո նախախնամությամբ մարդու համար պարճառ են դառնում առաքելության¹⁸: Աստվածաշնչում բազում անգամներ հանդիպող **չարիք** բառը թարգմանությունն է եբրայական Աստվածաշնչի **רע** *Ra* բառի, որն ընդհանրացված իմաստով գործածվում է որևէ վար բան ցույց տալու համար, ոչ թե ուղղակիորեն մարմնակերպ անբարոյականություն կամ անարդարություն, այլ՝ դժվարություններ կամ վար ժամանակներ¹⁹: Այսպիսի իմաստներ ունեն նաև Աստվածաշնչի համապատասխան հարվածներում գործածված հունարեն չարիք-κακός (եզակի), κακά (հոգնակի) բառի ձևերը:

Աստվածաշնչում՝ հայրկապես Հին Կրակարանում, Աստուծո վերագրվում են անթոյույն-մորֆիկ՝ մարդաձևակազմական հատկանիշներ: Ս. Գրիգոր Տաթևացիի մի օրինակով բացատրում է այս իրողությունը՝ ասելով, որ անպատեհ է Աստուծո բարկություն վերագրել, որովհետև Աստված անփոփոխելի քաղցրություն է: Այլ Աստուծո բարկություն է կոչվում այն աստվածային կամքը, որով մեղավորները չար գործերի համար պանջվում են²⁰: Այսպես նաև մարդկային բնավորությանը հատուկ այլ հատկանիշներով Աստուծո ներկայանալը անթոյույն-մորֆիզմի արտահայտություններ են՝ մարդկային ընկալունակությանը հասանելի լինելու համար: Անթոյույնմորֆիզմի հատկանիշներ ի հայտ են գալիս նաև այն բառապաշարում, որով Աստված դիմում է մարդկանց պարզիրաններ տալիս, որոնցից են եւ սպանությունների կարգադրությունները: Այս առնչությամբ հարկ է նշել, որ Աստված է կյանք ստեղծողը, Նա կենդանության շունչ փռեց մարդուն (Ծննդ. Բ. 7), Նրա կողմից ստեղծվեցին կենդանության շունչ ունեցող արարածները (Ծննդ. Ա. 20): Սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է, որ կյանք փռող Աստված լիովին իրավունք ունի կյանքը վերցնելու, կյանքից զրկելու, որովհետև Իր իսկ փրկվածն է եւր առնում²¹: Բայց ավելի ճշգրիտ լինելու համար պետք է ասել, թե քանի որ աստվածային ընդգրկում է երկրայինն ու երկնայինը, ժամանակավորն ու անժամանակը, Աստված ոչ թե ոչնչացնում է կյանքը, այլ վերջավոր իրականությունից տեղափոխում է անվերջավոր իրականություն: Այս ընկալումով Աստուծո կողմից մարդկային որևէ ցեղի, էթնոսի՝ վերջավոր իրականության մեջ ժամանակավոր գոյության ընդհատումը ճիշտ չի լինի դիտել որպես ցեղասպանություն, քանզի ցեղասպանության մարդկային իրագործման նպատակը խալատ ոչնչացումն է, ինչը երբեք չի կարող լինել աստվածային կամքի կամ գործողության վերջնակետ:

3. Սպանությունների վերաբերյալ Աստվածաշնչի դիրքորոշումը.

Աստվածաշնչում փարբերակում է կատարվում իրավացի եւ անիրավ սպանությունների միջև: Հին Կրակարանում մարդասպանության համար խստագույն պատժի սահմանումով

18 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ամառան հայրը, Կոստանդնուպոլիս, 1741, էջ 290-291, 294-295:

19 Տե՛ս "Hebrew-Chaldee lexicon to the Old Testament", H. W. F. Gesenius, էջ 772:

20 Տե՛ս «Գիրք հարցման», էջ 569:

21 Տե՛ս "The Homilies of S. John Chrysostom, Archbishop of Constantinople on the First Epistle of St. Paul the Apostle to the Corinthians", Oxford, John Henry Parker; F. and J. Rivington, London, MDCCCXLV, 1845, էջ 129-130:

հանդերձ Կրկնված են նաև իրավացի սպանության թույլատրվածություններ՝ ինքնապաշտպանության նպատակով (նույնիսկ նշվում է, որ ինքնապաշտպանության համար կատարված մարդասպանությունն սպանություն չի

համարվում (Ելք ԻԲ. 2), որպես հանցագործի մահապարիժ (Ելք ԺԹ. 12, ԻԱ. 16, ԻԲ. 20, ԼԵ. 2, Ղևր. Ի. 2, Ի. 9-16, ԻԱ. 9, ԻԴ. 16, Բ. Օր. ԺԳ. 6-10, ԺԷ. 12, ԻԱ. 20-21), պատերազմի ընթացքում (Բ. Օր. Է. 2, Բ. Թագ. ԻԳ. 8, 18): Աստվածաշնչում իրավացի սպանություն կատարողը նույնիսկ աստվածային օրհնության է արժանանում (Ելք ԼԲ. 29, Թվոց ԻԵ. 6-13, Ա. Մակ. Բ. 54), հերոսանում է Գողիթին սպանած Դավիթը (Ա. Թագ. ԺԷ. 43-54, Սաղմ. ԸԲԳ.): Նոր Կրակարանը համաձայն է Նին Կրակարանի՝ իրավամբ սպանության դիրքորոշման հետ. Քրիստոսի կողմից հավաքյալ համար մեծագույն գովեստի է արժանանում հաղթության (Մատթ. Ը. 5, Ղուկ. Է. 9), Նովիանենա Մկրտիչը զինվորներին չի պարվիրում զենքը թողնել և սպանություններ ենթադրող բանակային ծառայությունից հեռանալ, այլ՝ բավարարվել սրացված ժողովով (Ղուկ. Գ. 14), հեթանոսներից առաջինը Սուրբ Նոգու շնորհներին արժանանում է Կոնստանտինոս հաղթության համար, ում Նոր Կրակարանը գովում է իր բարեպաշտության, աղոթասիրության, արդարության ու աստվածավախության համար, և ում Աստված արժանացնում է Իր հալածյալ հայրությանն ու Կոնստանտինոսին (Գործք Ժ. 1-8, 22, 44-45): Այս դիրքորոշման վրա են հիմնված Եկեղեցու կողմից՝ հավատարմորդ զինվորների ու զորավարների սրբացումները: Աստվածաշնչի հայրությունական ամբողջականությունը, այնուամենայնիվ, այս իմաստով վարմունքի ու գիտակցության բարձրագույն դրսևորում է համարում որևէ մարդկային էակի կյանքից չզրկելը: Քրիստոնյաների հալածանքների շրջանում քրիստոսանմանության և նահապետության գաղափարը բացառեց այս ճանապարհով ընթացողների կողմից իրավամբ սպանության իրագործումը: Եկեղեցական կանոնների համաձայն՝ պատերազմում մարդասպանություն կատարած զինվորները թեև չեն մեղադրվում սպանության մեղքի մեջ, սակայն երեք տարի ժամանակ է սահմանվում ինքնամաքման և Սուրբ Հաղորդությանը մոտենալու համար²²: Անգամ պարահաբար մարդասպանություն գործած անձը, ըստ եկեղեցական կանոնների, չի կարող քահանայանալ, իսկ քահանայացածը հեռացվում է հոգևոր ծառայությունից²³:

4. Թեոդիցեա կամ աստվածարդարացում

Գերմանացի փիլիսոփա Գուրֆրիդ Վիլհելմ Լեյբնիցը, որ նամակագրության մեջ էր Պրուսիայի թագուհի Սոֆի Շառլոտի հետ, 1697 թ. իր նամակում հռոմ. Գ. 5-ի կապակցությամբ գործածեց թեոդիցեայի կամ աստվածարդարացման գաղափարը՝ սրբեղծելով նոր եզր, որն զգալի ազդեցություն ունեցավ և ունի աստվածաբանական վեճերի և քննարկումների վրա մինչև այսօր: Լեյբնիցի «Թեոդիցեա» աշխատության²⁴ գաղափարների ձևավորմանը նպաստել են նրա երկար գրույցները և գրագրությունը պրուսական թագուհու հետ²⁵: Թեոդիցեա բառի ծագումը գալիս է հունարեն Աստված (theos-θεός) և արդարություն (dike-δικαιοσύνη) բառերից, այս մոտեցման նպատակն է հերքել աշխարհում չարիքի գոյության համար Աստ-

22 Տե՛ս «Գիր կանոնական մեծի և գիրնատրի եպիսկոպոսապետի Բարսեղի առ սուրբն Ամփիլոքոս յԻկոնացոց եպիսկոպոս», կանոն Ը.: «Բարսեղի գիր կանոնական վասն պետսե և բիրապարիկ ախարից», կանոն Բ., «Կանոնագիրք Հայոց», Կ. Ա., աշխ.՝ Վ. Նալբանդյանի, Երևան, 1964:

23 Տե՛ս «Կանոնք Աթանասի», կանոններ ԼԲ., ԽԴ., ՆԱ., ՆԲ., ՆԳ., «Կանոնագիրք Հայոց», Կ. Բ., աշխ.՝ Վ. Նալբանդյանի, Երևան, 1971:

24 Տե՛ս "Essais de Théodicée sur la bonté de Dieu, la liberté de l'homme et l'origine du mal", 1710:

25 Տե՛ս Գотфрид Вильгельм Лейбниц, Философское наследие, сочинения в четырёх томах, т. 4, Академия Наук СССР, Институт философии, издательство "Мысль", Москва, 1989, էջ 6 (նաև՝ Կ. 3, էջ 371-394):

ծուն մեղադրողների փեսասկեսները՝ արդարացնելով Աստծուն: Աստծուն արդարացնելու կամ աստվածարարացման միտքը աստվածաբանական փեսասկեսից անհարկի է թվում, քանի որ արդարացումն ինքնին մեղքի առկայություն է ենթադրում, որի վերագրումն Աստծուն ընդունելի չէ: Այնուամենայնիվ, Լեյբնիցի աշխատության մեջ բավականին ուշագրավ խոհեր կան:

Լեյբնիցի ստեղծագործության մեջ սկզբից մինչև վերջ փեսասկեսի է գիտնական-փիլիսոփայի համոզումն Աստծո կողմից լավագույն աշխարհի ստեղծման մասին: Լեյբնիցն այսպես է բանաձևում իր փեսասկեսը. «...nisi inter omnes possibiles mundos optimus esset, Deus nullum produxisset» (Աստված աշխարհը չէր ստեղծի, եթե այդ աշխարհը չլիներ լավագույնը բոլոր հնարավոր աշխարհներից)²⁶: Նա, հակադրվելով այն կարծիքներին, թե իբրև Աստված կարող էր ավելի լավ աշխարհ ստեղծել, իր այն միտքն է հաստատում, թե աշխարհի արարումից առաջ Աստված, իմանալով գոյավորման պարագային բոլոր հնարավոր աշխարհների որպիսության եւ ընթացքի մասին, ստեղծել է լավագույնը այն ամենից, ինչը կարող էր գոյություն ունենալ, եւ այս փիեզերքը պետք է ընդունվի որպես լավագույնը, քան հնարավոր բոլոր մյուսները: Այսպիսով, ըստ Լեյբնիցի, Աստված քննել է համեմատել է բոլոր հնարավոր աշխարհները եւ ապա այդ հնարավոր փոքրերակներից ընտրել է ստեղծել է լավագույնը: Սակայն այս փեսասկեսը, որը գործողությունից առաջ քննելու, փոքրերակների միջև ընտրություն կատարելու, մտորելու անհրաժեշտությունն է ենթադրում, պարզա՞ն չէ գործածել Աստծո պարագային, քանզի աստվածային ամենագիտությունը քննարկումների կամ ընտրությունների առջև կանգնելու կարիք չունի: Լեյբնիցի աստվածարարացման վերաբերյալ աշխատությունը քննադատել է փիլիսոփա Վոլֆերը 1759 թ. հրատարակված իր «Կանդիդ կամ օպրիմիզմ» ստեղծագործության մեջ՝ նկարագրելով իր հերոսներին պարուհասած դժբախտություններն ու թշվառությունները, ծաղրանքով նշելով, որ անգամ ծայրահեղ նեղությունների մեջ փանջվելիս պետք է լավատես լինել, քանի որ ապրում ենք բոլոր հնարավոր աշխարհներից լավագույնում: Լավագույն աշխարհի գաղափարի եւ դրա քննադատությունների առնչությամբ պետք է ասել, որ դրանց հեղինակները նկատի չեն առնում երկու կարևոր իրողություններ: Առաջին՝ աշխարհն իրատես, ըստ Աստվածաշնչի (Ծննդ. Ա. 31), ստեղծվեց իբրև լավագույն, ինչը համապատասխան է Լեյբնիցի մտքին, սակայն մարդու անկումը եւ մեղքի փարածումը բացասաբար ազդեց լավագույն աշխարհի կամ փիեզերքի վրա: Լեյբնիցը անտեսում է այս փաստը՝ աշխարհն ամեն դեպքում համարելով լավագույն, որում կարող են մեղքեր եւ դժբախտություններ փնդ գրնել: Երկրորդ՝ Լեյբնիցի քննադատները, որոնց թվում եւ Վոլֆերը, կարծես թե շփոթում են լավագույնի եւ կատարյալի փոքրերությունները: Աշխարհը, ստեղծված լինելով իբրև լավագույն, այնուամենայնիվ, կատարյալ չէ: Կատարելությունը հատուկ է դրախտին կամ երկնային արքայությանը, բացի այդ փիեզերքն անկում է ապրել մեղսագործության հետևանքով: Ըստ Աստվածաշնչի՝ երկրի ներկա կարգավիճակը անիծյալն է (Ծննդ. Գ. 17): Եթե աշխարհը լիներ կատարելություն, ապա այն նման կլիներ դրախտին, մինչդեռ հավատացյալ մարդն ապրում է ավելի կատարյալին անցնելու, դրախտային պայմաններում հավիտենապես բնակվելու ձգտումով: Երկիրը մարդու ժամանակավոր օրրանն է հավիտենական բնակության հասնելու ճանապարհին: Եւ լավագույն ստեղծված, բայց անկում ապրած աշխարհի մեջ նաեւ մեղքեր, ոճիրներ, սպանություններ ու ցեղապանություններ են գործվում, որի բացատրության համար հարկ է անդրադառնալ չարիքի բնույթի մասին առկա հարցերին:

²⁶ Տե՛ս «Анатомия мудрости, 106 философов, жизнь, судьба, учение», 2, «Таврия», Симферополь, 1955, էջ 473:

5. Չարիքի գոյության մասին.

Փիլիսոփայության մեջ լայնորեն փարածված է ուսմունքն այն մասին, որ գոյություն ունեն չարիքի երեք տեսակներ՝ մեղափիզիկական, բարոյական եւ ֆիզիկական: Մեղափիզիկական չարիքն էականորեն սահմանափակությունն է, բարոյական չարիք կոչվում է մեղքը, այսինքն՝ բարոյական նորմերի խախտումը, ֆիզիկականը մարմնական չարչարանքներն են: Այս ուսմունքի համաձայն՝ մեղափիզիկական նախասկիզբ չարիք գոյություն չունի²⁷: Այսպես նաեւ Լեյբնիցը չարիքի այս երեք տարբերակումներն է անում²⁸: Նա իր աշխատության մեջ բանավիճում է ֆրանսիացի փիլիսոփա եւ հրապարակախոս Պիեռ Բեյլի հետ, որ սկեպտիկական ռացիոնալիզմի դիրքերից քննադատում էր Դեկարտի, Սպինոզայի, Լեյբնիցի եւ այլ փիլիսոփաների մեղափիզիկական, հարկապես այն միտումը, որով բնագանցությունը կապվում էր Աստծո հետ: Լեյբնիցը բերում է Բեյլի նկարագրած պարկերակող, ենթադրելի բանավեճը հավիտենական մեկ սկզբի ջարդագով հույն փիլիսոփա Մելիսի եւ դոալիզմի հիմնադիր Զրադաշտի՝ փիլիսոփայական լեզվով ներկայացնելով չարի խնդիրը: Զրադաշտը համաձայնում է, որ Մելիսի տեսությունը ավելի համապատասխան է կարգի եւ հիմունքների հետ *a priori*, բայց մերժում է դրա համապատասխանությունը փորձի եւ հիմունքների հետ *a posteriori*: «Նա առավելություն ունեւ, - ասում է Զրադաշտը, - երեւոյթների բացատրության մեջ»: Պիեռ Բեյլը նաեւ «Պավլիկյաններ» վերնագրով հոդվածում, զեպեղված նրա կողմից իր «Պարմական քննադատական բառարանի» մեջ, հաստատում է այն, ինչ ասում է նաեւ մանիքեականների մասին հոդվածում: Նրա տեսանկյունով ուղղափառ քրիստոնյաները, ըստ երեւոյթին, նույնպես ենթադրում են երկու նախասկիզբ՝ սատանային ընդունելով որպէս մեղքի պատճառ²⁹: Սակայն Լեյբնիցի կարծիքով երեւոյթին ոչ այնքան ճշգրիտ բացատրություն են տալիս, երբ մատնացույց են անում մոլորակա պատճառը: Օրինակ՝ չարիքի դեպքում ցույց են տալիս *principium maleficum*, երբ խոսքը գնում է ցուրի մասին՝ *principium frigidum*, ինչը պարզունակ բացատրություն է, որովհետեւ դրանից ավելի հեշտ եւ պարզ բան չկա³⁰: Որեւէ երեւոյթի անմիջական պատճառի առկայության մասին խոսել է դեռեւս Պլատոնը իր «Ֆեդոն» ստեղծագործության մեջ: Երբ մարմինը, ջուրը կամ կրակը տաք է, նրան հատուկ է ջերմության իդեան: Իսկ երբ մարմինը սառնում է, դա չի նշանակում, որ տաքության իդեան եւս ասում է դարձել, դա միայն նշանակում է, որ տաքության իդեան այստեղ մի կողմ է հեռացել եւ տեղը զիջել է սառնության իդեային՝ մնալով նույնպես հակադիր սառնության իդեային, ինչպես նախկինում³¹: Բայց ըստ Լեյբնիցի՝ սխալ է չարիքի պատճառը բացատրել հարուկ սկզբով՝ *per principium maleficum*, քանի որ չարիքը այդ պատճառի անհրաժեշտությունը չունի, ինչպես եւ՝ ցուրտն ու խավարը: Չարիքը ծագում է միայն զրկումից³²: Լեյբնիցը նշում է եկեղեցական հեղինակներից Օգոստինոսի, Բարսեղ Կեսարացու, Թովմա Աքվինացու նմանաբան պետականները³³:

Օգոստինոսը «Կամքի ազատության մասին» աշխատության մեջ բացատրում է, որ Աստված չարի պատճառ չէ, քանզի չարիքը բարու պակասն է եւ կապված է ազատ կամքի ընդ-

27 Տե՛ս Н. О. Лосский, Бог и мировое зло, Москва, 1994, էջ 341:

28 Տե՛ս Готфрид Вильгельм Лейбниц (նշվ. աշխ.), О справедливости Бога, свободе человека и начале зла - 21, 81, Замечания на книгу о начале зла, изданную недавно в Англии - 7:

29 Готфрид Вильгельм Лейбниц (նշվ. աշխ.), О справедливости Бога, свободе человека и начале зла - 156.

30 Տե՛ս անդ, էջ 152:

31 Երբ Ի՛ն. 15-18:

32 Տե՛ս Готфрид Вильгельм Лейбниц (նշվ. աշխ.), О справедливости Бога, свободе человека и начале зла, էջ 153, 378:

33 «Классическая философская мысль, Платон», «Федон, Пир, Федр, Парменид», Москва, издательство «Мысль», 1999, («Федон», 103d), նաեւ ծանոթագրությունը՝ էջ 425:

րության հետ: Նա մարմնի անդամների օրինակն է բերում, որոնցով են չար, են բարի գործեր կարելի է կատարել՝ կախված կամքի ընտրությունից³⁴: Նման բացատրություն է բերում նաև Սուրբ Բարսեղ Կեսարացին «Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն» վերնագրով մեկնողական գործի մեջ: Ծննդոց գրքի Ա. գլխի 2-րդ համարի «խավար էր փրկում անհունի վրա» խոսքերը մեկնելիս՝ նա անդրադառնում է չարի գոյության պարզաբանին՝ նշելով, որ չարը Աստուծոց սկիզբ չի առել, քանի որ հակառակն իր հակառակից չի ծնվում: Չարը կենդանի է շնչավոր էություն չէ, այլ հոգու վիճակ, հակառակ առաքինությանը, եւ առաջանում է բարուց անկման միջոցով³⁵: Նաև Թովմա Աբվինացին «Summa theologica» աշխատության մեջ հափուկ շեշտում է չարիքի պակասություն լինելը³⁶՝ կարեւորելով այս հասկացության մեջ բարիքից զրկվելու, զուրկ լինելու շեշտադրումը: Բարիքի բացասաբար պակասությունը փոխալ իրի կամ անձի բնությանը ոչ հափուկ հարկանիշից չարիք չէ, այլ չարիք է զրկվածությամբ պակասությունը: Օրինակ՝ մարդը չունի կենդանիներին հափուկ արագություն կամ ուժ, բայց այս պակասությունը չարիք չէ, իսկ փեսողությունից զրկումը չարիք է, որ կոչվում է կուրություն³⁷: Մեղքի, չարիքի առկայությունը անձնիշխան կամքի հետ են առնչում նաև Եզնիկ Կողբացին³⁸, Առաքել Սյունեցին³⁹, Գրիգոր Տաթևացին⁴⁰ եւ այլք, քանզի չարիքը ոչ թե անձնավոր է, այլ կամածին⁴¹:

Սահմանելով չարիքը որպես ոչ աստվածասերիչ եւ բարու պակասություն, այնուամենայնիվ, մնում է այն հարցը, թե ինչո՞ւ է Աստված թույլ փախի չարիքի առկայությունը մարդկության կյանքում: Ֆիզիկական չարիքը սովորաբար բխում է բարոյական չարիքից, չնայած դա ոչ միշտ է փեղի ունենում միեւնույն սուբյեկտներում⁴²: Լեյբնիցը եկեղեցական հեղինակների հետ համաձայնությամբ նշում է, որ Աստված ավելի հիմնավոր եւ ծանրակշիռ պարզառուին չարիքի թուլությունն համար: Նա ոչ միայն դրանից ամենամեծ բարիքներն է հանում, այլեւ չարիքը կապված է դառնում հնարավոր մեծագույն բարիքների հետ, այնպես որ անկախարություն կլինեք, եթե Աստված չարիք թույլ չտար⁴³: Առաքինությունը եւս երբեմն կապված է մեղքի, արարի հետ: Գթությունը ենթադրում է դժբախտություն, արդարադատությունը՝ մեղք, հանցանք⁴⁴: Չարիքը թույլ է փրկում ոչ թե բացարձակ անհրաժեշտության, այլ նպատակահարմարության սկզբունքից, քանզի աստվածային կամքի հիմքը կարելի է գրել միայն բարիքի մեջ⁴⁵: Ահա թե ինչու վշտերը ոչ միայն առաքյալներն կվարձավորեն, այլ նույնիսկ կծառայեն երանության մեծացմանը, եւ նման չարիքը ոչ միայն օգտակար է, այլեւ՝ անհրաժեշտ⁴⁶: Լեյբնիցն իր ասածը հիմնավորում է նաև Աստվածաշնչով՝ մեջբերելով Պողոս առաքյալի

34 Stn **Augustine**, On the Free Choice of the Will, On Grace and Free Choice, and Other Writings, edited by Peter King, Cambridge University Press, 2010, էջ 67:

35 «Սրբոյ Բարսէղի Եպիսկոպոսի Կեսարոյ Կապաղովկացոց Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն», ի փարսանի Սրբոյ Ղազարոյ, Վենետիկ, 1830, էջ 29-34:

36 Stn **St Thomas Aquinas**, Summa Theologica, vol. 1 of 10, translated by Dominican Province, republished 2007 by Forgotten books, էջ 472, 473, 474, 475, 478, 479, 482, 487:

37 Անդ, էջ 475, 479:

38 Stn «Եզնիկայ Կողբացոյ Բագրեանոյայ Եպիսկոպոսի Եղծ աղանդոց, ի Սուրբն Ղազար», Վենետիկ, 1826, էջ 29, 34-35:

39 **Առաքել Սյունեցի**, նշվ. աշխ., էջ 25:

40 Stn «Ամառան հարդոր», էջ 136-137:

41 Stn «Եղծ աղանդոց», էջ 36, 59, 60:

42 **Готфрид Вильгельм Лейбниц**, նշվ. աշխ., էջ 32:

43 Stn անդ, 127:

44 Stn անդ, էջ 238. նաև՝ «Summa Theologica», vol. 1 of 10, էջ 474:

45 **Готфрид Вильгельм Лейбниц**, նշվ. աշխ., էջ 36:

46 Stn անդ, էջ 35, 55:

խոսքերը. «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդարվելու գալիք փառքի հետ, որ հայրանվելու է մեզ» (Նոմ. Ը. 18): Լեյբնիցի խոսքով՝ չարիքի վերաբերյալ հարցի պատասխանը տրված է Քրիստոսի կողմից Իր հրաշալի համեմատության մեջ. «Եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արոյունք կրա» (Յովհ. ԺԲ. 24)⁴⁷: Բարոյական եւ ֆիզիկական չարիքից տարբեր է մեղաֆիզիկական չարիքը, որն արարածների սահմանափակ կարողությունն է կատարելության առումով, ինչը ենթադրում է անկատարություն, որ կարող է բերել մեղքի, հանցանքի: Այսպես կարելի է ասել, որ Աստված արարածներին կատարելություն է հաղորդում, որը, սակայն, սահմանափակվում է նրանց ընդունման տկարությամբ, այնպես որ բարիքը լինում է աստվածային գործությունից, իսկ չարիքը արարածների տկարությունից⁴⁸:

Չարիքի թույլությունն իբրեւ նպատակ ունի փիեզերքի բարիքը⁴⁹: Վաղ շրջանի կաթոլիկ եկեղեցական հեղինակները Ադամի անկումը կոչում էին *felix culpa*⁵⁰՝ երջանիկ մեղք, քանի որ նրա մեղքը քավված եղավ անգնահատելի շնորհով, որ հայրնվեց Աստծո Որդու մարդեղացման միջոցով, որով փիեզերքին տրվեց ավելի մեծ պարգև, քան այն ամենը, ինչ կլիներ արարածների մեջ առանց դրա:

Քրիստոնեության սկզբնական ժամանակաշրջանի եկեղեցական հեղինակների արտահայտած մտքերը Աստծո կողմից չարիքի թույլության եւ դրանից բարիք վեր հանելու վերաբերյալ, հեղափոխի հեղինակների մոտ արտահայտվեց «թույլատու կամք» արտահայտությամբ, որով առանձնացում կատարվեց Աստծո փոփոխական կամ հարկադիր եւ թույլատու կամքի միջև: Նախ է տարբերակումով նշել պատահող չարիքների թույլությունները թույլատու կամքի ուղղակի եւ անուղղակի կերպով լինելու մասին: Թույլատու կամքով էր, որ Աստված թույլ տվեց Նոբի փորձվելը սալամայից, ինչպես նաեւ՝ մարդկանց մեղսագործությունը, չարիքի պատահումը աշխարհում: Նոգեւոր կատարելության բերելու կամ խրատելու, ավելի մեծ փորձանքներից ազատելու, երկնային ավելի մեծ պարգևների արժանացնելու նպատակով մարդու փորձությունը թույլատու կամքի ուղղակի արտահայտություն է, ինչպես օրինակ՝ Նովատիի մատվելը եղբայրների կողմից, սպրկության վաճառվելը, բանտ նետվելը (Ծննդ. ԼԷ. 39-40) եւ այլն: Իսկ դժբախտությունները, բռնությունները, փորձանքները, որոնցից եւ մարդասպանություններ ու ցեղասպանություններ, կարող են համարվել թույլատու կամքի անուղղակի արտահայտումներ, քանզի նպատակային բարիք չեն ենթադրում ու ցանկալի չեն Աստծո կողմից, բայց աստվածային նախախնամությունը կարող է չարիքից բարիք վեր հանել: Քանզի շատ իրողություններ, որ կատարվում են աշխարհում, հանելի չեն Աստծուն, սակայն ոչ մի բան չի կարող տեղի ունենալ հակառակ աստվածային կամքի (Մատթ. Ժ. 29): Սուրբ Գրիգոր Տաթևացին աստվածային կրկնակի կամքի մասին է խոսում՝ կոչելով այն ողորմության եւ արդարության կամք: Առաջին կամքով Աստված ողորմության գործեր է անում, քանզի արարիչ Աստծո կամքն է սրելով եւ պահպանել արարածներին, ինչը Նա անում է բնությամբ եւ հոգիությամբ: Իսկ երկրորդ կամքով Աստված արդարության գործեր է անում՝ միաժամանակ չցանկանալով պատուհասել եւ պատժել, բայց մարդկանց անիրավ

47 Անդ. էջ 54:

48 Տե՛ս անդ. էջ 69, 72:

49 Տե՛ս **Готфрид Вильгельм Лейбниц**, նշվ. աշխ., Приложения, краткое изложение ученого спора, введенного к силлогистической форме – I. ևսև՝ “Summa Theologica: Treatise on the distinction of good and evil”, vol. 1 of 10, էջ 477. Н. О. Лосский, նշվ. աշխ., էջ 351:

50 “Saint Thomas d’Aquin, maître spirituel”, initiation 2, 3e édition 2008, par Jean-Pierre Torrell O. P., Pensée antique et médiévale, Cerf, Academic Press Fribourg, p. 95. The Routledge Dictionary of Latin Quotations, Jon R. Stone, 2005, p. 159. **Готфрид Вильгельм Лейбниц**, Приложения, краткое изложение ученого спора – I.

գործերը նրանց վրա են բերում ասարվածային պարտիսանները⁵¹։ Թույլատրու կամքի արտահայտություններ են Ասարվածաշնչում Ասարծո կողմից չարիքների պատահումի կամ դրանք գործելու թույլտվությունները։ Սուրբգրական այդ վկայություններում նույնպես տեղ առ տեղ առկա են Ասարծուն մարդակազմաձևական հատկանիշների վերագրումներ։ Այն հատվածներում, որտեղ անթրոպոմորֆիզմն իր լիակատար դրսևորման մեջ է, Ասարված Ինքն է ուղղակիորեն պատվիրում գործել այս կամ այն չարիքը, իսկ որտեղ շարադրանքը գերծ է անթրոպոմորֆիզմային գործածումներից, մարդու ազատ կամքով է պայմանավորվում չարի եւ բարու, չարիք կամ բարիք գործելու ընտրությունը։ Օրինակ՝ Ասարված խարացնում է փարավոնի, Եսեբոնի թագավորի սիրտը (Ելք Է. 3, Թ. 12, Բ. Օր. Բ. 30), հրամայում է չարախոսել (Բ. Թագ. ԺԶ. 10), Ասարծուց է կախված այն, որ մարդիկ խաբում են կամ խաբվում (Նոր ԺԲ. 16), Ասարված գրկում է դարավորներին դարտությունից (Նոր ԺԲ. 17), մարդը չի կարող առ Քրիստոս գալ, եթե Նայրը նրան չձգի (Յովի. Զ. 44), Ասարված ողորմում է՝ ում ուզում է, կարծրացնում է սիրտը նրա՝ ում ուզում է (Նո. Թ. 18)։ Ասարծո կողմից ոչ թե ուղղակիորեն մարդուն չար կամ բարի գործողության փանելու, այլ ասարվածային թույլատրու կամքով մարդկային ազատ կամքի դրսևորմամբ իրականացվող արարքների մասին են հետևյալ համարները։ Ասարված մարդու առջև ընտրություն է դնում չարի ու բարու, կյանքի եւ մահվան միջև՝ կյանքն ընտրելու խորհուրդ փալով (Բ. Օր. Լ. 19), մարդիկ իրենք պետք է ընտրեն, թե ում պիտի պաշտեն (Նեսու ԺԴ. 15), պետք է կարողանան փարբերակել բարիքը չարիքից (Ես. Է. 16), Ասարված բարի պարտուներ է սպասում մարդկանցից (Ես. Ե. 4-5), մարդիկ մեծագույն չարիքներ են գործում, ինչը Ասարված չի հրամայել ու չի ասել եւ ինչը չի անցել Նրա մարքով (Երեմ. ԺԹ. 5, 14), Իսրայելն է իր կործանման պարճառը (Օս. ԺԳ. 9), Ասարված կամենում է, որպեսզի բոլոր մարդիկ փրկվեն (Ա. Տիմ. Բ. 4)։

Ասարծո բարության ու արդարության շեշտումով է Սուրբ Բարսեղ Կեսարացին մեկնում Սուրբ Գրքի այն խոսքը, ըստ որի Ասարված է սպանում եւ կյանք փալիս. «Չկա Ասարված Ինձնից բացի, Ես եմ սպանում եւ Ես եմ ապրեցնում» (Բ. Օր. ԼԲ. 39, նաեւ Ա. Թագ. Բ. 6)։ Ժողովուրդների մեջ բոլոր դժբախտությունները, ինչպես ասում է Բարսեղ Կեսարացին, համապատասխան են մեղքերի շարանալուն, եւ Ասարված համաժողովրդական արարքները վերացնում է համաժողովրդական մահապատիժներով։ Բոլոր բնական աղեկները լինում են ժողովուրդների մեղքերի պարճառով։ Ասարված դրանք թույլ է փալիս, որպեսզի մնացյալներին խրախոսի⁵²։ Ասարծո՝ սպանելու եւ կյանք փալու խոսքերը նշանակում են, որ Ասարված սպանում է մեղքով եւ կյանք փալիս ճշմարտությամբ, այն չափով, որքանով որ արարքին մարդը քայքայվում է, ներքին մարդը նորոգվում է օրբարօրե (Բ. Կորնթ. Դ. 16)։ Ասարված ոչ թե մեկին սպանում է եւ մյուսին կյանք փալիս, այլ նույն մարդուն կենդանացնում է նրանով, որով սպանում է, եւ բուժում նրանով, որով հարվածում է՝ համաձայն Առաջ ԻԳ. 14-ի. «Դու նրան կհարվածես գավազանով, բայց նրա հոգին կփրկես մահից»⁵³։

Մարդկանց կողմից կատարվող ամենանողկալի հանցագործությունը փոքրիկ երեխաների սպանությունն է, որը մասսայաբար իրականացվում է ցեղասպանությունների ժամանակ։ Խնդիրն առավել ցավոք է դառնում Ասարվածաշնչում մանկասպանության պատվերների դիտարկումով։ Մեծ գրողների եւ մտածողների թվում նաեւ Դոստոևսկուն մեծապես փանջում էին հատկապես բոլորովին անմեղ երեխաների չարչարանքների մասին հարցը⁵⁴։ Սուրբ

51 Տե՛ս «Ամառան հարոր», էջ 39։

52 Տե՛ս «Памятники святоотеческой письменности, Антология, Восточные отцы и учителя Церкви IV века», в трех томах, 1998, էջ 148։

53 Անդ, էջ 147։

54 Տե՛ս **Н. О. Лосский**, Бог и мировое зло, էջ 109, 119։

Գիրքը վկայում է, որ մշտական բնակության համար փարածք գրավելու նպատակով արշավի ելած հրեաներին Ասրված պարվիրել է սպանել ոչ միայն իրենց հակառակորդներին, այլև՝ նրանց երեխաներին, նույնիսկ՝ ծծկեր մանուկներին, դեռ չծնված մարդկային էակներին՝ հղի կանանց սպանությամբ (Ա. Թագ. ԺԵ. 3, Թվ. ԼԱ. 17, Բ. Օր. Բ. 34, Գ. 6): Այսպիսի պարիժ է սահմանվում նաև Ասրծու դեմ դուրս եկածների համար, որոնց երեխաները կսպանվեն նրանց աչքի առաջ, ծծկեր երեխաները քարի կգարնվեն, և նրանց հղի կանանց որովայնները կպարծվեն (Օս. ԺԴ. 1, Ես. ԺԳ. 15-18): Նրեաներին եզիպրական գերությունից ազատելու համար Ասրված կորոտում է եզիպրացիների բոլոր առաջնեկներին (Ելք ԺԱ. 4-5, ԺԲ. 29): Եղիսն մարգարեն իրեն ծաղրող փոքրիկ երեխաներին Տիրոջ անունով անիծում է՝ նրանց անվանելով հանցանքի և ունայնության որդիներ, և անփառից երկու արջ են ելնում ու այդ մանուկներից քառասուններկու հոգու պարտառություն (Դ. Թագ. Բ. 23-24):

Ասրվածաշնչում կարելի է տեսնել մանկասպանության երկու տեսակ՝ Ասրծու հրամանով կամ պարծով, և չարի հրահրումով, ինչպես Նին Կրակարանում փարավոնի կարգադրությամբ հրեա մանուկների սպանությունները (Ելք Ա. 22) և Բեթղեհեմի մանուկների կորուստը Նոր Կրակարանում (Մաթթ. Բ. 16): Մանկասպանության ասրվածային թելադրության պարագային նկատվի է առնվում ծնողների մեղքը, երեխաների մեղսագործներ ու չարագործներ դառնալու հեռանկարն ըստ ասրվածային կանխագիտության: Սակայն ինչո՞ւ դեռևս անմեղ երեխան պիտի պարծվի իր ծնողների մեղքերի համար: Ասրվածաշնչում թեև ասվում է, որ զավակները հայրերի և հայրերը զավակների փոխարեն չպիտի պարծվեն (Բ. Օր. ԻԴ. 16, Եզեկ. ԺԸ. 20), բայց նաև նշվում է, որ մեղքերի համար Ասրված պարծում է մարդկանց երրորդ և նույնիսկ չորրորդ սերնդին, իսկ ասրվածահաճո կյանքի համար օրհնում է մինչև հազարերորդ սերունդ (Ելք Ի. 5-6, Բ. Օր. Ե. 9-10): Այս հակադիր հաստատումները պետք է հասկանալ այն իրողությամբ, որ զավակները ծնողների և ծնողները զավակների փոխարեն պարծվում են այն դեպքում, երբ մեղքի ազդեցությունը, հակումը կամ պարծառը երկուստեք է: Այսպես, բարեպաշտ Նեդի քահանան մահվամբ է պարծվում իր մեղսալի որդիների պարծառով, որովհետև բավականին նախանձախնդիր ու խիստ չէր իր զավակներին խրափելու և մեղավոր ճանապարհից դարձի բերելու համար (Ա. Թագ. Բ. 22-25, 29): Երեխաները պարծվում են իրենց չարագործ ծնողների չար գործերին մասնակցություն բերելու և դատապարտելի նույն ճանապարհով ընթանալու կանխարեմամբ, ինչպես ասում է նաև մարգարեն. «Պարտապիր թո որդիներին՝ իրենց հայրերի մեղքերի պարծառով սպանվելու համար, որպեսզի ուրքի չելեն նրանք, չնվաճեն երկիրը և այն չցնեն պարերազմներով» (Ես. ԺԴ. 21): Մարդկային փրամաքանությամբ թվում է, թե վաղաժամ մահվան ենթարկված երեխաները կարող էին մեծանալ և առաքինի կյանքով ապրել: Սակայն Ասրծու կանխագիտության (prescience) նկատառումով այն եզրահանգումն է առաջ գալիս, թե Ասրված կանխավ գիտեր, որ այդպես չէր լինելու: Ասրված գիտե, թե մարդն ինչ պիտի անի հետագայում իր ազատ կամքով գործադրվելիք քայլերով, սակայն չի ազդում ազատ կամքի վրա, և միևնույն ժամանակ ասրվածային կանխագիտությունը չի խափանում մարդկային ազատ կամքը: Այսպես նաև վախճանված մարդու պարագային Ասրված կարող է իմանալ, թե նա իր ազատ կամքով ինչպիսի կյանքի ընթացք կունենար: Ներելաբար, դեռևս չգործված իրողությունը չի վերացնում Ասրծու ամենագիտությունը և կանխիմացությունը հնարավոր կատարվելիք գործողությունների և դեպքերի մասին:

Կատարյալ արդարությունը հավիտենության կատեգորիա է. ոչ հավիտենական, ժամանակային սահմաններում դիտարկելիս մարդկային արդարության համեմատ Ասրված նույնիսկ անարդար կարող է թվալ՝ մի կողմից շատ դեպքերում անգամ ծանր մեղավորներին

չպարժելով ու ներելով, մյուս կողմից երեխաների վաղաժամ մահ թույլ տալով: Նավիարե-
նության դիվարկերից, սակայն, ժամանակային սահմաններով պարփակված արդարության
հասկացությունն իր Կեղեր զիջում է հավերժության մեջ հարաբերող արդարության գաղա-
փարին:

6. Աստվածաշնչյան «ցեղասպանությունների» եւ Նայոց Յեղասպանության մա- սին.

Աստվածաշնչյան առաջին հայացքից ապշեցնում են այն հատվածները, որոնցում նկա-
րագրված է, թե ինչպես է Աստված պարվիրում բնաջինջ անել ամբողջ ժողովուրդների: Աստ-
ված հրահանգում է ոչնչացնել յոթ ազգերի՝ քեդացիներին, գերգեսացիներին, ամորհացիներ-
ին, քանանացիներին, փերեզացիներին, խեւացիներին ու հեբուսացիներին եւ աստվածային
պարվերի համաձայն ոչ ոքի կենդանի չթողնել, որպեսզի նրանք իրենց գարշելի մեղքերը
եւ կռապաշտությունը չտարածեն հրեաների մեջ (Բ. Օր. Է. 1-2, Ի. 16-17): Աստված գորակե-
ցությամբ քաջալերված հրեաները Երիքովի գրավումից հետո սպանում են Կանաանացիներին,
կանանց, ծերերին, երիտասարդներին եւ ընտանի անասուններին (Նեա Զ. 21), Աստված կող-
մից հրահանգվում է՝ նույն կերպ վարվել Գայիի թագավորի եւ ողջ բնակչության հետ (Նեա.
Ը. 2), կոտորել եւ ոչնչացնել ամաղեկացիներին, հարիմացիներին, նրանց կանանց, երեխա-
ներին ու կաթնակեր մանուկներին (Բ. Օր. ԻԵ. 19, Ա. Թագ. ԺԵ. 3), իսկ բոլորին ոչնչացնե-
լու պարվերը զանց առնելու եւ ոմանց խնայելու համար պարվում է Սավուդ թագավորը
(Ա. Թագ. ԺԵ. 18-33): Աստվածաշնչյան այս կոտորածների պարճառը, ինչպես եւ ասվում
է Սուրբ Գրքում, պարվող ժողովուրդների հոգեւոր եւ բարոյական գարշելի վիճակն է եղել:
Եւ ի պարբերություն նոր ժամանակների ցեղասպանությունների, որոնք իրականացվել են
Կոտորածական, քաղաքական, Կարածքային նկատառումներով, հինկրակարանյան ազգերի
բնաջնջումը նպատակ է ունեցել աստվածային արդարության իրագործումն ու մեղքի վերա-
ցումը: Անգեղջ մեղքի անպարժելիությունը աստվածային արդարության բացակայություն
կնշանակել, եւ Աստված չէր լինի արդար, քանզի աստվածային բարությունն ու արդարութ-
յունը միմյանց ներհակ չեն եւ երկուսն էլ պետք է ի հայտ գան: Նախառակ դեպքում Աստված
կլիներ բարի, բայց ոչ անարդար կամ արդար, եւ չէր հանդիսանա իբրեւ ամենագոր աստվա-
ծություն, այլ կվերածվեր գերբնական մի ուժի կամ էակի: Մովսեսը սովորեցրել էր հրեանե-
րին, որ «Աստված գործերը ճշմարիտ են, ու Նրա ուղիները՝ օրինավոր: Աստված հավատարիմ
է, եւ Նրա մեջ անիրավություն չկա, Տերն արդար է ու անարար» (Բ. Օր. ԼԲ. 4): Նրեաների
համոզմունքով Աստված Իր արդարությամբ եւ հեղինակությամբ լրիվ իրավասությունն ունի
կործանելու որեւէ մեղսալի քաղաք կամ ժողովրդի, քանի որ Աստված դատաստանը եւ իմաս-
տությունը գերիվեր է մարդկայինից: Այս հավատը նրանց մղում էր ամբողջովին վարահելու
Աստվածին, նույնիսկ եթե Աստված նրանց պարվիրում էր անել այն, ինչ իրենք չէին անի որեւէ
այլ մեկի պարպադրանքի դեպքում: Այդ պարճառով սպանությունների կարգադրություննե-
րը նրանց թվում էին աստվածային արդարադատության իրագործում:

Աստված վերագրվող մարդակերպական հատկանիշների օգտագործումով Սողոմոնի
իմաստության գիրքն անդրադառնում է Աստված կողմից ազգերի բնաջնջման հարցին՝ ասելով,
որ Աստված համար արելի էին դարձել հրեաներին Կրված երկրի հին բնակիչները իրենց կա-
պարած գարշելի գործերի՝ կախարդությունների, անսուրբ գոհաբերությունների, մանուկների
անողորմ կոտորածների եւ կռապաշտական ծեսերի ժամանակ մարդկային մարմնի փորո-
րիք եւ արյուն ուրելու համար: Ըստ Սուրբ Գրքի՝ Աստված գիտեր, որ նրանց մարմնումները
հավիտյան չեն փոխվելու, ու թեւեւ Աստված անգոր չէր ամբարիշտների դեմ պարերազմելու

արդարևների ձեռքով կամ ամենի գազաններով, կամ հենց մի խոսքով կործանելով նրանց, բայց նախընտրեց այդ ազգերին պարծել հրեաների հայրերի ձեռքով (հմմտ. Իմաստ. ԺԲ. 1-11): Այսպիսի պարծի համար Աստված ուղղված հնարավոր մեղադրանքներին անդրադառնալով՝ Սուրբ Գիորգն ասում է. «Ո՛վ կարող է Քեզ ասել, թե ինչ ես անում, ո՛վ կարող է դեմ կանգնել Քո դատաստանին, կամ ո՛վ կարող է Քեզ կշրամբել ազգեր կործանելու համար, որ Դու արել ես, եւ կամ ո՛վ կարող է Քեզ հակառակվել՝ անիրավ մարդկանցից վրեժխնդիր լինելու համար: Ով արժանի է պարփծ կրելու, պարծում ես, եւ Քո ուժին օրար է անաղար պարփծը» (Իմաստ. ԺԲ. 12, 15): Բնաջնջված վերոնշյալ ազգերը հիմնականում քանոնական ցեղերի հետնորդներն էին, Նոյի կողմից անիծված իր կրթսեր որդու Քամի սերունդներից (Ծննդ. Թ. 6, Ժ. 6-20): Անիծված Քամի սերունդները անգույթ ու վայրագ մարդիկ էին եւ ահավոր մեղքեր էին գործում՝ արյունապղծություն, կռապաշարություն, անասնապղծություն, միասեռականություն, ծիսական անառակություն, երեխաների զոհաբերություն՝ կենդանի մանուկներին այրելով: Քանանի սերունդներից էին բնակվում նաեւ պղծությունների եւ ահավոր մեղքերի համար կործանված Սոդոմ եւ Գոմոր քաղաքներում (Ծննդ. Ժ. 19): Աստված զգուշացնում էր իսրայելացիներին չյուրացնել այդ ազգերի գարշելի սովորությունները, որոնք հարկապես իրենց երեխաներին՝ փոխառնելով կամ աղջկան, զոհաբերում էին այրելով (Դևար. ԺԸ. 21, 24-30, Բ. Օր. ԺԲ. 31, ԺԸ. 9-10, Դ. Թագ. Դ. 27, ԻԳ. 10, Բ. Մնաց. ԻԸ. 3, ԼԳ. 6, Երեմ. Է. 31, ԺԹ. 4-5, ԼԲ. 35): Ինչպե՞ս կվարվեր մարդը, իր առջեւ փեսանելով մեկ այլ մարդու, որը պղծություններ կատարելով շարունակաբար սպանում է իր փոքրիկ եւ անօգնական երեխաներին, որոնք գալարվում են ահավոր փանջանքների մեջ եւ մեռնում աննկարագրելի չարչարանքներով: Պղծությունն ու արյունահեղությունները վերացնելու համար արդյոք մարդն ինքը քայլեր չէ՞ր ձեռնարկի: Զագրելի մեղքերի պարճառով բնաջնջվելը հաստատվում է նաեւ աստվածաշնչյան հավաստմամբ, որ Աստված չէր կործանի ժողովուրդներին, եթե նրանց մեջ արդար մարդիկ լինեին: Աստված խոստանում է չկործանել Սոդոմը, եթե այնտեղ գոնե փառք արդար գտնվեն (Ծննդ. ԺԸ. 26-32), խոստանում է խնայել Երուսաղեմին, եթե այնտեղ գոնե մեկ արդար մարդ գտնվի (Երեմ. Ե. 1):

Աստվածաշնչյան «ցեղասպանությունները», որոնք պարփծ եղան ժողովուրդներին մեծ մեղքերի համար, նույնական չեն հայ ժողովրդի ցեղասպանության հետ, որը, չնայած իր ազգային-եկեղեցական կյանքում եղող թերություններին, միշտ ձգտել է հավատարմի մնալ Աստծուն, պահպանել քրիստոնեական հավատքը: Երբ Կայենը սպանեց իր բարեպաշտ եղբայր Աբելին, Աստված չմիջամբեց ու չկանխեց արյունահեղությունը, բայց ասաց, որ թափված անմեղ արյան կանչը երկրից բողոքում է առ Աստված (Ծննդ. Դ. 10): Աբելի մեղավոր լինելու համար չէր, որ Աստված թույլ տվեց նրա սպանվելը, քանզի Քրիստոս եւս Աբելին «արդար» կոչեց (Մատթ. ԻԳ. 35): Սակայն ինչո՞ւ Աստված թույլ տվեց մեր ժողովրդի դաժան կոտորածը, մի՞թե Աստված ուզում էր Նայոց Ցեղասպանությունը: Այս հարցի առջեւ, քրիստոնյա մի գրողի նման, դենք մեկ այլ հարց՝ արդյո՞ք Աստված ցանկանում էր Իր Որդու չարչարանքներն ու մահը⁵⁵: Իմանալով Աստծո բարությունն ու սերը, գթությունն ու ողորմածությունը՝ կարող ենք ասել, որ Աստված չէր կամենում այդ արյունալի չարագործությունները: Այնուամենայնիվ, դրանք փեղի ունեցան աստվածային թույլատրու կամքի վերոնշյալ բացառությունների հիմունքով: Մեր ժողովուրդը նմանվեց արդար Նոբին, որ կորցրեց իր զավակներին: Այսպես նաեւ Սուրբ Գրիգոր Աստվածաբանն է իրեն նմանեցնում Նոբին՝ Աստծուն դիմելով. «Այլոց Դու ուղարկում ես անհամար հարսություն, այլոց՝ բարի զավակներ,

55 Տե՛ս Philip Yancey, Where is God when it hurts?, Zondervan, 1997, էջ 174:

մեկը գեղեցիկ է, մյուսը՝ ուժեղ, երրորդը՝ պերճախոս: Իսկ իմ փառքը վշտերի մեջ է: Ինձ վրա Քո ձեռքից Դու սպառնցիր բոլոր դառը նեղերը: Ես նոր Հոբ եմ»⁵⁶:

Ո՛ր էր արդյոք Աստված հայ ժողովրդի համար օրհասական այդ օրերին: Խաչյալ Քրիստոս մեզ հայտնում է Աստծուն, ով չարչարվում է մեզ հետ, չարչարվում է մեր կողմից և չարչարվում է մեզ համար⁵⁷: Ոչ մի աստվածաբանություն չի կարող թշվառացած ու զավակներ կորցրած Հոբի հարցադրումների մակարդակից ավելի ցած իջնել: Արդյո՞ք որեւէ մեկը աստվածաբանորեն ավելի մոտ է եղել Հոբին, քան խաչված Քրիստոս Գողգոթայում⁵⁸: Անթրոպոմորֆիզմի կիրառությամբ կարող ենք ասել, որ Քրիստոս չարչարվում է յուրաքանչյուր փանջվող հավաքացյալի հետ, ինչպես վկայում է քրիստոնյաներին հալածող Մավուդին ուղղված Քրիստոսի հարցը. «Մավո՛ւդ, ինչո՞ւ ես հալածում Ինձ» (Գործք Ը. 4): Եւ Հայոց Յեղասպանության ժամանակ Քրիստոս իր ժողովրդի մեջ էր, չարչարվում էր նրա հետ միասին՝ ծանոթ այն ահավոր փանջանքներին, որոնց միջից դուրս է թռչում գոյությունը. «Էլի՛, Էլի՛, լա՛մա սաբաքթանի, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մաթթ. ԻԷ. 46): Աստվածաշնչի խոսքով՝ անգգամներին թվում է, թե նահապտակվածները մեռան, և նրանց ելքն այս աշխարհից փանջանք համարվեց և կործանում, բայց նրանք գրկվում են խաղաղության մեջ: Ու թեև մարդկանց թվում է, որ նրանք փանջվեցին, բայց նրանք անմահության հասարար հույս ունեն, ինչպես և նրանք, որոնք չխուսափեցին սակավ ինչ փառապանքներից, պիտի բարիքներ գրնեն, քանի որ Աստված փորձեց նրանց և նրանց արժանի գրավ Իրեն (Բմաստ. Գ. 1-5): Ինչպես ոսկին է բովի մեջ ավելի մաքրվում և սրբվում, այդպես էլ նահապտակվածները փորձվեցին, այդ սպանվածներն ընդունվում են իբրեւ ողջակեզ (Բմաստ. Գ. 6):

Երկին անդրադառնալով Աստծո կողմից ժողովուրդներին վերացնելու և ցեղասպանությունների հարցին՝ հստակեցնենք, որ փարբերություն կա իսպառ ոչնչացնելու և երկրային կյանքից զրկելու աստվածային արարքի միջև, որով և ցեղասպանության սահմանում չի համապատասխանում մեղավոր ազգեր բնաջնջելու աստվածային արարքին: Աստված նախում է հավիտենականի պեսակերից, մարդը՝ ժամանակավորի, մարդիկ բնաջնջում են իսպառ վերացնելու համար, իսկ Աստծո նկատառումով գոյությունը շարունակվում է հավերժության մեջ: Բնաջնջող մարդը նկատի ունի միայն այս աշխարհը, իսկ Աստված՝ անդրաշխարհն ու հավիտենական կյանքը, ցեղասպանները նկատի ունեն ոչնչացնելը, իսկ Աստված՝ ժամանակավոր իրականությունից հավիտենական իրականություն փոխադրելը: Մարդկության պարմության մեջ մեղքերի պարժման համար մեկ անգամ եղել է ջրհեղեղ և ժողովուրդների բնաջնջման աստվածային կարգադրություն՝ հրեաների պարմության որոշակի ժամանակաշրջանում: Այլևս ոչ ոք չի կարող հավակնել ասելու, որ աստվածային պարմիրանով է պայմանավորված որեւէ խմբի կամ ժողովրդի սպանությունը, և մարդկային կամքով ու որոշմամբ նման ցանկացած արարք ցեղասպանություն է, հանցագործություն ողջ մարդկության հանդեպ: Իսկ ցեղասպանության անմեղ նահապտակները երկնքում՝ Աստծո մոտ, պիտի մեծ երանություն ու բերկրանք վայելեն, քանզի Աստված նրանց աչքերից սրբեց ամեն արատաւը (Յայլւն. Է. 16-17, ԻԱ. 4):

⁵⁶ Григорий Богослов, Собрание творений, т. 3, (Жалобы на свои страдания), Минск, Харвест, Москва АСТ, 2000, ст. 91:

⁵⁷ Stn Протоиерей Михаил Аксенов-Меерсон, Созерцанием Троицы Святой, Парадигма Любви в русской философии троичности, Издательство “Дух и Литера”, Киев, 2007, էջ 41. Jürgen Moltmann, The Trinity and the Kingdom: The Doctrine of God, San Francisco. Harper u Row, 1981, 1989, էջ 131-132:

⁵⁸ Stn “Созерцанием Троицы Святой”, էջ 40:

ՊԱՏԱՊԵՐԱԿԱՆԻՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

պարմական գիտ. թեկնածու

ՆԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՎԱՆ-ՎԱՍԴՈՒՐԱԿԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ (1914-1915 թթ.)

Էնվերի գլխավորությամբ Թուրքական զորքերի ընդհանուր և անակնկալ հարձակումը Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. վերջերին առաջ բերեց ռուսական զորամիավորումների ընդհանուր նահանջ՝ Սև ծովից մինչև Սալմաստ և Ուրմիա:

Արդյունքում, 1914 թ. դեկտեմբերի 16(29)-ին Պարսկաստանում գտնվող ռուսական զորքերը գեներալ Ֆ. Չերնոգուբովի գլխավորությամբ՝ գեներալ Ա. Միշլանսկուց¹ կողմից հրաման ստացան նահանջել դեպի Ջուլֆա, որի «պարճառը,- Ա. Եկարյանի հավաստմամբ, չհասկացանք, բայց որոշ էր թե թրքական ճնշումը չէր որ զիրենք ստիպված էր այդ քայլը առնելու»² և որը Ե. Ֆ. Լուդշովեյի դիտարկմամբ հագիվ թե նպատակահարմար էր³: Կովկասյան բանակի հրամանատարն իր այդ հրամանը հիմնավորում էր նրանով, որ անհրաժեշտ էր կրճատել «ռազմավարական ճակատը»՝ նախապարտապիտակ Սարիղամիշի ճակատամարտը հաջողությամբ իրականացնելու համար և բացի այդ, անհրաժեշտ էր համարում պաշտպանել Անդրկովկասի սահմանները թուրքական գերակշռող ուժերից: Իսկ Ն. Մորգենթաուն այն գնահատում է որպես «լավ ռազմագիտություն մը ... յաղթական բնական համար»⁴ նահանջող թուրքական զորքը հիմնովին ջախջախելու համար: Թեև գեներալ-մայոր Ֆ. Չերնոգուբովը սալացուցում էր, որ նահանջը ոչնչով չէր արդարացվում, սակայն ի վերջո նա ստիպված էր ենթարկվել իր վերադասի հրամանին:

Այդ ամենի հերեւանքը եղավ այն, որ 1914 թ. դեկտեմբերի 27-ին «ցուքի պես կաթած» ռուսական զորքերը առանց մարտի թողեցին Սուջբուլաղը և Բաշկալեն, որոնք գրավվեցին Ջեղեթի և Խալիլի (որը հետագայում Դիլմանում պարտվեց Թ. Նազարբեկյանին և Անդ-

1 Ա. Զ. Միշլանսկին (1856 -?), ռուսական զորքերի Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ կոմս Ի.Ի. Վորոնցով-Դաշկովի օգնականն էր, 1914 թ. դեկտեմբերի 11(24)-ին գեներալ Ն.Ն. Յուդենիցի հետ ժամանելով գործող բանակ նա սպանվեց ռուսական զորքերի գլխավոր հրամանատարությունը. տե՛ս «Список генералов по старшинству», Петроградъ, 1914, էջ 137, նաև Կ.Ա. Զաlessкий, Первая мировая война, биографический энциклопедический словарь, М., 2000, էջ 158-159:

2 «Յուշեր Արմենակ Եկարյանի», Գանիրեն, 1947, էջ 182:

3 Տե՛ս Ե.Ֆ. Լյուշուբեյտ, Турция в годы первой мировой войны, 1914-1918 гг., военно-политический очерк, М., 1966, էջ 76:

4 Տե՛ս «Ամերիկեան դեսպան Մր. Մորլենթաուի Յիշարակները և հայկական Եղեռնին զաղրնիքները», Կ.Պոլիս, 1919, էջ 247:

րանիկին) թուրք-քրդական ուժերի կողմից: Այդ առիթով 1914 թ. նոյեմբերի 30-ին Զեդեթի փոխանորդ Շերիֆ բեյը մասնավոր գրությամբ ժողովրդին ծանուցեց. «Մեր արալան կուսակալի ջանքերով թշնամին յեր շարությունցաւ: Ամեն ոք անդորր ու խաղաղ իր գործերով թող զբաղվի»⁵: Այնուհետեւ, 1915 թ. հունվարի 5-ին թուրքերը գրավեցին Ուրմիան, Մարաղան, հունվարի 8-ին՝ Սալմաստը, Խոյը, իսկ 1915 թ. հունվարի 14-ին թուրքական առաջապահ ուժերը եւ քրդական ջոկատները՝ թուրքական սպա Ահմեդ Մուխթար Շամխալի հրամանատարությամբ մուտք գործեցին Թավրիզ⁶ իրենց հետը տանելով ավերի, կողոպուտի, կոտորածների եւ արյան մոդորը: Միաժամանակ քաջալերիչ հայտարարություններով բարձրացվեց թուրքերի բարոյալքված քրամադրությունը եւ կասեցվեց նրանց մեջ տիրող խուճապը:

Իրականում, թուրքական քաղաքացիական եւ զինվորական իշխանությունները մրաժում էին ոչ թե հարձակման անցնել հակառակորդի դեմ, հեղափոխել նրան եւ նրա դեմ կռվել, այլ իրենց ուժերը կենտրոնացնել Վանի շրջանի գյուղերի հայ բնակչությանը կոտորելու համար: Այդ մասին ԱՄՆ դեսպան Մորգենթաուի հուշերում կարդում ենք, որ Վանի շրջանում «թիրք գորավարներու աչքին՝ Ռուսներուն եր քաշուիլը պարտերազմին մէկ բարեբաղդ դարձածքն էր, գլխաւորաբար անոր համար, որ՝ Տայերը կը գրկէր իրենց պաշտպաններէն եւ անոնց բաղդը կը յանձնէր թիրք բանակին: Տերեաւաբար, փոխանակ նախանշող թշնամիին հետեւելու, թիրք բանակը եր դարձաւ եւ Վանի հողամասը արշաւեց: Փոխանակ ռուսական մարզումը զինուորներով բանակին դէմ կռուելու, Թիրքերը իրենց հրացանները, գնդացիները եւ ուրիշ զենքերը դարձուցին Վանի գիւղերը բնակող կիներուն, տղոց եւ ծերերուն դէմ»⁷:

Տերեաւաբար, ռուսների նախնիցից երես առած թուրք կառավարությունը բազմաթիվ անգամ բռնի, արհեստական առիթներ ստեղծեց հայ-թուրքական ընդհարումներ սկսելու եւ գուցե այն իրեն համար նպաստավոր ձեւով վերջացնելու համար՝ նախքան կամավորական զորքերի վերադարձը: Բայց միշտ տեղի հասարակական-քաղաքական ուժերի շրջահայաց քաղաքականությունն ու ժամանակ շահելու հեռավորությունը թույլ չտվեց բարոյություններ առաջացնելու, կամ ստեղծված դեպքում հաջողվեց խաղաղեցնել եւ տեղն ու տեղը վերջացնել միայն «մեր» կռիվն ու կամավորական զորքերի առաջխաղացումն իրար մոտեցնելու մտաւորությամբ:

Այդուհանդերձ, թուրքերին հաջողվեց **իրենց հայաջինջ եւ հայահալած քաղաքականությունը** Վասպուրականում գործողության մեջ դնել այն բանից հետո, երբ ռուսական զորքերը ժամանակավորապես հետը քաշվեցին գրավված վայրերից, իսկ «ամբած թուրքը նորէն շունչ առաւ, սկսաւ յոխորտալ... սիրտ առաւ, նոր ուժեր կազմակերպեց»⁸:

Ն. Կոստյանը նկատում է, որ «Ռուսական նախանշով Վասպուրականը մտաւ ճգնաժամի երկրորդ փուլին մէջ, որու արտն մինչեւ այդ դեռ բողարկուած, այժմ ցայտուն արտայայտուցաւ պաշտօնական կառավարութեան խէթ եւ հակահայ ռէժիմը. ռէժիմ մը, որ վերագրաւուած շրջաններու մէջ սկսեց հայ տարրի կոտորած, թալան, արիւն ու անըր սփռել, իսկ միւս գաւառներու մէջ սանձարձակ բռնութիւն, հալածանք»⁹:

Սահմանագծի ուղղությամբ կատարված ռազմական գործողությունները եւ դեպքերը եւ

5 Ն. Կոստյան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Երեւան, 1992, էջ 19:

6 Տէն Է.Փ. *История*, էջ 76-77, նաեւ՝ «Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին եւ պատերազմի տարիներին», ուսումնական առաջադրանքներ եւ մեթոդական օժանդակ նյութեր, Երեւան, 1984, էջ 23:

7 «Ամերիկեան դեսպան Մը. Մօրկընթաուի Յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները», էջ 247:

8 «Յուշեր Արմենակ Եկաբեանի», էջ 183:

9 Ն. Կոստյան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, էջ 19:

ռուսական զորքի 1914 թ. նահանջը արձագանք գրան Վասպուրականի գավառներում, եւ թուրքական իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան **սահմանամերձ գյուղերի** հայկական եւ ասորական բնակչության կոտորածին ու թալանին, որը եւ դարձավ «արեւմտահայ հատուածի աշխարհաստան ողբերգութեան նախաբանը»¹⁰: Արեւմտահայության բնաջնջումը սկսվեց հենց Վան-Վասպուրականից:

Սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Հայեպի գերմանական հյուպատոս Ռուբեր ռեյխսկանցլեր Բերման-Գովերգին ուղղված իր 1915 թ. դեկտեմբերի 20-ի «Գերմանիայի պալատիսխանարվությունը արմենոցիդի փաստերի կոծկման վերաբերյալ» զեկուցում, Վանի նահանգում կատարված կոտորածները իր հոծ հայ ազգաբնակչության, հատուկ պայմանների եւ ռազմական գործողությունների թափերաբեմի պատճառով ուշադրության չի զարնվել¹¹:

Թուրքական կառավարությունը դասալիք եղած հայ զինվորներին հետապնդելու պատրվակով, «1914-ի դեկտեմբերին սկսելով, գրեթե ամէն կողմ ծայր փութ էին յարձակումներ հայերու եւ իրենց ինչքին դէմ»¹², որն ուղեկցվում էր գյուղերում փնտրի հրդեհով, գոյքի բռնագրավմամբ եւ նույնիսկ սպանություններով:

«Թուրք ռաբիկանները,- գրում է Գեորգ Ե. Կաթողիկոսը Ռուսաստանի Արարիկ գործերի նախարար Ս.Դ. Մազնովին ուղղված իր 1914 թ. մայիսի 14-ի նամակում,- Վանի վիլայեթում զինակոչի կամ իբր հասարակական աշխատանքների անվան փակ հավաքում են հայ քղամարդկանց եւ հայրենի վայրերից հեռու ենթարկում են գնդակահարության, իսկ կանանց եւ երեխաներին առեւանգում են»¹³:

Թուրքական կառավարության վարած քաղաքականությունն օրեցօր գնալով դառնում է թշնամական, ապա՝ հայասպան, իսկ երկիրը գնալով ենթարկվում է անիշխանության: Ապահովություն բնավ չկար, գյուղից-գյուղ եւ քաղաքից-քաղաք երթեւեկելը դառնում է անհնար: Հայ գյուղացիները կառավարության գաղտնի թելադրանքով լուռ կերպով ենթարկվում են զինված քրդերի եւ բաշիբոզուկ միլիսների սանձարձակ շահափակություններին, խուզարկություններին, ահաբեկմանը, ծեծին եւ թալանին, որոնց մեջ մասնակցություն ունեցան ոչ միայն քրդերը եւ կանոնավոր բանակը, այլեւ քրդական պաշտոնյաները:

Անասելի բռնություններից հետո սկզբում անհատական, իսկ հետո զանգվածային կարգով ամբողջ նահանգում հալկապես ծայրամասային գավառներում, ծայր են առնում սպանություններ ու կոտորածներ: Նորից գործի են անցնում քրդական ավազակախմբերը, որոնց ամեն փեսակ գործողությունները հովանավորում էին կառավարությունը եւ նրա քրդական պաշտոնյաները:

Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերը (Բուլղարիա, Ռուսաստան եւ այլն) ուղղված են Վանի կոտորածներին վերաբերող նյութերով: Դրանցից մեկում՝ Ռուսաստանի արարիկ գործերի նախարարությանն ուղղված Կովկասյան ճակատում ռուսական բանակի սպա Վ. Շչերբինի նամակում, մասնավորապես նշում է. «Չեմ ուզում այսօրեղ մանրամասն նկարագրել այն սարսափելի զագանությունների փեսարանները, որոնք թուրքական կառավարության ցուցումով կատարվել էին քրդերի եւ ասկյարների կողմից երկրամասի (խոսքը Վանի շրջանի մասին է - Ավ. Ն.) անպաշտպան բնակչության նկատմամբ:

10 Անդ:

11 Материалы Политархива МИД кайзеровской Германии, Ереван, 1995, с. 281.

12 **Ռքնէ Բիւնն**, Հայերու բնաջնջումը. Գերմանական մէթոք. թրքական գործելակերպ, Կ.Պոլիս, 1919, էջ 21:

13 «Ռուսաստանի Արարիկ գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին», կազմող Արմեն Մարտիկյան, Երևան, 2001, էջ 20:

Նարկադրված էինք Կոստան, Կոստան, Կոստան, երեխաների եւ ծերերի կտրված ձեռքերով, ուրբերով, հանված աչքերով դիակների կույրեր: Դա մի զարհուրելի տեսարան էր»¹⁴:

Գերմանացի բողոքական քահանա Ֆիշերը պարմում է, որ «Վանի շրջանի որբանոցի մի խումբ հայ աղջիկների կախեցին ծառերից եւ սկսեցին քերթել գլուխների կաշին... Մի կնոջ նորածին երեխային կացնով մի քանի մասի բաժանեցին եւ մոր բերանը մտցնելով խեղդեցին: Որբանոցի մյուս աղջիկներին արարավորեցին եւ սպանեցին»¹⁵:

1914 թ. դեկտեմբերի սկզբից Կարաձվեցին չարագուշակ շշուկներ, որոնք արյունոտ գույներով էին պատկերում Վասպուրականի հայության ողբերգական վիճակը:

Արտամեդի մոտ դաժանաբար սպանվեց Ս.Վարդան գյուղի ուսուցիչ Արտաշեսը, Արճակի շրջանում 4 հոգու հեղձ խաչիկ Նալբանդյանը, իսկ Շապուխի Խումար գյուղում ռեա Պետրոսը եւ իր ընկերները¹⁶:

Բաշկալեի վերագրավման հաջորդ օրը թուրքական իշխանությունները ձերբակալեցին Վահան Ապանյանին, Նակոր Սաֆոյանին, ջոջաղա Թոսույանին, Մինաս եւ Նաբեթ Սեֆեյաններին, Դավիթ Ակաթյանին՝ թվով 11 հոգու եւ Վան քաղաքի տարբեր պատկերով բոլորին կոտորեցին քաղաքի մերձակայքում¹⁷:

Նամանման ոճիրներ քաղաքի ունեցան Կարճկանի, Աջալագի եւ Բերկրիի շրջաններում: Մասնակի սպանություններին հետեւեցին խոշոր իրադարձությունները:

1914 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին թուրքական զորքերն ու քղական հրոսակախմբերը, ոստիկանական ջոկատներն ու ամեն կարգի հանցագործ փարբեր ջարդեր կազմակերպեցին Աղբակի եւ Սարայի շրջանների հայաբնակ գյուղերում (Պազ, Արեզ (Արաք), Փիրս (Պիս), Ալալան, Ալազ (Ալոզ), Սորան, Ռալիմ, Ռասուլան, Ախթիկ, Նասան-Թամրան, Թաշոլի, Խարաբաստրիկ եւ այլն)¹⁸:

1914 թ. նոյեմբեր 26-ին չորեքշաբթի օրը, թալանվեց **Պողոզքեններ**, որտեղ կարարվեցին մի քանի փանայակ սպանություններ՝ այդ թվում Կարապետ Սարգսյանը եւ Ավագի կինը՝ Լուսինը: Թալանվեց գյուղի եկեղեցին եւ գյուղացիների ամբողջ ունեցվածքը, իսկ ողջ կորուստը կազմեց 4000 օսմանյան ոսկի, որի ցուցակը Ա. Վռամյանը ներկայացրեց կենտրոնական կառավարությանը եւ Վանի կուսակալությանը: Պարզվեց, որ դեպքերի չարագործներն էին հաջի Բեկեղը եւ Նավիսյանի, Կալախի, Կարֆալանի եւ Բումոլուի քուրդ ցեղապետները¹⁹:

Դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում, երբ ռուսական զորամասերն արդեն նահանջել էին Աղբակից, թուրքական կանոնավոր զորամասերը՝ բաշիբոզուկ խուժանի հետ միասին հաշվեհարդար կատարեցին Նեքիարիի նախկին վիլայեթի կենտրոն **Բաշկալեի**, ապա **Աղբակի** շրջանի գյուղերի, **Բարդուղիմեոս վանքի** շրջակա բնակիչների նկատմամբ²⁰:

Երկու գավառների հայ եւ ասորի գյուղերը թալանվում ու այրվում են, իսկ բնակչությունը կոտորվում: Ռուսների նահանջից հետո թաքուր Աղա Ահմեդ բեկն իր 160 թուրք ժանդարմներ

14 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում» (1915-1918 թթ.) օպերերկրյա պեղությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները», փաստաթղթերի ժողովածու, առաջին հատոր, Երևան, 2011, էջ 19:

15 «Deutsches Zentralarchiv». Historische Abteilung II, Merseburg. Repositur 89. 2.2.1. Königliches Geheimes Zivilkabinett, Akten – Nr. 1340, Bl. 192.

16 Տե՛ս Ն. Կոստյան, Վան-Բաղաբամիջի Ապրիլեան կոթիկները, էջ 22:

17 Տե՛ս Նանթի Պատույի, Սարսափի երկրին մէջ. նահապալկ Նայասարան, Կ.Պոլիս, 1919, էջ 10:

18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:

19 Տե՛ս Ա-ԴԹ, Մեծ դէպքերը Վասպուրականում, Երևան, 1917, էջ 116:

20 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 12:

րով ու Խանասարի 1897 թ. արշավանքի ժամանակ «սպանուած» մագրիկցի Շիկարի բուրդ ցեղապետ Շերեֆ բեկն իր 150 բուրդ համիդիներով **Բաշկալ** քաղաքում ու շրջանի 8 գյուղերում ներխուժում են հայկական թաղերը, թալանում եւ հրդեհում քրները եւ 10 քարեկանից բարձր բոլոր քղամարդկանց խժոժորեն կոտորում որոշ վայրերում մինչեւ անգամ չխնայելով երեխաներին, որոնց դիակներն ընկած են թողնում փողոցներում²¹։ Բախարի քմահաճույքին թողնելով անհաց եւ անօթեան կանանց ու երեխաներին, գեղեցիկ աղջիկներին քանում են Վան Շամիրամի թուրքական թաղամասում վաճառելու կամ հյուրասիրության առարկա դարձնելու համար²²։

Բաշկալում ավելի քան 150 հոգի անմիջապես սրախողխող եղան, իսկ մյուսները քեղահանվում են հարավի լեռնային գավառները։ 12 հայ երեւելիներ Վան ճամփելու պատրվակով, սպանվեցին ճանապարհին²³։ Այդ ամենին աջակցում են քեղի հարուստ հրեաները, մասնավորապես՝ Նուրելիան հարուստ հրեան, որն անմիջապես մատնանում է հայ երեւելիներին²⁴։

Նույն բախարին են արժանանում նաեւ հարեան Պազ, Արեզ (Արաք), Փիրս (Պիս), Ալալան, Ալազ (Ալոզ), Սորան, Բասուլան, Ավազ գյուղերի 1600 հայերը (մի մասը նեպոտրական), որոնց հավաքելով դաշտում, բնաջնջում են²⁵։

Արիսիվային փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Աշնանը Սարայի եւ Բաշկալի շրջանում գազանորեն սրի քաշվեց ամբողջ հայ բնակչությունը՝ մոտ 10 հազար մարդ։ Հայերին կենդանի-կենդանի թաղում էին, այրում, խաչում»²⁶։ Բաշկալում ջմաց եւ ոչ մի հայկական կանգուն գյուղ եւ ոչ մի հայ կենդանի շունչ, բացի 4000 «բախարուներ»-ից, որոնք կորցնելով իրենց հարազատների մեծ մասին, զարհուրելի պայմաններում ապաստանեցին Այգեսպանի փողոցներում եւ գերմահարկներում²⁷։

1914 թ. դեկտեմբերի 15-ին (16-ին -ըստ Տ. Կոտյանի, էջ 21) կառավարական գաղտնի հրամանով քրդական հրոսակները արշավում են **Նազարեան** գյուղի վրա, սպանում 7 քղամարդ, 1 կին, 2 աղջիկ, (12 հոգի - Կոտյան, էջ 21) վիրավորում 1 կնոջ, թալանում 100 գութա խոշոր եղջերավոր անասուն, 5600 գութա ոչխար եւ ձի, մեծ քանակությամբ՝ 5900 գրիվ ցորեն, 1600 լիտր (պաթման) յուղ, պանիր, ժամիկ։ 1600 կտոր անկողին, 1000 կտոր պղնձեղեն, 200 լիտր բուրդ, 150 սնդուկ ապրանք, եկեղեցական իրեր եւ այլն²⁸։

Կողոպտում են նաեւ եկեղեցու իրերը, իսկ սարսափահար գյուղացիներ փախչելով սահմաններձ գյուղերը, ոչնչանում են։ Տեղական հայ հոգեւորականները թեւէ բողոքում են կուսակալ Ջեղեթին, բայց նա ուշադրություն չի դարձնում եւ հոգեւոր դեկավարներին էլ իր ժողովրդի հետ կոտորում։ Հայ գյուղացիները ոչ միայն կոտորվում ու քեղահանվում են, այլեւ թալանվում ու գրկվում իրենց բնակության վայրերից։ Այդ շրջանի քնաքանդ եղած հայերի մի մասը մի կերպ ապաստան է գտնում Վանի Այգեսպանում։

1914թ. դեկտեմբերի 20-ին թուրքական բանակի մի սպա՝ իրեն ուղեկցող ոստիկաններով,

21 Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов, под редакцией Проф. М.Г. Персияна, Ереван, 1966, էջ 246։

22 Տե՛ս Օն. Մխիթարեան, Վանի երեսամարտը, Մոֆիա, 1930, էջ 14, նաեւ Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890-էն 1940, երևան, 2003, էջ 156։

23 Տե՛ս Տ. Կոտյան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոխները, էջ 20։

24 Տե՛ս անդ։

25 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 139։

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 1-31։

27 Տե՛ս Տ. **Հարությունյան**, Վանի Ապրիլյան երեսամարտը. «Էջմիածին», 1965, թիվ Բ-Գ-Դ, էջ 143։

28 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 143, նաեւ Ա-Գ, Մեծ դէպքերը Վասպուրականում, էջ 118։

մյուսում է **Սարայի Սաթմանիս(ց)** գյուղը և կուսակալի անունից կարգադրում գյուղացիներին գաղթել գյուղից: 80 զեղջուկներ ճամփա են ելնում, մի կերպ հասնում են Գրեշ գյուղը: Ճանապարհին 12 երեխա մահանում են ցրտից: Սաթմանիս գյուղացիներից 120 հոգու երեք օր պահում են գյուղի փոսերից մեկում, ուր 3 ժանդարմների և 3 քրդերի կողմից ենթարկվում են լլկման և փանջանքների ու սրիպում լքել գյուղը, որից հետո նրանք ապաստանում են Սալահանեում և նրա շրջակա՝ Զարանց, Մեւան և Ֆառուխ գյուղերում: Ճանապարհին ցրտից և սովից մահանում են 8 փղամարդ և կին և 5 երեխա²⁹ (ըստ Կոստյանի՝ 15 հոգի):³⁰ Նարուսար Սաթմանս գյուղը կողոպտվում է, քրդերն ու թուրքերը փանում են 2000 զուլա արջառ, 200 գոմեշ, 1000 գրիվ ալյուր, 500 չափ ցորեն, 8 սայլ, 20 արօր և գյուղի ամբողջ հարուստ պաշարը:

Նրանք, ինչպես նաև Նյուսեին բեկի երկու որդիները՝ Թահարը և Մուսափան 1914 թ. դեկտեմբերի 30-ին մասնակցեցին Սարայի 7 գյուղերի՝ **Վերին և Ներքին Ախտիկի, Ավգարիկի, Նասան-Թամրանի, Տաղվերանի, Թաշ-օղլուի և Սալուխանի** հայ բնակչության կոտորածին:³¹

Սարայի հայերի կոտորածները սկսում են **Ախտիկ** հայկական գյուղի ջարդերով:

1914 թ. դեկտեմբերի 30-ին Սարայի ժանդարմները՝ Ռասիմ Էֆենդիի, Աբդուլ-Գափրիի (ըստ Նանոի Պառալիի՝ Աբդուլ Գափրիի թիկնապահը)³², Յավեր Յոմերի, Ռասիմ Էֆենդիի առաջնորդությամբ գնում են Ախտիկ և հրամայում փողի հայերին հավաքվել Սարայ գետում և փողի քանդված զորանոցները վերաշինելու համար:

Ժանդարմները նախապես փղամարդկանց առանձնացնելով մի քանի փոսերի մեջ և խմբերից առանձնացնելով 28 երիտասարդներին, քրդերով շրջապատված հանում են գյուղից և Ավգարիկ չհասած բոլորին զնդակահարում են: Ըստ Նանոի Բարալիի այն «կապացուցանել նախապարաստումը դառնություն մը»³³: Ոճիրը փողի է ունենում Յավեր Յոմերի ներկայությամբ և Նյուսեին բեկի երկու փղաների՝ Թահար և Մուսափա բեկերի, Մահմեդ Ալիի և իր որդու մասնակցությամբ: Մինչ Յավերը, ժանդարմները և քուրդ աղաները հյուրընկալվել էին Ավգարիկի Սուլթան աղայի փանը, քրդերը հեղ և վերադառնում Ավգարիկ ևս 4 երիտասարդների սպանելուց հետո, մնացած 14 հոգուն փեղափոխում են Սարայ, ապա Խոշար և Վան, որոնք էլ իրենց մեկամայա դեգերումները պարմում են բոլորին:

Դեպքերից 7 օր հետո Ախտիկի հայ կանայք գալիս և իրենց գերեզմանատուն են փեղափոխում դիակները:

Սարայի գայմագամը մեղադրում է քրդերին դիակները թաղելու համար, ասելով. «Մեր զինուորները, առանց դամբանի կը մնան, գայլերը և շուները կը յօշուրեն զանոնք. ինչո՞ւ համար դուք այս կեալուրներուն կը թողուք որ իրենց մեռելները թաղեն»:³⁴ Որից հետո նա կարգադրում է Մխիթար և Բաղդո անունով ծերունիներին դիակները հանեն գերեզմաններից և փեղափոխեն դաշտ:

Ընդհանուր առմամբ Ախտիկի նյութական վնասը կազմում է 10000 օսմ. ոսկի, որի մեծ մասը յուրացնում են քրդերը, իսկ փոքր մասը վերցնում են ոստիկանները՝ որպես պարերազմական փութը:³⁵

29 Տե՛ս **Ա-Դօ**, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 118:

30 Տե՛ս **Ն. Կոստյան**, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 21:

31 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 26-27:

32 Տե՛ս **Նանոի Պառալի**, Սարսափի երկրին մէջ. նահապալկ Նայասպան, էջ 140:

33 Անդ:

34 **Նանոի Պառալի**, Սարսափի երկրին մէջ. նահապալկ Նայասպան, էջ 141:

35 Տե՛ս **Ա-Դօ**, Մեծ դեպքերը Վասպուրականում, էջ 117:

Ռուսական առաջնադասումով Սարայի քուրդ աշխրեթապետները՝ Մուկուրցի Մադիմ բեկը, Թակուրցի Նյուսեին և Մլանցի Մեհմեդ բեկները, որոնք անձնապես էին եղել ռուսներին, նահանջից հետո, կրկին փախան և միացան թուրքերին: Քաջալերված իրենց գործողություններից և թուրքական կառավարությունից, նրանք իրենց հարվածները ուղղեցին հայկական գյուղերի վրա:³⁶

Նույն օրը՝ դեկտեմբերի 30-ին, ռսարկանները քրդերի առաջնորդությամբ մտնում են **Նասան-Թամրան** գյուղը և կոտորում 10 փուն (100-ից ավելի) անգեն և անմեղ փղամարդկանց, կանանց ու երեխաներին: Կոտորածները երբեմն կրում էին վայրագ բնույթ, երեխաներին խլում են «իրենց մայրերուն գիրկերէն, գետին կը նետեն ու յետոյ անոնց փոքրիկ բերնին մէջ փայտի կտորներ խոթելով՝ կը սպանեն»:³⁷

Այնուհետև, 1914 թ. դեկտեմբերի 30-ին սրի են քաշում **Թաշ օղլուի** 2 փուն (10 անգեն և անմեղ հայերին)՝ չխնայելով կանանց և երեխաներին: Սարայ փանելու պապրվակով 7 հոգու գյուղից հանում են և գնդակահարում: Փրկվում են 6 հոգի, սակայն 2-ը ձերբակալվում են և սպանվում:³⁸ Թաշ Օղլուից փրկվում է միայն Սիմոն անունով մի մարդ և իր կինը:³⁹ Նույն բախարին են արժանանում նաև **Գարա-Չորիկ** գյուղի 10 ընտանիքները՝ մոտ 100 հոգի: Ազատվում են միայն երկու գեղեցիկ կանայք, որոնք էլ քրդերի կողմից առևանգվում են:⁴⁰

Հանրի Բարբին լրացնելով վայրագությունների ցուցակը, հիշատակում է այդ գյուղերից մեկի երիտասարդ քահանա փեր Վարդանի սպանությունը: Քրդերը նախ կտրում են նրա սկանջները, հետո քիթը, հանում աչքերը, իսկ վերջում սպանում: Դեռ ավելին, քահանայի կնոջն էլ բռնությամբ ամուսնացնում են Նուսեին բեյի խուլամ (սպասավոր) Մեհմեդի հետ:⁴¹

Գայմագամը հրամայում է այս երեք գյուղերի կանանց, անկել փղամարդկանց և երեխաներին ձյան միջով ճամփա ելնել դեպի պարսկական սահմանագլուխ՝ արիւղելով «ջանացէք երթալ միանալ Ռուսերուն քով ապաստանած ձեր ամուսիններուն»:⁴² Չկարողանալով ապաստանել Ինկիճ և Թարդան գյուղերում, արդյունքում նրանց մեծ մասը մահանում է ճանապարհին՝ ձյան մեջ: Միայն 70 հոգու է հաջողվում մեծ դժվարությամբ հասնել Մալմասար:

Հայերի բնաջնջումից և փեղախանությունից հետո քրդերն իրար մեջ են բաժանում 10000 օսմանյան ոսկի արժողությամբ գյուղի անասունները, ուրելիքը և ունեցվածքը:⁴³

Հայ գյուղերի բախարին արժանացան նաև **Խարաբասորիկ** գյուղում բնակվող 10 փուն ասորիները, որոնց փղամարդիկ կոտորվեցին, իսկ կանայք և աղջիկները առևանգվեցին քրդերի կողմից: Ազատվեցին միայն 2 փուն իրենց կանանցով ու երեխաներով:

Սարայի գայմագամի հրամանով Ախուրիկի Նյուսեին բեյի և Մոլլա Մայիդի (Մադիմ) օգնությամբ ռսարկանները 1915 թ. հունվարի 14-ին գնում են **Ավգարիկ** գյուղը և մի քանի փասնյակ (9) հայ շալակավորներ (բեռնակիրներ) կենտրոնացնում ռեսի փանը, որ ամանով

36 Տե՛ս Ն. Կոստյան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւները, էջ 20:

37 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 142, նաև «Հայրենիք», Բոսփուն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 95, նաև Օ. Մխիթարեան, Վանի հերոսամարտը, էջ 20, նաև Վեր. **Արսէն Ա. Կէօրիկեյան**, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7-1915 մայիս 7, Պէյրոս, 1965, էջ 50:

38 Տե՛ս **Ա-Դ. Մեծ Դէպերը** Վասպուրականում, էջ 117:

39 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 141:

40 Տե՛ս Վեր. **Արսէն Ա. Կէօրիկեյան**, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7-1915 մայիս 7, էջ 50:

41 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 142, նաև «Հայրենիք», Բոսփուն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 93:

42 Տե՛ս **Հանրի Պառայի**, Սարսափի երկրին մէջ. նահապակ Հայաստան, էջ 142:

43 Տե՛ս անդ:

յուղ փանեն Սարայ: Գյուղից դուրս գալուց հեղո սպանում են նախ շալակավորներից երկուսին՝ Ասպարուր Խոյանին և Վարդան Մինասյանին, ապա բոլորին, իսկ հեղո էլ գյուղացիներին, որոնք մնացել էին գյուղում:⁴⁴ Այնուհետև, թալանում և առևանգում են գյուղի ունեցվածքը, բռնաբարում կանանց և մի քանի ժամվա մեջ կոտորում են 43 փղամարդու և 64 կանանց (ըստ Օն. Մխիթարյանի՝ 63)⁴⁵ ու երեխաների: Փրկվում են 21 փղամարդ և 4 կին, որոնք կտրելով Կարա-Դերեն՝ ապաստանում են Պարսկաստանի Սալմաստի շրջանի Շեմսեղոյին գյուղում:⁴⁶ Ճանապարհին ոմանք առևանգվում են և բռնի մահմեդականացվում:

Ավգարիկում քրդերը սպանում են նույնիսկ կանանց և երեխաներին: Առհասարակ կանանց չէին կոտորում, բայց այս գյուղում բարբարոսություն է կատարվում: Ավգարիկ գյուղի պառավ կանայք թաղում են իրենց հարազատների դիակները, բայց Սարայի գայմագամը կարգադրվում է 2 հայ ծերունիների դիակները հանել փոսերից և թողնել անթաղ՝ սոված գայլերին ու շներին կերակրելու համար⁴⁷:

«Դժբախտ հայ կայանք, իմանալով իրենց ամուսիններու և սիրելիներու կոտորածը, կը փութան դիակները գրնել: Ականապես կանայք, որոնք վերջէն քաղաք եկան, կը պարմէին, թէ ինչպէս իրենք սառած հողը չանգոտրելով թաղել կուզէին, բայց այդ ալ արգիլուեցաւ իրենց»⁴⁸:

Ազարվում են միայն 4 կին և 21 փղամարդ, որոնք մի կերպ, ցրտի ծանր պայմաններում կտրելով Կարա-Դերեն փախչում են Պարսկաստան: Ճանապարհին նրանցից ոմանք առևանգվում են և բռնի մահմեդականացվում և միայն մի քանի հոգու է հաջողվում ապաստանել Սալմաստում:

Թեև փեղական հոգեւորականները և Նայոց առաջնորդարանը, Օսմանյան խորհրդարանի պարզամալոր Ա. Վռամյանը և Սարայի շրջանի գյուղացիությունը Ավգարակի ոճրագործության առթիվ քանիցս բողոքում են Վանի նահանգապետի փոխանորդ Շերիֆ բեյին՝ հանցավորներին պարժելու համար, սակայն լսող չկար, իսկ կուսակալի փոխանորդը բավականացավ խուսափողական պարամիտաներ փախելով: Դեռ ավելին, նա հայտարարեց, որ ինքը չի հավատում, որ եղածը հերեւանք է միայն ռուսական բանակի նահանջի, որ Սարայի գայմագամը բողոքովին անտրոյակ է այդ ամենից:⁴⁹ «Թէև կառավարութիւնը սկզբում ամեն ինչ կծածկէր, նոյնիսկ կեիքքէր,- գրում է ժամանակակիցը,- բայց աղերի ահռելի մանրամասնութիւնները ժողովրդի մէջ սկսան շրջան առնել: Ներգիւցել քաղաք (Վան) թափուեցան արնէ և հուրէ ճողոպրածները՝ իբրեւ փախստական, որոնք արիւնոյր իրականութիւնը կներկայացնէին արդէն: Վանի առաջնորդարանը այդ առիթով երբ փութաց պաշտօնական բացատրութիւն խնդրել կառավարութենէն, միեւնոյն արեւն պարտաւիրականութիւն մը դրկել քննութեան, ձգձգուեցաւ և մերժուեցաւ»:⁵⁰ Եւ այդ ամենը հասկանալի էր, որովհետեւ թուրք ղեկավարներն էին կազմակերպում և հրահանգավորում հայերի կոտորածներն ու փեղահանությունները:

Այդ նույն ձեռով, ծավալով և մեթոդներով թուրքերը կոտորում ու թալանում են նաև Սարայի շրջանի մյուս գյուղերի հայերին:

44 Տե՛ս Ա-ՂԹ, Մեծ Դպրերը Վասպուրականում, էջ 119, նաև «Նայրենիք», Բուսրոն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 93:

45 Տե՛ս Օն. Մխիթարեան, Վանի հերոսամարտը, էջ 19:

46 Տե՛ս Նանդի Պառայի, Սարսափի երկրին մէջ. նահապակ Նայաստան, էջ 144:

47 Տե՛ս անդ, էջ 141:

48 Տե՛ս Ն. Կոստյան, Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կոիւնները, էջ 21:

49 Տե՛ս Օն. Մխիթարեան, Վանի հերոսամարտը, էջ 20:

50 ՆԱԱ, ֆ. 242, գ. 29, թ. 7:

Ավգարիկի նման ոստիկանները մտնում են **Աղգարիկ** գյուղը և պահանջում, որ բոլոր տղամարդիկ դուրս գան գյուղից ու գնան Սարայ, ուր պիտի աշխատեն թուրքական մի զորանոցի շինության վրա: Դրանից մի օր առաջ Հյուսեին բեյի որդի՝ Թահարի կողմից, բռնի հավաքել էին Աղգարիկի հարևան բոլոր գյուղերի տղամարդկանց ու կենտրոնացրել էին մի ձորում: Ոստիկանները, երիտասարդ տղամարդկանց՝ քրդերի ղեկավարությամբ, ճամփա են դնում դեպի Սարայ և մի քանի ժամ անց բոլորին գնդակահարում: Այս քրդերը եր են դառնում, մտնում հայկական գյուղերը և սկսում թալանել ու կոտորել, սպանել գյուղերում մնացած ծերերին, երեխաներին, կանանց և հիվանդներին:⁵¹

Սակայն, Վանի կուսակալության փոխանորդ Մեհմեդ Շերիֆ բեյը հայտարարեց, թե կառավարությունն անգոր է պատժելու հանցագործներին երկու պատճառով՝ ա) կոտորածների հեղինակ քրդերը պետք է օգտագործվեն Իրանի պատերազմի համար և բ) կոտորածիչները նույնքան ծանր վիճակի մեջ են, որքան կոտորվածները: Ըստ էության կառավարությունը գոյշանում էր նրանց հրաժարել իր դեմ:⁵²

1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին խռովահույզ և անհանգիստ վիճակ էին ապրում ոչ միայն Սարայի հայերը, այլև Վասպուրականի հայաբնակ գրեթե բոլոր գավառները: Այդ դեպքերի մասին նույնիսկ տեղեկություններ է տալիս Վանի երիտասարդության հրատարակած «Տեղեկատու թերթ»-ը (1915 թ. փետրվար), իսկ Սարայի ու Հայոց ձորի բոլոր դեպքերն արձանագրվում են Հանրի Բարբիի «Սարսափի երկրին մեջ» աշխատության մեջ: Միաժամանակ այդ տեղեկությունները Հանրի Բարբիին հաղորդում է Վանի իրավական փոխօգնական Սպորտունին:⁵³

Նույնպիսի դեպքեր կատարվում էին նաև **Շաքախում**:

Վան քաղաքից ոչ հեռու Վարագա լեռան լանջերին անհատ չարագործներ սպանում են մի հայ և երկու քուրդ. հավանաբար կոտորույթի ենթարկված հայ գյուղացին դիմել էր ինքնապաշտպանության: Շարքերը պնդում էին, որ այն կառավարության սովորական մի խաղ էր, որպեսզի նոր ոճիրներ գործելու հիմքեր ունենան:⁵⁴

Ոստիկաններն այդ դիակներն առիթ բռնելով խուզարկում են **Վարագա վանքը**, սակայն ոչ մի բան չգտնելով, ձերբակալում են վանքի հովադներին ու ծառայողներին և սպանում այրել վանքը: Արամի և Ա. Վռամյանի դիմումներից հետո կառավարությունը թեև մի պահ երեսփոխական խաղաղություն պահպանեց, սակայն դրանից հետո, մի քանի շաբաթ անց վայրագ միլիսներն (քաղաքապահ զորք) երեք օր ու գիշեր խուզարկում են Վարագա վանքի մոտ գտնվող **Շուշանց** գյուղը, ուր նույնպես ոչինչ չեն գտնում, բայց գյուղի աջքի ընկնող մարդկանց ձերբակալում, տանում են Վան, բանտարկում և այնքան ծեծում ու գանահարում, որ մեկը մահանում է բանտում: Չկարողանալով կասեցնել բռնագրավումը և սանձել ոստիկանների հրապարակային բռնությունները, գյուղի բնակչությունը, թողած ամեն ինչ, ահ ու սարսափով լցվեց քաղաք: Այնուհետև միլիսները կոտորվում են գյուղը և անասունները քաղաք տանելով վաճառում: Երեք օրից հետո միլիսները դուրս են գալիս գյուղից, և գյուղացիները վերադառնում են ավերակ գյուղ և նստում մոխիրների վրա:

Հակառակ այս բոլորին, երբ կուսակալ **Ջեդեթը** ճակարկից վերադարձավ իր օգնական զորքով և որոշ հրահանգներով, ժողովրդի մեջ տրամադրություն կար համաձայնության եզրեր գտնել: Այդ մասին Ա. Եկարյանը հիշում է. «Հայ ժողովուրդը, ողորբելու նպատակաւ այս

51 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1924, ապրիլ, թիվ 6, էջ 94:

52 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 33, թ. 14:

53 Տե՛ս **Արսեն Կեօրիկյան**, Վասպուրականի հերոսամարտը, 1915 ապրիլ 7-1915 մայիս 7, էջ 48:

54 Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 1924 ապրիլ, թիվ 6, էջ 92:

հրէշը, փառաւոր ընդունելութիւն մը սարքեց ի պատիւ իրեն, մեծ բազմութեամբ մը դիմաւորեց զինքը մերձակայ՝ Կոռնուպոս զիւղին մէջ. քանի մը ոչխարներ մորթուեցան իր ձիուն ուրբերուն տակ. Ճելվրէթ, առերես, ինքզինքը գոհ եւ ուրախ կը ցուցնէր...»:⁵⁵

Սակայն արդեն ուշ էր:

Ըստ Ն. Մորգենթաուի⁵⁶ եւ Ռուսաստանի Պետական դումայի պարզամափոր Մ. Պապա-ջանյանի վկայության Վանի շրջանում արդեն բնաջնջվել էր ավելի քան 10 հազ. մարդ:⁵⁷ Իսկ Վանի իտալացի հյուպատոս Սպորտունի հաշվումներով, որի հաղորդած տեղեկությունները պահպանվել են Ն. Բարբիի աշխատության մեջ, Վանի 1915 թ. դեպքերից (խոսքը Վանի 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի մասին է - Ավ. Ն.) շատ առաջ գյուղական շրջաններում թուրքերն արդեն 16 հազար մարդ էին կոտորել:⁵⁸ 15 հազար մարդ էլ դարձավ փախստական եւ ապաստանեց Այգեաքանում:⁵⁹

Նայ մեծանուն գրողներ Ն. Թումանյանն ու Ա. Ծիրվանզադեն այցելելով Արեւմտյան Նա-յասպան, տեսան այդ գյուղերի միայն ավերակները եւ թուրքական բարբարոսության չա-րաշուք եւ ստեղծեցուցիչ հետեւանքները: Ա. Ծիրվանզադեն իր «Պատերազմի վայրերում» ակնարկում բերում է ակնամարտի հետեւյալ վկայությունը Մոլլա-Սուլեյմանի վերաբերյալ. «Առաջին օրը մեր կազակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին տասնյոթ ծերերի, տասնինը կանանց եւ քսանհինգ երեխաների դիակներ: Եվ ինչ դրության մեջ, Աստված իմ: Անարգիւշ, հոշոված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ ուրբեր ու ձեռքեր: Այստեղ կա-նանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բա-զուկները կտրված, երեխ, մայրերի փեշերից պոկելու համար:

Եւ պետք է տեսնեիք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թւերով: Մարդիկ, որոնց զգացմունքները բովվել են արյան եւ կրակի մեջ, փափկել էին ինչ-պես երեխաներ:

Ինչ վերաբերվում է ինձ, չկարողացա կրել տեսարանի կսկիծը եւ հեռացա:

Զեթկան չկարողացա մտնել: Արդեն տեսա՞մ բավական էր, որպեսզի հավիտյան չմոռա-նամ: Բայց ընկերս պարմեց, որ նույնն է եղել եւ այնտեղ»:⁶⁰

Ն. Թումանյանը այդ ու նման բազմաթիվ փաստերի հիման վրա «Տաճկահայաստան» անվանեց «ավերակների ու դիակների աշխարհ», որտեղ բարբարոս թուրքերն ու քրդերը սոսկ չեն սպանել ու կոտորել մարդկանց, այլեւ զազանային զվարճություններ են հորինել: «Որտեղ հասցրել են կոտորել են հայերին,- գրում է Ն. Թումանյանը իր հուշերում,- գլխավո-րապես փղամարդկանց, ու հետները տարել են գեղեցիկ կանանց, եւ եթե ժամանակ են ունե-ցել, ռուսական բանակի եւ հայ կամավորների սարսափը շատ չի մոտ եղել, բարբարոսական զվարճություններ են հորինել. Երեխաների ճակատներին մեխ են զարկել, խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կտրատել են, զանազան կերպ դասավորել, խաղեր են արել՝ մինչեւ կեսը դրել են պղնձի մեջ ու կեսից ներքեւ եփել, որ մյուս կեսը՝ կենդանի տեսնի ու զգա...: Ծիկացած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը եւ կրակի վրա խորովել,

⁵⁵ «Յուշեր Արմենակ Եկաթեանի», էջ 184:

⁵⁶ Տե՛ս «Ամերիկեան դեսպան Մը. Մօրկընթաուի Յիշարակները եւ հայկական Եղեռնին զարկնիքները», էջ 247:

⁵⁷ Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», документы и комментарии, том 1, Составитель, ответственный редактор, автор предисловия и комментариев доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, М., 2002, էջ 251:

⁵⁸ Տե՛ս Նանտի Պառայի, Մարտափի երկրին մէջ. նահապալկ Նայասպան, էջ 79:

⁵⁹ Տե՛ս Օն. Միթիարեան, Վանի հերոսամարտը, էջ 24-25:

⁶⁰ Տե՛ս Ծիրվանզադէ, Երկրի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 174:

կենդանի խորովել են: Ծնողների առաջ երեխաներին են կոտորել, երեխաների առաջ ծնողներին»⁶¹:

Վանի կուսակալին իրավունք էր վերապահված հերապանդել ու կոտորել նաև Վանից ուրիշ վայրեր փախած հայերին: Նաստարված է, որ Զեդեթ փաշան 1915 թ. հունիսի վերջերին Վանը ռուսներին թողնելուց հետո Վանից հեր վերադառնալու ժամանակ ոչնչացնում է նաև Բիթլիսի հայ բնակչությանը⁶², իսկ մնացածներին՝ 9000 կանանց ու երեխաներին, տեղահանում, իսկ ապա ջրախեղդ անում Տիգրիսում՝ դրանով վերջակետ դնելով Մուստաֆա Աբդուլ-հալիկ բեյի կապարած սեւ գործին: Այսպես ղեկավարում է հուլիսի 11-ին սկսած Մուշի կոտորածը, որի արդյունքում քաղաքի 15000 հայերից մնացին ընդամենը 200-ը: Նայկական գյուղերով բնակեցված Մշո դաշտի 59000 բնակիչներից միայն 9000-ին հաջողվեց փախչել Սասունի լեռները⁶³:

Այդ առիթով որպես վկայություն կարելի է բերել նաև Բիթլիսի կուսակալի մի պարասխանը, որը նա րվել է հայերին՝ նրանց բողոքի կապակցությամբ. «Կայսերական իրադրված (պա իրադրվե սենիե) առայժմ Վանի վիլայեթին կվերաբերի այդ կարգադրությունը եւ Վանի շրջանի ժանդարմներն իրաւունք ունեն հերապանդել ու գրնել իրենց գաւառի հայերը իբրեւ հանցաւորի եւ պապժել»⁶⁴:

Վանից եկած մահմեդական վերաբնակիչների եւ ժանդարմական զնդերի օգնությամբ իրագործվեց հայկական այլ գավառների ու բնակավայրերի՝ Բաղեշի, Մուշի, Սղերդի, Դիարբեքիի վիլայեթների հայերի կոտորածը: Բեհաէդդին Շաքիր բեյը Էրզրումից Անթալիայի մութասարիֆին ուղղված իր ծածկագիր հեռագրում կիստարվաներ, որ «Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի, Սիվասի, Տրապիզոնի շրջաններում ո՛չ մի հայ չի մնացել, բոլորը արպաքսվել են Մոսուլի եւ [Տեր]-Ջորի կողմերը: Իսկ դուք ի՞նչ եք անում Անթալիայում»⁶⁵:

Մուշի կոտորածին մեծ դերակարարում ունեցան Վանից բերված ժանդարմական զնդերը՝ Քյազիմ բեյի հրամանադրությամբ⁶⁶: Նրանց մեջ երիտթուրքերն արելություն էին սերմանել դեպի հայերը եւ կոչ էին անում ոչնչացնել նրանց՝ ամբողջ ունեցվածքին փրանալու նպատակով: Ականաւրեսի խոսքերով «կառավարությունն ամբողջ մի բանակ էր արեղծել, որը կազմված էր ամենադաժան մարդասպաններից... Սրանց կանգնեցրել էին բոլոր ճանապարհների վրա՝ հայերի փախուստը խանգարելու համար: Նրանց զինել էին եւ հանձնարարել թալանելու բոլոր քրիստոնյաներին»⁶⁷:

Ուրեմն, նույնիսկ թուրքական նահանգապետը պաշտոնապես հաստատում է, որ հայերի ջարդերը կազմակերպված էին օսմանյան կառավարության հրամանով, եւ այն փարածվեց նաև մյուս վիլայեթների վրա:

Նշանակվելով Ադանայի նահանգապետ՝ Զեդեթն այնպեղ մեկնելու ճանապարհին 1916 թ. փետրվարին ժամանում է Ռաս-ուլ-Այն, որպեղ կազմակերպում է եւ անմիջական

61 **Ռովհաննես Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. 6, Երեւան, 1959, էջ 212-213:

62 Տե՛ս «Գերմանիան եւ Նախապարը 1914-1918». դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հարոր II, հրապարակությունը եւ ներածությունը՝ Դոկտոր Յոհաննես Լեվիսիտի, Երեւան, 2008, էջ 35:

63 Տե՛ս անը եւ № 309 փաստաթուղթ, էջ 301:

64 **Ա-Ղ**, Մեծ դէպքերը Վասպուրականում, էջ 190:

65 **Զաւեն արքեպիսկոպոս**, Պարքիարքական յուշերս, Գահիրե, 1917, էջ 318:

66 Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник документов и материалов, под редакцией Проф. М.Г. Нерсисяна, էջ 298, 368, նաև Պարմուրյան ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 226, թ. 1-6, նաև **Մ. Ներսիսյան**, Նյութեր հայկական կոտորածների մասին. ՊԲՀ, 1965, թիվ 1, էջ 95:

67 **Ե. Մարգարյան**, Թուրքիան եւ նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Երեւան, 1964, էջ 247:

մասնակից է դառնում այնպիսի կուրսակված մոտ 50000 աքսորված հայերի կուրորածին⁶⁸:

Այսպիսով, 1895-1896 թթ. մեծ դեպքերից մոտ 20 փարի անց՝ 1914 թ. վերջերին և 1915 թ. սկզբներին Վասպուրականի հայությունը կրկին անգամ կանգնում է ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ: 1914թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վասպուրականի գավառներում իրագործվում է մի կողմից հայ զինվորների զինաթափումն ու ջարդը, իսկ մյուս կողմից հայերի փնտախանություններն ու զանգվածային կուրորածնները:

Թուրք կառավարության դավադիր ու ոճրապարտ դիտավորությունը կարմիր թելի պես պարույր էր գալիս Վասպուրականի բոլոր մասերում:

Իրականացված Աղբակի և Սարայի հայկական գյուղերի կուրորածներն ու փնտախանությունները, որոնք ծրագրվել էին թուրքական պետական գործակալների ձեռքով և գործադրվել գրեթե միաժամանակ, կասկածի փոխին չէին թողնում, որ Վասպուրականի հայության գլխին կախվել էր ֆիզիկական անողոք բնաջնջման սպառնալիք, որն աննախընթաց երևույթ չէր Վասպուրականի հայության համար, քանի որ նա 1895-96-ին արդեն ճաշակել էր թուրքական փամարդի և հայաստան քաղաքականության ջարիքները: Նախապես Վասպուրականցիների խաղաղասիրական փրամադրություններին և թուրքական կառավարության նկատմամբ ունեցած հավատարմին, կուրորածի մղձավանջը գործադրված իրողություն էր, իսկ «ծրագրում և յաջողությամբ գործադրում բոլոր դեպքերը կը մնային իբրեւ անխորպակելի յուշարձաններ՝ հակահայ ու հակամարդկային եղեռնի մը»⁶⁹:

Սրեղծվել էր անելանելի և ահավոր կացություն: Տեղական իշխանությունները փոխանակ կանխելու սրեղծված իրավիճակը, գաղտնի դավադրություն էին կազմակերպում և ամեն ինչ անում ոճրի հեղքերը ծածկելու համար: Չնայած Վանի առաջնորդը կառավարության ուշադրությունը հրավիրեց կուրորածների վրա, սակայն գրաքննությունը փակել էր բողոքի բոլոր ճանապարհները: Նմաբավորություն չկար նույնիսկ Ա.Պոլսի հեղափոխականներին:

Այս ամենը պարասպասն էր անգնահատելի այն գոհաբերության, որ հանձն առավ Թուրքիայի պետական շահերին հավատարիմ արեմտահայությունը՝ փրամադրելով զինվոր, հաց և դրամ:



68 Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և կյաթերի ժողովածու Մ.Գ.Ներսիսյանի խմբագրությամբ, Երեւան, 1991, էջ 569-570:

69 «Հայրենիք», Բուսթուն, 1924 ապրիլ, թիվ 6, էջ 93, նաև **Օն. Մխիթարեան**, Վանի հերոսամարտը, էջ 24:

ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ

պարամական գիտ. թեկնածու

**ԳԵՆՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՊՈՂՈՍ
ՆՈՒՐԱՐԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(1915-1918 ԹԹ.)**

Առաջին համաշխարհային պատերազմի փարիներին հայ գործիչներին ամենաշարժող խնդիրներն էին արեւմտահայությանը ոչնչացումից փրկելը, կամավորական շարժումը եւ հայաստանի ապագայի հարցը: Այդ հարցերի շուրջ հետաքրքիր են Ամենայն հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենյանցի (1911-1930) նշանավոր բարերար, հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի (1851-1930) փեսակերները, որոնք արտացոլված են համաշխարհային պատերազմի փարիների նրանց նամակագրության մեջ:

Գեորգ Ե. կաթողիկոսին վիճակված էր հայ Առաքելական Եկեղեցին ղեկավարել մեր ժողովրդի համար ամենադժվարին փարիներին՝ հայկական հարցի վերաբացում 1912-1914 թթ., աշխարհամարտ, Մեծ եղեռն, սովամահության եզրին գլորվող հարյուրհազարավոր գաղթականներ, Մայիսյան հերոսամարտեր, հայաստանի անկախացում, ապա՝ խորհրդայնացում, հայկական հարցի ձախողում, բոլշևիկների հակաեկեղեցական քաղաքականություն: Վեհափառն իր հնարավորության սահմաններում փորձեց ամեն ինչ անել, որպեսզի օգտակար լինի սեփական ժողովրդին, պաշտպանի մեր ազգային շահերը:

Դեռեւս 1912 թ. նոյեմբերի 10-ին Գեորգ Ե. հաջորդ կոնդակով¹ Պողոս Նուբարին լիագործ էր կազմավորել Ազգային պատվիրակություն եւ հայկական հարցը բարձրացնել մեծ փերությունների առաջ: Ինչպես հայտնի է, Ազգային պատվիրակության ջանքերով 1914 թ. հունվարի 26-ին ստորագրվեց ռուս-թուրքական համաձայնագիր, որով նախատեսվում էր բարենորոգումներ կատարել Արեւմտյան հայաստանում²: Մակայն համաշխարհային պատերազմի սկսվելուց օգտվելով՝ երկրորդները մի կողմ դրեցին բարենորոգումների համաձայնագիրը եւ որոշեցին հայկական հարցը լուծել արեւմտահայությանը բնաջնջելով:

Ստանալով զանգվածային փողոցային ելույթների ու կոտորածների լուրերը՝ Կաթողիկոսը որոշեց Պողոս Նուբարին կրկին ուղարկել Երուսալ, որպեսզի քայլեր ձեռնարկի կոտորածները դադարեցնելու եւ հայաստանի ինքնավարության հարցը բարձրացնելու համար: 1915 թ. ապրիլի 18-ի կոնդակով Վեհափառը վերահասարակեց Պողոս Նուբարի լիագործությունները որպես իր ներկայացուցիչ մեծ փերությունների մոտ³:

Ապրիլի 22-ին Գեորգ Ե. Կաթողիկոսը հեռագրեց Պողոս Նուբարին Արեւմտյան հայաստանից եւ Կիլիկիայից ստացվող կոտորածների լուրերի մասին, փողոցային, որ խնդրել

1 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թթ. 1-2:

2 Տե՛ս Ժողովածու դիպլոմատիկական դոկումենտների: Բարենորոգումները հայաստանում 1912 թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914 թ., թարգմ. Ս. Ազգեան, Թիֆլիս, 1915, էջ 102-104:

3 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թթ. 30-31:

է Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Սազոնովի, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի եւ Իտալիայի թագավոր Վիկտոր Էմմանուել Երկրորդի միջամտությունը դրանք կանխելու համար: Կաթողիկոսը հանձնարարում էր Ազգային պարվիրակության նախագահին, որպեսզի նա անի հնարավորինը՝ պաշտպանելու Թուրքիայի հայերին⁴:

Պ. Նուբարը, ստանալով Վեհափառի հանձնարարությունը, անմիջապես մեկնեց Կահիրեից եւ մայիսի 6-ին ժամանեց Փարիզ: Նույն օրը Լոնդոնից ժամանեց եւ նրան դիմավորեց դաշնակցական նշանավոր գործիչ Նակոր Զավդյանը, որին Եւրոպա էր գործուղել Թիֆլիսի Նայոց ազգային բյուրոն: Նա Պ. Նուբարին ներկայացրեց Նայաստանի ինքնավարության մի ծրագիր, որը հիմնված էր Կաթողիկոսի՝ Կովկասի փոխարքա Իլլարիոն Վորոնցով-Ղաշկովին եւ կայսր Նիկոլայ Բ.-ին կապարած դիմումների, ինչպես նաեւ այն բանակցությունների վրա, որ Կոնստանդնուպոլսի Երեւոյի եւ Երեւոյի թաղաքական գործիչների եւ Ռուսաստանի արագործնախարարության միջեւ: Այդ ծրագրով պետք է ստեղծվեր ինքնավար Նայաստան՝ սուլթանի անվանապես գերիշխանության ներքո եւ եւրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Խոսնակալությունը համապետել իրականացնելու էին Ռուսաստանը, Բրիտանիան եւ Ֆրանսիան: Նայաստանն ընդգրկելու էր Արեւմտյան Նայաստանի վեց վիլայեթները եւ Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրեպոլ դուրս էին թողնելու, որպեսզի խուսափեն Ֆրանսիայի եւ Բրիտանիայի ընդդիմությունից⁵:

Այդ ծրագրի վերաբերյալ Պետրոգրադում նախնական համաձայնություն էր կայացվել: Մակայն Ռուսաստանը որեւէ պարպավորություն չէր ստանձնել, հապկապես՝ Կիլիկիայի մասով, քանի որ այդ երկրամասը Ֆրանսիայի ազդեցության գոյում էր, եւ հայերը պետք է սեփական ուժերով պաշտպանեին իրենց շահերը Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների մոտ: Ն. Զավդյանը Պ. Նուբարին Կոնստանդնուպոլսից, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը զաղրնի համաձայնություն են կնքել, որով հաղթանակից հետո Ֆրանսիային էր անցնելու Կիլիկիան, իսկ Ռուսաստանին՝ Կ. Պոլիսը, Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի վիլայեթները: Մակայն վերջինս զոջացել էր այդ համաձայնության համար եւ, ինքը մնալով սրվերում, հայերին դրդում էր պահանջել Կիլիկիան՝ խոստանալով ինքնավարություն Կալ Նայաստանին վեց վիլայեթների եւ Կիլիկիայի սահմաններում⁶:

Ե. Աղամովը գրում է, որ այդ ժամանակ պետրոգրադյան կառավարության համար միակ միջոցը փարաժելու իր ազդեցությունը Միջերկրականում մնում էր «անկախ» Նայաստանը, սակայն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կասկածներից խուսափելու համար այդ ծրագիրը պետք է պաշտպանեին հայ պարվիրակներն առանց ռուս դիվանագետների միջամտության⁷:

1915 թ. հունիսի 17-ի նամակով Պ. Նուբարը Կոնստանդնուպոլսին, որ նրա հանձնարարականը ստանալուց հետո մեկնել էր Փարիզ: Տեղեկացնում էր, որ Վանի ազգաբարձման լուրը ստանալուց հետո 15.000 ռուբլի է ուղարկել Կաթողիկոսին՝ Վանի եւ Բիթլիսի կաթիքները հոգալու համար, իսկ կամավորական շարժմանն աջակցելու համար 10.000 ռուբլի է

4 Տե՛ս "Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918". Documents. Edited and translated by V.Ghazarian. Waltham, 1996, էջ 17:

5 «Նայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արարքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 371-374:

6 Տե՛ս ՇԱՄ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:

7 Տե՛ս "Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел". Под редакцией Е.А.Адамова, Москва, 1924, էջ 90-91:

ուղարկել Թիֆլիսի Ազգային բյուրոյին: Յավով նշում էր, որ Անուանդի երկրները որևէ կերպ չէին կարող կանխել կոտորածները: Նշում էր, որ Կաթողիկոսի դիմումների հիման վրա էր, որ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մայիսի 24-ին հայտարարություն էին արածել, որով թուրքական պետությանը և պաշտոնյաներին պարասխանալու էին համարում հայկական կոտորածների համար: Տեղեկացրեց, որ Ֆրանսիական իշխանություններին ներկայացրել է պարերազմից հետո Արեւմտյան Նայասարանի վեց նահանգների և Կիլիկիայի միավորմամբ միասնական ինքնավար երկրամաս կազմավորելու հայկական ձգտումները: Նայասարանը պետք է դրվեր Ֆրանսիայի, Ռուսաստանի և Բրիտանիայի վերահսկողության տակ: Նշում էր, որ Ֆրանսիան ձգտում էր գրավել Կիլիկիան և միացնել Սիրիային: Նա կարողացել էր համոզել Ֆրանսիացի բազմաթիվ պետական գործիչների և խմբագիրների, որ Ֆրանսիային ձեռնարկ էր միայն Ալեքսանդրիայի միացնել Սիրիային, իսկ միասնական ինքնավար Նայասարանի ստեղծումը կարող է նրան փոխհատուցել մեծ հնարավորություններ ընձեռել⁸:

Միացյալ՝ «ծովից ծով» ինքնավար Նայասարան ստեղծելու ծրագիրը ներառող հուշագրեր Պ. Նուբարը հունիսի 6-ին հանձնել էր Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասին, որը այն սկզբունքորեն ընդունելի համարեց⁹, իսկ հուլիսի 15-ին հանձնեց Բրիտանիայի ԱԳՆ¹⁰: Դրանցում փորձել էր հիմնավորել այդ երկրների շահերը միացյալ Նայասարան ստեղծելու պարագայում: Նա ամեն ինչ անում էր, որպեսզի Ֆրանսիայում և Բրիտանիայում ազդեցություն ունեցող գրեթե բոլոր պետական ու քաղաքական գործիչներին, մամուլի ներկայացուցիչներին շահագրգռի ինքնավար Նայասարան ստեղծելու հարցում: Դրա հետ կապված անընդհատ հանդիպում էր նրանց և փորձում հիմնավորել իր տեսակետները: Պետք է նշել, որ Պ. Նուբարի հանդիպումները դրական արդյունքներ էին ունենում, քանի որ նա փորձավ պարզել էր դիվանագիտական և հետքորդական բարձր ունակություններ:

Հուլիսի 18-ին Պ. Նուբարը Կաթողիկոսին հեռագրեց, թե ինքը տեղեկացել է, որ թուրքերի գլխավոր նպատակն է Նայասարանի և Կիլիկիայի հայերին տեղահանել դեպի Կոնիա ու Միջագետք և ոչնչացնել: Խորհուրդ էր տալիս, որ կաթողիկոսը նորից դիմի Անուանդի և չեզոք երկրներին՝ կանխելու այդ ծրագիրը¹¹: Փաստորեն՝ հայ գործիչների համար արդեն պարզ էր թուրքերի գլխավոր նպատակը, սակայն դա կանխելու հնարավորություն նրանք չունեին, և միակ թույլ հույսը մնում էր չեզոք երկրների միջամտությունը:

Հուլիսի 19-ի նամակով Կաթողիկոսը տեղեկացնում էր Պ. Նուբարին, որ ստացել են Վանի և Բիթլիսի գաղթականների և կամավորների համար նրա ուղարկված գումարները և շնորհակալություն էր հայտնում աջակցության համար: Նշում էր, որ պետք է պաշտպանել պարերազմից հետո Նայասարանին (ներառյալ է Կիլիկիան), ինքնավարություն տալու գաղափարը: Գրում էր, որ հարցը լուծվելու է միայն պարերազմում Անուանդի հաղթանակից հետո, բայց մինչ այդ անհրաժեշտ էր դրական մթնոլորտ ստեղծել այդ գաղափարի շուրջը: Հաստատում էր, որ թուրքերը որոշել են ամբողջությամբ ոչնչացնել հայերին և դրանով փակել Նայկական հարցը: Նշում էր, որ դիմել է չեզոք երկրներին, խնդրում էր, որ Պ. Նուբարը եւս դիմի Անուանդի և չեզոք երկրներին, մամուլով անընդհատ բարձրացվի հարցը, բայց ցա-

8 Տե՛ս "Boghros Nubar's Papers", էջ 108-110:

9 Տե՛ս անդ, էջ 80-84:

10 Տե՛ս անդ, էջ 170-177:

11 Տե՛ս անդ, էջ 180:

վով արձանագրում էր, որ այդ միջոցները անբավարար կլինեն թուրքերին զապելու համար¹²:

Նույնիս 27-ին Կաթողիկոսին ուղարկած նամակում¹³ Պ. Նուբարը ներկայացնում էր այդ ամիս Լոնդոնում իր ունեցած հանդիպումները բրիտանացի պետական գործիչների և մամուլի ներկայացուցիչների հետ: Նա այն փափաքությունն էր սրացել, որ Բրիտանիան կօժանդակի պապերագմից հետո միացյալ Նախարարնի սրեղծման ծրագրին: Նշում էր, որ Բրիտանիայի ԱԳՆ-ին հանձնած հուշագրում, ի փարբերություն Թ. Դելկասենին ներկայացրածի, որոշ դրույթներ մեկնաբանել էր բրիտանական շահերին համահունչ: Նշում էր, որ երկու հուշագրերն էլ փվել է նաև Փարիզի ու Լոնդոնի ռուսական դեսպաններին: Ազգային պարվիրակության նախագահը վստահեցնում էր, որ հայկական պահանջները համակրության էին արժանացել Ռուսաստանի, Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից: Սակայն մարտնաշում էր, որ հարցի լուծման ուղղությամբ քայլեր կարող էին կատարվել, եթե պապերագմը ավարտվեր Դաշնակիցների հաղթանակով: Տեղեկացնում էր, որ հայկական կոտորածների մասին ինքը փողեկացել է փարբեր աղբյուրներից, այդ թվում՝ իրալացի հյուպատոսներից ու ամերիկացի միսիոներներից: Կաթողիկոսի կողմից կոտորածները կանխելու մասին հեռագիրը սրանալուց անմիջապես հետո, ինքը Կահիրեում դիմել էր ԱՄՆ-ի ու Բրալիայի ներկայացուցիչներին, իսկ Փարիզ ժամանելուց հետո նաև Անտանտի պետություններին: Սակայն ցավ է հայտնում, որ դրանք որևէ գործնական արդյունքի չէին հանգեցրել: «Պետութիւնը, ցաւ յայտնելով հանդերձ պապահաժներու մասին, կը խոստովանէին թէ ներկայիս ոեւէ գործնական միջոց չունին մեզի օգնութեան հասնելու»¹⁴:

Փրկության միակ հույսը Պ. Նուբարը համարում էր Կիլիկիայում դաշնակից ուժերի ակիանում կազմակերպելը, կամ հայ կամավորական շարժմանը ուժ փալը և նրանց միջոցով հայ բնակչությանը ազապագրելը, զանգվածային փրկահանությունն ու կոտորածը կանխելը: Այդ հարցի շուրջ նա հետելյալ փնտակերն էր հայտնում Կաթողիկոսին.

«Երբ, պապերագմի սկիզբը, Ռուսական բանակները զառաջինն Նախարարն արշանցին, սիրտս բառական հանգիստ էր վեց նահանգներուն մէջ ապրող Նայոց կացութեան մասին, բայց նոյնքան ապահով չէի Կիլիկիոյ նկատմամբ, մտածելով, անշուշտ, թէ Ռուսական յառաջխաղացութիւնը Կիլիկիան ևս փրկելու աւարիան արագ չպիտի կարենար լինել: Ուստի եւ, ըստ իմ կարծեաց, Թուրքիոյ այդ բաժինին մէջ զինուորական արագ գործողութիւն մը անհրաժեշտ կը դառնար իղերես հանելու համար հայ քառքի բնաջնջման մասին Թուրքերու հետապնդած ծրագիրը:

Հասն որոյ, անցեալ Նոյեմբեր ամսոյ սկիզբն իսկ, Եգիպտոսի անգլիական զինուորական և քաղաքային իշխանութեանց դիմելով, առաջարկեցի որ զօրք հանուի Կիլիկիոյ ծովեզերքը ու Մերսինի ու Բսկէնդէրունի նահանգիստները, ինչպէս եւ Արանայի դաշտը գրաւուին, եւ իմ կողմէս խոստացայ գրաւման բանակին քրաւնադրութեան փակ դնել պէտք եղած թուով եւ երկրին ծանօթ ռահվիրաներ, թարգմաններ եւ բքօքականրիսթներ, պաշտօն ունենալով, ի միջի այլոց, լեռնագաւառներու հայտրիւնը ապապամբեցնել, որ, ահա այսպէս, իր աջակցութեան բաժինը պիտի բերէր Դաշնակցաց, պալմանա ու սքրա պէտք եղած զէնքն ու ռազմամթերքը հայթայթէին ժողովուրդին:

12 Տե՛ն անդ, ՆԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թթ. 34-35:

13 Տե՛ն անդ, գ. 19, թթ. 67-69:

14 Տե՛ն անդ, թ. 68:

Յայրենի է թէ այս ծրագրին առաւելութիւնը կրկին էր: Անիկա, Դաշնակից պետութեանց զօրքերու ներկայութեան շնորհիւ, մէկ կողմէն տեղւոյն հայութեան կեանքը, պարսիւր եւ գոյրը կապահովէր եւ Թուրքերը կը չեզոքացնէր, իսկ միւս կողմէն, հայկական ապստամբական շարժումով, ասելի կշիռ կը բերէր Կիլիկիոյ մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն:

Այս ծրագիրը Փրանսական եւ Ռուսական Կառավարութեանց ալ հաւասարապէս ծանօթ էր եւ ռուս ընդդիմութեան չէր բաղխած այս վերջնոց կողմէ: Անգլիոյ մէջ ալ լաւ ընդունելութիւն գտաւ անիկա, մինչեւ այն, որ պահ մը Եգիպտոսի Անգլ. զինուորական իշխանութիւնը հաւասարեցին ինձ թէ ծրագիրը ի մօտոյ պիտի գործադրուի: Բայց դժբաղդաբար քիչ յետոյ Լօնդոնայի մէջ որոշուած ըլլալով Տարաբանէլ զօրք հանել, մեր ծրագիրը անպայման յետաձգուեցաւ:

Այսու ամենայնիւ, եթէ սպասեմք որ Պոլիսը իյնայ եւ անկէ յետոյ Դաշնակիցները Կիլիկիան ծովեզերքը զօրք հանեն, մինչեւ այն ատեն Կիլիկիոյ մէջ գոցեմ բնաւ հայ չի մնար. որպիսի անդարմանալի չարիք:

Ապա ուրեմն մեզ համար մտիտ եւ կենաց հարց է ռուս գնով արգիլել Կիլիկիոյ հայութեան կոտորածներն ու խմբական արտոքանքը:

Եւ ըստ որում, ներկայ պայմաններուն մէջ Դաշնակիցը, հակառակ իրենց բարեացակամութեան, անկարող են մեզ օգնել՝ մեզ ուրիշ բան չի մնար ընել բայց եթէ մեր սեպհական ոյժերուն կրթելի:

Եւ այս մասին միակ դարման մը կը խորհիմ, այսինքն Վանի շրջակայքին հայ կամաւորական գունդերը ի վիճակի դնել ըստ կարելոյն շուրջով յառաջ խաղալու, մեր բոլոր ոյժերով աշխատելով անոնց թիւը բազմապատկել, այս մասին Կովկասի սպայակոյրին արարօնութիւնը ձեռք բերել եւ յիշեալին աջակցութեամբ պէտք եղած զենքն ու ռազմամթերքը հայթայթել:

Լօնդոնէն Ձեր Վեհափառութեան յոյժի 14.700 թուպի խնդրելով որ ամենէն սրիպողական պէտքերուն յարկացուի այս գումարը:

Այսօր ալ, Ազգային հիմնադրամի հաշուոյն, դարձեալ հեռագրաւ ուղարկեցի Banque de Commerce Vilga Coma-ի շնորհիւ 20.000 թուպիի ուրիշ գումար մը Կամաւորներու պիտոյից գործածուելու համար եւ կը յուսամ որ ի մօտոյ փարքեր գումարներ ալ պիտի կարենան յղել գորս հաճեցէք խնդրեմ, Վեհափառ, յարկացնել Կամաւորներու գործին:

Բաւական վարսահելի աղբիւրներէ տեղեկացած եմ որ Թուրքերը այս թուպիի շարքից զօրք ունին Կիլիկիոյ մէջ, հետեւաբար Կովկասեան ճակատին վրայ իրենց արտութեան ապայոյցը արդէն րոտած քանի մը հազար քաջամարտիկ հայ կամաւորներ կարող են յիշեալ զօրքերուն հետ ճակատիլ: Եթէ մեր կորիճները յաջողին Զէյթունը եւ երկրին ուրիշ ռազմական դիրքերը գրաւել՝ կարող կը հանդիսանան այս կերպով խմբական արտոքանքներու եւ կոտորածներու սպառնալիքին առաջքն առնուլ:

Ըսածիս ապացոյցն ալ սա է որ Թուրքերը երբեք չի կրցին Զէյթունցիներուն հետ բիրտ ոյժով գլուխ ելլել, այլ՝ խորամանկութեամբ:

Արդարեւ, ինչպէս Ձեր Վեհափառութիւնը գիտէ արդէն, Թուրքերը Զէյթունցոց սպառնացան որ եթէ անձնարար չըլլան՝ ամբողջ Կիլիկիոյ հայութիւնը պիտի կո-

տորեն, այնպես որ Զեյթունցիք, սուկ հայրենասիրությունն մղուած, հարկադրուեցան համակերպիլ:

Եւ սակայն, եթէ կը բաղձանք որ կամատրները դրական գործ կատարեն՝ հարկ է որ իրենց օգնութիւնը ըստ կարելոյն շուրտով հասցնեն: Եւ այս նպատակին իմովսանն ծառայելու համար, որոշեցի Ազգային Նիւնադրամի հանգանակութենէն գոյանալի գումարներուն մեծագոյն մասը Զեյթուն Կեհապառութեան յոյս, որպէսզի կամատրներու թիւը սակցնելու գործին յարկացուի:

Ինծի պէս շարեր կը խորհին թէ սահկա միակ ծրագիրն է որ մեր Կիլիկիոյ հայրենակիցներու փրկութեան վերջին յոյս մը կը շողացնէ փակաւին, պայմանաւ որ շուրտով գործադրութեան դրուի»¹⁵:

Ինչպէս Գրեգոր Մարտիրոսեանը, Ազգային պարզապէսական նախագահը ամբողջությամբ հույսը կորել էր, որ Ամբաստանի պետութիւնները կօծանդակելին Կիլիկիայի ազատագրմանը եւ կոտորածների կանխմանը: Նա հարցի լուծում էր համարում հայ կամավորների թիվը ավելացնելը եւ սեփական ուժերով Կիլիկիա հասնելը: Սակայն դա իրարեւանական չէր, քանի որ հայ կամավորները Վանից Կիլիկիա հասնել անկարող էին, նույնիսկ Կովկասյան ճակարի ռուսական բանակը այդ պահին ի վիճակի չէր նման ռազմական խնդիր լուծել: Այս շրջանում ռուսական բանակը նույնիսկ կարճ ժամանակով նահանջել էր Վանից՝ Գրեգորի հայ բնակչությանը կանգնեցնելով գաղթելու պարտադրանքի առաջ:

Նոյիսի 29-ին ուղարկած նամակով Պ. Նուբարը կրկին Կաթողիկոսին հավաստիացնում էր, որ Բրիտանիայում եւ Ֆրանսիայում մեծ համակրություն կա մեր դարի շուրջ եւ պարտադրման հետո Նայասարանի ինքնավարության ծրագիրը այդ երկրների կողմից աջակցություն կստանա: Միակ խնդիրը Կիլիկիայի հետ կապված Ֆրանսիայի հավակնություններն էին, սակայն նա համոզված էր, որ դրա շուրջ էլ որեւէ ընդունելի լուծում կարող էին գտնել¹⁶:

Օգոստոսի 22-ի նամակով¹⁷ Պ. Նուբարը Կաթողիկոսին հայտնում էր, որ ուղարկում է եւս 10.000 ռուբլի՝ կամավորների համար: Նաեւ պարզաբանում էր միացյալ եւ ինքնավար Նայասարանը թուրքական գերիշխանության փակ թողնելու հնարավորության մասին իր փեսակերը. «Միշտ յայտնած եմ, որ իբր հայ, եւ չեմ կրնար, նկարի առնելով բոլոր անցեալը, պահանջել կամ ընդունիլ Թուրքիոյ գերիշխանութիւնը. սոյն խնդիրը պարտադրված վերջ կրնայ Պետութեանց կողմէ լուծուիլ, եւ մենք հարկադրուած կըլլանք խոնարհիլ՝ եթէ իրենք այնպէս որոշեն»¹⁸:

Կոտորածները դադարեցնելու թույլ հույսով Պ. Նուբարը սեպտեմբերի սկզբին նաեւ նամակ ուղարկեց Գերմանիայի ԱԳ նախարարի փոխակալ Արթուր Յիմմերմանին, որպէսզի Գերմանիան ազդի իր դաշնակից Թուրքիայի վրա, բայց դա եւս ապարդյուն էր¹⁹: Նա Ա. Յիմմերմանի հետ մի քանի անգամ հանդիպել էր 1913 թ.՝ Նայակական բարենորոգումների հարցով, որի արդյունքում Գերմանիան փոխել էր նախկին բացասական դիրքորոշումը բարենորոգումների խնդրում: Սակայն այժմ, պարտադրված եղանակով, Գերմանիան որեւէ ցանկություն չուներ ճնշում գործադրելու իր դաշնակից Թուրքիայի վրա:

15 ՄԱԿ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 68-69:

16 ՄԱԿ, ՄԱԿ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 70-72:

17 ՄԱԿ անդ., թթ. 86-89:

18 Անդ. թ. 87:

19 ՄԱԿ «Boghoss Nubar's Papers», էջ 279:

Այսպիսով՝ ո՛չ Գերմանիան, ո՛չ Ամերիկայի երկրները, ո՛չ չեզոք պետությունները չկարողացան կանխել մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված մեծագույն հանցագործություններից մեկը՝ հայերի ցեղասպանությունը:

Նոկտեմբերի 28-ին Պ. Նուբարին ուղարկած նամակով Կաթողիկոսը եւս գրնում էր, որ Ամերիկայի պետությունները չեն կարող կանխել կոմորաճներն ու հայերի տառապանքը, սակայն անհրաժեշտ էր համարում նրանց պարբերաբար հիշեցնել եւ ընդգծել թուրքական կառավարության իրական նպատակը՝ ոչնչացնել Հայաստանի եւ Կիլիկիայի հայկական տարրը եւ այն բնակեցնել քուրդ եւ մահմեդական գաղթականներով: Մալմանշում էր, որ ականատեսն են, թե ինչպես է թուրքական կառավարությունը ամենամեծ մասշտաբներով ազատորեն իրականացնում հայերի ոչնչացումը, եւ իրենց գլխավոր խնդիրն էր լինելու Դաշնակիցների հաղթանակից հետո ապահովել Հայաստանի ինքնավարությունը եւ թույլ տալ բոլոր հայերին՝ աշխարհի տարբեր մասերից վերադառնալ Հայաստան: Նույս էր հայտնում, որ ի վերջո հայ ժողովուրդը կազատագրվի եւ ինքնավարություն ձեռք կբերի սեփական հայրենիքում՝ վերջնականապես ազատ հարյուրամյակներ տեսած թուրքական ճնշող շղթաների անազատությունից²⁰:

Դեկտեմբերի 20-ին Կաթողիկոսին հղած նամակից²¹ տեղեկանում ենք, որ Պ. Նուբարը փոխել է վերաբերմունքը կամավորական շարժման նկատմամբ, քանի որ համոզվել էր, որ կամավորները ի վիճակի չէին ազատագրելու ամբողջ Հայաստանը, իսկ նրանց գոյությունը թուրքերն օգտագործում էին իրականացրած ջարդերն արդարացնելու համար: *«Սկիզբէն ի վեր, եւ նոյն իսկ այն ժամանակ երբ հասարակաց կարծիքը նպաստատու էր կամատրնէրու կազմութեան,- գրում էր Ազգային պատվիրակության նախագահը,- եւ միշտ վախճած էի անոր առաջ բերելիք հետեւանքներուն վրայ. մինչեւ անգամ նախընտրած էի որ այն Հայերը որ կուգէին գինուիկ հայրենիքը պաշտպանելու կամ ազատելու համար, զինուորագրուին Դաշնակիցներու բանակներուն մէջ: Եզիպոսու եղած ժամանակս բացայայտօրէն պարզեցի այս գաղափարս եւ Ձեր Վեհափառութիւնը կը յիշէ որ այս գաղափարս որքան սաստկօրէն եւ անվայելօրէն դատաւերտեցաւ. զիս մինչեւ անգամ իբր ոչ հայրենասէր ամբաստանեցին: Ընդհանուր հոսանքէն միտած եւ Կովկասի կամատրնէրուն ձեռք բերած առաջին նպատատուր յաջողութիւններէն շրացած՝ սրիպուեցայ տեղի տալ եւ աջակցիկ կամատրնէրու ջոկարներու կազմութեան խնդրոյն, վստահ եմ եւս ալ սկսայ, այլոց նման, յուսալ որ կամատրնէրը պիտի կրնային, իրենց օրինակով, ընդհանուր գործակցութիւն մը յառաջ բերել իրենց հայրենակցաց մէջ, ինչ որ մեզ իրատուք պիտի տար ինքնավարութեան մը պահանջունին:*

Դժբաղդաբար բոլոր մեր յոյսերը վիժեցին. տարակուսելի չէ որ ծանր սիւալներ գործուեցան, եւ անհամաձայնութիւնը կուսակցութեանց՝ որոնք իրենց կը վերագրէին այդ ջոկարներու գործունէութիւնը, գիրենք ատելի երկպառակելու ծառայեցին եւ գլխատուր պարմառը եղան կամատրնէրու հայրենասիրական ջանքերու անյաջողութեան: Այնպէս որ, կը կրկնեմ, այդ կամատրնէրը՝ միայն թուրքերուն քստմունքի պարտուակ մը հայթայթեցին իրենց տեղիի ոխակարութեան եւ սարսափելի ջարդերուն համար: Ձեր Վեհափառութիւնը այս ամէնը լաւ գիտնալուն՝ ատելի

20 Տե՛ս անդ., էջ 292-293:

21 Տե՛ս ՇԱՄ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 106-108:

չեմ երկարիր այս խնդրոյն վրայ: Բայց ասոնք պէտք են մեզի իբր դաս ծառայել, եւ համամիտ եմ, որ այս պարագաներուն մէջ ծանր սխալ մը պիտի ըլլայ շարունակել միեւնոյն ընթացքը՝ որուն հետեւանքը պիտի ըլլայ րահական գաւառներուն մէջ ողջ մնացած հայութեան բնկորներէն նոր գոհեր քայլու: Փորձը մեզի շար դառն եղաւ, եւ ես, իմ մասին, անկեղծօրէն կը ցախմ միւնչեմ վերջը իմ առաջին գաղափարներուս վրայ չի յամառելու: Արդէն այս կարծիքը միայն իմ անձնական կարծիքս է: Ամէն կողմէ, Ամերիկայ, Անգլիա, Եգիպտոս եւ ուրիշ երկիրներ գրնոտող մեր հայ բնակիչներէն եւ մեր ամենաջերմ ու ամենահաւատարմօրէն օտար պաշտպաններէն, ի միջի այլոց Լորրի Պրայսէ, նամակներ կարանամ՝ որոնցմով ինձ յարկաւորէն հակառակ գաղափար մը կը յայտնեն կամաւորներու մասին, որոնք այլեւս դրական ունէ արդիւնք մը չի տալէ զար, Թուրքիոյ մէջ ողջ մնացած հայ ժողովուրդը ամենամեծ վրանգներու պիտի ենթարկեն: Զէնք կրելու արակ Տայերը, եթէ կուզեն կոռուի իրենց եղբայրներուն վրէժը լուծելու համար, կրնան Դաշնակիցներու բանակներուն մէջ զինուորագրուիլ: Այդ մասին ինծի դիմողներուն միշտ այս կերպով կը պատասխանեմ»²²:

Պ. Նուբարը այս նամակում բաւական հոռետեսական ոգով էր անդրադառնում նաեւ հայերի զանգվածային կոտորածների չափերին ու հայաստանի ապագայի հարցին: «Երբ Լոնսօնէ վերադարձիս՝ Գաղղիոյ եւ Անգլիոյ մէջ կարարած բանակցութեանս արդիւնքը կը հաղորդէի Զեր Վեհափառութեան, ղեռ չէինք գիտեր սոսկալի համեմատութիւնը այն վայրագ հալածանքին՝ որ մեր քառասուկալ հայրենիքը խոցորած էր. այն ժամանակ ղեռ մասամբ գիտէինք կարարում ջարդերը եւ չէինք կրնար երեսակալել հայաստանի աղէտին անհունութիւնը: Դժբաղդաբար բացայայտ է որ Արեւելքի, մանաւանդ Թուրքիոյ մէջ պարերազմին առած ընթացքը՝ մեր կացութիւնը շար վարթարացուց: Եւ եթէ հարկը հազարաւոր Տայերու բնաջնջումը - որ ոմանք 800.000-ի կը հասցնեն - հասարարոյի, բնականաբար հայկական հարցը բոլորովին ուրիշ կերպարանք մը պիտի առնէ, եւ մեր պահանջմանց ծրագիրը, այնպէս ինչպէս որ ներկայացուցած էինք - չի պիտի կրնայ առանց բարեփոխման եւ յաւելման ներկայացուիլ եւ պահանջուիլ Դաշնակից պետութեանց կողմէ, հաշտութեան կնքումին ժամանակ:

Բայց եւ միշտ կուզեմ հաւարալ որ մեզի հաղորդումս ալ տեղի ոճիրները չափազանցում են, եթէ ոչ ի գործ դրումս վայրագութեանց մասին, գէթ թոռական քանակութեան մասին. եւ կուզեմ հաւարալ, որ հակառակ գոհերու բարձր թիւին, պիտի մնայ միշտ բաւականաչափ Տայեր՝ արդարացնելու համար մեր պահանջները, եւ օրինաւորելու համար մեր ցանկութեանց իրագործումը: Սակայն այժմ ամէն ինչ կախեալ է պարերազմի ելքէն եւ Դաշնակցաց յաղթանակէն. մեր ճակարագիրը սերտօրէն կապում է անոնց զինուորական յաջողութեանէ: Բացայայտ է դժբաղդաբար որ մեր բոլոր յոյսերը կանհետանան, երբ պարերազմը չի վերջանայ այնպէս, ինչպէս որ մենք ի բոլոր սրտէ կը քաղձանք: Ներկաբար այժմ մեզ կը մնայ սպասել իրերու ելքին, որուն պէտք ենք, կը կրկնեմ, ճակարագրօրէն հպա-

22 ՇԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 107:

դասկեցնել բոլոր մեր գործունեությունը և ջանքերը, բոլոր մեր յոյսերն ու ցանկությունները:

Վերոյիշեալ պարճառներով ստիպեալ եմ այս վայրկեանիս դադրեցնել իմ բանակցութիւններս, վասն զի Դաշնակից պետութեանց մօտ ընելիք ամէն ձեռնարկներս այժմ անտեղի և անօգուտ են»²³:

Ինչպես տեսնում ենք, Ազգային պարվիրականության նախագահը հիասթափվել է կամավորական շարժումից, քանի որ այն սպասված արդյունքները չտվեց, իսկ թուրքական քաղաքականության կողմից օգտագործվեց որպես կոտորածները արդարացնելու պարճառներից մեկը, նա ծանր ապրումների մեջ էր՝ ցեղասպանության ահեղի չափերը, մեր ժողովրդի անհուն ողբերգությունը գիտակցելով, չնայած դեռ իրեն հույս էր տալիս, որ սպանվածների թիվը գուցե չափազանցված լինի: Ցավոք, այդ թիվը չափազանցված չէր, իսկ ցեղասպանության գործընթացը չէր ավարտվել, և դեռ առջևում էր Սիրիայի ու Միջագետքի անապարհներում կենտրոնացված մի քանի հարյուր հազար հայ փախչողների ոչնչացումը, որն իրականացվեց 1916 թ. սկզբներին:

1916 թ. հունվարի 8-ին ուղարկված պատասխան նամակում Կաթողիկոսը համաձայնում էր Պ. Նուբարի այն մտքին, որ Հայկական հարցը կարող է լուծվել միայն ռազմի դաշտում Դաշնակիցների հաղթանակի շնորհիվ: Տեղեկացնում էր, որ հարյուրհազարավոր հայերի ծանր վիճակը Միջագետքի և Սիրիայի անապարհներում՝ ստիպում է անընդհատ դիմել չեզոք երկրների մարդասիրական օժանդակությանը: Հայտնում էր, որ դեկտեմբերի 19-ին դիմել է ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնին, որպեսզի այդ երկրում կազմակերպվի հանգանակություն՝ ի նպաստ հայ փախչողների, որոնք ունենին սննդի, հագուստի, դեղորայքի և ծածկի անհրաժեշտություն²⁴:

Մարտի 23-ին ուղարկված նամակով Պ. Նուբարը Վեհափառին տեղեկացրեց, որ նրա դիմումը ԱՄՆ նախագահին գոհացուցիչ արդյունք է տվել, և Ամերիկյան հանձնախմբերը արդեն 1,5 միլիոն ֆրանկի օգնություն են հանգանակել և ուղարկել արևմտահայ փախչողներին և Կ. Պոլսում մնացածներին: Օգնությունը տեղ հասցնելու հարցում մեծապես աջակցել էին ԱՄՆ արտաքին գործերի դեպարտամենտը և Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն: Գումարներ էին ուղարկվում նաև Շվեյցարիայի միջոցով: Պ. Նուբարը միաժամանակ տեղեկացնում էր, որ Ֆրանսիայում Հայկական հարցի հետ կապված կոնֆերանսներին ու լրագրային հրապարակումներին աջակցում է գաղտնաբար, որպեսզի թուրքերը արևմտահայության մնացորդներին կոտորելու նոր առիթ չունենան: Նա իր ուրախությունն էր հայտնում ռուսական բանակի կողմից Էրզրումը գրավելու առթիվ՝ հուսալով, որ այն շուտով կազարագրի նաև ամբողջ Հայաստանը: Եթե դեկտեմբերին Պ. Նուբարը անիմաստ էր համարում տրեություններին Հայաստանի ապագա կարգավիճակի մասին դիմումներ կատարելը, ապա այժմ նա գտնում էր, պետք է սկսի բանակցությունները, որպեսզի պարենի առիթի դեպքում անապարհապար վիճակի մեջ չհայտնվեն: Նա գտնում էր, որ Հայկական հարցը ամենայն հավանականությամբ լուծվելու է ոչ թե Լոնդոնում կամ Փարիզում, այլ՝ Պետրոգրադում: Հերետաքար խորհուրդ էր տալիս Գեորգ Ե. Կաթողիկոսին, որպեսզի նա անմիջական շփումների մեջ մտնի ռուսական կառավարության հետ²⁵:

23 Անդ, թ. 108:

24 Տե՛ս “Boghoss Nubar’s Papers”, էջ 305-307:

25 Տե՛ս ՄԱԿ, ֆ. 57, ց. 5, ք. 19, թթ. 124-127:

1916 թ. մայիսի 16-ին սպորադիկաժ Մայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Ռուսաստանը, Բրիտանիան և Ֆրանսիան որոշեցին պարերազմից հեռու Օսմանյան կայսրությունը բաժանել իրենց միջև: Դրանով Հայաստանը բաժանվելու էր երկու տերությունների միջև. Ռուսաստանին էին անցնելու Էրզրումը, Վանը, Բիթլիսը, իսկ Ֆրանսիային՝ Դիարբեքիրը, Խարբերդը, Մեհապրիան և Կիլիկիան: Այդպիսով՝ անհնար էր դառնում միացյալ Հայաստան ստեղծելու նախագիծը: Ցարական իշխանությունները որոշեցին իրենց բաժին հասած հայկական տարածքները միացնել Ռուսաստանին և հայերին ինքնավարություն չտալ: Դա ծանր հիպոթափություն էր հայերի համար: Ռուսական իշխանությունները ցրեցին նաև հայ կամավորական զորքերը, որոնք կազմավորվել էին ինքնավար Հայաստան ստեղծելու խոսքի միջոցով:

1916 թ. աշնանը Ֆրանսիան հայ գործիչներին առաջարկեց ստեղծել կամավորական բանակ, որի դիմաց խոստացավ պարերազմից հեռու ինքնավարություն տալ Կիլիկիային և իրեն անցնող մյուս հայկական տարածքներին: Ինչպես տեսանք, Պ. Նուբարը կտրականապես դեմ էր հայկական կամավորական նոր զորամաս ստեղծելու գաղափարին: Սակայն Ֆրանսիական իշխանությունները կարողացան համոզել Պ. Նուբարին համագործակցել Կիպրոսում հայկական կամավորական զորամաս կազմավորելու հարցում՝ սպառնալով, որ հակառակ պարագայում այն կստեղծեն առանց հայ գործիչների հետ համագործակցության, իսկ հայերը ինքնավարություն պահանջելու իրավունք չեն ունենա: Պ. Նուբարը պարտադրված էր համագործակցել Ֆրանսիայի հետ:

Նոյեմբերի 27-ին Լոնդոնում Պ. Նուբարը, Ֆրանսիացի դիվանագետ Ժորժ Պիկոն և բրիտանացի դիվանագետ Մարկ Մայքսը համաձայնություն կայացրին Կիպրոսում Հայկական լեգեոն կազմավորելու խնդրի շուրջ²⁶: Այն կովելու էր Կիլիկիան ազատագրելու համար, որին Ֆրանսիան պարերազմից հեռու ամենալայն ինքնավարություն էր շնորհելու: Պ. Նուբարի առաջարկով կամավորագրությունը կստորագրվելու էր առանց հրապարակային ելույթների, հնարավորին չափ գաղտնի, իսկ զորամասը կոչվելու էր Արեւելյան լեգեոն, որպեսզի թուրքերին նոր կոտորածների առիթ չտա:

Պ. Նուբարի առաջարկով Եգիպտոսի հայկական բոլոր հասարակական, քաղաքական ու կրոնական կառույցները միավորվեցին Եգիպտոսի ազգային միության մեջ, որի խնդիրն էր օժանդակել կամավորագրությանը: Նման միություն ստեղծելու նպատակով Պ. Նուբարը Եգիպտոսից պարմիրակներ ուղարկեց ԱՄՆ: Ամերիկահայ բոլոր կազմակերպությունները խանդավառությամբ ընդունեցին Ազգային Միություն կազմելու և Հայկական լեգեոնի կազմավորման օժանդակելու առաջարկը: 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում տեղի ունեցավ խորհրդաժողով, ուր որոշվեցին այն սկզբունքները, որոնց շուրջ համագործակցելու էին հայկական կազմակերպությունները: Այսպիսով՝ ստեղծվեց Ամերիկայի Հայ Ազգային Միությունը: Մարտի 26-ին կազմակերպությունները սպորադիկաժ համաձայնագիր, ուր նշված էր. «Ամերիկայի Հայ Ազգ. Միությունը յարաբերություն պիտի պահել Եգիպտոսի Հայ Ազգ. Միության հետ և իր գործունեությունը պիտի համաձայնեցնե Ազգ. Պարութիւնութեան ընդհանուր ուղղութեան, կանոնաւոր յարաբերութիւն պահելով անոր հետ. միւս կողմէ՝ Միութիւնը պիտի նկատուի Ազգ. Պարութիւնութեան ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ»²⁷:

²⁶ Տե՛ս “Boghoss Nubar’s Papers”, էջ 393-397.

²⁷ Տե՛ս Մ. Տաճարեան, Իմ յուշերես, Պէյրութ, 1985, էջ 113:

Ազգային Միության գործադիր մարմնի 7 անդամներից յուրաքանչյուրը ներկայացնում էր մեկ կազմակերպություն: Արենապետ դարձավ Միհրան Սվազյանը: Շուրջով ԱՄՆ-ում ստեղծվեցին Ազգային միության 187 մասնաճյուղեր: Ազգային Միության գլխավոր նպատակները հռչակվեցին. «ա. Հայկական ազատագրություն, կիլիկյան կամառական ձեռնարկ, բ. Հայաստանի վերաշինություն և երկրի կարօտելոց անմիջական օգնություն, գ. Դիանագիտական ձեռնարկ և հայանպասք պրոպագանդ»²⁸:

1917 թ. ապրիլի 11-ին Կաթողիկոսին ուղարկված նամակում²⁹ Պ. Նուբարը րեդեկացնում էր, որ ԱՄՆ է ուղարկել Միհրան Տամապյանին, Սյուրիան Սապահ-Գյուլյանին և Արտաշես Հանմյանին՝ րեդի համայնքում համագործակցություն հաստատելու և Հայկական լեգեոնի կազմավորմանը աջակցելու համար: Տեղեկացնում էր, որ համաձայն է Միհրան Սվազյանին ճանաչել, որի թեկնածությունը առաջարկել էր Կաթողիկոսը, որպես Ազգային պարվիրակության ԱՄՆ ներկայացուցիչ: Նշում էր, որ նա ընտրվել է նաև Ամերիկայի հայ ազգային միության նախագահ: Պ. Նուբարը դրական էր համարում, որ ԱՄՆ պատերազմի մեջ էր մտել, քանի որ ապագա Խաղաղության վեհաժողովում Վ. Վիլսոնը մեծ ազդեցություն կարող էր ունենալ: ԱՄՆ նախագահը արդեն ցույց էր տվել իր հայասիրական ոգին՝ կազմակերպելով հանգանակություն արեւմտահայ գաղթականներին օգնելու համար, որի արդյունքում միլիոնավոր դուրսերի աջակցություն էր ուղարկվել:

Պ. Նուբարը նաև բավական հուսադրված էր Ռուսաստանում ցարիզմի տապալումով և Ժամանակավոր կառավարության հաստատումով, որի դրական վերաբերմունքը արեւմտահայերի վերաբերյալ հայտնի էր: Նա հույս էր հայտնում, որ այժմ Հայկական հարցի ընթացքը կփոխվի և ռուսական բանակի գրաված հայկական նահանգներին կտրվի այնպիսի վարչաձև, որը կբավարարի մեր ազգային ձգտումները: Նա Կաթողիկոսին հիշեցնում էր, որ Ժամանակավոր կառավարության ԱԳ նախարար Պավել Միլյուկովը իր նախկին ելույթներում և հրապարակումներում բազմիցս անդրադարձել է Հայաստանին ինքնավարություն տալու անհրաժեշտությանը: Պ. Միլյուկովը Պ. Նուբարին աջակցել էր նաև նախապատերազմյան շրջանում՝ Հայկական բարենորոգումների հարցում: Տեղեկացնում էր, որ նախորդ տարի Փարիզում Ֆրանս-հայկական կոմիտեի կողմից ռուսական Դոմայի պարվիրակության ընդունելության ժամանակ Պ. Միլյուկովը Անտոն Ֆրանսի հարցին պատասխանել է, որ ներկա պատերազմի գլխավոր նպատակներն են նախարակ ազգերին աջակցելը՝ միավորված Լեհաստանի և Հայաստանի ինքնավարությունը: Պ. Նուբարը հույս էր հայտնում, որ Հայաստանի հարցում նա կպահի իր խոսքը, քանի որ պաշտոնի անցնելուց անմիջապես հետո կարել էր Լեհաստանի հարցում տված խոսքումը: Հուսադրող էր նաև նախարար դառնալու առթիվ Պ. Նուբարի ուղարկված շնորհավորական հեռագրին Պ. Միլյուկովի պատասխանը. «Հայաստանի համար կանեմ այն ամենը՝ ինչ կարող եմ»: Կաթողիկոսին հայտնում էր, որ այդ տեսակետին են նաև ռուսական կառավարության մյուս անդամները, քանի որ կառավարության ազդեցիկ անդամներից Ալեքսանդր Կերենսկին հարցազրույցում հայտարարել էր, որ Հայաստանին տրվելու է ինքնավարություն:

Պ. Նուբարը նշում էր, որ վարչաձևի փոփոխությունից հետո Ռուսաստանը ունի նույն ձգտումները, ինչ Դաշնակիցները, որոնք հայտարարել են, որ Ասիական Թուրքիայի մասնատումից հետո հայկական երկրամասերի նկատմամբ մեր ձգտումները իրագործվելու են:

²⁸ Ամդ, էջ 114:

²⁹ Տե՛ս “Boghos Nubar’s Papers”, էջ 431–433:

Վերջում ավելացնում էր, որ այժմ Արեւմտյան Նայաստանի ճակատագիրը լուծվելու է Ռուսաստանում:

Ապրիլի 27-ի նամակում Կաթողիկոսը Պ. Նուբարին գրում էր, որ ԱՄՆ մասնակցությունը պարտադրական է ռուսական հեղափոխությունը դրական իրադրություն են ստեղծել Նայական հարցի նպաստավոր լուծման համար: Նշում էր, որ ԱՄՆ-ը ամուր դիրքեր կունենա ապագա Խաղաղության վեհաժողովում, եւ դա շատ օգտակար կլինի, քանի որ նրա նախագահը իրեն հայտարարել է ճնշված եւ փոքր ժողովուրդների քաղաքական իրավունքների պաշտպան: Միաժամանակ, Կաթողիկոսը շեշտում էր ԱՄՆ-ի փոքրամասնական հակապաշտպանական քաղաքականությունները, որոնք անհրաժեշտ կլինեն Նայաստանը վերականգնելու համար³⁰:

Նունիսի 1-ին ուղարկված նամակում³¹ Պ. Նուբարը Կաթողիկոսին հայտնում էր, որ ինքը 1916 թ. հոկտեմբերին Լոնդոնում է փեղեկացել Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրի մասին, որով Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ Կիլիկիան, Սեբաստիան, Խարբեռդը եւ Դիարբեքիրը՝ Ֆրանսիային: Միեւնույն ժամանակ, իրենից պահանջել են հայ կամավորների աջակցություն, եթե Դաշնակից ուժերը ափիանում կարարեին Կիլիկիայում: Նշում էր, որ չնայած ինքը դեմ էր Նայաստանի բաժանման այդ ծրագրին, բայց արիւթքով էր համակերպվել եւ փորձել հնարավորության սահմաններում առավելագույնը ստանալ Նայական հարցի համար: Պետք է հաշվի առնվեր նաեւ այն վտանգը, որ կախված էր Միջագետքում թուրքերի ձեռքին որպէս պարտադրական հարյուրհազարավոր հայերի գլխին: Տեղեկացնում էր, որ Դաշնակիցներից աջակցության դիմաց պահանջել էր երաշխիքներ տալ, որ հայկական ձգտումները ամբողջությամբ կկատարվեն, միաժամանակ, բոլոր զգուշությունները ձեռք առնել, որպէսզի թուրքերին վրեժխնդրության առիթ չտրվի: Դրա համար նա պահանջել էր, որ հայերի կամավորագրությունը հայտարարվի ոչ թե Ազգային պարվիրակության կողմից, այլ՝ Ֆրանսիայի՝ որպէս Ֆրանսիական բանակի մաս, իսկ Փոքր Ասիայում ափիանում իրականացնելու հայ կամավորները լինելու էին Դաշնակից զորքերի մաս, այլ ոչ թե առանձին զորամաս: Տեղեկացնում էր, որ իր պահանջով Ֆրանսիան խտրացել էր Կիլիկիան եւ երեք հայկական նահանգները գաղութի չվերածել եւ երաշխավորել էր, որ տալու է ամենալայն ինքնավարություն: Այդ խտրումները տրվել էին միաժամանակ Ֆրանսիայի եւ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունների կողմից: Նշում էր, որ միայն այդ հավաստիացումները ստանալուց հետո էր, որ Ազգային պարվիրակությունը, կամավորական շարժումը խրախուսելու համար միավորել էր Եգիպտոսի, ապա՝ Ամերիկայի հայ քաղաքական ուժերին, որոնք հայրենասիրական մղումներից ելնելով համագործակցել էին եւ աշխատել՝ պահպանելով գաղութությունը:

Նշում էր, որ նման հանգամանքներով պայմանավորված են գործել, մինչեւ որ ռուսական հեղափոխությունը բերեց ազգայական միաձայնակերպ, բարձր գաղափարներ եւ բոլորը սկսեցին հայտարարել նվաճողական ձգտումներից հրաժարվելու մասին: Տեղեկացնում էր, որ իրավիճակը կտրուկ փոխվել է, քանի որ Ռուսաստանը այլեւ չի ցանկանում գրավել հայկական երեք նահանգները, իսկ Ֆրանսիայի վարչապետ Արեքսանդր Ռիբոն մայիսի 22-ին Ազգային ժողովում հայտարարել էր, որ իր կառավարությունը հրաժարվում է նվաճողական ծրագրերից: Պ. Նուբարը եզրակացնում էր, որ Դաշնակիցները կհրաժարվեն Սայքս-Պիկոյի համաձայնագրից, եւ իրենք պարտավոր են վերադառնալ ինն ծրագրին՝ ինքնավար չե-

30 Տե՛ս անդ., էջ 434-435:

31 Տե՛ս անդ., էջ 436-441:

գոք Հայաստան՝ վեց նահանգների ու Կիլիկիայի միավորմամբ՝ Մերսին եւ Ալեքսանդրեյ նավահանգիստներով: Նրա կարծիքով, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի կառավարությունների հայտարարությունները, ԱՄՆ մասնակցությունը պարերագմին հանգեցնելու են նրան, որ Հայաստանը չորվի որեւէ առանձին երկրի հովանավորության փակ, առավել եւս թողնվի թուրքական գերիշխանության ներքո, այլ՝ կարող է լինել միայն համարել հովանավորություն: Նշում էր, որ ինքը Դաշնակիցներին ներկայացրել է ինքնավար եւ չեզոք Հայաստանի ստեղծման դեպքում նրանց փոքրահասակ ու ֆինանսական գործունեության հնարավորությունները: Դա միաժամանակ խաղաղություն ապահովելու հնարավորություն կտար՝ լինելով բուֆեր Թուրքիայի, Ռուսաստանի, Պարսկաստանի, Միջագետքի եւ Սիրիայի միջև: Կարծում էր, որ դա շահավետ կլինի նաեւ Բաղդադի երկաթուղու հետ կապված, քանի որ այն շահագործող երկրները Մերսինի եւ Ալեքսանդրեյի վրայով ազատ ելք կունենան: Նա գրնում էր, որ Խաղաղության վեհաժողովում պետք է Հայաստանը համարել հովանավորության փակ դրվի, սակայն այդ երկրներից մեկին պետք է 10-15 փաթեթ փրվի երկրի մանդատը՝ այն վերականգնելու, կոմրաձեռնից փրկված գաղթականներին աջակցելու եւ պաշտպանելու համար: Այդ դերի համար նա ամենահարմար թեկնածու էր համարում ԱՄՆ-ը, որը հսկայական համակարանք եւ աջակցություն էր ցույց տվել հայերին: Մարտնշում էր, որ ծրագիրը վերաբերում էր միայն Արեւմտյան Հայաստանին ու Կիլիկիային, իսկ Արեւելյան Հայաստանը իր իրավասությունից դուրս էր: Նշում էր, որ Կովկասի հայերը ազատ երկրի հայտարկներ են եւ ունեն նույն իրավունքները, ինչ՝ բոլոր ռուսաստանցիները, իսկ նրանց պահանջները պետք է բավարարվեն իրենց կառավարության կողմից, ինչպես Ռուսաստանի մյուս ազգություններինը, եւ Դաշնակիցները չեն կարող խառնվել նրանց խնդիրներին: Պարզաբանում էր, որ արեւմտահայերի հարցը մարդասիրական է եւ համապարասխանում է պարերագմի նպատակներին, քանի որ Դաշնակիցները հայտարարել էին, որ կովում են փոքր, ճնշված ազգերի ազատագրման համար, եւ հույս էր հայտնում, որ Դաշնակիցներից ոչ մեկը չի հրաժարվի լուծելուց մի ժողովրդի ճակատագիրը, որը ամենից շատ է փառապել պարերագմի ընթացքում, եւ հետեւաբար նրան չեն թողնի թուրքական լծի, նույնիսկ՝ անվանական կառավարման փակ: Նա հույս էր հայտնում, որ Կաթողիկոսը իր հերթին կդիմեր ռուսական կառավարությանը, որպեսզի արեւմտահայերի հարցը արդարացի լուծում ստանա: Նա Կաթողիկոսի եւ արեւելահայ գործիչների կարծիքն էր ուզում ստանալ իր վերջապառը ծրագրի մասին:

Եւ իսկապես, ինչպես հայտնի է, Ժամանակավոր կառավարությունը հայտնապատ դիրքորոշում ուներ եւ բավական լուրջ քայլեր կատարեց Արեւմտյան Հայաստանի ազատագրված տարածքներում հայ գաղթականներին վերաբնակեցնելու, երկրամասը վարչականորեն կազմակերպելու եւ հայկական զինուժ ստեղծելու ուղղությամբ: Այդ ամենը ուղղված էին հայկական ինքնավար երկրամաս ստեղծելուն: Սակայն այդ ծրագրերը անավարտ մնացին բուլշեիկյան հեղաշրջման հետեւանքով:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը սկսեցին լքել Կովկասյան ճակատը, եւ փաստորեն ռուս-թուրքական ռազմաճակատի պաշտպանությունը մնաց հայկական փոքրաթիվ ուժերի հույսին: Դեկտեմբերի 5-ին Փարիզից Պ. Նուբարը հեռագիր ուղարկեց Կաթողիկոսին, Թիֆլիսի Ազգային բյուրոյին, Արեւմտահայ գաղթականության կոմիտեին³²: Նա կոչ էր անում համախմբել հայկական բոլոր ուժերը եւ պաշտպանել:

32 Տե՛ս ՇԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 157, թ. 3: Նաեւ՝ Ֆ. 200, գ. 1, զ. 5, թ. 7:

պանել Արեւմտյան Նայաստանի ազատագրված փարածքները թուրքական ներխուժումից, առաջարկում էր կապ հաստատել և համագործակցել Միջագետքի բրիտանական ուժերի հետ: Տեղեկացնում էր, որ Ազգային պարվիրակությունը բանակցություններ է սկսել բրիտանական և ֆրանսիական կառավարությունների հետ, որպեսզի նրանցից ռազմական և ֆինանսական աջակցություն ձեռք բերի: Նա խորհուրդ էր փախ դաշնակցել վրացիների հետ: Առաջարկում էր հեռագրել, թե ինչ միջոցներ են հարկավոր, որպեսզի ինքը դրանք պահանջաշնչակիցներից: Նեռագիրը Պ. Նուբարի հետ ստորագրել էր նաև Ֆրանսիայի արտգործնախարար Ս. Պիշոնը:

Այդ հեռագիրը դեկտեմբերի 15-ին քննարկվեց Արեւմտահայ ազգային խորհրդում և մեծ խանդավառություն առաջացրեց³³: Այն քննարկեց նաև Թիֆլիսի Նայոց ազգային խորհուրդը, և պարսիստան նամակում Պ. Նուբարին փեղեկացրեցին, որ արդեն կազմավորվում են ազգային զորամասեր գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանադատության փակ, ինչպես նաև առանձին զորամաս արեւմտահայերից և հայկական միլիցիա՝ երկրի ներքին կարգը պահպանելու համար, իսկ վրացիների հետ արդեն բանակցություններ են սկսել համագործակցելու համար: Անուրանյի պետությունների աջակցությունը խիստ անհրաժեշտ էր համարվում, քանի որ պարսերազմից փոխած հայ ժողովուրդը միայնակ չէր կարողանա պաշտպանել ճակատը: Նաշվի առնելով անցյալի դառն փորձը, երբ ցարական կառավարությունը ուզում էր Նայաստանը միացնել Ռուսաստանին, Թիֆլիսի Ազգային խորհուրդը անհրաժեշտ էր համարում, որ Անուրանյի երկրները անմիջապես ճանաչեն Նայաստանի լիակատար անկախությունը, քանի որ Ռուսաստանը արդեն պաշտոնապես ճանաչել էր Նայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը³⁴:

Խոսքը վերաբերում էր 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի Ժողովուրդների ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետին, որով արեւմտահայերին իրավունք էր տրվում որոշել իրենց ապագան՝ ընդհուպ անկախանալը³⁵: Այդ ակտի մասին Պետրոգրադի հայկական կոմիտեն հեռագրով Պ. Նուբարին փեղեկացրել էր 1918 թ. հունվարի 14-ին³⁶:

Ազգային պարվիրակության նախագահը 1918թ. փետրվարի 21-ին Լոնդոնից՝ Բրիտանական գլխավոր շրաբի միջոցով, երկու գաղտնի հեռագիր ուղարկեց Թիֆլիս³⁷: Առաջինը ուղղված էր Անդրանիկին, Արեւմտահայ խորհրդի նախագահ Վ. Փափազյանին և արեւմտահայ գաղթականական կոմիտեներին, որով արեւմտահայության ներկայացուցիչներին խորհուրդ էր փախ միասնաբար գործել արեւելահայերի հետ:

Երկրորդ հեռագիրը ուղղված էր կաթողիկոսին, Թիֆլիսի Ազգային խորհրդին, Անդրանիկին և Ն. Զավրյանին: Պ. Նուբարը ուրախություն էր հայտնում բոլոր կուսակցությունների համաձայնությամբ Ազգային խորհուրդ սրելով և կապակցությամբ: Նա փեղեկացնում էր, որ դաշնակիցները պարսաստան են օգնել հայերին և առաջին իսկ հնարավորության դեպքում կուղարկեն դրամ և ռազմական առաքելություններ: Նշում էր, որ դաշնակիցները պնդում են՝ համագործակցել վրացիների հետ և լավ հարաբերություններ պահել թաթարների հետ: Նարկապետ, կոչ էր անում հնարավորին չափ մեծացնել հայ զինվորների թիվը:

33 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թ. 6-7:

34 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 3-4:

35 Տե՛ս «Նայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում», էջ 418-419:

36 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 45, թ. 1:

37 ՆԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 8-9:

1918թ. մարտի 27-ին Պ. Նուբարը հեռագիր ուղարկեց Վեհափառին, Թիֆլիսի Ազգային խորհրդին, Անդրանիկին, Ն. Զավրյանին և գնդապետ Թորգոմին. «Թուրքերը լայնածավալ քարոզչություն են իրականացնում, հավակնելով այն բանին, որ ապացուցեն, թե իբր հայերն են կոտորել մահմեդական բնակչությանը, որպեսզի հաշտության կնքումից առաջ այս ձևով հասարակական կարծիքը նախապաշարաստին իրենց օգտին: Թեպետ մենք համոզված ենք այս մեղադրանքների արահուդության հարցում, դրանք հերքելու համար խնդրում ենք ձեզ մեզ պեղեկություններ հաղորդել: Եթե կան բռնությունների որոշ անհավական դեպքեր՝ ուղղված նախորդ հանցագործությունների հեղինակների դեմ, պեղեկացրեք մեզ, թե ինչպիսի՝ հանգամանքներում են դրանք իրականացվել: Դաշնակից պետությունները հարցաքննություն են անցկացնում, մեզ հերքման հարցում օգնելու համար, բայց Ազգային պարվիրակությունը խնդրում է ձեզ իրեն ուղարկել նաև պեղեկություններ ու վկայություններ, որոնք ի գործ լինեն հակազդելու թուրքական քարոզչությանը և նրանց մեղադրանքներն ի չիք դարձնեն: Վրիժառության կամ բռնության յուրաքանչյուր գործողություն հայերի համար կարող է սպեղծել անբարենպաստ հասարակական կարծիք և ազդել հարցի վերջնական լուծման վրա: Ոչ մի պեղեկություն չունենք և անհանգիստ ենք: Ըստ որոշ ասեկոսների՝ վրացիները միացել են թաթարներին՝ ընդդեմ հայերի: Նեազգային կապով ճշգրիտ պեղեկություններ հաղորդեք»³⁸:

Այս հեռագրում արտացոլված է թուրքական կեղծարարությունը: 1918 թ. հունվարին թուրքական բանակի առաջխաղացումը արդարացնելու և իրենց իրականացրած ցեղասպանությունը քողարկելու նպատակով թուրքերը սկսեցին ի յուր աշխարհի փողհարել, իբր հայերը կոտորում են մահմեդական խաղաղ բնակչությանը և իրենց գործերի հարձակումը հեղափոխում է մահմեդական բնակչությանը «հայ ջարդարարներից» փրկելու նպատակ: Դրանով շեղում էին միջազգային հասարակությանը Մեծ եղեռնի հետևանքով թողած չափազանց բացասական փառվորություններից, միաժամանակ իրենց իրականացնելիք նոր կոտորածների համար առիթ էին ստեղծում:

1918 թ. երկրորդ կեսից, թուրքական բանակի առաջխաղացումով, Անդրկովկասը գրեթե կտրվեց աշխարհից: Պ. Նուբարը լուր չունեի Նայասպանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ, քանի որ հաղորդակցությունը կտրված էր: Դրանով էր պայմանավորված, որ նրա և Կաթողիկոսի նամակագրությունը ընդհատվեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը:

Ինչպես տեսնում ենք, երկու ազգային նշանավոր գործիչների՝ համաշխարհային պատերազմի տարիների նամակագրության մեջ արտացոլված են Նայասպանի և հայ ժողովրդի ապագայի մասին երազանքներն ու ձախողումները, վախը, տագնապը, հուսահատությունը, որոնք պայմանավորված էին պատերազմի և Մեծ եղեռնի արեամբ իրքներով, հայերի կամավորական շարժման հանդեպ ունեցած դրական ու բացասական մտրեցումների պատճառները, պետությունների խռատումների նկատմամբ հույսերն ու հիասթափությունը: Նամակագրությունը ցույց է տալիս՝ ինչպես էին Ամենայն Տայոց Կաթողիկոսը և Ազգային պարվիրակության նախագահը փորձում համաշխարհային այդ հորձանուտի մեջ կարելին ու անկարելին անել ժողովրդին փրկելու և Նայասպանի համար ինքնավարության միջոցով ազատ գարգացման հնարավորություն ստեղծելու համար:

38 Ա. Պեղեկյան, Մեծ պետությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր II, Երևան, 2005, փաստաթուղթ 569, էջ 215:

ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ

պարմական գիր. դոկտոր

ՅՈՒՆԵՍԿՈ ԼԵՓՍԻՈՒՄԸ ԵՒ ՆԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Դր. Յոհաննես Լեփսիուսի հսկայածավալ հայանապաստ գործունեությունը, որը, սկիզբ առնելով 1895-ից, անընդմեջ շարունակվեց ավելի քան երեք տասնամյակ, իր ընդգրկումով, բնույթով, համակողմանիությամբ եւ խիզախամտերով համաշխարհային հումանիզմի պարմության մեջ նմանը չունեցող մի նվաճում էր եւ արդեն ամբողջականորեն լուսաբանվել է: Այն հարցը, սակայն, թե ովքեր էին այն հայորդիները, որոնց հետ համագործակցությամբ էր, որ Լեփսիուսի գործունեությունը սկզբնավորվեց ու ծավալվեց, առայսօր որոշակիորեն դեռ բաց է մնում: Ուստի ստորեւ կփորձենք լուսաբանել այդ խնդիրը՝ ըստ հարկի անդրադառնալով նաեւ այդ համագործակցության առավել ուշագրավ մանրամասներին:

Չնայած Լեփսիուսը Երուսաղեմում աշխարհելու փարիներին եղել էր Սիրիայում, Եգիպտոսում ու Կ. Պոլսում եւ որոշակի ճանաչողություն էր ձեռք բերել Արեւելքի վերաբերյալ, նաեւ գործնականում ծանոթացել միսիոներական աշխարհային առանձնահատկություններին, այնուամենայնիվ մինչեւ իր՝ «Գերմանական առաքելություն Արեւելքում» (ԳԱԱ) կազմակերպության հիմնադրումը¹, ավելին, նույնիսկ այն ժամանակ, երբ վճռեց ԳԱԱ-ի գործունեությունը նպարակառողել վրանգված հայ ժողովրդին օգնության ցուցաբերման գործին, նա հայերի հետ դեռ անձնական շփումներ չէր ունեցել: Պատժող Վիլհելմ Փաբերի միջոցով նա ծանոթացել էր Զեյմս Գրինֆիլդի հետ, որն այն ժամանակ ուսանում էր Բեռլինում², եւ դրանով սահմանափակվում էին նրա անձնական առնչությունները հայերի հետ:

Զ. Գրինֆիլդը, որի մայրը հայ էր, ծնվել է Թավրիզում եւ յոթ տարեկանում տեղափոխվել Գերմանիա: Նա գերազանց փիրապելում էր գերմաներենին եւ մի շարք արեւելյան լեզուներին: Պաշտպանել է դոկտորական արեւնախոսություն քաղաքագիտությունից³: Դր. Լեփսիուսի հետ նրա երկարամյա սերտ համագործակցությունը սկիզբ առավ 1896 թ. գարնանը, երբ նա մեծ հումանիստի հետ մեկնեց Թուրքիա⁴: Այս ճանապարհորդության ընթացքում Լեփ-

1 Լեփսիուսն այդ կազմակերպությունը ստեղծել էր 1895 թ. սեպտեմբերի 29-ին՝ Արեւելքի մահմեդական շրջաններում քրիստոնեական քարգշտություն ծավալելու նպատակով: Երբ, սակայն, սկիզբ առան համընդանուր զանգվածային կոտորածները, կազմակերպության սկզբնական նպատակը մոլվեց հեղինակի պլան, եւ նրա առաջնահերթ խնդիրը դարձավ վրանգված հայությանն օգնության ցուցաբերումը: Լեփսիուսի, ինչպես նաեւ նրա՝ ԳԱԱ կազմակերպության հայանապաստ գործունեության ամբողջական պարմության իրազեկվելու համար փննջեց **Աշոտ Նայրուսի**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երեւան, 2002:

2 Տե՛ս **Johannes Lepsius**, *30 Jahre Deutscher Orient-Mission*, „Der Orient“, 1925, էջ 131:

3 Նա հրապարակել է «Պարսկական պետության սահմանադրությունը» (1904), «Անտարի իրավունքը Պարսկաստանում» (1906) եւ մի շարք այլ աշխատություններ: Անդ:

4 Անդ: Նրանք մայիսին նախ մեկնեցին Կ. Պոլիս, որպեսզի հանդիպեցին գերմանական դեսպանության ներկայացուցիչների հետ, այնուհետք՝ Անկարա, որպեսզի նպատակ ունեին հասնելու Զեյմուս: Մական այդպես էլ չկարողացան մուտք գործել այնտեղ: Թուրքիայի կառավարությունն արգելեց նրանց ճանապարհը դեպի արեւելք: Կեսարիայում նրանք հարկադրված փոխեցին իրենց ուղղությունը, մեկնեցին դեպի հարավ

սիուսը հավաքեց բազմաքանակ նյութեր հայկական զանգվածային կոտորածների վերաբերյալ, որոնք նա օգտագործում «Der Reichsbote» օրաթերում հրատարակեց մի հոդվածաշարի տեսքով⁵, իսկ ապա՝ առանձին գրքով⁶: Գիրքը, որն ունեցավ վեց հրատարակություն, թարգմանվեց նաև անգլերեն ու ֆրանսերեն, վճռորոշ դեր խաղաց գերմանական և առեւտրային եւրոպական հասարակայնությանը թուրքական ոճրագործությունների մասին իրազեկելու և, ըստ այդմ, նաև օգնության աշխատանքների կազմակերպման հարցում: Եթե նկատի առնենք, որ Լեփսիուսի ճանապարհորդության և ուսումնասիրությունների ընթացքում թարգմանչի գործառույթն իրականացնում էր Ջ. Գրինֆիլդը, ապա պարզ կդառնա, թե որքան մեծ էր նրա երախտիքը այդ կարևոր գործը զուլի բերելու հարցում:

Գրինֆիլդը Լեփսիուսին 1914 թ. հիմնադրած Գերմանահայկական ընկերության անդամներից մեկն էր, որտեղ սրանձնեց երկրորդ նախագահի պարտականությունները⁷, և, բացի այդ, 1918-22 թթ. եղել է Նայասարանի Նանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Բեռլինում⁸: Նա Գերմանահայկական ընկերությունում գործել է մինչև 1933 թ., ապա մեկնել է Պարսկաստան և իր կյանքի վերջին տարիներն անցկացրել է այնտեղ⁹: Լեփսիուսն իր ողջ կյանքի ընթացքում նրա հետ ջերմ և մտերմական հարաբերություններ ուներ¹⁰:

Երկրորդ հայ գործիչը, որի հետ Լեփսիուսը սերտորեն համագործակցել է, Մարգվանի ամերիկյան առաքելության աշխատակից, հայ ավերարանական քահանա պրոֆ. Կարապետ Թումայանն էր: Նրան Լեփսիուսի հետ ծանոթացրել էր Ժնևի գերմանական համայնքի քահանա պատրիարք Լեոֆ Նոֆմանը, որ Թումայանի քեռայրն էր: Թումայանը 1894 թ. հեղափոխական գործունեության մեղադրանքով ձերբակալվել և Կոստանդնուպոլսում մահվան էր դատապարտվել: Պատրիարք Նոֆմանի շնորհիվ, սակայն, որի՝ «Թուրքական զնդանում» գիրքը այդ դեպքի շուրջ հասարակական մեծ արձագանք գրավ, նա ազատ արձակվեց և, արտաքսվելով Թուրքիայից, ժամանակավորապես տեղափոխվեց Ժնև¹¹: 1896 թ. ամռանը, երբ Նայասարանի օգնության գերմանական միությունը¹² (ՆՕԳՄ) Գերմանիայում հայկական

և Կիլիկիայի դարպասներով իջնելով կիլիկյան հարթավայր և Ադանա ու Տարսուս այցելելուց հետո վերադարձան Կ. Պոլիս: Անդ, էջ 132-133:

5 Տե՛ս անդ, էջ 131:

6 Տե՛ս J. Lepsius, *Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland.*, Berlin, 1896:

7 Տե՛ս Richard Schäfer, *Geschichte der Deutschen Orient-Mission*, Potsdam 1932, էջ 84:

8 Տե՛ս J. Lepsius, *30 Jahre Deutscher Orient-Mission*, „Der Orient“, 1925, էջ 131:

9 Նա մահացել է 1939 թ. հոկտեմբերի 21-ին Թեհրանում, քնն Axel Melbner, Martin Rades “Christliche Welt” und Armenien, Berlin 2010, էջ 288:

10 Տե՛ս Uwe Feigel, *Das evangelische Deutschland und Armenien*, Göttingen 1989, էջ 74:

11 Տե՛ս J. Lepsius, *Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit*, „Der Christliche Orient“, 1900, էջ 5: Նմմը. R. Schäfer, *Geschichte...*, էջ 10:

12 Երբ Լեփսիուսը 1896 թ. Թուրքիայում կատարած ճանապարհորդությունից վերադարձավ Գերմանիա, նա հայօգնության աշխատանքներն առավել կազմակերպված և արդյունավետ կերպով իրականացնելու համար մի շարք բարեկամների հետ նախաձեռնեց Նայասարանի օգնության Գերմանական միության հիմնադրումը: Այդ միության կառույցում նա ներգրավեց նաև իր՝ Գերմանական առաքելություն Արևելքում կազմակերպությանը, որը հանդես էր գալիս՝ որպես միության կենտրոնական մարմինը՝ կոչվելով Բեռլինի կոմիտե: 1900 թ. մայիսին, սակայն, Լեփսիուսը Միության՝ Ֆրանկֆուրտի կոմիտեի հետ ունեցած մի շարք սկզբունքային փարսձայնությունների պարճառով Բեռլինի կոմիտեի հետ միասին առանձնացավ ՆՕԳՄ-ից, և կոմիտեն, վերստանալով իր նախկին անվանումը, այդուհետ Լեփսիուսի ղեկավարությամբ ինքնուրույն գործունեություն էր ծավալում: Այդ և հարակից խնդիրների մասին հանգամանալից իրազեկվելու համար քնն Նայտսի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան 2002, էջ 36-72:

կոտորածների մասին հասարակայնությանն իրազեկելու և կառավարությանը հայանապատքայլերի մղելու նպատակով զանգվածային ցույցեր և հանրահավաքներ էր կազմակերպում, ՎՕԳՄ Ֆրանկֆուրտի կոմիտեի նախագահ պատվոր Էռնստ Լոնմանն այդ միջոցառումներին մասնակցելու համար Թումայանին հրավիրեց Գերմանիա¹³։ Երբ նա և Լեփսիուսը 1896 թ. սեպտեմբերին Բեռլինում կազմակերպված մի հանրահավաքում կամենում էին ելույթով հանդես գալ, պրուսական ՆԳ նախարարությունը Թումայանին արգելեց հրապարակային ելույթներ ունենալ, իսկ Լեփսիուսին սպառնաց զրկել հայանապատք գործունեության իրավունքից¹⁴։ Սեպտեմբերի 24-ին Բեռլինում մի նոր հավաքույթ կազմակերպվեց, որտեղ, ըստ Լեփսիուսի և իր բարեկամների միջև, նախապես կայացած պայմանավորվածության, Թումայանը չպետք է ելույթ ունենար, բայց նրա զեկուցման րեքսպր, բազմացվելով, պիտի բաժանվեր ներկաներին։ Պայմանավորվածությանը նախապես րեղեկացած գաղտնի ոստիկանությունն այդ փաստն օգտագործեց հավաքույթը ցրելու և մի «ուժգին քաղաքական պրոպագանդա» բարձրացնելու համար, որն այնուհետև հեշտությամբ չհանդարտվեց։ Ժողովի աշխատանքներին Թումայանի ներգրավման պատասխանատվությունը բարդվեց Յ. Լեփսիուսի վրա, և նա հարկադրված էր գործ ունենալ ՆԳ և ԱԳ նախարարությունների հետ։ Կարողանալով հիմնավորել իր Գերմանիայի քաղաքականության դեմ չգործելու, այլ միայն հայ պառակալականներին օգնություն ցուցաբերելու նպատակները՝ նա կարողացավ հարթել բարդությունները։ Թումայանը, սակայն, որին ՆԳ նախարարությունը խստիվ արգելեց որևէ ելույթով կամ հրապարակմամբ հանդես գալ, այնուհետև հարկադրված էր րեղափոխվել Անգլիա¹⁵։

Անգլիայում Թումայանը գործուն մասնակցություն էր ցուցաբերում Նայկական հարցի առնչությամբ կազմակերպվող միջոցառումներին։ Նա այնտեղ դարձավ Պողոս Նուբարի նախաձեռնությամբ 1913 թ. սրբեղծված անգլո-հայկական կոմիտեի անդամ, և դր. Լեփսիուսի հետ նրա համագործակցությունը հիմնականում շարունակվում էր Նայկական հարցին նվիրված միջազգային համաժողովների և այլ միջոցառումների շրջանակում¹⁶։

Նաջորդ հայը, որի հետ Լեփսիուսը դեռ 1896-ից սերտ համագործակցության մեջ էր, և որը մեծ ներդրում ունեցավ Լեփսիուսի ձեռնարկած՝ անօթեան և անպաշտպան հայութեան

13 Տե՛ս **R. Schäfer**, *Geschichte...*, էջ 10։

14 Տե՛ս **Hermann Goltz**, *Zwischen Deutschland und Armenien*, in: *Theologische Literaturzeitung*, 108. Jg., Nummer 12, էջ 870։

15 Տե՛ս **J. Lepsius**, *Der Herausgeber an die Freunde unsrer Arbeit*, „Der Christliche Orient“ 1900, էջ 5։ Այդ դեպքի հարուցած աղմուկը եզրափակվեց պրուսական պառլամենտում։ Պարզամտոր Ադոլֆ Շթյոկերն այնտեղ 1897 թ. փետրվարի 11-ին ներկայացնելով միջադեպը և Թումայանի հանդեպ ցուցաբերված վարքագիծը համարելով անարդարացի, ՆԳ նախարար Էրենհարդ Ֆոն դեր Բեկեից պահանջեց հարցի վերաբերյալ պարզաբանում րալ, և վերջինս Թումայանին պարտադրված արգելքի համար վկայակոչեց Բ. դրան հետ Գերմանիայի ունեցած բարեկամական հարաբերությունները, որոնք, իբրեւ թե, պոմժլ էին Թումայանի ելույթների պարճառով։ Տե՛ս «Thoumajan und die preussische Regierung», „Der Christliche Orient“, 1897, S. 188-189. Նմմր. **R. Schäfer**, *Geschichte...*, էջ 11։

16 Նա, օրինակ, որպես Լոնդոնի Նայկական կոմիտեի ներկայացուցիչ, մասնակցել է այնտեղ 1913 թ. ապրիլի 25-ին կայացած միջազգային համաժողովին, նաև Էդինբուրգում նույն րարվա մայիսին կազմակերպված Շտրլանդիայի հայանապատք գործիչների հավաքույթին, 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում րեղի ունեցած հայկական համագումարին, և այլ այդօրինակ միջոցառումների։ Տե՛ս Die Armenische Frage und der Genozid an den Armeniern. Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amts, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardes Mikaeljan, Jerewan 2004, էջ 24։ Նմմր. **Պողոսյան, Սամուէլ**, Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երեւան, 2004, էջ 56։ Նմմր. **Փափազյան Վահան**, Իմ յուշերը, հր. Գ., Կահիրէ 1957, էջ 44։ **Կ. Թումայանը** հրապարակել է նաև մի երկհատոր աշխատություն Արեւելյան հարցի և Նայկական հարցի պարմության վերաբերյալ։ Տե՛ս **Թումայան Կ.**, Պարմություն Արեւելյան խնդրի և առաջնորդ հայկական հարցի, հ. Ա-Բ., Լոնդոն, 1905։

յան, մասնավորապես՝ Բուլղարիայում կուրակված բազմահազար հայ փախստականների փրկության աշխատանքներում, ավերարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանն էր: Ի դեպ, ՆՕԳՄ Բեռլինի կոմիտեի Բուլղարիայի մասնաճյուղը միակն էր, որի ղեկավարը հայ էր: Ամիրխանյանը ծագումով Արցախից էր և հայերենից բացի վարժ փրապետում էր թուրքերեն, պարսկերեն և գերմաներեն լեզուներին: Կովկասում և Ռուսաստանում ավերարանական քարոզչությամբ զբաղվելու պատճառով նրան Պետերբուրգի եկեղեցական սինոդը աքսորել էր Ուրալ, որտեղից կարողանալով հեռանալ Ֆինլանդիա՝ մինչև ԳԱԱ-ի հետ համագործակցության սկզբնավորումը բնակություն էր հաստատել այնտեղ¹⁷:

1896 թ. դեկտեմբերին նա Բեռլինի կոմիտեի հանձնարարությամբ մեկնեց Բուլղարիա՝ այնտեղ գտնվող ավելի քան 10.000 հայ փախստականների դրությանը ծանոթանալու և օգնության կազմակերպման համար¹⁸: Ամիրխանյանը Բեռլինի կոմիտեի հարկացրած միջոցներով Ռուսչուկում, Վառնայում և Շումլայում¹⁹ օգնության լայնածավալ աշխատանքներ իրականացրեց, Վառնայում հիմնեց նաև որբանոց²⁰, որտեղ, որբերից բացի, խնամվում էին նաև ծայրահեղ աղքատ ընտանիքների երեխաները²¹: Նշված քաղաքներում ստեղծվեցին հասարակական ճաշարաններ, կարիքավորներին հարկացվեց հագուստ և կոշիկներ, տղամարդկանց բաժանվեցին գյուղատնտեսական գործիքներ՝ այգիներում աշխատելու համար, երիտասարդներին սովորեցնում էին արհեստներ, աղջիկների համար նույնպես աշխատատեղեր ստեղծվեցին²²: Ապահովված էր նաև մարդկանց անվճար բուժապաստարկում, որը ստանձնել էր դր. Լոնմանի ամառանոցի ասիստենտ Բժշկուհի, հայագի օր. Մելիք-Բեգլարյանը²³:

Կարարված աշխատանքներին ծանոթանալու և հետագա անելիքները համարելով որոշարկելու նպատակով 1897 թ. հուլիսին մեկ շաբաթով Վառնա մեկնեց նաև Յոհ. Լեփսիուսը²⁴: Քաղաքի հայերի հետ նրա շփումները վերստին փաստեցին այն ըմբռնումը, որ նա ուներ հայ ժողովրդի ներսով և ունակությունների վերաբերյալ: «Ով կտեսնի այդ երեխաներին իրենց նուրբ և ինտելիգենտ դեմքերով, - նշում էր նա, - և կնկարի նրանց օժիվածությունը, միայն դժգոհությամբ կվերաբերվի այն նախադիմանքներին, որոնք ուղղվում են հայ ժողովրդի հասցեին: Եթե մի ռասա իր բնական հարկանիշներով կոչված է դառնալու բարձր մշակույթի կրող, ապա դա հայկականն է: Եթե նրա բարոյական զարգացումը համաքայլ չի եղել բնականին, ապա այդ կարելի է բացատրել միայն Թուրքիայի դարավոր ճնշմամբ և կողոպտիչ պետական ու քաղաքական հարաբերություններով»²⁵:

1898 թ. զարնանից փախստականների մեծ մասը ցանկանում էր վերադառնալ հայրենիք, և Ամիրխանյանը իր օգնականների հետ ձեռնամուխ եղավ նրանց հայրենադարձությունը կազմակերպելուն, ինչը դարձյալ տեղի էր ունենում Բեռլինի կոմիտեի ֆինանսական

17 Տե՛ս **Abraham Amiranjanjz**, *Der Christliche Orient*, 1900, էջ 100-102:

18 Տե՛ս „Berichte über das deutsche Hilfswerk in Armenien“, *Der Christliche Orient*, 1900, էջ 281:

19 Ամիրխանյանը նրանց հարկացրեց դրամ, կոշիկներ և հագուստ, անդ, էջ 89:

20 **R Schäfer**, „Geschichte...“, էջ 15: Նման. *Berichte über das deutsche Hilfswerk in Armenien...*, „Der Christliche Orient“, 1897, էջ 283:

21 Տե՛ս **J. Lepsius**, *Ein Besuch in Varna*, „Der Christliche Orient“, 1897, էջ 380:

22 Տե՛ս **A. Amiranjanjz**, *Briefe aus Bulgarien*, „Der Christliche Orient“, 1897, էջ 134: Նման. **Amiranjanjz A.**, *Briefe aus Bulgarien*, „Der Christliche Orient“, 1897, էջ 184, 281-284: Նման. **J. Lepsius**, „Ein Besuch...“, էջ 378:

23 Տե՛ս „Das deutsche Hilfswerk für Armenien“, „Der Christliche Orient“, 1897, էջ 331-332:

24 Տե՛ս անդ, էջ 332:

25 Տե՛ս **J. Lepsius**, *Ein Besuch...*, էջ 381:

աջակցությամբ²⁶։ Փախստականներից շատերն արդեն կարողացել էին արագորեն ինտեգրվել նոր իրականության մեջ և ինքնուրույն գոյություն պահպանել²⁷։

Նաշվի առնելով այդ իրողությունները՝ Լեփսիուսը, որ դեռ 1897 թ. վերջին ծրագրել էր Վառնայում գնել մի հողամաս և փրամադրել մի սեփական ընդարձակ որբանոցային համալիրի շինարարության²⁸, այդ մտքից հրաժարվեց, իսկ 1901 թ. հոկտեմբերին Ռուսչուկի գերմանական համայնքի ղեկավար պաստոր Թեոդոր Վանգենմանի²⁹ առաջարկով որբանոցը, որպեսզի որբերի թիվն արդեն բավական նվազել էր, իր գույքի հետ միասին հանձնեց նրան³⁰։

Ամիրխանյանցի և Լեփսիուսի համագործակցությունը, այսպիսով, անգերազնահատելի դեր ունեցավ Բուլղարիայում հանգրվանած բազմահազար հայ փախստականների գոյապահպանման, իսկ 1898-ից նաև նրանց հայրենադարձությունը կազմակերպելու հարցում։ Եւ միայն այն փաստը, որ այդ ողջ ժամանակամիջոցում փախստականների շրջանում սովամահության որեւէ դեպք չգրանցվեց³¹, պերճախոս վկայությունն էր այն բանի, թե օգնության աշխատանքները որքան արդյունավետ և հեղեղողականորեն էին իրականացվում։

Ա. Ամիրխանյանցը որբանոցը Ռուսչուկ քաղաքից հեռու մնաց Վառնայում և Բելոլինի կոմիտեի հովանավորությամբ սկսեց զբաղվել Բուլղարիայի մահմեդական շրջաններում քրիստոնեական քարոզությամբ³²։ Լեփսիուսն այդ աշխատադաշտն ընդլայնելու նպատակով 1900 թ. նոյեմբերին Բուլղարիա ուղարկեց նաև Յոհանես Ավետարանյանին, որն ազգությամբ թուրք էր, սակայն մկրտվելով՝ փոխել էր իր անունը³³։ Եւ նրանք որոշ ժամանակ համարել գործում էին Բուլղարիայում։

Լեփսիուսի համագործակցությունը հայ մրավորականության և քաղաքական գործիչների հետ զգալիորեն աշխուժացավ Առաջին աշխարհամարտի նախօրեին, երբ Ղայկական բարենորոգումների հարցը դարձյալ մրավ միջազգային օրակարգ։

1912 թ. նոյեմբերի 10-ին Ամենայն Տայոց Կաթողիկոսը լեգիպատիայի նշանավոր գործարար Պողոս Նուբար փաշային լիազորել էր, որպես Տայ ազգային պարվիրականության ղեկավար, Ղայկական հարցի վերաբերյալ երուսական երկրներում գումարվելիք համաժողովներում պաշտպանելու հայ ժողովրդի իրավունքները։ Բարեփոխումների նախագծերի քննարկման ընթացքում Պողոս Նուբարը հանդիպումներ էր ունենում և բանակցություններ վարում երուսական քաղաքական շրջանների հետ³⁴։

26 Տն՝ „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 24։ Նմմ. **A. Amiranjanjanz**, *Aus Warne und Burgas*, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1898, էջ 111։

27 Ինչպես դիպուկ նշում էր Ռ. Շեֆերը, «Երուսական հողի վրա, բնականոն պերական և փերեսական հարաբերությունների պայմաններում փախստական հայերը զարմանալի արագ էին մուտք գործում աշխատանքային կյանք, և ընթանիքի իրենց ցայտուն ըմբռնությամբ նույնիսկ հեռավոր ազգականները, հենց որ սնունդ և բնակարանային պայմաններ էին ձեռք բերում, որբացած երեխաներին փանում էին իրենց ընթանական միջավայրը...»։ Տն՝ **R. Schäfer**, *Geschichte...*, էջ 21։

28 Տն՝ **J. Lepsius**, *Ein Besuch...*, էջ 381։

29 Թ. Վանգենմանը սեփական նախաձեռնությամբ հավաքել և իր փանը խնամում էր մի բանի հայ որբերի։ Տն՝ „Der Christliche Orient“, 1901, էջ 102։

30 Տն՝ „Mitteilung“, „Der Christliche Orient“, 1901, էջ 196։ Նմմ. **R. Schäfer**, *Geschichte...*, էջ 38։

31 Տն՝ **A. Amiranjanjanz**, *Was in Bulgarien not thut*, „Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes“, 1899, էջ 10։

32 Տն՝ **J. Lepsius**, *Das deutsche Gemeinde-, Waisen- und Missionshaus in Rustschuk*, „Der Christliche Orient“, 1901, էջ 103։

33 Տն՝ „Der Christliche Orient“, 1900, էջ 102։ Նմմ. **R. Schäfer**, *Geschichte...*, էջ 36։

34 Տն՝ **Նովակիմ Բոյաջյան**, Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրն Արեւմտյան Ղայաստանում 1912-1914 թթ., թեկնածուական արեւնախոսություն (անսրիպ), Երեւան, 2002, էջ 36։

Բարեփոխումների վերաբերյալ արեւմտահայության տեսակետներն արտահայտելու եւ համապատասխան նախագիծ մշակելու համար Թիֆլիսում եւ Կ. Պոլսում նույնպէս ստեղծվել էին համապատասխան մարմիններ³⁵:

Նարցի վերաբերյալ հասարակական կարծիքն իրագրեցելու եւ, ըստ հնարավորին, նաեւ կառավարությունների քաղաքականությունն ի նպաստ հայության ուղղորդելու համար 1913 թ. զարնանը տարբեր երկրներում, մասնավորապէս Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում եւ Շվեյցարիայում ստեղծվեցին հայկական կոմիտեներ: Բեռլինում հիմնված կոմիտեն³⁶, փաստորեն, դարձավ Գերմանա-հայկական ընկերության նախակարապետը: Լոնդոնի հայկական կոմիտեի նախաձեռնությամբ 1913 թ. ապրիլի 25-ին անգլիական պառլամենտի ստորին պալատի՝ նիստերի դահլիճներից մեկում տեղի ունեցավ նշված կոմիտեների մի համաժողով՝ Նայաստանի քաղաքական ապագային վերաբերող խնդիրները քննարկելու եւ հայկական բարենորոգումների վերաբերյալ մեկ միասնական դիրքորոշում որդեգրելու համար³⁷:

Ինչպէս Յ. Լեփսիուսն էր այդ առնչությամբ մայիսի 10-ին պետքարտուղար Յագովին ուղարկված տեղեկագրում նշում, համաժողովի նախագահող Անտոյին Վիլյամը իր բացման ելույթից հետո ձայն տվեց Նուբար փաշային՝ նրան խնդրելով ներկայացնել իր պատվիրակության ծրագիրը, իսկ Նուբարից հետո ելույթ ունեցավ Լեփսիուսը, որը, մասնավորապէս, հավաստեց, որ բարենորոգումները կպաշտպանի նաեւ Գերմանիան, եթե դրանց վերահսկողությունը լինի միջազգային, այլ ոչ թե հանձնվի մեկ պետության³⁸:

Նաեւգամանակից քննարկումներից հետո միաձայն ընդունվեց հետեւյալ բանաձեւը. «Համաժողովի անդամները պարտավորվում են տարբեր երկրներում կոմիտեների աշխատանքն այնպէս կազմակերպել, որ հասարակական կարծիքը նրանց միջոցով հայկական հարցի մասին իրագրելի, եւ իրենց երկրների կառավարության վրա ազդեցություն գործադրվի ի նպաստ բարեփոխումների, որոնք Թուրքիայի հայ բնակչության համար անհրաժեշտ են եւ թուրքական պետության տարածքային ամբողջականության պահպանման համար՝ անխուսափելի»³⁹: Մասնակիցներից Անան Բրայսը, բացի այդ, առաջարկեց, որ համաժողովն անհապաղ քայլեր ձեռնարկեր ակտիվ պրոպագանդա սկսելու եւ դրա շնորհիվ կառավարությունների վրա ճնշում գործադրելու համար: Այդ առումով նույնպէս միաձայն ընդունվեցին համապատասխան բանաձեւեր⁴⁰: Այդ օրվանից սկիզբ առավ կազմակերպող, տեսական համագործակցություն դր. Լեփսիուսի եւ Պոլոս Նուբարի միջեւ:

35 Կ. Պոլսում 1912 թ. դեկտեմբերին ստեղծվել էր «Ապահովության հանձնաժողով, որի նախագահը Եղիշե արքեպ. Դուրյանն էր, իսկ անդամներն էին՝ Գ. Պալաքյանը, Ս. Գաթայանը, Ռ. Մարտիրոսյանը, Վ. Փափագյանը եւ Լ. Տեմիրճիպաշյանը: Մինչ այդ, 1912 թ. հոկտեմբերի վերջին, Ռուսաստանի հայաբնակ վարերի ներկայացուցիչների Թիֆլիսի համագումարում եւս ձեւավորվել էր մի մարմին՝ «Ազգային բյուրո», որի նախագահն էր Ս. Նարությունյանը, իսկ անդամներն էին Ն. Առաքելյանը, Ա. Խաթիսյանը, Ն. Աղբալյանը, Ա. Քալանթարը, Ա. Պողոսյանը եւ Ն. Թումանյանը: Անդ. էջ 24:

36 Այն երապարակեց նաեւ «Deutsch-armenische Blätter» պարբերականը, որի միայն մեկ համարը լույս տեսավ:

37 Համաժողովի Մասնակիցների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար տե՛ս „Die Armenische Frage.....“, էջ 23-24:

38 Տե՛ս Մամուլի Պողոսյան, Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երեւան, 2004, էջ 55:

39 Տե՛ս „Die Armenische Frage...“, էջ 25:

40 Բանաձեւերի ամբողջական տեքստը տե՛ս անդ. էջ 25-26: Ինչպէս Լեփսիուսը պետքարտուղարին տեղեկացնում էր, Պոլոս Նուբար փաշայի ներկայացրած ծրագիրը հիմնականում համապատասխանում էր տերությունների 1895 թ. կազմած ծրագրին, որն ընդունվել էր Բ. Դան կողմից, իսկ ատկա որոշ փոփոխությունները թելադրված էին այդուհետ Թուրքիայի իրադրությունում եւ պայմաններում տեղի ունեցած փոփոխություններով: Անդ. էջ 24:

Բարեփոխումների վերաբերյալ բանակցություններն արդեն սկսվել էին, երբ Լեփսիուսը Ուռհա մեկնելու ճանապարհին ժամանեց Կ. Պոլիս: Այնպեղ նա տեսակցեց Նովիանես Արշարունի պարբիարքի հետ, իսկ այնուհետև այցելեց Ապառիտության հանձնաժողովի գրասենյակ⁴¹: Հանձնաժողովի անդամների հետ գրույցի ընթացքում, երբ Վահան Փափազյանն իր դժգոհությունն արտահայտեց այն առնչությամբ, որ Գերմանիան դարձել էր Թուրքիայի խորհրդականն ու աջակիցը, Լեփսիուսը կարարեց հետևյալ պարզաբանումը. «Գերմանիոյ հանրային կարծիքը նպաստաւոր է հայերուն, բայց այլ են դիւանագիտական շրջանակներու փրամադրութիւնները: Ռուսաստանի նախաձեռնութիւնը եւ, մանաւանդ, անոր ցույց տուած փութկոտութիւնն ու համառ պայքարը հայկական ինքնավար շրջան մը ստեղծելու իր հարաւային սահմաններու վրայ, արդարացի մտաւորութիւն կ'աւրճաւ մեզի. ռուսական նուաճում մըն է երկրի մը, որ կրիիքի ամբողջ Փոքր Ասիոյ ճամբաներու եւ հեռաւոր ծովերու վրայ»⁴²:

Այնուհետև Լեփսիուսը զրպանից հանում է լուցկու մի փուփ եւ մի փունջ լուցիկներ զանազան ուղղություններով շարելով փուփի վրա՝ ավելացնում. «Տուփը Նայաստանն է, որուն կապականի այս երկիրը, անոր թնդանոթի հարուածներուն փակ պիտի գտնուի ամբողջ Փոքր Ասիան: Գերմանիան չի կրնար թոյլ տալ նման սպառնալիք իր շահերուն դէմ»⁴³:

Նախկանշական է, որ Լեփսիուսը գրույցի ընթացքում հանձնաժողովի անդամներին բացորոշ կերպով ներկայացնում է նաև Գերմանիայի իմպերիալիստական նկրտումները, այն է՝ Բաղդադի երկաթուղու կառուցումից հետո գերմանական գաղութների հիմնում, մենաշնորհներ եւ տնտեսական խռոշոր ձեռնարկներում արտոնություններ, որոնք «նպատակ ունենին Թուրքիան դնելու նոյն դիրքի մեջ, ինչ որ Անգլիան դրաւ Եգիպտոսը»⁴⁴:

Լեփսիուսն այդ ժամանակ, ինչպես Փափազյանն է նշում, առանձին «մտերմական» հանդիպում է ունենում նաև դր. Զավոյանի հետ, որը Ապառիտության հանձնաժողովում արտաքին քաղաքականության հարցերով էր զբաղվում⁴⁵:

Երբ Լեփսիուսն օգոստոսի սկզբին Ուռհայից վերադարձավ Կ. Պոլիս, բանակցագործընթացում իրադրությունն արմատապես փոխվել էր: Նովիսի 3-ին Ենի Քոյում դեսպանների միջև սկսված բանակցությունները ձախողվել, իսկ հուլիսի 23-ին դադարել էին, քանի որ գերմանական եւ ռուսական կողմերը համաձայնության չէին եկել մի շարք կարևոր հարցերում: Այդ պայմաններում պարբիարքարանի խնդրանքով Պողոս Նուբարը երկու անգամ մեկնել էր Բեռլին եւ առաջին անգամ պերջարարուղարի փեղակալ Ա. Յիմերմանի, իսկ երկրորդ անգամ պերջարարուղար Փոն Յագովի հետ հանդիպելով՝ հիմնավոր պարզաբանումների միջոցով կարողացել էր Ռուսաստանի, այն է՝ պարբիարքարանի ծրագրի հանդեպ նրանց ժխտողական մոտեցումը փոխել եւ ձեռք բերել նրանց համաձայնությունը՝ մի շարք փոփոխություններով հանդերձ, այդ ծրագիրը կյանքի կոչելու հարցում⁴⁶: «Ես ամբողջովին ազատորեն եւ անկեղծորեն շարադրեցի մեր բարենորոգումների հարցի էությունը,- Յիմերմանի հետ հանդիպումից հետո գրում էր նա Լեփսիուսին 1913 թ. օգոստոսի 22-ի իր նամակում,- եւ

41 Տե՛ս Վ. Փափազյան, Իմ յուշերը, հր. Բ., Բեյրութ 1952, էջ 250:

42 Տե՛ս անդ. էջ 250-251:

43 Տե՛ս անդ. էջ 251:

44 Տե՛ս անդ.:

45 Տե՛ս անդ.:

46 Տե՛ս Ս. Պողոսյան, Պողոս Նուբար փաշա..., էջ 63-65:

կարծում եմ, որ նրան կարողացա ցույց տալ, որ հայերը չունեն ոչ մի հեղինակալի անջատողական միջոցներ, որ նրանց վերագրում են, եւ պահանջում են միայն բարենորոգումներ Եւրոպայի վերահսկողությամբ»⁴⁷:

Կ. Պոլսում միջամտեց նաեւ Լեփսիուսը: Նա դեսպանին տեղեկացրեց հայկական կողմի հուսախաբությունը եւ նրան ներկայացրեց վիճելի հարցերի շուրջ հայկական տեսակետները: Դրանք վերաբերում էին, մասնավորապես, գլխավոր տեսուչների իրավասություններին, վիլայեթների, սանջակների եւ կազանների վարչական խորհուրդներում, ինչպես նաեւ դատարաններում, ժանդարմներիայում եւ ոստիկանության համակարգում քրիստոնյաների եւ մահմեդականների թվական հարաբերակցությանը, այնուհետեւ՝ ռեզիդենտ գինվորական ծառայությանը, արեւելյան վիլայեթներում մահմեդական մուհաջիրների բնակեցմանը եւ հողային ու դպրոցական խնդիրներին⁴⁸:

Այնուհետեւ սկսվեցին քննարկումներ՝ մի կողմից դեսպանի եւ մյուս կողմից հայկական կողմի ներկայացուցիչների միջեւ, որոնց թվում էին՝ Վահան Փափագյանը, պարագամալոր Գրիգոր Զոհրաբը, դեռեւս նոր առաջնորդ չունեցող պարիսարքարանի մի շարք հոգեւորականներ, նախկին պարիսարք Նովհաննես Արշարունին, Եղիշե Դուրյանը, Մաղաքիա Օրմանյանը, ՏՏԴ-ի եւ կուսակցության՝ «Ազատամարտ» թերթի մի շարք ներկայացուցիչներ⁴⁹:

Քննարկումները շուրջով վերաճեցին բանակցությունների, որոնց ընթացքում մեծ նշանակություն ունեցավ Լեփսիուսի հետեւողական միջամտությունը: Նրա առաջարկած փոխգիշտման պայմանները, որոնց շուրջ երկուստեք հաջողվեց փոխըմբռնում ապահովել, հետեւյալն էին. «Հայաստանը բաժանվում էր երկու նահանգների: Գերմանիան այլեւս չէր ընդդիմանում, որ երկու նահանգապետերը նշանակվեին մեծ պետությունների համաձայնությամբ: Համաձայն էր նաեւ, որ ինչպես վիլայեթների «ընդհանուր ժողովներում եւ վարչական խորհուրդներում», այնպես էլ վարչական ու դատական պաշտոնյաների հարցում, բացառությամբ միայն գույր մահմեդականաբնակ շրջանների, սահմանվում էր մահմեդականների եւ քրիստոնյաների ներկայացուցչության հավասարության սկզբունքը: Այդ սկզբունքն ընդունվում էր 5 տարով, մինչեւ բնակչության ընդհանուր ցուցակագրությունը, եւ այդ ժամանակահատվածը լրանալուց հետո, եթե կարիք գագցվեր, կարելի էր անցում կատարել համեմատական սկզբունքին»⁵⁰:

Լեփսիուսը, բացի այդ, առաջարկեց վերջնական համաձայնության գալու համար Կ. Պոլիս հրավիրել նաեւ Պ. Նուբարին⁵¹: Նա անձամբ եւս օգոստոսի 20-ին հեռագրեց Նուբարին՝ նրան հրավիրելով գալ Կ. Պոլիս, սակայն Նուբարը պարասխանեց, որ ինքը լիազորված էր հայկական հարցը միայն Եւրոպայում հետապնդելու, իսկ Կ. Պոլսում բանակցությունների վարման լիազորություն ուներ պարիսարքարանը⁵²: Բոլոր դեպքերում հայկական կողմը նույնպես դեմ էր Պ. Նուբարի մասնակցությանը՝ գիտակցելով, որ թուրքերը այդ դեպքում կփորձեին ձախողել բանակցությունները՝ պարճառաբանելով, թե հայկական կողմի հետ են բանակցություններ վարվում⁵³:

47 Տե՛ս Ն. Բոյաջյան, Պողոս Նուբար փաշան..., էջ 105:

48 Տե՛ս անդ, էջ 102-103:

49 Տե՛ս „Die Armenische Frage...“, էջ 100:

50 Տե՛ս «Բարենորոգումները Հայաստանում 1912 թ. նոյեմբեր 12-ից մինչեւ 10 մայիսի 1914 թ.», Ժողովածու իսլամադիքական դոկումենտների, Թիֆլիս 1915, էջ 51:

51 Տե՛ս Ս. Պողոսյան, Պողոս Նուբար փաշա..., էջ 66:

52 Տե՛ս անդ: Հմմտ. Ն. Բոյաջյան, Պողոս Նուբար փաշան..., էջ 107:

53 Պողոսյան, Ս., Պողոս Նուբար փաշա..., էջ 66:

Դրանից հետո Լեփսիուսը Պ. Նուբարին հեռագրեց, որ անձամբ կմեկնի՝ նրան փեսակցելու: Մեպրեմյանի 4-ին նա ժամանեց Շվեյցարիայի Վեվեյ քաղաքը, որտեղ այդ ժամանակ գտնվում էր Նուբարը, և նրան ներկայացրեց բանակցությունների դրությունը: Նա խնդրեց, որ Պ. Նուբարը կրկին մեկնի Բեռլին և արագորձնախարարությանը դրդի բարենորոգումների փաթեթն ընդունելու համար նոր հրահանգներ ուղարկել դեսպանությանը, քանի որ նրա աշխարակիցները թուրքամեր էին և վարանում էին վերջնական համաձայնություն կայացնել⁵⁴:

Քանի որ Պ. Նուբարն այդ ժամանակ բարձր ջերմություն ուներ և անկողնային վիճակում էր, նրանք սկզբում որոշեցին, որ Լեփսիուսը մեկնի Բեռլին և հանդիպի Յագովին, որից հետո նա պետք է հեռագրեր Նուբարին, որպեսզի վերջինս նույնպես մեկնե: Այդ օրերին, սակայն, Նուբարը պարփարքարանից լուր ստացավ, որ գերմանական դեսպանությունը հրաժարվել էր Լեփսիուսի ջանքերով ձեռք բերված բոլոր զիջումներից⁵⁵, և այնուհետև անհապաղ մեկնեց Բեռլին: Նա կարողացավ ստանալ գերմանական կառավարության հավաստագրումը, որ Գերմանիան կօժանդակի բարենորոգումների հարցում, և Ռուսաստանի հետ շուրափույթ կերպով մի վերջնական ծրագիր կկազմեն⁵⁶:

Ռուսական և գերմանական կառավարությունների միջև համաձայնությունը իրոք կայացավ, և սեպտեմբերին Կ. Պոլսի ռուսական ու գերմանական դեսպանությունները կազմեցին վեց կետից բաղկացած բարենորոգումների նախագիծ, որը ստացավ բոլոր դեսպանների հավանությունը, իսկ այնուհետև Ռուսաստանի դեսպանը իր և Գերմանիայի դեսպանի անունից ներկայացրեց Բ. Դռանը⁵⁷: Թուրքական կառավարությունը, սակայն, սկսեց խուսափել և նոր հակառաջարկներ ներկայացնե⁵⁸:

Թուրքական ընդդիմությունը հաղթահարելու համար Պ. Նուբարը առաջ քաշեց Թուրքիայի վրա եւրոպական կառավարությունների կողմից փնտրվող գերմանական ճնշում գործադրելու քաղաքականությունը⁵⁹, առավել ևս, որ հսկայական պարտքեր ունեցող Թուրքիան այդ ժամանակ ջանում էր փրկություններից նոր փոխառություն վերցնել: Դա իրագործելու և այդ նպատակով հայերի եւրոպացի բարեկամներին համախմբելու համար Նուբարի առաջարկով «Ֆրանսիական Ասիայի հանձնաժողովը» նոյեմբերի 17-ին Փարիզում հրավիրեց միջազգային համաժողով, որին մասնակցեցին նաև Լեփսիուսն ու Պաուլ Ռոնիբրախը: Պ. Նուբարի, իտալացի դուքս դը Անդրիանի, Ռ. Պիտտի (Ֆրանսիա) և Լ. դը Բուսրանտյի (Ֆրանսիա) ելույթներից հետո կոնֆերանսի նախագահ գնդապետ դը Լակրուան (Ֆրանսիա) ձայն փոխեց դր. Լեփսիուսին, որի խոսքին կոնֆերանսի բոլոր մասնակիցները մեծ հերաքրքրությամբ էին սպասում⁶⁰:

Լեփսիուսը խոսեց ոչ թե ֆրանսերեն, այլ գերմաներեն, և նրա ելույթը թարգմանում էր Շվեյցարիայի ներկայացուցիչ Լեոպոլդ Ֆավրը: Չնայած թարգմանության հետեւանքով նրա

54 Տե՛ս անդ:

55 Տե՛ս ՄՄ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 33, թ. 20-22:

56 Տե՛ս Ս. Պողոսյան, Պոլոս Նուբար փաշա..., էջ 67:

57 Տե՛ս Վահան Փափագյան, Ղայկական բարենորոգումները (1912-1914), «Վեմ», Փարիզ, 1934, մարտ-ապրիլ, թիւ 2, էջ 66: Նմուր. «Բարենորոգումները Ղայստարանում...», էջ 60-61:

58 Տե՛ս Ս. Պողոսյան, Պոլոս Նուբար փաշա..., էջ 67:

59 Տե՛ս ՄՄ ԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 47, թ 1:

60 Տե՛ս Բարկեն վարդապետ, Ղայկական հարցը և Պոլոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, էջ 8-10:

խոսքի «ծանրակշիռ սրախոսությունը» զգալիորեն փոփոխեց⁶¹, այնուհանդերձ ունկնդրվեց մեծ հեղափոխությամբ: Նա անդրադարձավ այն հանգամանքին, որ Սան Սյրեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներում թվերը փոխել էին իրենց փեղերը: Ինչ էր նշանակում դա: Սան Սյրեֆանոյի պայմանագրում 1-ը 6-ի դեմ էր: Այդ մեկը Ռուսաստանն էր, որը, հակառակ մյուս պետությունների, հայերի համար ձեռք բերեց երաշխավորություն: Իսկ Բեռլինի պայմանագրում 6-ը 1-ի դեմ էին, և դրանք 6 պետություններն էին, որոնք չկարողացան ձեռք բերել երաշխավորություն 1-ից՝ Թուրքիայից: Որպեսզի այդ թվաբանությունը հնարավոր լիներ ուղղել, անհրաժեշտ էր 6-ը դարձնել 1 հավաքական միություն: Այդ ժամանակ 6 պետությունները կլինեին ավելի ուժեղ, քան մեկ Թուրքիան: Ինչն էր դրան արգելք դառնում. այն, որ, ինչպես Լեփսիոսն էր նշում, «Գերմանիան կամենում էր պահպանել փառակալական փաստադր, իսկ Ռուսաստանը կամենում էր այն ոչնչացնել»⁶², մինչդեռ այժմ այդ փարաձայնությունը վերացել էր⁶³:

Լեփսիոսն իր եզրակացության մեջ ընդգծում է, որ Թուրքիային արված զիջողությունները պետք եղածից շատ ավելի են եղել, և որ թուրքական կառավարությունը կամենում էր ոչ միայն բարենորոգումների հարցը դուրս բերել պետությունների կողմից միասնաբար ընդունված նախագծից, այլև հրաժարվել դրանց իրագործման հիմնարար սկզբունքներից, որոնք վերաբերում էին, մասնավորապես, վերահսկողությանն ու երուսական փեսուսների նշանակմանը, և որոնք, բոլոր դեպքերում, անհրաժեշտ էր պահպանել: Լեփսիոսը նաև որոշակի դժգոհություն է հայտնում նախագծի բնագրում ընդունված ընդհանուր և նվազ որոշակիություն ունեցող հերելայալ արտահայտությունից. «L'attribution de pouvoirs exécutifs aux fonctionnaires européens» («Գործադիր իշխանության հանձնումը եվրոպացի պաշտոնյաներին») նշելով, որ այն պետք է փոխել⁶⁴:

Ինչպես նշում է ժամանակակիցը, Լեփսիոսն, ըստ այդմ, վերջին պահին ավելի արմատական մոտեցում ցուցաբերեց, քան միջին մեծամասնությունը, որն առկա շարադրանքը համարում էր գործնականում միակ իրագործելի⁶⁵: Ինչպես Լեփսիոսը, նույնպես և համաժողովի բոլոր մասնակիցներն իրենց ելույթներում ընդգծում էին ֆինանսական ճնշման կարևորությունը, և նրանց միջև փարաձայնություն չկար:

Այս կոմիտեները զգալի դերակատարում ունեցան բարեփոխումների առնչությամբ իրենց երկրներում ինչպես հասարակական կարծիքը, այնպես էլ պետական քաղաքականությունն ի նպաստ հայերի ուղղորդելու հարցում, և թուրքական դիմադրությունը հաջողվեց հաղթահարել, քանի որ վեց պետությունները, ինչպես մարգարեաբար նշել էր Լեփսիոսը, այդ հարցում ի վերջո միասնաբար հանդես եկան: Այսպեղ, անկասկած, ամենադժվարին առաքելությունը վիճակված էր Լեփսիոսին և Բեռլինի հայկական կոմիտեին, քանի որ Գերմանիան բարեփոխումների իրականացման հարցում ամենաընդդիմադիր կողմն էր: Զ.

61 Տե՛ս անդ, էջ 11:

62 Տե՛ս անդ:

63 Տե՛ս անդ:

64 Տե՛ս անդ:

65 Տե՛ս անդ: Լեփսիոսից հետո ելույթ են ունենում իտալացի հայրենի պարզամտ Ռ. Փ. Օ՝ Բոնորը, Անգլիայի Նայկական կոմիտեի նախագահ Ա. Վիլյամսը և պատրո Ն. Բաքստոնը (Անգլիա): Անդ, էջ 12-13: Նամաժողովին ներկա էին նաև Ռուսաստանից, Պ. Միլյուկովը և Կ. Պավլովսկին, Շվեյցարիայից՝ Լ. Ֆավրը և Ռ. Քաբաբերը, Ավստրո-Հունգարիայից Ա. Ներմանը և Յ. Փրանկուլը, բացի այդ՝ Դ. Ուայթը (Անգլիա), Ռոբերտ Դեյն (Ֆրանսիա) և ուրիշներ: Տե՛ս Ս. Պոլոստան, Պոլոս Նուբար փաշա..., էջ 72:

Գրինֆիլդը Գերմանա-հայկական ընկերության «Մեսրոպ» պարբերականում հրապարակած իր հայերեն հոդվածում, հայալեզու ընթերցողներին ծանոթացնելով նորաստեղծ ընկերության անելիքներին և հիմնական նպատակներին, այդ առնչությամբ հետևյալն էր գրում. «Մենք ամենից առաջ պարտական ենք դր. Լևիսիուսի անձնվեր աջակցությանն այն բանի համար, որ մեր կոմիտեին հաջողվեց նպաստել բարենորոգումների ընդունման խոչընդոտների վերացմանը»⁶⁶:

1914 թ. ստեղծվեց Գերմանահայկական ընկերությունը, որի հիմնադիր կոմիտեի անդամներն էին դր. Լևիսիուսը, պրոֆ. դր. Յ. Մարկվարտը, պրոֆ. դր. Մ. Ռադեն, դր. Պ. Ռոբբախը, քահանա Է. Շթիրը, դր. Ջ. Գրինֆիլդը, փաստաբան դր. Ռ. Դարբինյանը, բժիշկ, դր. Ա. Նայրանյանը, բժիշկ, դր. Մ. Մուրադյանը և դր. Գ. Շախբազյանը⁶⁷: Նրանց շուրջով միացավ նաև հրապարակախոս դր. Լիպարիտ Նազարյանը, որը հայ քաղաքական շրջաններում հայտնի անձնավորություն էր, գերազանց գերմաներեն գիտեր և Բալկանյան պատերազմի ժամանակ թղթակցել էր գերմանական «Vorwärts» պարբերականին⁶⁸: Վերոնշյալ հայորդիներն իրենց գործունեությունը էին բերում ընկերության նախանշած ծրագրերը կյանքի կոչելու համար, իսկ Ռ. Ջարդարյանը և Լ. Նազարյանը նաև թղթակցում էին «Մեսրոպ» ամսագրին⁶⁹:

Երբ Թուրքիան, Գերմանիայի հետ դաշնակցելով, պատերազմի մեջ մտավ, Գերմանա-հայկական ընկերությունը դա խիստ մտահոգեց⁷⁰: Մի կողմից ականբեր էր, որ հայերի համակրանքը թուրքերի կողմը չպերթ է լինել, և Թուրքիան պերթ է օգտվել պատերազմից՝ «վերջացնելու համար իր հաշիվները հայերի հետ», մյուս կողմից՝ եթե պատերազմից առաջ հաջողվել էր Գերմանիայի արտաքին քաղաքականությունը այս կամ այն չափով համապատասխանեցնել հայ ժողովրդի քաղաքական շահերին, ապա այժմ՝ պատերազմական իրադրությունում դա չափազանց բարդ խնդիր էր: Այնուհանդերձ ընկերությունը ջանում էր ԱԳՆ-ում ապահովել բարյացակամ փրամադրություն հայերի հանդեմ⁷¹: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ ընկերությունը Կ. Պոլսի և Նայասարանի հետ այլևս ուղղակի կապի հնարավորություն չուներ: Այն սկզբում սրիպված էր ապավինել պատահական աղբյուրների, որոնք, սակայն, ռազմական գործողությունների զարգացման հետևանքով կարճ

66 Տե՛ս Dj. Greenfield, *Zu unserer Sache, „Mesrop. Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft“*, Berlin, 1914, էջ 3:

67 Տե՛ս Aufruf zur Begründung der „Deutsch-Armenischen Gesellschaft“, „Der Christliche Orient“, 1914, էջ 102:

68 Տե՛ս Ռ. Լեոնեան, Մեծ աղէքի նախօրէին, «Նայրենիք», Բուսթուն, 1927, թիվ 4(52), էջ 37:

69 Ամսագրի առաջին համարում հրապարակված՝ Ռ. Ջարդարյանի «Ակնարկներ ժամանակակից Գերմանիոյ վրայ» և Լ. Նազարյանի «Թուրքահայերի թիվը XIX դարում» հոդվածները կարելու, ուղենշային դրույթներն էին առաջադրում երկու ժողովուրդների կապերի սերտացման առնչությամբ և միաժամանակ արժեքավոր փոփոխություններ էին հաղորդում հայ ժողովրդի փոփոխա-քաղաքական դրության, պատմամշակութային արժեքների, ինչպես և թե՛ արեւմտահայերի և թե՛ Օսմանյան կայսրությունում բնակվող մյուս ժողովուրդների թվաքանակի մասին: Տե՛ս Ռ. Դարբինյան, Ակնարկներ ժամանակակից Գերմանիոյ վրայ, „Mesrop“, Berlin, Juli-August 1914, էջ 24-29: Նմմր. Liparit Nasarianz, *Die Zahl der türkischen Armenier im XIX Jahrhundert*, „Mesrop“, Berlin, Juli-August 1914, էջ 15-24:

70 Տե՛ս Ռ. Լեոնեան, Մեծ աղէքի նախօրէին..., էջ 33: Նոյնիսկը Լիպարիտ Նազարյանն է, որ մամուլում հանդես էր գալիս նշված ծածկանունով:

71 Լիպարիտ Նազարյանը նշում է, որ «Ընկերութիւնը կրցաւ մինչեւ ասփոնան մը յաղթել այս դժուարութեանը և ստեղծել մասնառըբարը արտաքին գործոց նախարարութեան մէջ, բարեացակամ փրամադրութիւն դէպի հայերը», անդ, էջ 34:

Ժամանակ անց նույնպես սպառվեցին, եւ արեւմտահայերի հեղ անմիջական հաղորդակցության հաստատումը 1914 թ. վերջին դարձել էր ընկերության հրապարակ եւ անհետաձգելի խնդիրը⁷²: Դա կարեւորվում էր նաեւ այն առումով, որ գերմանական ԱԳՆ-ին ուղղված ընկերության դիմումներն ու միջնորդությունը առանց ստույգ եւ արդիական տեղեկությունների չէին կարող ազդեցիկ լինել:

Գերմանական աղբյուրներում եւ պատմագրության մեջ նշվում է, որ 1914 թ. նոյեմբերին, Թուրքիայի՝ պարսերազմի մեջ մտնելուց հետո, ձգտելով նպաստել այն բանին, որ արեւմտահայությունը պարսերազմի ընթացքում անսպասելիորեն հանդես գար Թուրքիայի կողմում, Գերմանիայի արագորոշման խաթարությունը Գերմանահայկական ընկերությանն առաջարկել էր այդ նպատակով բացառական աշխատանքներ կատարել հայ քաղաքական եւ եկեղեցական ազդեցիկ շրջաններում: Եվ ընկերությունը համաձայնել է առաջարկն ընդունել այն պայմանով, եթե գերմանական կառավարությունը խոստանար, որ ընդմիջված հայկական բարեփոխումները պարսերազմից հետո կիրառործվեն: Նավաստիացումն ստանալով ընկերությունը (ԱԳՆ-ի կողմից հապկացված անձնագրով ու նաեւ նախարարության նյութական միջոցների հաշվին) 1914 թ. վերջին Թուրքիա է գործուղել իր վարչության անդամ Լ. Նազարյանցին, որը պետք է հանդիպումներ ունենար Կ. Պոլսի հայոց պարիսպարարանի եւ ՏՅԴ ղեկավարների հետ՝ այդ հարցում նրանց կողմնորոշելու նպատակով⁷³:

Այդ ամենն ինքնակն ճիշտ է, եւ Լիպարիպյանի մեկնումը հնարավոր դարձնելու համար Լեփսիուսը դրա անհրաժեշտությունը ԱԳՆ-ում հենց այդպես է հիմնավորել: Ի՞նչ է, սակայն, իրականում տեղի ունեցել: Ընկերության նախագահ դր. Լեփսիուսը վարչության նիստում առաջարկում է մեկին ուղարկել Թուրքիա, որը ստույգ եւ հանգամանալից տեղեկատվությամբ կապահովեր ընկերությանը: Առաջարկը վարչության կողմից ընդունվում է: Սկզբում կշռադարվում է այն հարցը՝ արդյոք հա՞յ, թե՞ գերմանացի պետք է լինե՞ր բաները: Գերմանացի լինելու դեպքում կար այն առավելությունը, որ նա կարող էր անարգել մուրք գործել Թուրքիա, ապրել եւ տեղաշարժվել՝ առանց կասկած հարուցելու: Բայց գերմանացին անժանոթ կլինե՞ր հայկական միջավայրին եւ չէ՞ր վայելի հայկական հաստատությունների անվերապահ վստահությունը, ուստի Լեփսիուսը պաշտպանում է այն տեսակետը, որ հայ ուղարկվի՝ լիաժողով լինելով, որ կկարողանար Թուրքիայում նրա մուրք գործելու հարցը կարգավորել ԱԳՆ միջոցով: «Միայն թե մեր բաները,- ասում էր նա,- պետք է վարժ լինի գերմաներենին եւ արտաքինով, ըստ կարելույն, հայի չնմանի: Ես արդեն նշանակած եմ իմ թեկնածուս»⁷⁴:

Լեփսիուսը նշում է Նազարյանցի անունը: Վարչության անդամները սկզբում առարկում են՝ ասելով, որ նա երկար ժամանակ ապրել էր Կ. Պոլսում եւ, որպես թղթակից, պաշտոնավար անձանց հետ շփված լինելով՝ կարող էր հեշտությամբ աչքի զարկել⁷⁵: Սակայն Լեփսիուսը դա խնդրահարույց չի համարում: «Կարելու էր այն է, որ մեր մարդը Պոլսի հասնի,- նշում է նա,- իսկ այնուհետեւ իր ապահովության ամբողջ պատասխանատվությունը կը ծանրանայ գերման դեսպանատան վրայ»⁷⁶:

72 Տե՛ս անդ:

73 Տե՛ս „Die Armenische Frage...“, էջ 123: Նման. Ս. **Felgel**, Das Evangelische..., էջ 210, „Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft“, Dezember, 1939, էջ 4:

74 Տե՛ս **Ռ. Լեփսիուս**, Մեծ աղերի նախօրեին, «Տայրենիք», Ե փարի, Բոստոն, 1927, թիվ 4(52), էջ 34:

75 Տե՛ս անդ:

76 Տե՛ս անդ, էջ 34-35:

Սրանալով վարչության համաձայնությունը՝ Լեփսիուսը գործի է անցնում եւ վարչության հաջորդ նիստում արդեն հայրնում է, որ արագործնախարարությունը պարբերաբար էր նպաստելու ընկերության այդ նախաձեռնությանը: Շուրջով ստացվում է նաեւ դեպքեր Վան-գենհայմի համաձայնությունը, եւ Լեփսիուսը մի օր գալիս է վարչության նիստին՝ Նազարյան-ցի անցագիրը ձեռքին: Նա նոր անուն չէր հորինել նրա համար, բայց կատարել էր մի փոքրիկ փոփոխություն, որպեսզի նրա հայ լինելը չմտնվեր⁷⁷:

Երբ Նազարյանցի մեկնման համար ամեն բան պարբերաբար էր, վարչությունը մի հարուկ նիստ գումարեց՝ նրա անելիքները որոշակիացնելու համար: Ուշագրավ է, որ նրան նաեւ հանձնարարվում էր վերադարձի ժամանակ Ռումինիայով անցնել Կովկաս, քանի որ ենթադրվում էր, որ կովկասահայությունը, կորված լինելով Թուրքիայից, անտեղյակ էր այնպեղի իր ազգակիցների իրական դրության մասին:⁷⁸ Սա նշանակում է, որ Տայ-գերմանական ընկերությունը նրա միջոցով նախարեսում էր կապ հաստատել նաեւ արեւմտահայերի եւ կովկասահայերի միջեւ⁷⁹:

Նազարյանցը ճանապարհ ընկնելուց մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 29-ին, մի սրճարանում դարձյալ հանդիպում է Լեփսիուսին: «Յուզում էր թուրք մեր մեծ բարեկամը, բայց յուսառաքյալ, գրում է Նազարյանցը: Ու երբ լսել է երբք իր վերջին խորհուրդները՝ ելալ մեկնելու, թեւս անցած հասցուց մինչեւ դուռը եւ, թօթուելով ձեռքս, ջերմեռանդօրէն արարասանեց. – Gott mit Ihnen! (Ասոված Ձեզ հետ - Ա. Տ.): Կարծես ինքզինքը յանցաւոր կը զգար Լեփսիուս, որ իրենք զինակցած են թուրքերու հետ, որոնցմէ այնքա՛ն պարտուհասներ կրած էր ու այժմ ալ կը կրէր հայութիւնը: ... Ան իր ժողովուրդին բիւրեղացած խիղճն էր, որի մէջ խորացեր էին գերման ոգիին փիլանններու բարոյագիտական գաղափարները: Օտար ազգի մը փառապանքին ամոքումը ան դարձուցած էր իր կեանքին իմաստը եւ անշեղ ու աննկուն կը քալէր այդ ուղիով: Անձայր զոհողութիւն մըն էր իր կողմէն, վասնզի ընտրած ասպարէզը լեցուն էր գրկանքներով եւ խիստ նեղ՝ իր արտակարգ կարողութեանց ծաւալման համար: «Դուք՝ հայերդ, մեզ հանճարէ մը գրկեցիք», կասէր ծանօթ գերմանացի գործիչ մը: Իրավունք ուներ. Նուիրուելով հայերուն, Լեփսիուս այնչա շարք քիչ միջոց ուներ՝ փալու իր սեփական ժողովուրդին այն, ինչ որ կարող էր: Մենք ըստ արժանոյն գնահատած չենք այդ անգուցական գերմանացին ոչ իր ողջ արեսը, ոչ ալ մահէն յետոյ. մինչ իրեն կը պարկանի ամենապարտաւոր փողերէն մէկը

77 Տէն անդ, էջ 35: Չնայած Լ. Նազարյանցը ցի նշում, թէ ինչ փոփոխություն էր կատարվել, սակայն գերմանական դիվանագիտական սկզբնաղբյուրներից պարզ է դառնում, որ անձնագրում նրա անունը նշված էր՝ որպէս «դր. Լիպարիպ»:

78 Տէն անդ:

79 Նիստի վերջում Ռոմբրախը Նազարյանցին փողեկացնում է, որ մեկնումից առաջ նրան կամենում էր փեսնել դր. Յեկը, որը պարբերաբար ժամանակ ԱԳՆ կից սպեղծված հրապարակչական բաժնի ղեկավարն էր: Նա հանդիպում է նրան, եւ Յեկը նրան առաջարկում է հայերին համոզել, որ զգույշ լինեն եւ պարբերաբար չխառնվեն, ինչք իրենց իսկ շահերից էր բխում: Յեկը հայրնում է, որ թուրքերը ընդհանուր կովկասյան հարձակում են սկսել, եւ Անդրկովկասը պէտք է գրավեն: «Այդ պարագային ի՞նչ պէտք է անեն հայերը, – ասում էր նա, – ո՛վ պիտի պաշտպանէ իրենք: Կացութիւնը չափազանց յուրջ է, ու միայն խոհեմութիւնն է, որ կարող է փրկել ձեր հայրենակիցները»: Էռնեստ Յեկը սովորաբար ուներ թուրքասեր գործչի համարում, բայց, ինչպէս դիպուկ կերպով նշում է Նազարյանցը, դրա պարճաւն այն էր, որ նա բոլոր կերպով պաշտպանում էր գերմանա-թուրքական մերձեցման անհրաժեշտությունը: Միևնուրեք իրականում նրա թրքասիրությունը զուր հասարակական քաղաքական ձգտումներով էր թելադրվում, քանի որ նա այն համոզմանն էր, որ Գերմանիան Թուրքիայի միջոցով պէտք է կարողանար Մերձավոր Արեւելքում առավելագույն ազդեցություն ձեռք բերել: Դա արեւաբար հետո նրա հրապարակած հոդվածները, սակայն, ինչպէս նշում է Նազարյանցը, ցույց էին տալիս, որ «թուրքերու մասին իր ունեցած գաղափարը գրեթէ փարբեր չէ մերիմեն»: Անդ:

հայության դարի հերոսներու կարգին... Աչքիս առջևն էր շարունակ իր դեմքը՝ մրախոհ-հանդիսատար արարայայությունամբ: Իրիկնամուրի թանձր սրտերները ներս կը սողային վագոնիս պարուհանեն եւ լուծուելով՝ փակաւ կը խեղդէին լոյսը: Ու ճեպընթաց սուրացող կառաշարի դղրդիւնին մէջէն ականջիս կը հնչէր անընդհար՝ Gott mit Ihnen! Անհուն հաւաքը եւ ուժ կը ներշնչէր ինձի, չհաւաքացողիս, Լեփսիուսի այս վերջին խօսքը. զի իր Աստուծոյ անունով կօրինէր իմ անսրոյց ճամբան. իսկ իր Աստուածը – Սէրն էր համապարփակ եւ Արդարութիւնը»⁸⁰:

Լ. Նազարյանցը, որն ընկերության Կոված բնութագրերում ներկայացվել էր որպես «վարահելի, գերմանոֆիլ ուղղվածություն ունեցող, հարգված հայ փաստաբան», որը եղել էր նաև ընկերության հիմնադիրներից մեկը, 1915 թ. հունվարի սկզբին ժամանեց Կ. Պոլիս, ապա մեկնեց Սոֆիա⁸¹, որից հետո, դարձյալ վերադառնալով Կ. Պոլիս, կարճ ժամանակ անց այնտեղից կրկին մեկնեց: Ընդ որում՝ Կ. Պոլսում գրված միջոցին նա մշտապես կապ էր պահպանում դեսպանության հետ՝ պարբերաբար ներկայացնելով գրավոր եւ բանավոր զեկույցներ⁸²: Սրբեղծված իրավիճակում Լ. Նազարյանցը, ինչպես ինքն էր դիպուկ կերպով նշում, դարձավ «միակ թելը», որի միջոցով խստացող հերապնդումների պայմաններում Կ. Պոլսի հայ գործիչները կապվում էին արտաքին աշխարհի հետ⁸³:

Կ. Պոլսից դարձյալ Սոֆիա մեկնելուց հետո Նազարյանցը Գերմանահայկական ընկերության որոշմամբ այնուհետև պետք է վերադառնար Բեռլին եւ, այնտեղ ստանալով նոր հրահանագներ, Ռումինիայով մեկնելու Կովկաս⁸⁴: սակայն Սոֆիայում գրված ռուսական դիվանագիտական ներկայացուցչությունը նրան համարում է գերմանական գործակալ եւ

80 Տե՛ս անդ, էջ 35-36:

81 Քանի որ Լ. Նազարյանցի մեկնումը Կովկաս ուշանում էր, իսկ փերթվարին ՏՅԴ. Բալկանյան կենտրոնական կոմիտեն փեղեկացրել էր կուսակցության բյուրոյին, որ Մ. Վարանդյանը շուտով Ֆրանսիայից Սոֆիայով պետք է մեկնել Կովկաս, Նազարյանցը Սոֆիա մեկնեց՝ Վարանդյանին հանդիպելու եւ նրա միջոցով կովկասահայերին արեւմտահայության վիճակի մասին փեղեկացնելու նպատակով: Տե՛ս Ռ. Լեւոնեան, Մեծ աղէտի նախօրէին, «Նայրենիք», Ե փարի, Բոսպոլ, 1927, թիվ 5(53), էջ 65-66: Իր մեկնումը Սոֆիա գերմանական դեսպանության հետ համաձայնեցնելու եւ վերջինիս միջոցով թուրքական իշխանություններից թույլտվություն ստանալու համար Նազարյանցը, հանդիպելով դեսպանության առաջին թարգման դր. Վերեթին, դա հիմնավորում է այն հանգամանքով, որ ռուսահայերը, չունենալով սարույզ փեղեկություններ Թուրքիայի իրենց հայրենակիցների մասին, խիստ անհանգիստ էին եւ հարկապես մրախոհված էին Կ. Պոլսում պարանդի կարգավիճակում պահվող սրվարաթիվ մրավորականների վիճակով: Այդ պայմաններում, ըստ Նազարյանցի, հուզված մարքերը խաղաղեցնելու միակ միջոցը պետք է լինէր անմիջական աղբյուրներից քաղված փեղեկությունների հիման վրա լուսաբանել իրական կացությունը: Այնուհետև նա Վերեթի միջնորդությամբ հեշտությամբ սրացավ պահանջվող թույլտվությունը: Անդ:

Տե՛ս անդ:

82 Տե՛ս „Die Armenische Frage...“, էջ 131: Նայրենի դեմ ծայր առած սիստեմարիկ հալածանքների մասին Վանգենհայմին հանձնած նրա փեղեկագրերին եւ միջամտության դիմումներին ի պատասխան դեսպանը հաղորդում էր, որ «ամենաուրիշ ուշադրությամբ» կըբավվի այդ հարցերով: Տե՛ս Ռ. Լեւոնեան, Մեծ աղէտի նախօրէին, «Նայրենիք», թիվ 4(52), էջ 95: Նրա միջամտությունները, սակայն, բարեկամական կերպով շարադրված հուշագրերից այն կողմ չէին անցնում, որոնց թուրքական կառավարությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում: Ուշագրավ է, որ Նազարյանցի հետ գրույցի ժամանակ Վանգենհայմը պարզորոշ ակնարկում էր հայերի բնաջնջման հեռանկարը՝ ասելով, որ ռուսական գործերի առաջխաղացման կամ Անգլիայի նավարկումի՝ Կ. Պոլսի առջև երեւալու դեպքում «թուրք ժողովուրդը» կարող էր «մինչեւ այն աստիճան գրգռուի», որ կառավարությունն այլեւ անգոր կլինէր ծայրահեղությունների դեմն առնել: Անդ: «Ուրեմն, իրավացիորեն եզրակացնում էր Նազարյանցը,՝ հայերը փափաքելու էին, որ պարեազգի յաջողութիւնը Թուրքիոյ կողմը լինի. հակառակ պարագային իրենք պիտի կոտորուէին: Այս կուզէր ասել դեսպանը»: Անդ:

83 Տե՛ս Ռ. Լեւոնեան, Մեծ աղէտի նախօրէին, «Նայրենիք», Ե փարի, Բոսպոլ, 1927, թիվ 7(55), էջ 88:

84 Տե՛ս Ռ. Լեւոնեան, Մեծ աղէտի օրերուն, «Նայրենիք», Զ փարի, Բոսպոլ, 1927, թիվ 2(62), էջ 130:

արգելում է նրան Կովկաս մեկնել⁸⁵։ Այդ իրավիճակում ՆՅԴ կենտրոնական կոմիտեի որոշմամբ Նազարյանցի փոխարեն Բեռլին է մեկնում եւ այնտեղ Լեփսիուսին ու նրա գործընկերներին Նայասարանի իրադարձությունների մասին տեղեկացնում է Վահագն Զրմոյանը, իսկ ինչ վերաբերում է Նազարյանցին, ապա առնվազն 1915 թ. մայիսից գերմանական դեսպանությունն իր հերթին, առանց որեւէ փաստի, նրան համարում էր ռուսական լրդես։ Նա գտնվում էր դեսպանության եւ Սոֆիայի գերմանական հյուպատոս Նայերտի գաղտնի հսկողության ներքո, որը, առանց որեւէ փաստի, նրան համարելով «ռուսական լրդես»՝ դեսպանին խորհուրդ էր տալիս Լիպարիպից եր վերցնել ԱԳՆ հասկացրած անձնագիրը⁸⁶։ Վանգենհայմն իր հերթին, Նայերտի առաջարկի հանդեպ ցուցաբերելով «կառուցողական» դիրքորոշում, նրա տեղեկությունները հունիսի 1-ին ուղարկեց կանցլերին՝ կից գրությամբ նրան ներկայացնելով նաեւ Լ. Նազարյանցի փաստաթղթերը եր վերցնելու նպատակահարմարության վերաբերյալ՝ իր նկատառումները, եւ բացի այդ՝ նույն օրը եւեթ նա Սոֆիայի գերմանական հյուպատոսությանը հրահանգում էր շարունակել նրան գաղտնի հսկողության տակ պահել եւ սկզբնապես զանազան պարզաբանություններով նրանից վերցնել այն գերմանական փաստաթղթերը, որոնց գործածելիության ժամկետը լրացել էր⁸⁷։

Միաժամանակ դեսպանը փորձում էր դա դարձնել պարզակալ՝ նաեւ Լեփսիուսի այցը Թուրքիա խոչընդոտելու համար՝ արդգործնախարարությանը հեռագրելով, թե նա Լեփսիուսի այցը նաեւ այն նկատառումով էր անժամանակ համարում, որ դր. Լիպարիպի գործունեությունը դեռ չէր պարզաբանվել⁸⁸։ Դա, սակայն, բարեբախտաբար, նրան չհաջողվեց։

Գերմանական ԱԳՆ-ի կողմից Նազարյանցին հատկացված փաստաթղթերը եր վերցնելուց հետո, ինչը ակնհայտորեն տեղի է ունեցել հունիսին, նա այլեւ չէր կարող անարգել Թուրքիա մեկնել, ուստի մնաց Սոֆիայում, որտեղ խմբագրում էր 1915-ին այնտեղ հրատար-

85 Տե՛ս անդ. էջ 130-131։

86 «Երեկ եւ «Գրանդ Նոթել» ռեստորանում դարձյալ տեսա Լիպարիպին մի հայտնու հետ,- մայիսի 22-ին դեսպանությանն ուղղված իր նամակում տեղեկացնում էր Սոֆիայի գերմանական հյուպատոսության քարտուղար Նայերտը,- որը հայտնի է՝ որպես ռուսական լրդես, եւ մի քիկնուջ, որն, ակներեաբար, Շվեյցարիայից ոչ վաղուց այստեղ եկած ռուսական լրդես է։ Բնքը՝ Լիպարիպը, երկու րարբեր կողմերից բնութագրվել է որպես ռուսական լրդես։ Եթե նույնիսկ Լիպարիպի՝ հիշյալ անձանց հետ լինելը չի կարող ուղղակիորեն նրա նկատմամբ կասկած հարուցել, եւ կարծում եմ, որ ամեն դեպքում չի կարելի խուսափել այն հարցադրումից, որ, ըստ հնարավորին, ստուգվի, թե արդյոք Լիպարիպը դեռ շարունակ իրավունք ունի՝ ԱԳՆ կողմից հատկացված անձնագիր ունենալ։ „Die Armenische Frage...“, էջ 133։

87 «Նրա՝ դիպլոմատար թույլ տված արքահայտություններից կարելի է եզրակացնել, որ նա ռուսահպարակ է»,- գրում էր Վանգենհայմը։ «... Իրադարձությունները, որոնց մասին հաղորդել է հյուպատոսության քարտուղար Նայերտը, թելադրում են զգուշանալ, եւ եւ նրա հայեցողությանն եմ թողնում **աննկատ** կերպով շարունակել դիտումները։ Նրա՝ ելքի իրավունք ընձեռող գերմանական փաստաթղթերի առնչությամբ հանձնարարվում է սկզբնապես այլեայլ պարզաձև պարբերակներով եր վերցնել այն անձնագրերը, որոնք այլեւս նրա հետագա գործունեության համար անհրաժեշտ չեն, եւ որոնց ժամկետը համապատասխանաբար լրացել է» (ընդգծումը հեղինակինն է - Ա. Ն.)։ Անդ, էջ 131։

88 «Բ. Դանն՝ արդեն ամբողջությամբ ի կարար անվող միջոցառման պարագայում,- գրում էր Վանգենհայմը ԱԳՆ ուղղված հունիսի 9-ի հեռագրում,- որը զանազան ստուգապես հաստատված փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, եւ նրա ջանքերն արդյունք չեն ունենա։ Դրանից զատ, եւ այդ այցն առավել եւս այն նկատառումով եմ համարում անժամանակյա, որ դր. Լիպարիպի գործունեությունը եւս դեռ չի պարզաբանվել, եւ որ այն (նկատի ունի Լեփսիուսի ուղևորությունը - Ա. Ն.) կարող է Բ. Դանը վրդովել, որը, ինչպես ցույց է տալիս նախնական հավաստի գնությունը, միանգամայն դեմ է այդ այցելությանը։ Բացի այդ, եւ իմ ուժերի ներածին չափով անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեն Բ. Դանն չափազանց խիստ միջոցառումները»։ Անդ, էջ 135։

րակվող «Նայասարան» թերթը⁸⁹: Այնուհանդերձ, մինչ այդ նա առավելագույնս իրականացրեց ինչպես Գերմանա-հայկական ընկերությանը, այնպես էլ կովկասահայերին արեւմտահայության դրության վերաբերյալ իրազեկելու իր առաքելությունը:

Այժմ անդրադառնանք այն կարեւոր հարցին, թե Լեփսիուսը, որին Թալեաթի կողմից արգելված էր մեկնել գավառները, ինչպե՞ս կարողացավ ձեռք բերել այն մեծաքանակ ճշգրիտ տեղեկատվությունը հայոց ցեղասպանության մասին, որը նա այնուհետեւ առանձին գրքով հրատարակեց Գերմանիայում:

1915 թ. ապրիլին, երբ տեղի էր ունենում հայ մրավորականների զանգվածային ձերբակալությունը, Կ. Պոլսում գրավող Շավարշ Միսաքյանը ընկերների հետ կազմակերպում է մի «գաղտնի մարմին», որը ջանում էր աջակցել ձերբակալվածների ընտանիքներին եւ, բացի այդ, հավաքելով գավառներում տեղի ունեցող եղերական իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները, դրանք գաղտնի ճանապարհներով ուղարկում էր Սոֆիայում գրավող ՆՅԴ Բալկանյան կենտրոնական կոմիտեին, «Նայասարան» թերթին, ինչպես նաեւ օտարերկրյա դիվանագետներին⁹⁰: Լ. Նազարյանը Շ. Միսաքյանի ուղարկած տեղեկությունները հունիսի 17-ին հեռագրով ուղարկեց դր. Լեփսիուսին՝ խնդրելով ձեռնարկել բոլոր միջոցները՝ աղետը կասեցնելու համար⁹¹: Լեփսիուսը հաջորդ օրն իսկ այդ հեռագիրը հանձնեց ԱԳՆ, որն էլ այդ մասին տեղեկացրեց դեսպան Վանգենհայմին՝ հրահանգելով Բ. Դեանը համապատասխան նախագծուշացումներ կատարել⁹²: Լեփսիուսի կողմից հունիսի 18-ին եւ 22-ին ԱԳՆ հանձնված երկու տեղեկագրերը նույնպես հենվում էին Նազարյանցի հաղորդած փաստերի վրա⁹³:

ՆՅԴ կենտրոնական կոմիտեն հայ ժողովրդի համար օրհասական այդ օրերին նաեւ մի հեռագիր ուղարկեց Լեփսիուսին, որտեղ գրված էր՝ «Ձեր ներկայությունն այստեղ անհրաժեշտ է»⁹⁴: Այդ հեռագիրը դարձավ կարեւոր խթան, որպեսզի Լեփսիուսը կայացներ ինչպես Սոֆիա, այնպես էլ Թուրքիա մեկնելու որոշումը: «Կը բաւեր լաւոնական հեռագիր մը, ուղարկուած իրեն մեր կողմէն,- գրում է այդ առթիվ Նազարյանցը,- ..., որպէս զի այդ զարմանալի մարդը, առանց մենէ որեւէ բացատրութիւն ուզելու, ոչ միայն անմիջապէս ելնէր ու զար Սոֆիա, այլ եւ պահանջէր գերման արտաքին գործոց նախարարութենէն, որ իրեն Թուրքիա մտնելու հնարաւորութիւն տրուի»⁹⁵:

Կ. Պոլսի Գաղտնի մարմնի գործունեության շնորհիվ արեւմտահայության դրության մասին առավել մանրամասն տեղեկությունները նախ հավաքվում էին Սոֆիայում⁹⁶, եւ Կ. Պոլիս այցելելուց առաջ Լեփսիուսի մեկնումը Սոֆիա նախապես այդ նյութերին իրազեկվելու

89 Տե՛ս Ռ. Լեոնեան, Մեծ աղէտի օրերուն, «Նայրենիք», Բոսպոն, 1927, թիվ 2(62), էջ 132:

90 Տե՛ս Ժիրայր Դանիէլեան, Մարենագիտական ծանոթութիւններ (կցված՝ ՆՄ ազգային գրադարանում պահվող «Նայասարան» թերթի հավաքածուին):

91 Տե՛ս Ռ. Լեոնեան, Մեծ աղէտի օրերուն, «Նայրենիք», Բոսպոն, 1928, թիվ 5(65), էջ 119:

92 Անդ:

93 Տե՛ս „Die Armenische Frage...“, էջ 138, 143-146:

94 Տե՛ս Ռ. Լեոնեան, Մեծ աղէտի օրերուն, «Նայրենիք», Բոսպոն, 1928, թիվ 8(68), էջ 107:

95 Տե՛ս անդ:

96 «Սոֆիան այդ կողմէն աւելի նպաստաւոր պայմաններու մէջ էր,- գրում էր Լ. Նազարյանցը,- Պոլիսի հետ մենք կանոնաւոր կապ կը պահպանէինք: Իսկ Պոլիսը, մշտական յարաբերութեանց մէջ լինելով զաւաթի հետ, շարաթը մէկ կամ երկու անգամ կը հաղորդէր մեզի իր սպասած տեղեկութիւնները, որոնք մեր կողմէն ապահով ճամբով կուղարկուէին Կովկաս ու մասամբ, գաղտնապահութեան ներած չափով, կը հրատարակուէին «Նայասարան»-ի մէջ»: Ռ. Լեոնեան, Մեծ աղէտի օրերուն, «Նայրենիք», Զ փարի, թիվ 2(62), Բոսպոն, 1927, էջ 135:

նպատակ էին հետապնդում: Լեփսիուսը նախ մեկնեց Յուրիխ, որտեղ հանդիպեց Զավարյանին⁹⁷, իսկ մի քանի օր անց Վ. Քրմոյանի հետ ժամանեց Սոֆիա⁹⁸: Նա երկու շաբաթ մնաց Սոֆիայում, որտեղ, օրական 7-8 ժամ աշխատելով, ուսումնասիրում էր ՆՅԴ արխիվը եւ Կ. Պոլսից ուղարկված փեղեկագրերը⁹⁹: Քանի որ Նազարյանը զբաղված էր «Նայաստան» թերթի հրատարակությամբ եւ բավականաչափ ժամանակ չունեւ Լեփսիուսին թարգմանությամբ օգնելու համար, այդ հանձնառությունը ստանձնել էր Տիգրան Խաչիկյանը (Արզուման): Նա, սակայն, գերմաներենին վարժ չէր փրապելում, ուստի Լեփսիուսին հայերեն փեղեկագրերի բովանդակությունը թելադրում էր ֆրանսերենով՝ իսկ Լեփսիուսը դրանք շարադրում էր գերմաներեն¹⁰⁰:

Լեփսիուսը, համագործակցելով ՆՅԴ բալկանյան կենտրոնական կոմիտեի հետ, անկասկած, Լ. Նազարյանցից, Վ. Քրմոյանից, Տ. Խաչիկյանից զար սերտ շփումներ է ունեցել նաեւ այդ ժամանակ այնտեղ գտնվող մյուս հայրենի դաշնակցական գործիչների, մասնավորապես՝ Կարո Գեորգյանի, Սոֆիայի «Նայկական սրճարանի» սեփականատեր եւ «Նայաստան» թերթի արտոնատեր Ղուկաս Մինասյանի եւ թերթի աշխատակից Նովիանես Տեւեճյանի հետ:

Ինչեւէ, չնայած Թալեաթը Լեփսիուսին արգելել էր գավառները մեկնել, այնուհանդերձ նա հույս ուներ, որ իրեն կհաջողվեր այդ արգելքը հաղթահարել: «Անգամ մը որ Պոլիս իյնամ,- ասել էր նա Սոֆիայի իր գործընկերներին,- պիտի չձգեմ Վանգենհայմի օձիքը, մինչեւ որ ինձ համար հայկական նահանգները այցելելու թոյլտույթին չստանայ»¹⁰¹: Իսկ այն հարցին, թե արդյոք ինքը չէ՞ր վախենում, որ թուրքերը, ակամա համաձայնելով իր ճամփորդությանը, միջոցներ կձեռնարկեին նրան վերացնելու համար, նա պատասխանում է. «Բնա՛ր, բնա՛ր: Թուրքերը լաւ գիտեն, թե ում հետ ինչպէս պէտք է վարուիլ. կը բաւէ, որ փեղեկալ լինին չափին այն պատասխանատվութեան, որին կենթարկուին իրենց վարմուքին համար. իսկ իմ վերաբերմամբ այդ չափը Թալեաթին յայտնի է»¹⁰²:

Ինչպէս գիտենք, Լեփսիուսը Կ. Պոլսում Վանգենհայմի «օձիքը բռնելու» հնարավորություն չունեցավ, քանի որ վերջինս նրա այցի ողջ ժամանակամիջոցում, իբրեւ թե հիվանդության պատճառով, քաղաքից բացակայում էր: Կ. Պոլսում թուրք նախարարներից մեկը, կամենալով այդ արգելքը արդարացնել, նրան ասել էր, որ իրենք չէին կարող երաշխավորել նրա ապահովությունը: Երբ Լեփսիուսն առարկել էր՝ ասելով, որ չէր վախենում նրանց ավագակենսից, թուրքը պատասխանել էր. «Մենք ենք վախենում»¹⁰³:

Երեք շաբաթ Կ. Պոլսում մնալուց հետո Լեփսիուսը վերադարձի ճանապարհին դարձյալ այցելեց Սոֆիա: Ուշագրավ է այն գրույցը, որ նա ունեցավ Նազարյանցի հետ, երբ վերջինս նրան կայարանից ուղեկցում էր դեպի հյուրանոց: Այդ մասին Նազարյանցը պատմում է. «Երբ կայարանէն զինքը պանդոկ կառաջնորդէի, դարձաւ ինձի. «Տեղին վրայ իրականութեան բախելէ յետոյ ես այն համոզումը գոյացուցի, որ հայերու կացութեան հետ կապուած խնդիրները կարելի է լուծել միայն յեղափոխական միջոցներով», ու անուշ նայուածքը սեւեռեց դէմքիս՝

97 ՏՆ՝ Ա. Լեոնեան, Մեծ աղերի օրերուն, «Նայրենիք», Բոստոն, 1928, թիվ 5(65), էջ 120:

98 ՏՆ՝ անդ:

99 ՏՆ՝ Ա. Լեոնեան, Մեծ աղերի օրերուն, «Նայրենիք», Բոստոն, 1928, թիվ 8(68), էջ 108:

100 ՏՆ՝ անդ:

101 ՏՆ՝ անդ:

102 ՏՆ՝ անդ:

103 ՏՆ՝ անդ:

դեսնելու համար, թե ինչ պատճառներով գործեց վրաս: Զարմացած իրեն կը նայէի. առհասարակ կը սիրէր կապակել. ու այժմ ես կը դժուարանայի ըմբռնել՝ լուրջ բա՛ն մըն էր իր ասածը, թե սովորական կապակ միայն: «Այո՛, շարունակեց,- ձեր դասը ինձ ալ յեղափոխական դարձուց, ու հիմա մենք, կարելի է ասել՝ ընկերներ ենք»: Ու զուարթօրէն քրքջեց: «Պատմեմ՝ թե ինչպէս եղաւ այդ: Ինծի նիւթեր էին պէտք, եւ ես կարողացայ փարբեր միջոցներով բաւական մեծ քանակութեամբ փողեկագիրներ եւ փաստաթուղթեր ձեռք բերել: Աղեկ. բայց ինչպէ՛ս պիտի դուրս հանէի այդ ամէնը Թուրքիայէն. հսկողութիւն, զինուորական գրաքննութիւն եւ հազար ու մի արգելք: Այսպէղ էր, ահա, որ երեսն եկաւ յեղափոխականներու հետ բարեկամ լինելու օգուտը. յաճախ լսած էի, թե ինչ եղանակներով մէկ փողէ միւսը արգիլուած առարկաներ կը փոխադրեն: Որոշեցի հետեւիլ անոնց օրինակին ու կապարելապէս յաջողեցայ»¹⁰⁴: «Բսկ եթէ բռնէի՞ք», - հարցնում է Նազարյանցը: «Այո՛ ալ կը լինէր իմ յեղափոխական մկրտութիւնը,- պարասխանում է Լեփսիուսը,- որմէ յետոյ կը մնար յարիլ որեւէ հայ յեղափոխական կուսակցութեան»¹⁰⁵:

Լ. Նազարյանցը եւ Լեփսիուսը կապված էին ջերմ ընկերությամբ եւ նամակագրական կապ էին պահպանում նաեւ պարբերազմից հետո: Զինադադարից հետո Ամանորի առիթով Լեփսիուսը Նազարյանցին հետեւեալն էր գրում. «Բմ սիրելի..., Ես չէի ուզեր ձգել, որ հին փառքին անցնի, առանց վերջիշելու այն օրերը, երբ մենք՝ իբրեւ զենքի հին եղբայրակիցներ՝ կը կռուէինք յանուն ընդհանուր նպատակներու: Մաղթենք, որ Նոր փարին հասնէ մեզ չար համաստեղութեանց հանդիպութեան այն հեղզ ու պժգալի շրջանէն, ուր ձեր եւ մեր ժողովուրդը սփիւտած է քարշ փալ իր օրերը, եւ փանի այն գաղթափետիլ դաշտերը, ուր հսկայ հունձքի մը հին յոյսերը կը հասունան»¹⁰⁶:

Երբ 1915 թ. աշնանը Բուլղարիան մտավ պարբերազմի մեջ, «Նայաստան» թերթի հրապարակությունը դադարեց, իսկ Նազարյանցը որոշ ժամանակ անց դարձեալ մեկնեց Գերմանիա, որպէս պարբերազմից հետո գործում էր՝ որպէս Բեռլինում Նայաստանի Նանրապետության դեսպան Գրինֆիլդի խորհրդական¹⁰⁷:

Գերմանահայկական ընկերության մեկ այլ հիմնադիր անդամը՝ դր. Նայրանյանը, պարբերազմի բռնկումից փոքր-ինչ առաջ մեկնել էր Նայաստան ծնողներին փեսնելու համար եւ այնպէղ ձեռքակալվել էր: Երբ Լեփսիուսը օգոստոսի 10-ին Էնվերի հետ ունեցած հանդիպման ժամանակ¹⁰⁸ համոզվեց, որ հայ ժողովրդի փողախանման եւ բնաջնջման գործընթացը կասեցնելու իր ջանքերը գուր են, ի վերջո փորձեց փրկել գոնէ Նայրանյանին՝ խնդրելով նրան ազատ արձակել եւ ուղարկել Գերմանիա: Էնվերը խոստացավ Նայրանյանի «գործին» ծանոթանալ եւ նրա դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում կապարել Լեփսիուսի խնդրանքը, սակայն, ինչպէս առժամանակ հետո պարզվեց, Նայրանյանը բանտում սպանվել էր¹⁰⁹:

Լեփսիուսը Կ. Պոլսում սերտ հարաբերություններ ուներ Կենտրոնական վարժարանի փեսուց Աստվածաբար Խաչատրյանի հետ եւ իր այցի ընթացքում վերջինիս աջակցությամբ

104 Անդ:

105 Անդ:

106 Անդ, էջ 111:

107 Տե՛ս Վ. Փափագյան, Բմ յուշերը, հր. 3, Կահիրէ, 1957, էջ 151:

108 Տե՛ս R. Schäfer, *Geschichte...*, էջ 89:

109 Տե՛ս անդ, էջ 28:

ու միջնորդությամբ փեսակցեց նաև հայոց Զավեն Պարփարքի հեղ¹¹⁰։ Նանդիպումը հուզիչ և սրբաբան էր։ «Տրված ժամադրության համաձայն փոքր. Լեփսիուս Պարփարքարան եկաւ,- գրում է այդ առնչությամբ Զավեն պարփարքն իր հուշերում:- Երկուքս ալ ընկճուած էինք. ես ժողովուրդիս աղէպը փեսնելով՝ անճար մնացած եւ փոքր. Լեփսիուս՝ իր առաքելութեան մէջ ձախողած: Պարմեցի իրեն գաւառի ժողովուրդին աղէպը՝ որքան որ փեղեկացած էի, եւ իմ կապարած դիմումներս թուրք նախարարներուն եւ գերման դեսպանին, որ խոստացած էր, թէ «ոչ մէկ հայու քիթը պիտի արիւնի», մինչ հիմա բոլոր ժողովուրդը ջարդուկոտոր կըլլար: Տոքր. Լեփսիուս, ինքն ալ պարմեց իր դիմումները թուրք նախարարներուն եւ դեսպան Վանկէնհայմին մօտ եւ յուսահատ իր դառնալու սրիպումը ըլլալը: Բոճկաց գերման մարդասէրը՝ արձուները աչքերուն մէջ՝ «Աստուած օգնէ Զեզի» ըսաւ եւ մեկնեցաւ»¹¹¹։

Լեփսիուսն իր «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության վերաբերյալ» աշխատության մեջ օգտագործել է նաև Զավեն պարփարքի րված բազմաթիվ արժեքավոր նյութեր եւ փեղեկություններ¹¹², իսկ անձամբ պարփարքի մասին գրում է հետևյալը. «Զավեն պարփարքն իր ողջ նկարագրով չափազանց հեռու է քաղաքական խառնակցի բնույթից: Այն ճակարագիրը, որ պարուհասեց նրա ազգին ու եկեղեցին, նրան ծանր փառապանքներ է պարճառել, սակայն նրան երբեք չի համակել կառավարական իշխանության դեմ դիմադրություն կազմակերպելու միտքը: Նա իր իրավասության ներքո գրավող բոլոր քայլերը կատարել է, պարերազմի ժամանակ իր ժողովրդի դժբախտ դրության կապացությամբ այնքան է լրջագին խնդրանքներ եւ բողոքներ ուղղել նախարարներին, մինչև դոները նրա առաջ կողպվել են, եւ նա ստիպված է եղել համոզվել իր գերադասության կատարյալ անգործության մեջ: Չեն բավարարվել մինչև իսկ նրա ամենաչնչին հոգեւոր սպասարկման նպատակով անհրաժեշտ պարագաներով քահանաների աքտորավայրեր ուղարկելու ցանկությունները: Նա հարկադրված էր հանգիստ դիպել, թե ժողովրդի բնաջնջման հեղ միասին ինչպես էին ուժագրկվում պարփարքարանի իրավունքները, եւ ոչնչացվում հայ ժողովրդի եկեղեցական կազմակերպությունները»¹¹³։

1915 թ. Լեփսիուսը ժնեում ծանոթացավ նաև Երվանդ Աղաթոնի հեղ¹¹⁴, եւ նրանց միջև հասարակեցին սերտ հարաբերություններ: Աղաթոնը, որ Պողոս Նուբարի հիմնադրող Նայկական բարեգործական ընդհանուր միության փոխադրնապետը, Առաջին աշխարհամարտի փարիներին նաև ժնեի հայկական համայնքի ղեկավարն էր, իսկ պարերազմից հետո անդամակցում էր Պողոս Նուբարի գլխավորած Հայոց ազգային պարփարկությանը, պարերազմի ընթացքում մշտապես բնակվում էր ժնեում¹¹⁵, որտեղ զբաղվում էր քա-

110 Կ. Պոլսի Նովիանենտ Արշարունի պարփարքը 1913 թ. օգոստոսի սկզբին հրաժարական էր րվել: Օգոստոսի 30-ին պարփարք ընրվեց Տիգրականակերտի թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոսը, որը հոկտեմբերի 2-րդ կեսին հասավ Կ. Պոլիս եւ նոյեմբերի 8-ին րալով իր երդումը՝ սկսեց պաշտոնավարել: Տեն Վահան Փափազեան, Իմ յուրերը, հղ. Բ., Բէյրութ, 1952, էջ 262:

111 Տեն Զաւեն Արքեպիսկոպոս, Պարփարքական յուրերս. վաերագիրներ եւ վկայութիւններ, Կահիրէ, 1947, էջ 110-111:

112 Տեն „Der Todesgang des Armenischen Volkes. Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges“, von D. Dr. Johannes Lepsius, Heidelberg 1980, էջ 160, 172-173:

113 Տեն անղ, էջ 171-172:

114 Տեն Երուանղ Գրիգոր Աղաթոն, Կեանքիս յիշարակները, Պրենն եւ ժնեղ, 1932, էջ 205:

115 Մինչև պարերազմի բռնկումն Աղաթոնը, որի ընրանիքը գրնվում էր ժնեում, այնրեղ լինում էր միայն առնան երեք ամիսներին, որից հեղո վերաղառնում էր Եգիպտոս: Պարերազմի ողջ ժամանակամիջոցում նա հասարակեց ժնեում, իսկ այնուհերեւ Պողոս Նուբարի Ազգային պարփարկության կազմում մեկնեց

դաքսական-հրապարակախոսական գործունեությամբ¹¹⁶, ջանում էր երոպացի հայաՆԱԿԱՍԿ գործիչների աջակցությամբ բնաջնջվող հայության ձայնը հասցնել մեծ ԳԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ¹¹⁷ և միաժամանակ ղեկավարում էր արեւմտահայերին օգնության կազմակերպումը¹¹⁸: Ժնեում նա մի հայ հայրենասերի միջոցով ծխախոտի պարկի մեջ ստանում է ԼԵՒԻՍԻՍԻ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության վերաբերյալ» աշխատությունը, որը Գերմանիայում պաշտոնապես արգելված էր: Պողոս Նուբարը նրան խնդրում է այդ գիրքը թարգմանել և հրապարակել նաև Ֆրանսերենով: Աղաթոնը գրքի թարգմանությունը հանձնարարում է Ֆրանցիսկյան միաբանության անդամ, հայ կաթոլիկ Մ. Սիբայեյանին, որը գերազանց փիրապետում էր գերմաներեն և Ֆրանսերեն լեզուներին, և այնուհետև թարգմանությունն ուղարկում է Փարիզ, սակայն դրա հրապարակությունն իրականացվում է միայն պատերազմի ավարտից հետո, ինչպես ԼԵՒԻՍԻՍԻ ինքն էր ցանկացել¹¹⁹:

Գերմանահայկական ընկերության կառույցում սկզբնական շրջանում գործում էր նաև Ավերիք Իսահակյանը, որը 1914 թ. զարնանը «Մեսրոպ» ամսագրի խմբագրությունում աշխատելու համար Ժնեից հրավիրվել էր Բեռլին¹²⁰: Իսահակյանը, որին հանձնարարվել էր ամսագրի հայկական բաժնի խմբագրումը, միաժամանակ սերտ կապեր էր հաստատում հայ ԳԵՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԻ, ինչպես, օրինակ, Սիամանյոյի հետ՝ նրանց առաջարկելով նյութեր ուղարկել ամսագրի համար¹²¹:

Պատերազմի բռնկմամբ Իսահակյանի համար, որը Ռուսաստանի քաղաքացիություն ուներ, Գերմանիայում մնալը խնդրահարույց էր դառնում, և նա օգոստոսին մեկնեց Ժնե¹²²,

Փարիզ, ուր (Եգիպտոսից) պատերազմի ավարտից հետո որոշ ժամանակով ԳԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԿԱՍԿ կենտրոնական վարչությունը: Անդ, էջ 204, 241:

116 Նապոկանչական է, որ Ե. Աղաթոնը Ժնեի մամուլում արեւմտահայության ողբերգական դրության վերաբերյալ անստորագիր բողոքներին և այլ հրապարակումներին հետ միասին հրապարակել է նաև հողվածներ հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամների, մասնավորապես Լեոպոլդ Ֆալկի և Բասթերո Լուի Ֆերիերի անուններով՝ ինքնին, վերջիններիս գիտությամբ և համաձայնությամբ: Նա այդպես էր վարվում այն միտադրությամբ, որ եթե ԳԵՐՈՒԹՅԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ու մյուս նյութերը իր անունով հրապարակվեին, ապա դա թուրքերի համար շարժառիթ կծռայեր՝ ստատկացնելու հայերի դեմ գործադրվող վայրագությունները: Անդ, էջ 219:

117 Աղաթոնը ոչ միայն իր և Ժնեի հայ համայնքի կողմից է մեծ ԳԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ կառավարություններին դիմումներ ուղարկել, այլև այդ նպատակի համար առանձին ղեկավարում շվեյցարացի բարեկամների Լեոպոլդ Ֆալկի, Կրաֆտ-Բունարի և այլոց աջակցությամբ կառուցել է հավաքել շվեյցարական բոլոր երկրամասերի բողոքական սինոդների նախագահների ստորագրությունները: Նա այդ ստորագրություններով ապահովել է, օրինակ, ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի ուղղված հեռագիրը, որը նրան ուղարկել է Բեռլին ամերիկյան դեսպանի միջոցով: Անդ, էջ 231-233: Ի դեպ, նա 1918 թ. փետրվարի 10-ին իր և Ժնեի հայկական համայնքի ներկայացուցիչներ Արաբյանի և Շերիարճյանի ստորագրությամբ մի սրբառաջ դիմում էլ ուղարկել է Գերմանիայի կայսր Վիլհելմ 2-րդին: Անդ, էջ 227-228:

118 Աղաթոնը 1916 թ. ընթացիկ «Օգնության սնդուկ» կոչվող բարեսիրական այդ կազմակերպության վարչության նախագահ: Անդ, էջ 215:

119 Տե՛ս անդ, էջ 219-220: Ի դեպ, Աղաթոնը համագործակցում էր նաև Ժնեում գրվող դր. Անդրեաս Ֆիշերի հետ, որը նախկինում ԼԵՒԻՍԻՍԻ կողմից ուղարկվել էր Ռուսիա և 1905-1914 թթ., կարճ ժամանակով՝ նաև 1919-ին, որպես բժիշկ, աշխատել էր ԳԱՄ այնպիսի մասնաճյուղում: Անդ, էջ 205-206:

120 Տե՛ս **H. Goltz**, *Zwischen...*, էջ 876, 879: Նման. Վիգեն Իսահակյան, Իմ հայրը, Երևան, 2000, էջ 38:

121 Տե՛ս անդ: «Մեսրոպի» առաջին համարում Ա. Իսահակյանի նախաձեռնությամբ լույս տեսան հնդիկ բանաստեղծ, նոբելյան մրցանակի դափնեկիր Ռաբինդրանաթ Տագորի երկու բանաստեղծությունների՝ Նովիանես խան Մասեյանի կողմից կապարված թարգմանությունները, գերմանացի բանաստեղծ Յեզաբ Ֆլայշի մի բանաստեղծության՝ Իսահակյանի կողմից կապարված թարգմանությունը և իր՝ Իսահակյանի երկու բանաստեղծությունները:

122 Ժնեում նա այդ ժամանակ կրում էր Ավերիս Բայազետ անունը: Տե՛ս **Իսահակյան Ավիկ**, Բարե՛,

իսկ այնուհետև՝ Վենետիկ, սակայն շարունակում էր սերտ կապ պահպանել Լեփսիոսի եւ Գերմանա-հայկական ընկերության հետ: Բնութագրական է, որ դր. Լեփսիոսը 1919 թ. մայիսի սկզբին, այսինքն, իր՝ «Գերմանիան եւ Նայասպանը...»¹²³ դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուի ամբողջական տպաքանակի յույժնծայումից առաջ Վերսալի խաղաղության համաժողովին, ինչպես եւ Բազելի ու Ժնևի հայկական կոմիտեներին ուղարկված՝ այդ աշխատության 50 օրինակների հետ մեկտեղ Իսահակյանի միջոցով օրինակներ ուղարկեց նաեւ Փարիզում գրավող երկու հայկական պարավիթություններին¹²⁴:

Երբ Լեփսիոսը 1917 թ. հունիսին «Գերմանական առաքելություն Արեւելքում» կազմակերպությունից պաշտոնապես բաժանվեց, նա մինչեւ 1917 թ. դեկտեմբերը գրկված էր որեւէ վաստակից եւ իր ու ընտանիքի գոյատևման միջոցներից: Այդ շրջանում Լեփսիոսին եւ նրա հայանպասք նախաձեռնություններին նյութապես աջակցել են բրյուսելաբնակ «Մսրյան եղբայրներ» ֆիրմայի ներկայացուցիչ Արմենակ Մսրյանը եւ «Comite armenien de La Haye»-ի նախագահ Մ. Միքրդապյանը¹²⁵:

Ինչպես գիտենք, Բեռլինում Թուրքիայի նախկին ՆԳ նախարար եւ Մեծ վեզիր Թալաթ փաշայի գնդակահարությունից հետո Լեփսիոսը իրավական գաղտնի խորհրդական, դատապաշտպան Ադուֆ Ֆոն Գորդոնի միջնորդությամբ, որպես փորձագետ, հրավիրվեց դատավարությանը՝ իր բոլոր հնարավորությունները գործադրելով արդարությանը եւ Թեփլիբյանին ստարա լինելու համար¹²⁶: Նույնիս 2-ին դատարանի նախագահը Լեփսիոսին խնդրեց իր եզրակացությունը ներկայացնել Թեփլիբյանի եւ երկու հայ վկաների ներկայացրած տեղեկությունների հավաստիության վերաբերյալ, եւ նա հանդես եկավ մի ընդարձակ զեկույցով, որտեղ փաստերի շարադրանքին զուգահեռ մանրամասն պարզաբանումներ էին կատարվում նաեւ աքսորի իրականացման բուն շարժառիթների, բնույթի, ընթացքի եւ հետևանքների վերաբերյալ¹²⁷:

Վարպետ, Երևան, 2008, էջ 37:

123 Տն՝ „Deutschland und Armenien 1914-1918“, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919:

124 Տն՝ **H. Goltz**, *Zwischen...*, էջ 879: Նմմր. „Die Armenische Frage...“, էջ 603:

125 Տն՝ **H. Goltz**, *Zwischen...*, էջ 876:

126 Տն՝ **J. Lepsius**, *Der Prozeß Teilerjan-Talaat*, „Der Orient“, 1921, էջ 70:

127 Թուրքիայի՝ 1.400.000 արտոնված հայերից միայն 10 տոկոսը կարողացավ հասնել արտաքաղաք, նշում էր Լեփսիոսը, մինչդեռ 90 տոկոսը ճանապարհին սպանվեց կամ, բացառությամբ առեւտրված կանանց եւ երեխաների, զոհ դարձավ քաղցին ու ճանապարհի գրկանքներին: Ինչ վերաբերում էր աքսորավայր հասածներին, ապա նրանք եւս ոչնչացվեցին սովահարության եւ պարբերական կոտորածների միջոցով: «Երբ համակենտրոնացման ճամբարները նոր շարադրանքով էին լցվում, նշում էր նա, եւ մարդկանց բազմությունների համար այլևս տեղ չկար, նրանք խմբերով թշվում էին անապատները եւ այնտեղ մորթվում»: Այդ եւ նման փաստարկներով վերակերպվորելով զարհուրելի անցյալը Լեփսիոսը կատարում էր նաեւ պարզաբանումներ Նայակյան հարցի շահարկումների եւ մեծ տերությունների, մասնավորապես, Անգլիայի եւ Ռուսաստանի երկրիմի դիվանագիտական «խաղերի» վերաբերյալ, որոնց արդյունքում Թալաթի եւ իր կուսակիցների կողմից ծրագրավորվեց եւ իրագործվեց հայ ժողովրդի բնաջնջումը: Տն՝ „Gutachten von Dr. Johannes Lepsius“, անդ, էջ 88-95: Իր ելույթից հետո Լեփսիոսը դատարանին ներկայացրեց նաեւ աքսորի վերաբերյալ գաղտնի Թուրքիայի մարզային իշխանություններին Թալաթի ուղարկած հեռագրերը, որոնք սպառիչ կերպով փաստում էին հայ ժողովրդի ծրագրավորված բնաջնջման եւ այդ հարցում Թալաթի «հեղինակային» դերի վերաբերյալ՝ վկաների եւ անձամբ իր հաղորդած տեղեկությունները: Լեփսիոսն այդ հեռագրային հրամանները քաղել էր Արամ Անտոնյանի՝ 1920-ին Փարիզում լույս տեսած՝ «Documents officiels concernant les Massacres Armeniens» աշխատությունից: Տն՝ „Erlasse von Talaat Pascha in Sachen der Deportation des armenischen Volkes“. (Vorbemerkung), „Der Orient“, 1921, էջ 72:

Լեփսիուսի փորձագիտական եզրակացությունն ունեցավ կարեւորագույն նշանակություն այդ «արտասովոր» գործի շարժառիթների և ենթադրաբար վերաբերյալ դատարանին համալիր իրազեկում րալու առումով, և չնայած դատախազը համառոտն պահանջում էր Թեփլիքյանին դատապարտել գնդակահարության, վերջինս երդվյալ արենակալների որոշմամբ ազատ արձակվեց: Այդ աղմկահարույց «գործը», որի ավարտին լարված սպասում էին թե՛ աշխարհասփյուռ հայերը և թե՛ նրանց բարեկամ ու թշնամի շրջանները, պերք է նշանավորվել որպես ցեղասպանության անուղղակի ճանաչում դատարանի կողմից: Ուստի, պատահական չէ, որ Լեփսիուսը ձգտում էր, ինչպես հարկն է, ապահովել դրա հրապարակայնությունը: «Der Orient»-ի՝ 1921 թ. 6-րդ համարում նա հրապարակեց «Թեփլիքյան-Թալեաթ դատավարությունը» ծավալուն հոդվածը, որտեղ դատական գործընթացի լուսաբանման հետ մեկտեղ համակողմանի, մինչև իսկ կենսագրապարում րեղենկություններ էին հաղորդվում Թեփլիքյանի և Թալեաթի մասին, և վերջինիս հանցավոր անցյալի ու հայոց մեծ ողբերգության ֆոնի վրա պարզաբանվում էին նրա սպանության պարճառահերետանքային փոխառնությունները¹²⁸: Նույն համարում նա հրապարակեց նաև աքսորի կապակցությամբ Թալեաթի՝ րեղական իշխանություններին ուղարկած վերոնշյալ գաղարնի հեռագրերը¹²⁹, իսկ հաջորդ՝ յոթերորդ համարում բազմաթիվ հայ աքսորյալների վկայությունների հետ մեկտեղ լույս ընծայվեց նաև Լեփսիուսի՝ դատարանում ներկայացված ծավալուն զեկուցումը¹³⁰:

Սողոմոն Թեփլիքյանը հերագայում իր հուշերում Լեփսիուսի մասին գրում էր հետևյալը. «Վաթսուրը անց, բայց գեղեցիկ ճակար, կարճատես կապոյր աչքեր, մանկունակ բերան, ալեխառն կարճ մորուք, պիրկ ու խիստ այրեր, այսպես էր դեկտոր Եռհաննէս Լեպսիուսը: Նրա կարարած ջանքերի և դիմումների յիշարակը դեռ շար թարմ էր, ու հայերի երախարագիտութիւնը դէպի գերման հայրենասէրը՝ շար մեծ: ... Նա շար մեծ ծառայութիւն մարուցեց ճշմարտութիւնը պարզելու գործին՝ զինաղաղարից անմիջապէս վերջը հրապարակութեան րալով ջարդերի ու րարագրութեան շուրջ գերման արարաքին գործոց նախարարութեան մէջ եղած փասարաթղթերը «Deutschland und Armenien» մեծահարոր գրքով: Այժմ նա սկսեց իր խոսքը՝ սուր ակնոցների միջից կապոյր աչքերը կենրոնացնելով նախագահին վրայ»¹³¹:

Լեփսիուսի ելոյթը այնքան ընդգրկուն էր և այնպիսի մեծ ազդեցություն էր գործել ունկնդիրների վրա, որ նրան հաջորդող՝ մարշալ Լիման ֆոն Սանդերսի ելոյթը, որը փորձում էր երիտթուրքական կառավարությանը մեղքից բեռնաթափել և րեղի ունեցած ոճրագործությունները րեղական իշխանություններին վերագրել, ամենեւին համոզիչ չէր և որեւէ արդյունք չունեցավ: Ավելին, ճախողվեցին նաև Սանդերսի ելոյթի հիման վրա Լեփսիուսի րեղենկությունները վիճարկելու՝ դատախազ Գոլնիկի ջանքերը, որը պահանջում էր մեղավոր ճանաչել Թեփլիքյանին և գնդակահարության հոդվածը կիրառել նրա նկարմամբ: Ինչպէ՛ս էր դա րեսնում և գնահատում Ս. Թեփլիքյանը. «Ձանրերսի խօսքից յետոյ արեղծուեց մի կացութիւն, որ կարծես դարուողը ես չէի, այլ Թալեաթն ու ինքը: Անկապ, գուրկ ներքին համոզումից, ձեւական, անսիրտ և, որ գլխաւորն է, անճիշդ զեկուցումը ոչ մի ազդեցութիւն ունեցաւ: Ոչ միայն դատարանը, այլ և բանիմաց հասարակութիւնը հասկանում էր, որ չի կարելի

128 Տնն J. Lepsius, *Der Prozeß Teilerjan-Talaat*, „Der Orient“, 1921, էջ 65-72:

129 Տնն „Erlasse von Talaat Pascha in Sachen der Deportation des armenischen Volkes“, „Der Orient“, 1921, էջ 72-80:

130 Տնն „Gutachten von Dr. Johannes Lepsius“, „Der Orient“, 1921, էջ 88-95:

131 Տնն Սողոմոն Թեփլիքյան, Վերյիշումներ, Գաիկիւթ, 1956, էջ 366:

«զինուորական անհրաժեշտությամբ» մի ամբողջ ժողովուրդ ոչնչացնել, որ շիպակ չէ «վերին» պաշտօնեաների յանցանքը փաթաթել «վարին»ների վզին, երբ նրանք գործադրում են վերինների հրամանը, որ կարելի էր վերջ տալ սպանողին, եթե իրօք փեղափանության որոշումը գործադրում էր սխալ, որ անիմաստ է վերապահ լինել այդ որոշման հանդեպ ու մարտանշել «վար» գործադրությունը, որ վերջապես յերիւրում քաղաքական անցուդարձերի մեջ, այնուամենայնիւ, յանցանք չունէին հազարաւոր երեխաներն ու կանայք»¹³²:

Լեփսիուսի ելույթը երախտագիտորեն ընդունվեց աշխարհասփյուռ հայության կողմից, եւ նրանց շնորհակալությունը Լեփսիուսին հղվեց նրանց պաշտօնական ներկայացուցիչ Պոդոս Նուբարի միջոցով, որը 1921 թ. հունիսի 6-ին մեծ մարդասերին ուղարկեց հետեւյալ նամակը. «Սիրելի Կոբլը. Լեփսիուս, թերթերու մէջ կարդացի Թեփիլեանի դատաւարութեան ընթացքին Ձեր վկայութեան մանրամասն գեկուցումը: Անաչառութեան, արդարամտութեան ազնիւ զգացումով հիշատակեցիք ու դատաւարեցիք Էնվեր ու Թալեաթ փաշաներու հրամանով գործադրուած վայրագութիւնները, բացաւրելու համար արարքը անոր, որ Պերլինի դատարանը հանուած էր: Ձեր մեծ սիրտէն ուրիշ կերպ չէի սպասեր, յիշելով Ձեր քաջութիւնը ու անձնուրացութիւնը, որով Դուք երբեք չվարանեցաք սրանձնելու հայութեան պաշտպանութիւնը այնպիսի շրջանի մէջ, երբ այդպէս ձեռնարկ մը աղեկաբեր էր, մանաւանդ Ձեզ համար: Մեր հայրենակցին անպարտ արձակումը անգամ մը եւս ապացուցեց, որ դատաւորներ կան Պերլինի մէջ, եւ չեմ վարակուտեր, որ Ձեր միջամտութիւնը մեծապէս ծառայեց լուսաբանելու եւ շարժելու խիղճը անոնց, որոնք անմեղ հռչակեցին Թեփիլեանը: Իմ, Ազգային պարտիրաւութեան եւ համայն Հայութեան կողմէ, բոլոր սրտով Ձեզի կրեհայրենմ մեր խոր երախտագիտութիւնը շահագրգռութեան այս նոր փաստին համար, որ կրերէք մեր դատին ի նպաստ: Ընդունեցէք, սիրելի Լեփսիուս, իմ լաւագոյն զգացումները»¹³³:

Ս. Թեփիլեանի փեղեկություններն, ի դեպ, փաստում են, որ գերմանական հասարակայնությունը Լեփսիուսի «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության վերաբերյալ» գրքի միջոցով բավական լավ իրազեկված էր հայերի հանդեպ իրագործված ոճրագործությունների մասին: Քննիչը, որն առաջին անգամ փորձում էր հարցաքննել Թեփիլեանին, քաջաբեղյակ էր Լեփսիուսի հրապարակմանը: Թալեաթի թուրք ազգականի ներկայությամբ նա խիստ եւ չոր կեցվածք ուներ, իսկ երբ վերջինս հեռանում է, նա միանգամից փոխված, մեղմ վերաբերմունքով Թեփիլեանի մոտ խոսում է հայերի ոչնչացման մասին՝ հիշատակելով Լեփսիուսի անունը¹³⁴:

Թեփիլեանին բանտում այցելության եկած քահանան, որի պարտականությունն էր այցելել սպանություն կատարած բանտարկյալներին եւ Սուրբ գրքի խորհուրդը մատուցել նրանց, ինչպես ինքն է Թեփիլեանին հաղորդում, նույնպես Լեփսիուսի աշխատության միջոցով իրազեկ էր հայ ժողովրդի հանդեպ իրագործված ոճրագործությունների¹³⁵: Մինչեւ իսկ Թեփիլեանի բանտակից ընկերը՝ Լեփն անունով, նույնպես քաջաբեղյակ էր հայ ժողովրդի մեծ ողբերգությանը¹³⁶:

132 ՏՆՆ անդ, էջ 381-382:

133 ՏՆՆ «Ցոհանես Լեփսիուսը եւ հայ ժողովուրդը», Երեւան, 1998, էջ 46-47:

134 ՏՆՆ Սողոմոն Թեփիլեան, Վերյիշումներ, էջ 314:

135 ՏՆՆ անդ, էջ 328:

136 ՏՆՆ անդ, էջ 323:

Լեփսիուսը զինադադարից հետո նույնպես սերտ կապ էր պահպանում իր հայ բարեկամների հետ և ջանում էր, ըստ հնարավորին, իր ներդրումը բերել հայ ժողովրդին վերաբերող խնդիրների լուծման հարցում: ՏՏ պարվիրականությունը 1922 թ. ամռանը, նկատի ունենալով, որ Բեռլինը դարձել էր «ռուսական գործունեության կենտրոն», ձգտում էր իր գործունեությունը Գերմանիայում ակտիվացնել, ուստի իր անդամ Վահան Փափազյանին, որը մայիսի վերջին Բեռլին էր մեկնել, հանձնարարեց մնալ և գործել այնպես: Փափազյանը պետք է ջանար թուրքերից զիջումներ ձեռք բերելու հարցում Գերմանիայից աջակցություն ստանալ, և բացի այդ՝ կապ հաստատել բոլշևիկների հետ ու ըստ հնարավորին նրանց հետ բանակցել հայրենիքում նրանց և դաշնակցության գործունեությանը վերաբերող հարցերի մասին¹³⁷:

Բեռլինում ՏՏ դեսպան Ջ. Գրինֆիլդը Փափազյանին առաջարկեց նախ հանդիպել դր. Լեփսիուսին, որը, որպես «արեւելյան գործերի արխիվների վարիչ», աշխատում էր արագորձնախարարությունում, և նրանից տեղեկանալ արագորձնախարարության «տրամադրությունների մասին»:¹³⁸ Նրանք, ինչպես գիտենք, հին ծանոթներ էին: «Արտաքին գործոց նախարարութեան փոքր մը սենեակի մէջ հանդիպեցանք իրեն,- նշում է Վ. Փափազյանը:- Խոր ցաւի զգացումով և յուզումով դիմաւորեց զիս, ըսաւ կերկերուն ձայնով. «Լէփսո՛ւ, ձեր քրիստոնեայ ևս սքանչելի ժողովուրդը... դուք զոհ գացիք «քաղաքակիրթ» գիշարիչներու»:¹³⁹

Լեփսիուսը, ինչպես նշում է Փափազյանը, մեծ հավար չունէր իրենց կառավարության աջակցության վրա: «Գերմանիա ներկայիս ներքին և արտաքին քաղաքական և տնտեսական այնպիսի տագնապների մէջ է,- նրան ասել էր Լեփսիուսը,- որ չեմ կարծեր, թէ պետք եղած շոշափելի օժանդակութիւնը ի վիճակի ըլլայ տալու ձեզի»¹⁴⁰: Նա Փափազյանին խորհուրդ տվեց տեսակցել թուրքերի կողմից հեղինակություն համարվող և սիրված դր. Աշկեի հետ, որը գերմանա-թուրքական ընկերության նախագահն էր: Բացի այդ՝ նա խորհուրդ տվեց հանդիպել նաև ԱԳՆ Արեւելյան բաժնի ղեկավար Բլյուխերի հետ՝ ինչպես պարվիրականությանը շահագրգռող քաղաքական հարցերի, այնպես էլ անցագրային խնդիրների կարգավորման համար, քանի որ գերմանացիներն այլևս չէին ուզում ճանաչել Հայաստանի Հանրապետության անցագրերը¹⁴¹: Փափազյանը վարվում է, ինչպես նրան խորհուրդ էր տվել Լեփսիուսը:

Պողոս Նուբարի նախաձեռնությամբ 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը Փարիզում տեղի էր ունեցել հայկական մի համագումար, որին մասնակցում էին ինչպես հայկական գաղութների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները, և որի նպատակն էր մշակել մի միասնական մոտեցում խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի շահերը ներկայացնելու համար¹⁴²: Այդ օրերին, երբ որոշարկվում էր հայերին հասցված նյութական վնասի չափը¹⁴³, համագումարի մասինակիցներին հայտնի դարձավ, որ թուրքական կառավարությունը, պատերազմի ընթացքում տարագրված և բնաջնջված հայերի ունեցվածքի մի մասը դրամի վերածելով, ընդհանուր հաշվով 5 միլիոն թուրքական ֆունտ կազմող այդ

137 Տե՛ս Վ. Փափազյան, Իմ յուշերը, հր. Գ., Կահիրե, 1957, էջ 188:

138 Տե՛ս անդ., էջ 191:

139 Տե՛ս անդ.:

140 Տե՛ս անդ.:

141 Տե՛ս անդ.:

142 Տե՛ս անդ., էջ 44:

143 Ըստ համագումարի կողմից ընդունված ուսումնասիրությունների՝ դրանք կազմում էին մոտ 20 միլիարդ ֆրանկ: Տե՛ս անդ., էջ 55:

գումարը ներդրել էր Բեռլինի պետական բանկում: Տամագումարն անմիջապես այդ մասին տեղեկացնում է թե՛ Փարիզում գրավող հայկական պարվիրակություններին և թե՛ հայ ժողովրդի եւրոպացի ու ամերիկացի բարեկամներին՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայապարկան այդ գումարը հափկացվեր հայերի կարիքներին:¹⁴⁴ Գերմանիայում այդ մասին տեղեկացվում է դր. Լեփսիուսը: Շուրջ մեկ տարի անց, որ զինադադարից հետո Բրիտանիա տեղափոխված այդ գումարը 1923 թ. նոյեմբերի 23-ին Փարիզում ավտոագրված մի համաձայնագրով նախատեսվում էր օգտագործել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի քաղաքացիների՝ պատերազմի ընթացքում թուրքիայում ունեցած կորուստները հատուցելու համար:¹⁴⁵ 1925 թ. հունվարին, երբ այդ կորուստների հաշվառման նպատակով Փարիզում ձևավորվեց մի հանձնաժողով, Փարիզի՝ Նայ փախարականների կենտրոնական կոմիտեն հանդես եկավ վերջինիս ուղղված մի դիմումով, որտեղ փաստացի հիմնավորվում էր այդ դրամագլխի բուն պարկանելությունը և կոչ էր արվում դրա գեթ մի մասը վերադարձնել աքսորը վերապրած հայերին և շուրջ 100.000-ի հասնող հայ որբերին:¹⁴⁶

Լեփսիուսը թե՛ այդ կոչը և թե՛ դրամագլխի առաջացման շարժառիթները փաստող վկայություններն ամբողջությամբ հրապարակեց նաև իր պարբերականում:¹⁴⁷ միաժամանակ իր գորակցությունը հայտնելով ՏՓԿԿ-ին: Նրա համոզմամբ՝ այդ վկայություններից նույնիսկ միայն մեկը, որը կարարել էր Էրզրումի վիլայեթի վալի Թախսին բեյը, լիովին բավական էր հայկական կողմի պահանջն արդարացի համարելու և այն բավարարելու համար:¹⁴⁸ Լեփսիուսն այն միաժամանակ արժեւորում էր որպես հայ ժողովրդի զանգվածային տեղահանության և աքսորի մի նոր անառարկելի ապացույց, որը կարող էր օգտագործվել այն հերքելու ջանքեր կատարող՝ նորագույն շրջանի թուրք պարմաբանների և քաղաքագետների դեմ. «Այդ 5 միլիոն թուրքական ֆունտի ճակատագիրն ունի կարևոր փաստագրական արժեք, նշում էր նա իր մեկնաբանություններից մեկում, որովհետև Թախսին բեյի նամակում հաստատվում է թուրքերի կողմից հայերի ազգային ունեցվածքի կողոպուտը, և, բացի այդ, խոստովանություն է կատարվում նաև թուրքիայի հայության զանգվածային աքսորի մասին, ինչն առանց այդ էլ փաստարկման կարիք չունի: Յանկալի կլիներ, որ ինչպես անմիջապես պատերազմից հետո էր, ազնիվ թուրքերը երիտթուրքական կառավարության անարգ գործերն ընդունեն և դրանով գեթ անձամբ իրենց մաքրեն համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն հանցագործության մեղսակցությունից»:¹⁴⁹

144 ՏՆՆ անդ, էջ 293:

145 ՏՆՆ „Das Schicksal von 5 Millionen türkischen Pfund“, „Der Orient“, 1925, էջ 68-69:

146 ՏՆՆ անդ, 69-70:

147 ՏՆՆ անդ, էջ 68-70:

148 ՏՆՆ անդ, էջ 70: Խոսքը վերաբերում էր «Ջումհուրիեթի»՝ 1924 թ-ի դեկտեմբերի 19-ի համարում Թախսին բեյի կողմից հրապարակված հերքելի պետությանը, որը նա կատարել էր գոյության մեղադրանքից խուսափելու համար. «Միջևն արտաքին հրամանը Էրզրումի հայերն իրենց թանկարժեք քարերը և ոսկին անդորրագրերի դիմաց ավանդ էին րվել օրոմանյան բանկին: Աքսորից հետո ֆինանսների նախարարությունը օրոմանյան բանկից եր պահանջեց այդ պահ րված ունեցվածքը՝ վկայակոչելով «անարդ ունեցվածքը» վերաբերյալ օրենքը: Երբ բանկը հրաժարվեց, սկսվեցին երկարատև բանակցություններ բանկի դեկավարության և ֆինանսների նախարարության միջև, և, ի վերջո, նյութական երաշխիքների հիման վրա, որոնք ֆինանսների նախարարությունը րվեց, վճռվեց, որ հայերի՝ Էրզրումի օրոմանյան բանկում պահ րված ողջ ունեցվածքը փոխանցվի ֆինանսների նախարարությանը: րա հերքեանքով Ջեմալ բեյի՝ իրավասու գեներալի, միսրի Բալադյոյի Էրզրումի բանկային բաժանմունքի դեկավարի և Ջեմալ բեյի կողմից փաթեթները հարուկ կնիքով կնքվեցին, և Ջեմալ բեյը դրանք բերեց Կ. Պոլիս և հանձնեց ֆինանսների նախարարությանը՝ վերցնելով մի սրացական, որը դեմ գրվում է ինձ մոյ, և մի լուսանկար, որը նա պարբերաբար եմ հրապարակել»:

Անդ, էջ 69-70:

149 ՏՆՆ անդ, էջ 70:

Ուշագրավ է, որ նաև Լեփսիոսի մահից հետո, մասնավորապես՝ 1927-28 թվականներին այդ դրամագլխի խնդիրը շարունակում էր զբաղեցնել Դր. Լեփսիոսի ԳԱԳ-ին: «Լավագույն աղբյուրներից տեղեկանում ենք,- գրում էր ընկերության պարբերականը 1927 թ. հրապարակված՝ «Հայկական հարյուրավոր միլիոնների բանկային ունեցվածքը և Անգլիան» հոդվածում,- որ հայերի ժամանակավորապես արգելակալանքի տակ դրված նախկին բանկային ունեցվածքը՝ հավասարազոր 5 միլիոն անգլիական ֆունտի կամ 100 միլիոն մարկի, Անտանտի կողմից բռնագրավված է և անգլիացիներին խոստացվել է՝ որպես հատուցում Թուրքիայում կորած անգլիական ունեցվածքի դիմաց: Մենք չգիտենք՝ այդ ստույգ տեղեկություն է, թե ոչ, և դա պարզելու ակնկալիքով այն հանձնում ենք հասարակությանը»¹⁵⁰:

Որոշ ժամանակ անց կազմակերպությունը հայրարարում էր, որ այդ տեղեկությունը «Ծիշք է դուրս գալիս: Ոչ մի կողմից որևէ հերքում կամ ուղղում չի ստացվել: Թվում է, թե իրականում քաղաքականությունը և էթիկան ոչ մի կապ չունեն միմյանց հետ, եթե դա այսօրինակ տարրական իրավիճակում խափանվում է՝ հայերի միլիոնները թողնելով անգլիացիների ձեռքում»¹⁵¹:

Դր. Լեփսիոսի ԳԱԳ-ն այդ միլիոնների ճակատագրին հետևում էր նաև հերագայում ձգտելով հետամուտ լինել դրանց գեթ մասնակի վերադարձմանը, ինչը, սակայն, ինչպես հայրնի է, տեղի չունեցավ¹⁵²:

Գերմանիայում դրամի արժեզրկման շրջանում, երբ այնուհետ արտարժույթով կարելի էր համեմատաբար դուրսի կերպով ապրել, Լեփսիոսը խորհում էր նաև հայ որբերի տեղափոխել Գերմանիա և այնտեղ խնամել ու կրթել: «1923 թ. սկզբին լրջորեն կշռադատվում էր մի այդպիսի ծրագրի իրականացումը»,- գրում էր Լեփսիոսի հավատարիմ աշխատակից Ռիխարդ Շեֆերը¹⁵³:

Ննց այդ ժամանակ, 1923 թ. հունվարին, Լոզանում կայացավ մի խորհրդակցություն հայկական որբանոցներին վերաբերող հարցերի մասին: Դրան մասնակցում էին հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամներ Վիքրին, Բերրին, Մոնգոմերը, Կյունցլերը, իսկ հայկական կողմից՝ Նորատունկյանը, Խաչիսյանը և Փաշայանը¹⁵⁴: Ինչպես տեղեկացնում է Վ. Փափազյանը, այդ ժամանակ Լեփսիոսը Լոզան է ուղարկում նաև Շեֆերին՝ ներկայացնելով 400 երեխաների Բեռլին տեղափոխելու մի ծրագիր: Նա Լեփսիոսի անունից հայտնում է, որ այդ նպատակով նախատեսված էր Բեռլինում գնել 60 սենյակ ունեցող մի կալվածատուն, որն արժեր 6000 դոլար, իսկ որբանոցի տարեկան ծախսերը կազմելու էին 16.000 դոլար: Դր. Լեփսիոսը խնդրում էր, որ հայկական կողմը տար միանվագ 6000 դոլար, իսկ տարեկան 16.000 դոլարը նա հույս ուներ ստանալ ԱՄՆ-ում բնակվող գերմանացիներից: Շեֆերը նույն օրը երեկոյան դարձյալ տեսակցություն է ունենում Նորատունկյանի հետ: Որպես Մանասարյան

150 Stn „Die Armenische Hundertmillionen-Bankguthaben und England“, „Der Orient“, 1927, էջ 113:

151 Stn „Aus der Zeit“, „Der Orient“, 1927, էջ 132:

152 Բաղվիրը և Ազքուիթը,- տեղեկացնում էր ընկերությունը 1928-ին,- ... մի հուշագիր են հանձնել Մակդոնադի կաթիլների, որով պահանջվում էր 5 միլիոն թուրքական ոսկե լիրայի (որը թուրքական կառավարությունը 1916-ին որպես երաշխիք թողել էր Գերմանիայի պետական բանկում) գոնե մի մասը հարկացնել Նանսենի ծրագրին: Անհասկանալի է, թե ինչու այդ դիմումն իր նպատակին չհասավ»: Stn „Armenien. Die Beschlagnahme des armenischen Guthabens von fünf Millionen Pfund Sterling zugunsten englischer Interessen“, „Der Orient“, 1928, էջ 25:

153 Stn R. Schäfer, *Geschichte...*, էջ 117:

154 Stn Վ. Փափազյան, Իմ յուշերը, հր. Գ., Կահիրե 1957, էջ 292-293:

հոգաբարձության նախագահ՝ Նորարությունյանը համաձայնում է հոգաբարձության միջոցներից այդ դրամը փրամադրել Լեփսիուսին և նրա աջակցությամբ Բեռլինում 400 փղաների համար որբանոց-դպրոց հիմնել: Շեֆերն այնուհետև վերադառնում է Բեռլին, և շուրջ ավերվել սկսեին բանակցություններ այդ ձեռնարկի իրականացման համար¹⁵⁵, սակայն դրանք այդպես էլ չեն կայանում: Շեֆերն իր գրքում իր վերոնշյալ այցի և ձեռք բերված պայմանավորվածությունների մասին չի հաղորդում, այլ միայն նշում է, որ, ի վերջո, հարկ եղավ այդ ծրագրից հրաժարվել, բանի որ դրանով արարելիքից կախվածություն էր ի հայտ գալիս, բացի այդ որոշակի դժվարություններ էին առաջացնում սննդամթերքի բաշխման՝ առկա պայմանները, և դիմադրության էր հանդիպել նաև օպարագգի մեծաքանակ երեխաներին գերմանական առօրյայում ներգրավելն ու այդպիսով նրանց իրենց՝ արեւելյան կենցաղից ու բարքերից օպարացնելը:¹⁵⁶

Լեփսիուսն իր ծրագիրը, սակայն, շուրջով մեկ այլ եղանակով իրականացրեց: 1924 թ. օգոստոսին նա մեկնել էր Ժնև՝ այնպեղ սեպտեմբերի 2-ին գումարված հայկական միջազգային համաժողովում զեկուցում կարդալու համար: Այնուհետև կապ հաստատեց Մերձավոր Արևելքի նպաստամատույցի (Near East Relief) հետ, որ մեծածավալ որբախնամ աշխատանքներ էր իրականացնում հայերի շրջանում: Նա վճեց սրանձնել Ղազիրում (Լիբանան) այդ կազմակերպության հովանավորության ներքո գրավող 400 հայ որբերի խնամքը, ինչը և լավագույնս իրագործվեց¹⁵⁷:

Դր. Յոհաննես Լեփսիուսի հսկայածավալ և բազմակողմանի հայանպասք գործունեությունն, այսպիսով, հնարավոր դարձավ վերոնշյալ հայ գործիչների հետ համագործակցության արդյունքում, որոնք ոչ միայն իրենց աջակցությունն ու ներդրումն էին բերում Լեփսիուսի հայանպասք նախաձեռնություններին, այլև որոշակիորեն կամրջում էին նրան հայ իրականության հետ:



155 Տե՛ս անդ, էջ 293:

156 Տե՛ս R. Schäfer, *Geschichte...*, էջ 117:

157 Տե՛ս անդ, հմմտ. Վ. Փափազևան, Իմ յուշերը, հր. Գ., Կահիրե 1957, էջ 170-172:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈԼՈՍՅԱՆ

Պարմական գիր. դոկտոր

ՆԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՆԵ ՊԻՆՈՆԻ ՆԱՅՅԱԿԱՐԳԸ

Առաջին համաշխարհային պատերազմի փառիներին օգտվելով ընձեռված պատեհ առիթից՝ երիտթուրքերը վճռեցին ավարտին հասցնել Արդուլ Նամիդ II-ի հայաջինջ քաղաքականությունը եւ պերական մակարդակով սանձագերծեցին Մեծ եղեռնը՝ Ի. դարի առաջին ցեղասպանությունը: Ժան-Պիեռ Նարզուն այն իրավամբ բնորոշել է իբրեւ «օրինակելի» ցեղասպանություն¹, որն ըստ ցեղասպանության՝ իբրեւ երեւոյթի, ամերիկացի ճանաչված գիտակ Ռոբերտ Մելսոնի հայեցակարգի, հարկ է դասել համարարած (էթնիկական ընդհանրության համարարած բնաջնջման նպատակ հետապնդող) եւ ներքին (բնաջնջումն իրականացնող պետության փարածքում Գեղի ունեցած) ցեղասպանությունների շարքը²:

Ֆրանսիայում, ինչպես նաեւ այլ երկրներում, Նայոց մեծ եղեռնը աննկար չի մնացել: Տարբեր ֆրանսիացի գործիչներ, լրագրողներ, այդ թվում պարմարաններ, այս իրադարձությանը ոչ միայն անդրադարձել են իրենց ելույթներում, այլեւ գրքեր են նվիրել դրա ծավալման ընթացքի եւ առանձնահատկությունների բացահայտմանը³: Նրանց թվում նպարակահարմար ենք գտնում առանձնացնել Անրի Բարբիին եւ Ռենե Պինոնին, որոնց գրքերն ունեն ոչ միայն ճանաչողական նշանակություն, այլեւ աչքի են զարնում հեղինակների վերածական մոլեցմամբ⁴:

Ռենե Պինոնն առավել հայտնի է միջազգային հարաբերությունների, մասնավորապես Արեւելյան հարցի պարմությանը նվիրված իր գիտական ուսումնասիրություններով⁵, որոնցում Օսմանյան կայսրությունում Գեղի ունեցած խմորումներին (լինելով դրանց ժամանակակիցը) Գեղի է դիպուկ գնահատականներ: Այդ մասին վկայում են թուրքերին առնչվող նրա թեպետ հակիրճ, սակայն փոխարենը իրարեսական որոշ դիպարկումներ, որոնք աստիճանաբար, օսմանյան իշխանությունների ազգային քաղաքականության ծավալմանը զուգընթաց կրել են զգալի փոփոխություններ եւ վկայում են նրա հայացքների բարեշրջման մասին: Նախքան 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը՝ Օսմանյան կայսրության անցյալին քաջարեղյակ Պինոնը թուրքերի «քաղաքակրթական առաքելության» շուրջ հույսեր չի Գեղի: Դեռեւս 1908 թ. նրա աչալուրջ հայացքը կանխարեսել է իրադարձությունների զարգացման ոչ այնքան բարեհաճ հեռանկարը. «Ի՞նչ են անելու թուրքերը, եթե նրանք ի վիճակի չեն կերպարանափոխության եւ առաջադիմության, ինչպես կարծում են ոմանք. այդժամ հարկ է

1 Տե՛ս **J.-M. Carzou**, *Un génocide exemplaire. Arménie 1915*, Paris, 2006:

2 Տե՛ս **R. Melson**, “Problèmes soulevés par la comparaison entre le génocide arménien et l’Holocauste.— L’actualité du génocide des Arméniens”, *Actes du colloque organisé par le Comité de Défense de la Cause arménienne à Paris* les 16, 17 et 18 avril 1998, էջ 379:

3 Տե՛ս այդ մասին **R. Hovhannisian**, *The Armenian Holocaust. A Bibliography relation to the Deportations, Massacres, and Dispersion of the Armenian People, 1915-1923*, Cambridge (Massachusetts), 1980:

4 Ա. Բարբիի գրքի մասին Գեղի **Վ. Պողոսյան**, Նայոց ցեղասպանության ընկալումը Անրի Բարբիի կողմից. «Նախել աւսօրեայ», 2007, թ. 1-12, էջ 335-362:

5 Տե՛ս **R. Pinon**, *L’Europe et l’Empire ottoman. Les aspects actuels de la question d’Orient*, Paris, 1908. *Մույնի՝* *L’Europe et la Jeune Turquie. Les aspects nouveaux de la question d’Orient*, Paris, 1911:

սպասել սասարիկ ճգնաժամների»⁶: 1908 թ. Օսմանյան կայսրությունը ցնցած եղելությունները, որոնք հարկ է բնութագրել միայն իբրեւ միեւնոյն ընկերային-տնտեսական ֆորմացիայի ընդերքում տեղի ունեցած բուրժուական հեղափոխություն⁷, բազմափուլային ժամանակակիցների, անկախ ազգային և կուսակցական պարկանելությունից, մոլորության մեջ են ձգել: Ի տարբերություն այլոց՝ շար ավելի խոհեմ ֆրանսիացի պարմաբանը երիտթուրքական հեղափոխության հետ վարդազույն հույսեր չի կապել: 1911 թ. նա գերադասել է խիստ չափավոր կարծիք հայտնել այլազգի հպարակների հանդեպ երիտթուրքների որդեգրած քաղաքականության շուրջ. «Դեռևս շար վաղ է վերջնական կարծիք հայտնել երիտթուրքների գործունեության մասին, հեղափոխությունն ավարտին չի հասել, և մենք կարող ենք կանխատեսել, որ այն մեզ բազմիցս հնարավորություն կընձեռի իր մասին խոսելու. ցանկանք, որ այն լինի այնպիսին, որ իր մասին մեզ դրականորեն արտահայտվելու տեղիք տա»⁸:

Սակայն երիտթուրքների ազգային քաղաքականությունը չի հապաղել ամբողջությամբ ի հայտ բերելու ազգային փոքրամասնությունների նկատմամբ նրանց կիրառած այլապայաց քաղաքականության բուն դիմագիծը, ինչը Պիոնին դրդել է կռահելու «ազադական» գաղափարներ թեականորեն առաջադրած՝ Օսմանյան կայսրությունում իշխանության եկած նոր ուժերի քաղաքականության ազգայնամոլ բնույթը: Այդ մասին է վկայում Նայոց ցեղասպանության պատմությանը նվիրված՝ «Նայերի բնաջնջումը. գերմանական մեթոդ, թուրքական գործ», նրա փոքրածավալ, բայց արժեքավոր գիրքը⁹: Այն գրի առել 1916 թ., Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ. ծայր առած՝ արևմտահայերի զանգվածային կոտորածների և տեղահանությունների անմիջական պատվորության տակ. նա հիմնվելով տարբեր օտար ակնադետների անաչառ վկայությունների վրա՝ ոչ միայն հիմնավորապես բացահայտել է երիտթուրքների ցեղասպան քաղաքականության դիմագիծը, անկողմնակալ դիրքերից արժևորել Նայոց ցեղասպանությանն առնչվող բազում կարևոր հիմնախնդիրներ, այլև պախարակել Գերմանիայի խիստ ընդգծված թրքամետ դիրքորոշումն այս հարցում:

Իմաստ ունի նախ անդրադառնալ Ռ. Պիոնի՝ Նայոց ցեղասպանությանը վերաբերող գնահատականներին: Ֆրանսիացի պարմաբանը համառոտապես անդրադարձներ է կատարում հայերի և թուրքերի միջև դարերից ի վեր ձևավորված փոխհարաբերությունների «ցավալի և արյունոտ» պատմությանը, թուրքերի արելությունը հայերի նկատմամբ պայմանավորում վերջիններիս կրոնով, ինտելեկտուալ գերազանցությամբ, առևտրի և արհեստների բնագավառներում ունեցած ավելի բարձր ունակություններով (էջ 13-14): Միաժամանակ նա անավարան ընդգծում է նաև հայերի իրավագույն կացությունն Օսմանյան կայսրությունում, նշում, որ նրանց հանդեպ կիրառվող կոռուպտիվ և կոտորածը տեղի էր ունենում օսմանյան փարսիստական պաշտոնյաների հրահանգով կամ առնվազն թողութությամբ (էջ 14):

6 R. Pinon, նշվ. աշխ., էջ 574:

7 Բուրժուական հեղափոխությունների փառաբանության մասին տե՛ս **Մ. Ա. Բարգ, Ե. Բ. Черняк**, Великие социальные революции XVII-XVIII веков, М., 1990, էջ 224:

8 R. Pinon, նշվ. աշխ., էջ XIII:

9 Տե՛ս **R. Pinon**, La suppression des Arméniens. Méthode allemande – travail turc. Deuxième édition, Paris, 1916 (այսուհետ սույն գրքի մեջբերումները՝ շարադրանքի մեջ փակագծերով). Պիոնի այս գրքին Նայոց ցեղասպանության պատմագրության մեջ, ըստ դրա հայերեն թարգմանության (տե՛ս **Ռ. Քինոն**, Նայերու բնաջնջումը: Գերմանական մեթոդ - թուրքական գործակերպ, թարգմանեց Նուրադ Չոբուրեան, Կ. Պոլիս, 1919), հպանցիկ հայացք են ներկայացրել պատմագիտության մի քանի ներկայացուցիչներ՝ իրենց ուշադրությունը կենտրոնացնելով գլխավորապես Գերմանիայի հակահայկական քաղաքականության վերլուծության վրա. տե՛ս **Մ. Կարապետյան, Է. Գևորգյան, Է. Մելքոնյան, Ա. Արզարյան**, Նայոց Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010, էջ 48-49:

Ի սկզբանե նշենք, որ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին օսմանյան իշխանությունների պարբերաբար կազմակերպած՝ արեւմտահայության զանգվածային կոտորածները, թեւեւորդ Պինոն **ուղղակիորեն** չի դիպում իբրեւ միասնական գործընթաց, այնուամենայնիվ, հիշարակելով 1894-1896 թթ. եւ 1909 թ. հայկական կոտորածները (էջ 14, 16)՝ փաստում է, որ Միություն եւ Առաջադիմություն կուսակցությունը որդեգրել էր Հայկական հարցին՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծում տալու Աբդուլ Համիդ II-ի կյանքի կոչած փարբերակին (էջ 16): Դրանով իսկ օսմանյան փարբեր վարչակարգերի կողմից հայ ժողովրդի բնաջնջումը նա, փաստորեն, **անուղղակիորեն** ներկայացնում է իբրեւ թե՛ պետական քաղաքականության մակարդակով եւ թե՛ դիվրավորության հիման վրա տեղի ունեցած շարունակական իրադարձություն, որը ցեղասպանության՝ իբրեւ երեւոյթի, հիմնական բաղադրիչներից է:

Սույն գրքում արդեն երկրորդական վարչակարգը Պինոնը համարում է շատ ավելի «ճշող եւ բռնակալական», քան Աբդուլ Համիդի կառավարությունը: Համառոտակի անդրադառնալով 1908 թ. իեղափոխությանը հաջորդած՝ վերջիններիս սին, մասնավորապես «իրավունքի եւ ազատության» վրա հիմնված վարչակարգ հաստատելուն առնչվող հայրարարություններին՝ Պինոնը եզրակացնում է. «Նրանց սրեղծած պատրանքն արագ հողմացրիվ եղավ: Երկրորդական վարչակարգը... նեղվեց բացառապես մահմեդական, կենտրոնացնող եւ թուրքական քաղաքականության գիրկը» (էջ 15): Ըստ նրա շարադրանքի տրամաբանության՝ կարելի է հավաստել, որ այս միանգամայն իրատեսական հետեւությանը նա հանգել է՝ ելնելով գլխավորապես «1909 թ. Ադանայի կոտորածի» փորձից, որի պատասխանարվությունը, ի դեպ, իրավացիորեն բարդում է՝ դրանով իսկ իրենց հայապոյաց քաղաքականության էությունն անմնացորդ բացահայտած երկրորդների վրա (էջ 16):

Արեւմտահայության բնաջնջման գործում երկրորդական վարչակարգի ունեցած վճռորոշ դերի բացահայտման խնդրում Պինոնի գնահատականները հարու են եւ անողոք: Նշելով 1912-1914 թթ., մասնավորապես բալկանյան պատերազմների ժամանակաշրջանում, Օսմանյան կայսրությունում արեւմտահայության հանդեպ իրագործված բռնությունների՝ կողոպուտների, սպանությունների, բռնի կրոնափոխության, կանանց առեւանգման մասին, նա ոչ միայն բացահայտում է հայ ժողովրդի ոչնչացման փարատեսակ եղանակները, շարունակական բնույթը, այլեւ մոռացության չի մարնում եւրոպական տրեությունների միջամտության դրական հետեւանքները, ինչը խոչընդոտել է հայերի բնաջնջման գործընթացի ծավալումը այդ փարիներին: Արդյունքում նա հանգում է միանգամայն ընդունելի հետեւության՝ փաստելով, որ Հայկական հարցին թուրքական եղանակով «լուծում տալու», այն է՝ արեւմտահայության ցեղասպանության, ամենաուպարավոր առիթն օսմանյան կառավարությանն ընձեռվել է Առաջին աշխարհամարտի բռնկման իսկ պահից (էջ 9): Այդուհանդերձ, արձանագրելով սույն անհերքելի փաստը (էջ 9, 16), նա ձեռնպահ է մնում Հայոց ցեղասպանության պարճառների, մասնավորապես Օսմանյան կայսրության փարածքային ամբողջականության պահպանումն ապահովագրելու՝ օսմանյան փարբեր վարչակարգերի ցանկության մեկնաբանությունից, որոնք նրա համար, հավանաբար, դեռեւս եղել են անըմբռնելի:

Փոխարենը, ըստ բազում փաստերի՝ Պինոնը հիմնավորապես բացահայտում է հայ ժողովրդի ոչնչացումը երկրորդական վարչակարգի կողմից պետական քաղաքականության մակարդակով եւ կանխամրածվածության հիման վրա, ինչը նրա մտրեցման անժխտելի առավելություններից է. «Երբ խոսքը վերաբերում է կոտորածներին..., - գրում է նա, - Կոստանդնուպոլսի կարգադրություններին անշեղորեն հնազանդվել են: Իշխողների պատասխանարվությունը, այսպիսով, կատարյալ է եւ աններելի» (էջ 18-19): Միաժամանակ նա չի

անտեսում կապարածուների դերակապարությունը, որոնց ջանադրությունը, ինչպես նշում է, երբեմն գերազանցել է վերադասների ցանկությունը (էջ 19):

Երիտթուրքական կառավարության հայապայաց քաղաքականությունը Պիոնը մերկացնում է նաև 1914 թ. ձեռնարկված գորահավաքի մանրագին քննարկման հիման վրա, որն արեւմտահայության հանդեպ կիրառել է «անօրինական եւ ճնշող», «կամայական» միջոցառումներ, գորակոչելով փաստության քառասունութ տարեկան փղամարդկանց՝ գիտակցաբար խախտելով երկրում գործող՝ միայն քսանից մինչեւ երեսունհինգ տարեկան քրիստոնյա հայափակների գորակոչը նախատեսող օրենքը: Միաժամանակ նա փաստում է «գորակոչված» հայազգի փղամարդկանց զենք չհարկացնելու, սոսկ ամենաժանր աշխատանքներ կատարելու համար նախատեսված աշխատանքային շոկափններում նրանց ընդգրկելու իրողությունները (էջ 20-21): Դրանով հեղինակը բացահայտում է հայ բնակչությանը մարտունակ փղամարդկանցից զրկելու հարցում կառավարության դրսևորած վճռականությունը եւ հանգում փրամաբանական հետեւության. «Դժվար է ասել, թե արդյո՞ք այս դժբախտները զինվորներ էին, որոնց գորակոչել էին՝ երբեւէ նրանց վստահությունը շահելու համար ոչինչ չարած հայրենիքը պաշտպանելու նպատակով, թե պատանդներ, գրեթե դատապարտյալներ» (էջ 21):

Այդուհանդերձ, Պիոնի հիմնական նպատակը թե՛ 1915-1916 թթ. փողի ունեցած ողբերգական իրադարձությունների համայնապարկերի ուրվագծումն է եւ թե՛ դրանց պատասխանատվությունների առավել հիմնավոր դիմագերծումը: Այս խնդրում նրա նախընտրած մարտավարությունն ինքնավերջ է, քանի որ Մեծ եղեռնին առնչվող մանրամասները նա գերադասում է ներկայացնել անաչառ ականաբանների վկայություններից կատարված ընդարձակ քաղվածքների միջոցով: Նամոզված, որ «այս սարսափների եւ զարհուրանքների փաստաբաններին դեմհանդիման՝ հարկ է խոսքը փրամադրել ականաբան վկաներին» (էջ 30), հեղինակը հղում է կայսրության տարբեր վայրերում փողի ունեցած կոտորածների՝ գլխավորապես այլազգի ականաբանների հուշերը, որոնց թվում են Խարբերդում եւ Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոսները, գերմանական Կարմիր Խաչի նորվեգուհի բուժքույր Ֆլորա Յարլսբերգը, գերմանական տարբեր ամսագրերում տպագրված վկայությունների անհայտ հեղինակները եւ այլք (էջ 28-58), խուսափելով նրանց հաղորդած անկողմնակալ փողեկությունների վերաշարադրումից:

Պիոնն իր առջեւ խնդիր է դնում ըստ նշված սկզբնաղբյուրների վերլուծել Մեծ եղեռնի առանձնահատկությունները եւ տալ այն իրականացնողների անկողմնակալ գնահատականները, ինչը շատ ավելի արժեքավոր է: Ելնելով ականաբանների վկայություններում արձանագրված հավասարի փողեկություններից՝ նա շեշտում է գլխավորապես օսմանյան պետության կողմից կազմակերպված հայկական կոտորածների կանոնավոր եւ հետեւողական բնույթը, առաջնությունն այս հարցում հարկացնելով ոչ թե թուրք բնակչության՝ հայերի նկատմամբ դրսևորած վայրագության մոլուցքին, այլ երիտթուրքական կառավարության ղեկավար դերին. «Գործողությունը սկսվում է գյուղերում փակցված կառավարական ծանուցագրի հիման վրա. Կոտորանդնուպոլսի հրահանգները հասնում են բարձրաստիճան պաշտոնյաներին, իսկ նրանց միջոցով կատարածություններին... Ամեն ինչ փողի է ունենում սարսափելի հաջորդականությամբ», – եզրակացնում է նա (էջ 59)՝ բացառելով հայկական կոտորածների հարցում պատահականության հնարավորությունը:

Ֆրանսիացի պատմաբանը թեւեւ ամբողջությամբ, ինչպես վերը նշվեց, շրջանցում է Մեծ եղեռնի պարճառների բացահայտումը եւ քննարկումը, այդուհանդերձ, չի անտեսում երիտթուրքերի որդեգրած՝ թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա հայ ժողովրդի բնաջնջման փաստը (էջ 12): Նիմք ընդունելով հեղինակի շարադրանքը՝ կարելի է հավաստել, որ նա

ոչ միայն խորամուխ չի լինում թուրքիզմի գաղափարախոսության մեկնաբանության առեջքներում, այն չի դիտարկում իբրև արեւմտահայության եղեռնի հիմնական պատճառներից, այլև չի բացահայտում դրա եւ հայ ժողովրդի ողբերգության առանձնահատկությունների միջև առկա պատճառակցական, փոխադարձ եւ սերտ կապը: Այդուհանդերձ, նրա իսկ թվարկած փաստերն անուղղակիորեն եւրոպական հանրության սեփականությունն են դարձրել թուրքիզմի գաղափարախոսության հիմնական բաղադրիչները, որոնցով պայմանավորված էին արեւմտահայության բնաջնջման յուրահատկությունները: Պինոնը, օրինակ, թուրքիզմի գաղափարախոսությունը համարում է «հայերի սարսափելի տեղահանությունների պատճառը» (էջ 16), որոնց իր պատմումում հապկացնում է նշանակալից տեղ:

Հայերի զանգվածային տեղահանությանն առնչվող՝ կառավարության կայացրած որոշումը¹⁰ նա իրավամբ դիտում է իբրև երիտթուրքերի ձեռնարկած կանխամտածված քայլ, որի ընդունումը մեկնաբանում է, դրա համար ունենալով բոլոր իրավունքները, ռազմաճակատում դաշնակիցների կրած անհաջողություններով: «Իրենց չարագուշակ ծրագրերի իրականացման համար երիտթուրքերը սպասում էին միայն նպատարավոր առիթի», – նշում է նա (էջ 27): Ըստ այդմ՝ Պինոնը Հայոց ցեղասպանության իրականացման փորձեր եղանակների թվում մեծ տեղ է հապկացնում արեւմտահայության զանգվածային տեղահանությանը, մանրամասնելով հայերից բաղկացած քաղաքացիների գումարումը նշված ժամին եւ վայրում, ավարի իրենց բաժինը յուրացնելու ծարավի քուրդ ելուզակներին եւ ավազակներին նախապես տրված հրահանգները՝ հերթական անգամ հավաստելով պետական պաշտոնյաների ղեկավար դերը Հայոց ցեղասպանության իրականացման գործում:

Նարկ է չանդեսել՝ Պինոնի ուշադրությունից չեն վրիպել նաեւ թուրքիզմի գաղափարախոսությամբ պայմանավորված այլ էական հանգամանքներ եւս, ինչպիսիք են նրա թվարկած՝ Բոսնիայի եւ Մակեդոնիայի վարարանդի մահմեդականներին իբրև գաղութաբնակներ սպանված հայերի տներում բնակեցնելու, հայ կանանց եւ որբերին բժշկական քննության ենթարկելուց հետո կանոնավոր ձեռով թուրքերին բաշխելու, որբերի մի մասին՝ մահմեդականների համար նախատեսված մանկատներին հանձնելու եւ քրիստոնյաներին՝ որբացած մանուկների ճակատագրով հետաքրքրվելու արգելման իրողությունները (էջ 59-60): Այս հանգամանքները, որոնք Հայոց ցեղասպանությունն էականորեն զանազանում են փորձեր ժողովուրդների (մասնավորապես՝ միայն մահվան դատապարտված հրեաների) ցեղասպանություններից, ակնբախտորեն վկայում են հայ ժողովրդի՝ թուրքիզմի գաղափարախոսության հիման վրա տեղի ունեցած բնաջնջման մասին, գաղափարախոսություն, որը նախապեսում էր Օսմանյան կայսրության փարածքի մաքրագարողուն այլազգի հպատակներից, այդ թվում բոլոր ժողովուրդների ձուլման, այն է՝ թրքացման եղանակով: Ըստ այս ամենի՝ Պինոնը հանգում է միակ հնարավոր հետեւության. «Այսպիսին է հայ ժողովրդի համատարած բնաջնջումը, որին հետամուտ էին՝ մահվան կամ բռնությամբ իսլամի կրոնափոխելու միջոցով» (էջ 61, 71): Փաստելով նաեւ Հայոց ցեղասպանության գործընթացի հարատևումը 1916 թ.՝ նա մատնանշում է հայ ժողովրդի ոչնչացման շարունակումը տեղահանության քուղի տակ (էջ 71), ինչը համահունչ է ցեղասպանությունը դատապարտող՝ ՄԱԿ-ի Գլխավոր նախաշրջանի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործության

¹⁰ Նշենք, որ թեւ արեւմտահայության տեղահանության մասին օրենքն օսմանյան նախարարների խորհրդում ընդունվել է 1915 թ. մայիսի 14/27-ին, Պինոնը, սակայն, այս հարցում, ինչպես եւ իր ֆրանսիացի ժամանակակիցներից ոմանք (Ա. Բարբի, Է. Դումերգ), թույլ է տվել անճշություն՝ այն թվագրելով 1915 թ. մայիսի 20-ով (նույնիսկ 2-ով): Այդ մասին տես Վ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 344-345:

կանխարգելման և դրա համար պարբերական մասին» կոնվենցիայի երկրորդ հոդվածի երրորդ կետին¹¹, ըստ որի՝ փողախառնությունները հարկ է դիտել իբրեւ ցեղասպանություն:

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի համարարած ոչնչացման հետեւանքների առնչությամբ, Պինոնը՝ համոզված, որ «թուրքի համար, կառավարման արվեստը հանգում է ավերման», և հաշվի առնելով հայերի ունակություններն ու մրավոր կարողությունները՝ արձանագրում է. «Նարյուր հազարավոր հայերի կոտորածը կործանեց Ասիական Թուրքիայի ամբողջ արդյունաբերությունը և առեւտուրը»¹²: Այս եզրակացությամբ նա ի ցույց է դնում Օսմանյան կայսրության համար հայ ժողովրդի բնաջնջման խիստ բացասական հետեւանքները:

Պինոնն ուշադրությունը բեռնում է նաև արեւմտահայության փողախառնությանը հաջորդած շատ այլ իրողությունների, այդ թվում պետության կողմից և հոգուր պետության՝ ոչնչացված և փողախառնված հայերի սեփականության և անշարժ գույքի բռնագրավման վրա, սոսկ ակնարկելով, սակայն չմատչանալով, 1915 թ. սեպտեմբերի 26-ին Բարձր Դռան ընդունած՝ 11 կետից բաղկացած, «Այլ վայրեր փողախառնված անձանց ունեցվածքներին, պարբերներին և հավաքարմագրերին վերաբերող նախնական օրենքը»¹³, ինչն ինքնին հավասարում է պետական մարմինների անմիջական մասնակցությունն արեւմտահայության ունեցվածքի անթաքույց կողոպուտին:

Պակաս կարևոր չեն Պինոնի անդրադարձները՝ Նայոց ցեղասպանության պարմագրության ժխտողական ուղղության ներկայացուցիչների կողմից՝ ԺԹ. դարի 90-ական թվականներից առ այսօր, բազմիցս շահարկված հայկական ապստամբության վարկածին, որոնք պայմանավորում են նրա մոտեցման այժմեականությունը: Այս խնդիրն ուղղակիորեն առնչվում է արեւմտահայության բաղձանքներին, ուստի օրինաչափ է, որ դրանք եւս չեն վրիպել հեղինակի ուշադրությունից: Օսմանյան կայսրությունում բնակվող հայերին դիտելով իբրեւ «բավականին ուժեղ ազգային և քաղաքական խմբավորում»՝ Պինոնն արձանագրում է նրանց՝ բուն կայսրության տարածքում վարչական ինքնավարություն ձեռք բերելուն հանգող միակ ցանկությունը, որի իրականացման պարագայում հայերը կարող էին դառնալ «առաջադիմության խմորիչ և քաղաքակրթության օջախ»¹⁴: Իր հիմնական հետեւությունը նա հիմնավորում է եւրոպական պետությունների՝ Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի բարելավմանն ուղղված բարենորոգումների իրականացման նպատակ հետապնդող միջամտությամբ, ուշադրություն դարձնելով, մասնավորապես 1912-1914 թթ. այս ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին: Ուստի 1912 թ. Նայկական հարցի հանդեպ մեծ տերությունների ցուցաբերած հետաքրքրության նոր ալիքի վերհանման կապակցությամբ նա անվարան մատնանշում է «հեղափոխական ցանկացած մարտավարությունից» հայերի հրաժարման փաստը (էջ 8): Նա, թեև չի ժխտում նույնիսկ Առաջին աշխարհամարտի բռնկումից հետո հայ ժողովրդի համակրանքը Անտանտի տերությունների նկատմամբ, այդուհանդերձ մանրամասնում է, որ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերը, չնայած պարբերազմի սանձազերծումից ի վեր կառավարության՝ նրանց հանդեպ կիրառած ապօրինի և կեղեքիչ

11 Skn "Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества". Документы и комментарий, т. 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментарий доктор юридических наук, профессор Ю. Г. Барсегов, М., 2002, էջ 29:

12 R. Pinon, La suppression des Arméniens, p. 74.

13 Անդ, էջ 60: Օրենքի բնագիրը տես Ա. Պեղեղյան, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը Ֆրանսիական արևիվներում (1914-1918), հ. I: Փաստաթղթերի ժողովածու, Ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պոդոսյան, Երևան, 2005, էջ 107-109:

14 R. Pinon, նշվ. աշխ., էջ 6:

միջոցառումներին, պահպանել են, այդուհանդերձ, իրենց նվիրվածությունն օսմանյան պետությանը (էջ 20-21): Նրա եզրահանգումներից մեկը միանգամայն ընդունելի է եւ օրինաչափ. «Չնայած այդչափ տագնապալի նախանշաններին եւ կամայական գործողություններին, Հայաստանում ապստամբություններ տեղի չեն ունեցել» (էջ 22):

Արեւմտահայերի կազմակերպած դիմադրական շարժումները Պինոնը մեկնաբանում է նրանց նկատմամբ 1914 թ. դեկտեմբերից ի վեր կիրառված հանցափորձերով եւ կոտորածներով, որոնք նրանց դրդել են կայսրության տարբեր բնակավայրերում (Վանում, Զեյթունում, Մուշում եւ այլուր) դիմելու ինքնապաշտպանության. «Ամենուր, այս տեղական դիմադրությունները մարդկանց (որոնց հայրենի էր իրենց մահվան դատապարտված լինելը) օրինական պաշտպանությունները, ճնշվեցին աղյան մեջ», - նշում է նա (էջ 23):

Չնայած իրականությանն ամբողջությամբ համապատասխանող տարաբնույթի արժանահավատ փաստերի վկայակոչմանը եւ դրանցից բխող իրադրական նշված հետևություններին, Պինոնը հայտնում է սակայն նաեւ մեկ այլ, դրանց հակասող կարծիք, ըստ որի՝ «խիստ դժվար է ճշգրտորեն» սահմանել պատասխանատվությունների բաժինն առ այն, թե արդյո՞ք առաջին կոտորածը հաջորդել, թե նախորդել է դիմադրություններին: Ըստ նրա՝ այդ մասին վերջնական կարծիք հայտնելը դժվար է, քանի որ, ինչպես նա է մեկնաբանում, տարաբնույթ իրադարձությունները եղել են այնքան կապակցված եւ ինքնաբերական, որ «պարմությունը չի կարողանա դրանք սահմանագրել» (էջ 23-25): Պինոնն ամենեւին չի հանդիմանում հայերին՝ ջանալու համար «որոշ վայրերում կանխարգելել դահիճներին», միաժամանակ սակայն չի կարծում, որ որեւէ մեկն իրավասու է փորձելու պատերազմական գործողությունների ժամանակ ապստամբությունները ճնշելու հարցում թուրքերի պահվածքից, քանի որ դիմադրական շարժումները կարող էին ռազմաճակատներում նպաստել նրանց թշնամիների առաջընթացին:

Նման հակասական մեկնաբանությունները, հավանաբար, պայմանավորված են եղել դեռեւս առավել սուրճ տեղեկությունների բացակայությամբ: Այնուամենայնիվ, քննարկվող խնդրի շուրջ իր ունեցած տեղեկատվության շրջանակում անկողմնակալ եւ անշահախնդիր մոտեցում ցուցաբերող Փրանսիացի պատմաբանն անվերապահորեն փաստում է, որ «ապստամբություններն անգթորեն ճնշվել եւ մի ամբողջ անմեղ ժողովրդի կանոնավոր եւ բարբարոսական ոչնչացումը միմյանց հետ որեւէ առնչություն չունեն» (էջ 27): Արդյունքում, նրա վերջնական եզրակացությունը հնչում է իբրեւ դատավճիռ. «Երիտթուրքերի վարչակարգն ամբողջությամբ պատասխանատու է «Հայաստանի սարսափների» համար..., ոչինչ չի կարող ներել գորակոչված հայերի սպանությունն իրենց գինակիցների կողմից, երեխաների, ծերունիների կոտորածը, վերապրածների բռնի կրոնափոխությունը, կազմակերպված կոդուպուրը, ինչպես նաեւ այն զարշանքները, որոնց նկարագրությունից գրիչը խույս է տալիս եւ որոնք հարկ կլինի՝ հանուն մարդկության պատվի, ջնջել պարմության էջերից» (էջ 61):

Սույն հարցին շաղկապվում են երիտթուրքերի պարագլուխների՝ արեւմտահայության բնաջնջման շուրջ տված մեկնաբանությունները, որոնք եւս Պինոնը դարձրել է քննարկման նյութ: Նա հղում է Թալեաթի՝ գերմանական «Բեռլինի Թալեաթ» լրագրի թղթակցի հետ ունեցած հարցազրույցը, որի ընթացքում վերջինս հայտարարել է, թե իբր հայերի վտարումն իրենց երկրից (իմա՝ Հայաստանից) եւ Կոստանդնուպոլսից ու նրա արվարձաններից, բխել է ռազմական անհրաժեշտությունից, իսկ տեղահանությունների ընթացքում որոշ թուրքական պաշտոնյաների թույլ տված չարաշահումները նրան պարճառել են ավելի քան մեկ անբուն գիշեր: Պինոնը հողմացրիվ է անում Թալեաթի «կեղծավոր» ափսոսանքներն ու մեկնաբա-

նությունները՝ մալմանշելով հայերի ոչնչացմանը խոչընդոտելուն միտված նրա կրավորական դիրքորոշումը (էջ 62-63): Եթե հաշվի առնենք, որ ցեղասպանության պատմության կեղծարարները՝ արեւմտահայության տեղահանությունները հիմնավորելու համար հերազայում բազմիցս վկայակոչել են Թալեաթի առաջադրած միեւնույն սին թեզերը¹⁵, ապա ավելի քան ակնհայտ կդառնա այս խնդրի շուրջ Պիոնի՝ իրադարձության այլազգի եւ անաչառ ժամանակակցի, վերլուծական, քննադատական մոտեցման նշանակությունը եւ արդիական հնչելությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Ֆրանսիայում լույս ընծայված՝ Նայոց ցեղասպանությանը նվիրված պատմագիտական աշխատություններին խիստ բնորոշ է ընդգծված հակագերմանական միտումը¹⁶: Պիոնը բացառություն չի եղել, ուստի օրինաչափ է, որ նրա շանթերը չեն շրջանցել Անտանտի տերությունների գլխավոր ախույանին՝ Գերմանիային, որի արտաքին ագրեսիվ քաղաքականությունը ենթարկել է անողորմ քննադատության թե՛ լայն առումով եւ թե՛ խոսքը մասնավորեցնելով Նայկական հարցում գերմանական ղեկավար շրջանակների արգահատելի դիրքորոշման վերաբերյալ:

Լինելով դիվանագիտության պատմության մասնագետ, Ի. դարասկզբին Գերմանիայի լայնածավալ արեւելյան քաղաքականության հարցում ունենալով հիանալի կողմնորոշում՝ Պիոնը՝ Նայկական հարցում վերջինիս դիրքորոշումն ընդգրկել է ոչ միայն Մերձավոր Արեւելքում նրա զավթողական նկրտումների, այլեւ վարած արտաքին քաղաքականության ընդհանուր համատեքստում: Կասկած չգրածելով երիտթուրքերի կողմից Մեծ եղեռնի սանձազերծման խնդրում Գերմանիայի կրած «բարոյական պարասխանաբանություն» շուրջ (էջ 4, 13)՝ նա գերադասում է Օսմանյան կայսրության դաշնակցի՝ արեւմտահայության համար ճակատագրական հետեւանքներ ունեցած քաղաքականությունը պարճառաբանել գերմանացիների «քաղաքական շահախնդրությամբ», քանի որ վարչական ինքնավարության ձգտող հայերը կարող էին խոչընդոտել նրանց հիմնական նպատակների իրականացմանը՝ կապված Օսմանյան կայսրության փառաձեռքում տնտեսական եւ քաղաքական գերիշխանություն հաստատելու հետ (էջ 4-6): «Գերմանացիների շահերը հիանալիորեն ներդաշնակում էին թուրքերի դարավոր արելությունների հետ» (էջ 13), - նկատում է նա: Այս հանգամանքներն են պայմանավորում նրա գրքի՝ «Գերմանական մեթոդ, թուրքական գործ» խորագրի ընտրությունը:

Անդրադառնալով հայ ժողովրդի բնաջնջման ընթացքում Օսմանյան կայսրությունում գործող գերմանացի պաշտոնյաների եւ զինվորականների հանցավոր վարքագծին՝ Պիոնը հիմնավորապես բացահայտում է նրանց թե՛ կրավորական պահվածքը եւ թե՛ ուղղակի մասնակցությունը տեղի ունեցող կոտորածներին եւ ըստ փաստերի՝ հանցում տրամաբանական հետեւության, որ ցանկացած վայրագություն կատարվել է գերմանացի սպաների աչքի առջև, նրանց համաձայնությամբ կամ ուղղակի մասնակցությամբ (էջ 23, 64):

Առավել մեթոդաբանորեն Օսմանյան կայսրությունում հավատարմագրված գերմանացի դիվանագետներին տված նրա գնահատականները: Պիոնը պախարակում է, մասնավորապես փառքեր վայրերում՝ Նալեպում, Ուրֆայում եւ այլուր գործող գերմանացի հյուպատոսներին՝ կոտորածներին ունեցած գործուն մասնակցության համար, որոնք չեն զլացել քաջալերելու մարդասպաններին եւ նույնիսկ ուղղորդել են նրանց (էջ 64): Խոսքը մասնավորեցնելով

15 Stén opինակ՝ **P. Loti**, Les massacres d'Arménie, Paris, 1918. **E. Z. Karal**, Armenian Question, Ankara, 1975. **S. R. Sonyel**, Displacement of the Armenians. Documents, Ankara, 1978. Facts from the Turkish Armenians. **P. A. Moser**, Arméniens, où est la réalité? Saint-Aquilin-de-Pacy, 1980. **E. Uras**, The Armenians in History and the Armenian Question, Istanbul, 1988:

16 Stén Վ. **Պողոսյան**, նշվ. աշխ.:

Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմի թրքամեր դիրքորոշման վերաբերյալ՝ նա ըստ փաստերի բացահայտում է նրա վարքագծի առանձնահատկությունները: Նախ կռահելով, որ Վանգենհայմը եղել է ընդամենն իր պետության քաղաքականության իրականացնողն Օսմանյան կայսրությունում, Պինոն առաջին հերթին անարգանքի պյունին է գամում գերմանական կառավարությանը՝ նշելով, որ թեպետ դեսպանն իր մարդկային պարզքն է համարել փողեկացին իր պետության ղեկավար շրջանակներին օսմանյան կառավարության չարագուշակ ծրագրերի մասին, վերջինս այդուհանդերձ «պահպանել է լուրջություն կամ հավանություն փվել» այն ամենին, ինչ փողի էր ունենում (էջ 63): Ուշագրավ է նաև նրա հաղորդած փողեկություններից մեկը, ըստ որի՝ Վանգենհայմը հայցել է իր կառավարության միջամտությունը՝ կոտորածներին վերջ տալու, սակայն նրա խնդրանքին ոչ մի պատասխան չի հեղել (էջ 65): Ուստի նա փաստում է դեսպանի ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքը մահվան դատապարտված հայ ժողովրդի նկատմամբ, որը գերմանացի փառքեր հյուպատոսներից օր առ օր սրանալով հավասարի փողեկություններ կայսրության փառքեր վիլայեթներում իր պտրադասների «աչքի առջև փողի ունեցած մի ամբողջ ժողովրդի ոչնչացման մասին», ոչինչ չի արել այդ նողկալի արարքները կանխարգելելու կամ նույնիսկ դրանք մեղմացնելու համար:

Պինոն ծաղրում է Գերմանիայի կանցլեր Բեթման-Հոլվեգին ռայխսթագում հայտարարելու համար, թե գերմանացիները վերակենդանացրել են Թուրքիան: Ըստ նրա մեկնաբանության՝ իրականությունը բոլորովին այլ պարկեր է ի հայտ բերում. Գերմանիան շահագործել է Օսմանյան կայսրությանը՝ դրանից օգուտներ քաղելով սոսկ իր համար, այդ երկիրը հասցրել կործանման եզրին, իսկ Թուրքիայի «վերակենդանացումը գերմանական եղանակով հանգեցրել է կոտորածի, կողոպուտի և գողության» (էջ 73):

Ըստ այս ամենի, օրինաչափ ենք համարում դեռևս 1919 թ. Կոստանդնուպոլսում Պինոնի գրքի լույս ընծայումը հայերեն թարգմանությամբ. հավանաբար, Օսմանյան կայսրությունում իշխանության եկած քաղաքական նոր ուժերի կողմից 1919 թ. ապրիլ-հուլիս ամիսներին կազմակերպված երիտթուրքերի պարագլուխների դատապարտության¹⁷ արդյունքում¹⁸:

Միանգամայն ակնհայտ է նաև, որ թե՛ երիտթուրքերի ցեղասպան և թե՛ Գերմանիայի թրքամեր քաղաքականությունը հիմնավորապես անարգանքի պյունին գամող Ռենե Պինոնի գիրքը, առավել եւս Հայոց ցեղասպանության արժանահավատությունը ժխտող պարմագիպական ուղղության ներկայացուցիչների գործադրած գուր ճիգերի լույսի ներքո, պահպանում է իր այժմեականությունը: Ուստի փողերիս հեղինակի համոզմամբ, Մեծ եղեռնի հարյուրամյա փառելիցին ընդառաջ, նպատակահարմար է սույն գրքի վերահրապարակումը ֆրանսերենով:

17 Այդ մասին փեն «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատապարտության փաստաթղթերի». առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տ. Փափազյանի, Երևան, 1988:

18 Ռ. Բինոն, նշվ. աշխ.: Համեմատության կարգով նշենք, որ նույն ժամանակահատվածում Կոստանդնուպոլսում ամբողջությամբ կամ մասամբ լույս են տեսել նաև օգտար այլ հեղինակների՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք արժեքավոր գրքերի հայերեն թարգմանությունները, ինչը, անշուշտ, չէր կարող պարահականություն լինել: Տեն օրինակ՝ «Ամերիկեան դեսպան Սյո. Մօրկոնթաուի յիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները», թարգմանիչ՝ Ենովք Արմեն, Կ. Պոլիս, 1919. Ա. Մանդելսթամ, Օսմանեան կայսրութեան ճակատագիրը, առաջին մաս, «Երիտասարդ թուրքերը պարբերազմեն առաջ», թարգմանեց Միքայել Շամբանճեան, Կ. Պոլիս, 1919. Հայաստանի ջարդերը: Գաղտնի փողեկազիր փոթք. Եօհաննես Լեփախուսի, թարգմանեց Միքայել Շամբանճեան, Կ. Պոլիս, 1919:

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԼԻՍ ԵՒ ԿՏՈՒՑ ՄԵՆԱՍԱՐԱՆՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՕՐԵՐԻՆ

Նայոց վանքերի և մենասարանների մեջ կարելու էր ևս սպասելու, որ երբեք չեն ունեցել Վանա ծովակի Լիմ և Կրուց կղզիների Ս. Գևորգ և Ս. Կարապետ անապարները: Կղզիները գտնվում են Վանա լճի հյուսիսարևելյան կողմում և միջնադարում եղել են նշանավոր մենասարաններ, հոգևոր-մշակութային օջախներ՝ ըստ ավանդության հիմնադրված Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից: Սրանք նաև գրչության և ձեռագրապահպանման նշանավոր կենտրոններ էին, որոնցում գրվել, ընդօրինակվել, նկարագրվել ու կազմվել են բազմաթիվ ձեռագրեր: Քանի որ Լիմ և Կրուց մենասարանների պատմությունն ու նրանց դարավոր մշակութային գործունեությունը դուրս են մեր հոգվածի ուսումնասիրության շրջանակներից, ուստի ներկայացնենք միայն, թե ի՞նչ վիճակում էին գտնվում մենասարանները Մեծ Եղեռնի օրերին՝ մեծապես հիմնվելով մեզ հասած վկայությունների, ակնապեսների հուշերի, փրկվածների պատմածների վրա:

Նարեկ է նշել, որ բոլոր դարերում ասպատակությունների և կոտորածների ժամանակ Վանա լճի ափամերձ շրջանների հայ բնակչությունը ապաստանել է լճի կղզիներում: Մենասարանները թշվառ ժողովրդին փրկելու, ամբելու համար ոչինչ չեն խնայել. րվել են օթեան ու սնունդ, պահել ու պաշտպանել՝ մինչև վրանգն անցնելը: Նամիդյան արյունաբերու ջարդերի ժամանակ՝ 1895-1896 թթ., Լիմ և Կրուց մենասարանները կրկին սրանձնում են անպաշտպան բնակչությանը պապապարելու դերը, թեև ամբողջությամբ կողոպտվում են մենասարանների դրսի տները¹: Այս ժամանակ Աղթամարի վանքը հայտնվում է բավականին ծանր վիճակում: Արսեն վրդ. Մարգարյանը Ս. Էջմիածին ուղարկած վիճակագրական իր տեղեկագրի մեջ (1896 թ., հուլիս) նկարագրում է Վասպուրականի տարբեր գավառների տիրույթի վիճակը համիդյան կոտորածների ժամանակ և դրանից հետո: Աղթամարի մասին նշում է, որ միաբանները, զգուշանալով քրդական նավերի հարձակումներից, տեղափոխվել են Կրուց, իսկ վանքի դրսի տները, ուր գտնվում էին վանքապատկան հարստությունները, պահվում վանքի անասունները, ամբողջությամբ թալանվել է²: Աղթամարի վերջին կաթողիկոսը՝ Խաչատուր Շիրոյանը, վախճանվում է 1896 թ., և երբեմնի ծաղկուն վանքը իր գոյությունը շարունակում է բավականին խղճուկ վիճակում՝ ունենալով մի քանի միաբան: Կաթողիկոսական տեղապահ նշանակվում է Արսեն վրդ. Մարգարյանը³: 1909-ից նրան հաջորդում է Նովատի եպիսկոպոս Խոստիկյանը⁴:

1915 թվականը դարձավ հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ ամենաողբերգականը: Օսմանյան կառավարության հրամանով սկսվեց հայ ժողովրդի բնաջնջումն իր իսկ

1 Վանա լճի երեք վանքերն էլ ունեցել են դրսի տուն՝ շինված ծովափին վանքերի տնտեսական կառույցների համար: Դրսի տները բաղկացած էին միաբանների համար կացարան-շենքերից, մթերքի շրմարաններից, գոմերից, ունեցել են նաև դպրոցի շենքեր և համարվել են կղզիների նավահանգիստները:

2 Տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, վավ. 236, թ. 18, 31, 33: ՆԱԼ, ֆ. 57 (Կաթող. դիվան), ց. 5, գ. 4, թ. 4-5:

3 1909 թ. եղևափոխական գործիչ Իշխանը իր համախոհներով հաստատվում է Աղթամարում: Իշխանի և Արսեն վարդապետի միջև լինում է անհաշտություն, և վերջինս սպանվում է: Տե՛ս **Ռ. ՈՐԲԵՆ**, Նայ յեղևափոխականի մը յիշատակները, հ. 2, 1983, Բեյրութ, էջ 132-133: «Արարատ», Վաղարշապատ, 1909, էջ 825-826:

4 Տե՛ս «Արարատ», 1896, էջ 245-249, 1911, էջ 285-287:

բնօրրանում: Վասպուրականի մի շարք շրջաններում կոտորածները կազմակերպում է Ջեդեթ բեյը՝ իրեն աջակից ունենալով զորավար Նոգալեսին⁵: Հայկական բնակավայրերի վրա հարձակվում էր թուրքական կանոնավոր բանակը՝ զինված հրացաններով և թնդանոթներով, որին միանում էին շրջակայքում ապրող զինված քրդերը: Քանի որ Առաջին աշխարհամարտի զորահավաքի պատճառով հայկական գյուղերում քիչ տղամարդ էր մնացել, սակավ էին նաև զենքի պաշարները, ուստի գրեթե անհնար էր դարձել մի քանի հազարի հասնող կանոնավոր թուրքական զորքի և նրան միացած քրդերի դեմ պայքարելը: Խաթարվում է հայկական գյուղերում խաղաղ կյանքը, անմեղ հայ բնակչությունը գոհ է դառնում թուրք և քուրդ վայրագ խուժանի աներեւակայելի բարբարոսություններին: Այնուհանդերձ, հայերը դիմադրություն են ցուցաբերում և կռվում մինչև իրենց արյան վերջին կաթիլը: Բնակիչների մեծ մասը, հանուն ազգի և քրիստոնեական հավատքի, նահապտակվում է. փրկվել կարողանում են միայն սակավաթիվ անձինք: Բնակչությանը կոտորելուց և տրեղահանելուց հետո թշնամին թալանում էր տները, քանդում և հրկիզում եկեղեցիները, ոչնչացնում դարերով կերպոված մշակույթի մեծարժեք նմուշներ: Ընդ որում՝ նախապես հրաման կար, որ ոչ մի թուրք կամ քուրդ որեւէ հայի կյանքը չփրկի. «...դարապեկցի քիւրտ մը կը պահէ երկու հայ, կիմանան ու նախ քիւրտին կը սպաննեն և ապա հայերուն»⁶: Երբ Լիմ անապատի դրսի տան մոտակայքում չորս զինված հայ տղամարդու հաջողվում է հարձակվել թշնամուն փամփուշտ տանող թուրք ոստիկանների վրա և խլել արկղերը, դրանցից մեկի մեջ գտնվում է Ջեդեթի գրությունը, որում հայտարարված էր ջիհադ (իմա՝ սրբազան պատերազմ) և հրահանգված էր անխնա կոտորել բոլոր հայերին՝ առանց սեռի և տարիքի խտրության⁷:

1915 թ. ապրիլյան դժնդակ օրերին Վանա լճի ափամերձ հայ ազգաբնակչության համար Լիմ և **Կարուց կղզիները** դարձան օթեւան: Այստեղ կարողացան պաշտպանվել, իրենց կյանքը փրկել ափամերձ գյուղերից հազարավոր հայեր: Ժողովուրդը գյուղից գյուղ փախչելով, իրար օգնելով մոտենում էր ծովափին՝ Լիմ կամ Կարուց հասնելու նպատակով: Լիմ անապատի վանահայր Նովհանեսն վրդ. Նյուսյանը Ամենայն հայոց Գեորգ Ե. Կաթողիկոսին հղում է հետևյալ հեռագիրը. «... Վասպուրականը որպէս ապարամբ և հակառակ ներկայացուցում է թուրք կենդրոնական կառավարութեան, և արքայավաւեր հրովարտականով ազատ ու համարձակ սկսեալ ապրիլ 6-էն մինչ ապրիլ 14-ը, այս փողերը գրուած րոպէին տակաւին կկոտորուին անմեղ հայեր, և քար ու հողը կներկուի հայու անմեղ արիւնով: Միմիայն մօտ 3000 երիտասարդներով և նոյն թուով կոյսերով և հարսներով պատուած ծրարուած կամք Լիմ Անապատի կղզիի մէջ՝ համրելով օրհասականին: Ոչ մի կողմէ օգնութիւն, ոչ մի կողմէ փրկութիւն Աստուծմէ ի գալ, ի սէր Աստուծոյ, Հայր, Հայր ողորմէ մեզ, անմիջական և երազահաս ըրէ օգնութեան Ձեռքը և փրկութեան ժամը...» (14 ապրիլ, 1915 թ.)⁸: Նովհանես վանահայրը սրբեցված դժոխային իրավիճակում հոգում էր թե՛ վանքի շեն մնալու, թե՛ ձեռագրերի և թանկարժեք սպասքի պահպանման, թե՛ հազարավոր անմեղ հայերին Լիմում ապաստան տալու և մահից փրկելու խնդիրները: Կոտորածի ամենածանր պահերին նա կա-

5 Չորավար Նոգալեսն ուղղարկված էր Գերմանական կառավարության կողմից: Տարիներ անց նա հեղինակում է գիրք, որի մի հատվածը վերաբերում է Վանի կոտորածներին և վանեցիների ինքնապաշտպանությանը. տե՛ս **Rafael de Nogales**, *Four Years Beneath The Crescent*, London, 1926:

6 «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ (փաստաթղթերի ժողովածու), Երևան, ՀԱՄ, 2012, կազմ.՝ Գ. Ավագյան, խմբ.՝ Ա. Վիրաբյան, հ. Ա., Վանի նահանգ, էջ 110:

7 Տե՛ս անդ, էջ 132:

8 «Արարապ», 1915, էջ 177-178:

բողացավ կազմակերպել պաշտպանություն, նավեր ուղարկել ափ ու հնարավորին չափ շար հայերի բերել կղզի: Անապարը վեց նավ ուներ, նավեր կային նաև ափամերձ գյուղերում:

Լիմ եւ Կրուց կղզիներում պաշտպարվելու մասին հեղափոխություն վկայել են իրենք իսկ՝ փրկվածները: Լիմ կարողացել են փրկափոխվել հարկապես **Թիմարի** շրջանի⁹ գյուղերից: Այսպես, ապրիլի 8-ին մոտ 500 զինված թուրքեր ու քրդեր հարձակվում են **Աստվածածին (Ասպարածին կամ Տիրամայր)** գյուղի վրա, ուր նրանց դիմադրում են շուրջ 30 զինված փղամարդ, կանայք եւ երեխաներ: Սակայն դիմադրողների քչության եւ զենքի պակասության պատճառով՝ գոյամարդը միայն մի քանի ժամ է փրկում: Գյուղի ողջ բնակչությունը մարմնավում է թշնամու վայրագություններին: Բնակիչներից միայն մի փոքր մասն է փրկվում՝ այն էլ մի կերպ հասնելով ափ եւ Լիմից ուղարկված նավերի շնորհիվ հասնելով կղզի: Վերապարձները վկայում են հերելայալը. «Իրիշար գիւղի քիւրդ աղան մօր 500 միլիներով ապրիլ 8-ին կը յարձակօի գիւղին վրայ: Գիւղին մէջ գրնուած մօր 30 զինուած փղամարդիկ կը դիմադրեն եւ կարգիլեն մի ժամանակ թիւրքերու ներս խուժելը, սակայն դիմադրօթիւնը միայն երեք ժամ կը տէւէ: Դիմադրողները թէ՛ քջօթեան եւ թէ՛ փամփուշտի պակասօթեան պատճառաւ կընկրկին ու ասոնցմէ մաս մը միայն կը ճողոպրի, իսկ մնացած խոշոր մեծամասնօթիւնը կիներու եւ երեխաներու հետ կը մարմնօին թիւրքերու վայրագօթեանց: Թիւրքեր ազատօրէն գիւղը մտնելով կը սկսին անխնայ կոտորել: Բնաջինջ կըլլայ գիւղի բնակչօթեան մեծագոյն մասը, մի մասին կը լեցնեն ծովը, ոմանց կը մորթեն, կայրեն եւ այլազան տանջանքներով կսպանեն: Ջահել կիները կը մնան ձեռքերնին եւ փրկի կունենան բռնաբարումներ եւ առեւանգումներ: Գիւղի բնակիչներէն մէկ մասը միայն կը յաջողին հասնիլ ծովափը ու փոխադրուի մօրիկ Լիմ կղզին»¹⁰: Եւ մեկ վերապարձ Ասպարածին գյուղի կոտորածի եւ Նովհաննես վանահոր ուղարկված օգնության մասին պատմում է հերելայալը. «Պաշարում են գյուղը, սկսվում է կռիվը 400-500 թուրք եւ քուրդ հրոսակների եւ 25-30 հայերի միջեւ: Ահավոր դրություն էր: Թշնամին շրջապատել էր. միայն մի ճանապարհ էր մնացել, այն էլ՝ ծովն էր: Տղաները որոշում են մինչեւ վերջ կռվել: Բայց դրությունը հուսահատական էր: Եւ ահա՝ հրաշք պատահեց: Մեր վանահայր Նովհաննես ծայրագույն վարդապետ Նյուսյանը կազմակերպեց օգնությունը, եւ նավով գնացինք, հասանք օգնության Օվուհի խմբի փղաներին (իմա՝ Նովհան Դարբինյանի խմբին - Լ. Թ.):»¹¹:

Թուրք եւ քուրդ խուժանին դիմադրելու համար փրկարկիպցի Սիրուն Սարոյանը (ղաջնակցական) մեկտեղել է հավաքում Թիմարի շրջանի **Սոսրաթ, Շահգալդի, Գոմս եւ Փիրկարիպ** գյուղերի բնակչությանը եւ փորձում առաջանալ դեպի Լիմ: Թեեւ ճանապարհին նրանք ենթարկվում են թուրք-քրդական զորքի հարձակմանը, սակայն կղզուց նրանց օգնության են հասնում շուրջ 60 զինյալներ. «Կռիւր կը տէւէ ամբողջ օրը, հայերը հերզհեպտ կը թուլանան, բայց նոյն միջոցին Լիմ կղզիէն օգնօթեան կը հասնի ալջաւագի «Կոպիպ» խումբ կոչուածը (իմա՝ Նովհան Դարբինյանի խումբը - Լ. Թ.), որ ուներ մօր 60 զինուած ու կտրիճ կռուողներ»¹²:

9 Թիմարի գյուղախումբը կամ գավառակը գրնվում էր Վանի նահանգում, Վան քաղաքից հյուսիս, Վանա լճի արեւելյան ափամերձ շրջանում, Լիմ կղզու դիմաց: Համապատասխանում էր Մեծ Հայքի պատմական Վասպուրական աշխարհի Բոզունիք գավառին եւ Արշերան գավառի մի հատվածին:

10 «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 109-110. Ղեկնող քահանա Սարուխանյանը եւ իրիցիկները համառոտ կերպով շարադրել են Թիմարի որոշ գյուղերում փրկի ունեցած կոտորածի մասին: Տե՛ս նաև Ահարոն Գրիգորյանի վկայությունը, անդ, էջ 121-123:

11 Վահան Կորյանյանի վկայությունը տե՛ս **Վ. Սվազյան**, Հայոց ցեղասպանություն. ակնապրեստ վերապրողների վկայություններ, Երևան, 2011, էջ 128:

12 Ղեկնող քահանա Սարուխանյանի եւ երեցկնոջ վկայությունը. «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 110-111:

Թշնամին փորձում էր գրավել նաև Լիմ անապատի դրսի փունը, որպեսզի փակեր փրկության ճանապարհը, սակայն հայերին հաջողվում է իրենց ձեռքում պահել դրսի փունն ու նավերով փրկափոխվել կղզի¹³: Այն մասին, որ **Գոմսի** բնակիչների մեծ մասը այլ գյուղերից փախածների հետ կարողացել է դիմակայել 1500-ից ավելի զինված թուրքերին ու քրդերին և պարսպարվել Լիմում, վկայում է նաև Մկրտիչ քին. Խաչապոյանը. այսպես, 20 զինված երիտասարդներ երեք ժամ ուժեղ դիմադրություն են ցույց փայլիս և, պաշարման շղթան պարտելով, դուրս գալիս ու, միանալով ծովափին խռնված ժողովրդին, շարժվում դեպի Լիմ անապատ¹⁴:

Ասպարաժինը և հարեան գյուղերը ավիրող ամբոխն այնուհետ հարձակվում է **Ջանիկ, Քոչյան** և մերձակա գյուղերի վրա: Բնակչությունը դիմում է ինքնապաշտպանության, սակայն մեծ մասը կորորվում է: Սակավաթիվ մարդկանց է հաջողվում մոտենալ ծովափին և այնտեղից անցնել Լիմ¹⁵: **Ափեր** և հարեան ութ գյուղերի երիտասարդությունը երեք օր հերոսաբար դիմադրում է շուրջ 3000 թուրք զինվորներին և քրդերին՝ զինված հրացաններով և 2 թնդանոթներով. գոյամարտի ընթացքում հայ բնակչությունը քաշվում է Լիմ անապատ և փրկվում կորորածից¹⁶: **Էրերին (Էրերնա)** գյուղի բնակիչները, կռահելով իրենց վերահաս ճակատագիրը, նախապես պարտաստվել էին պաշտպանության: Մտնելով գյուղ՝ թշնամին սկսում է անխնա կոտորել մարդկանց և հրկիզել փները: Գյուղից մի խումբ զինված այրեր բարձրանում են մոտակա Ս. Սահակ վանքի լեռը՝ իրենց երեսից փանելով թշնամուն. անհավասար մարտում նրանք բոլորն էլ նահապտակվում են: Գյուղացիների զգալի մասը, թեև թշնամու վայրագություններին ենթարկված, կարողանում է փրկափոխվել Լիմ, իսկ նրանք, որ ինչ-ինչ պարճառներով մնում են գյուղում, անգթորեն սպանվում են¹⁷:

Խժիշկը ափամերձ գյուղ էր. ուստի այլ գյուղերից շարերն այստեղ էին փախչում՝ Լիմ հասնելու հույսով: Ինչպես հետագայում պարզվում են այս գյուղից փրկվածները՝ կղզին իրենց միակ ապավենն էր, սակայն այնտեղ հասնելու համար նավեր չունեին: Բարեբախտաբար գյուղ են գալիս 5-6 նավ, որոնք փրկափոխում էին Ալջավազի հայերին. վերջիններս միանում են Խժիշկում հավաքվածներին: Նախորդ առավոտ թշնամու շուրջ 1500-ի հասնող կանոնավոր զորքը պաշարում է գյուղը: Դիմադրողները սակավաթիվ էին, և օրհասական այդ պահին նրանց են միանում ալջավազցի, արճեշցի ու փիրկարիպցի զինյալներ՝ Սիրունի և Նովհանի զլխավորությամբ: Ջինված երիտասարդները ամբողջ մեկ օր դիմադրում են, մինչև կանայք ու երեխաները նավերով հասնում են Լիմ իրենց հետ փանելով նաև այլուր և այլ մթերքներ: Դիմադրության երրորդ օրը կռվողները եւս, փնտնելով որ անհնար է դառնում հակադարձել սրվարացող թշնամուն, նավերով հեռանում են կղզի¹⁸:

Այսպիսով, Թիմարի շրջանի **Աստվածածին, Սոսրաթ, Շահգալդի, Գոմս, Փիրկարիպ, Ջանիկ, Քոչյան, Ափեր, Էրերին, Խժիշկ** գյուղերից մի քանի հազար մարդ է փրկվում՝ Լիմ գնալով: Թիմարի շրջանից ոմանք էլ հասնում են Վան և միանում Այգեաբանի դիմադրողներին¹⁹:

13 Փիրկարիպի կորորածի մասին փեն նաև Նովհանեն Մանուկյանի վկայությունը, անդ, էջ 144:

14 Մկրտիչ քին. Խաչապոյանի վկայությունը, էջ 125-126:

15 Արմենակ Միրոյանի և Մկրտիչ Սարգիսյանի վկայությունները, էջ 142-147:

16 Գրիգոր Խաչապոյանի վկայությունը, էջ 123-125:

17 Լուսիկ Շահբազյանի, Գրիգոր Նազարյանի, Վարդան Գալուստյանի վկայությունները, էջ 126-131:

18 Մովսես Դավթյանի, Վարդան Նովհանեյանի, Բարսեղ Սահակյանի վկայությունները, էջ 132-135:

19 **Ա. Փոխարեն**, Ինքնապաշտպանության կոչներ Արճակի շրջանում և Թիմարում. «Աստապուրական» (հոգվ. ժող.), Վենետիկ - Ս. Ղազար, 1930, էջ 52-54:

Արճեշի գավառակում²⁰ հայ ազգաբնակչությունը եւս դիմել է ինքնապաշտպանության, սակայն զենքի պաշարների բացակայության պարճառով գավառակի հայությունը ենթակա դարձավ թշնամու բռնություններին. գրեթե բոլորին դաժանաբար կոտորեցին, շար կանանց եւ երեխաների գերի փարան՝ պարտադրելով մահմեդականություն ընդունել: Փրկվել կարողանում են սակավաթիվ մարդիկ՝ կա՛մ թաքնվելով անմարդաբնակ վայրերում, կա՛մ գերության մեջ մնալով մինչեւ հայ կամավորների եւ ռուսական զորքերի գալը, կա՛մ ապավինելով Լիւմ անապատին: Արճեշի **Տաղի** գյուղից մի փրկված վկայում է, որ «կարգ մը ընտանիքներ փախչելով նստով անցանք Լիւմ»²¹:

Արծկե-Ալջավազի²² գավառակում թուրք-քրդական ավագակախմբերի հեղ բախումներ լինում են դեռեւս փերիվար ամսին: Ժողովուրդը պայքարի է դուրս գալիս մի քանի հարյուրի հասնող թշնամու դեմ, որ մտնում էր հայկական բնակավայրերը՝ իրականացնելու թուրքական կառավարության վայրագ հրամանը. «Ամէն տուն 20-30 քիւրտեր կը լեցունին, ամէն գազանութիւն ի գործ կը դնեն գիւղացոց վրայ, կը թալանեն, կը բռնաբարեն, կը կոտորեն, կը ծեծեն»²³: Այս ժամանակ է, որ Արծկե-Ալջավազի բոլոր գյուղերի մեջ կազմվում են մարտական-դիմադրական զինված խմբեր՝ արճրացի Նովհան Դարբինյանի (դաշնակցական) գլխավորությամբ: Թշնամու հեղ լուրջ ընդհարում է լինում հատկապէս Արծկեի շրջանի **Առեն** գյուղում: Գյուղի քահանան, մելիք Աբրահամը եւ ռես Սարգիսը, գյուղի մի թաղն ամրացնելով, բնակիչներին թաքցում են այնպէս: Գյուղ են մտնում հարյուրավոր զինված քրդեր. նրանք պահանջում են ոչ միայն իրենց հանձնել հարստությունները, այլեւ կանանց եւ աղջիկներին: Քահանան, ռեսը եւ մելիքը միաբերան պապասխանում են. «Հարսներու, կիներու տները մեռած չեն, որ դուք ձեր ուզածն ընէք»²⁴: Սկսվում է զինված ընդհարումը շուրջ 25 հայ տղաների եւ մեծաքանակ թշնամու միջեւ: Երբ սակավաթիվ հայ զինյալներին օգնության է հասնում Նովհան Դարբինյանի իր զինակիցներով, կռիվն ավելի է սաստկանում. սպանվում են քրդերի հրամանատարները, եւ թշնամին դիմում է նահանջի: **Առեն**, նաեւ՝ **Առնջկուս** եւ **Արճրա** գյուղերի բնակչության մեծամասնությունը շարժվում է դեպի ծովափնյա **Կարաքեշիշ** եւ **Վիշկացուկ** գյուղերը: Ապրիլյան կոտորածների ժամանակ Կարաքեշիշում եւ Վիշկացուկում հավաքված ժողովուրդը նավերով անցնում է Լիւմ:

Մեծ Եղեռնի օրերին ինչպէս Թիմարի, այնպէս էլ Արծկե-Ալջավազի գավառակի հայ ազգաբնակչության համար միակ փարոսը Լիւմ անապատն էր: Այսպէս ապաստանելով՝ իրենց կյանքն են փրկում **Առեն**, **Առնջկուս**, **Արճրա**, **Կարաքեշիշ**, **Վիշկացուկ** եւ այլ գյուղերի բնակիչներ: **Առեն** գյուղում, արդեն իսկ կոտորածների լուրն առած լինելով, գյուղացիները կարողանում են թաքնվել նախապէս իրենց պատրաստած թաքստոցներում, մինչեւ Լիւմից նրանց օգնության են գալիս եւ նավով տեղափոխում կղզի²⁵: **Առնջկուս** գյուղում բնակչների

20 Արճեշի գավառակը գրնվում էր Վանի նահանգում, փարածվում Վանա լճի հյուսիսարեւելյան ծովախորշից մինչեւ Ծաղկանց լեռները: Կենտրոնը Արճեշ քաղաքն էր: Համապատասխանում էր Մեծ Հայքի պարմական Տորութեան աշխարհի Աղիովիւր գավառին:

21 Օհան Սարգսյանի վկայությունը. «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 249:

22 Արծկեի գավառակը գրնվում էր Վանի նահանգում, փարածվում Վանա լճից հյուսիսարեւմուտք, լճի եզերքով, Խլաթի եւ Արճեշի միջեւ: Կենտրոնը Արծկե քաղաքն էր: Համապատասխանում էր Մեծ Հայքի պարմական Տորութեան աշխարհի Խորխոռունյաց գավառի մի հարվածին:

23 Խմբապետ Նովհան Դարբինյանը վկայել է Արծկեի որոշ գյուղերում տեղի ունեցած կոտորածի մասին. տե՛ս «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում». վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 280:

24 Անդ, էջ 281:

25 Անդ, էջ 279-283. տե՛ս նաեւ Ավո եւ Վահան Քոչարյանների վկայությունները, էջ 270-273:

մեծ մասը կոտորվում է: Ողջ են մնում միայն քչերը՝ թողարկվելով ծովափնյա թումբերում կամ գյուղի Ս. Հարություն վանքում, որը րեք Խաչատուր քահանայի նախաձեռնությամբ վերածվել էր պատսպարանի: Ինն օր հեղու Լիմ անապատից կարողանում են կազմակերպել մագապուրծ եղածների րեղափոխությունը²⁶:

Կարաբեշի և շրջակա գյուղերից այնրեղ հավաքված բնակչությանը փրկելու համար գյուղի զինված րղամարդկանց Լիմից միանում են պաշրպանության՝ Հովհանի և Սիրունի 100 հոգանոց խմբերը և, դիմադրելով մի քանի անգամ իրենց գերազանցող թշնամուն, ժողովրդին փոխադրում են Լիմ. «...Կարաբեշի գիւղը, ուր մնացած կին-երեխան կը բերեն Լիմ Անապարը, ուր ապաստանած էր 8000-ի մօր ժողովուրդ, որու մեծ մասը կը կազմէր Թիմար գաւառի հայութիւնը: Լիմ անապարին մէջ կային 6 նաւեր, ծովափը, վանքի դրսի րան մօրերը ապաստանած էր հազարաւոր ժողովուրդ, որը պէտք էր անմիջապէս ներսը՝ կղզին փոխադրել, որպէսզի խուժանը և կամ թիւրք պաշիպօզուկ զինուորները չգային կոտորէին: Ուսրի Այճնաւազի արճրացի պարոն Յովան և թիմարցի պարոն Սիրուն, 100 զինուորի գլուխ անցած, թիւրքերէն և թիւրդերէն բաղկացած 800 հոգանոց խումբի մը հեղ սասրիկ կռուի կը բռնուին մինչև իրիկուն Արեր գիւղին մօրերը»²⁷: Լիմից ուղարկված նավերի շնորհիվ կարողանում են փրկվել նաեւ **Վիշկացուկի** և մոլրակա բնակավայրերից այնրեղ հավաքվածները: Վիշկացուկի ժողովրդի մի մասը նավերով րեղափոխվում է դեպի Թիմարի Ամկու-Բերդ գյուղը. ծովափնյա այս բերդում հայերը կարողացել էին պաշրպանություն կազմակերպել²⁸:

Այսպիսով, մինչ խմբապեղ Հովհանն իր զինակիցներով և րարբեր գյուղերից նրանց միացած րղամարդիկ դիմակայում էին մի քանի հազարի հասնող՝ հրացաններով և թնղանոթներով զինված թշնամուն, հնարավորություն էր ընձեղում Լիմ անապատից ուղարկված նավերով րարբեր գյուղերի հայ բնակչությանը րեղափոխել կղզի: Ամեն գիշեր Լիմից երկու նավ էր գնում ծովափնյա շրջանները և հավաքում բնակչությանը. «Լիմ Անապարէն արճրացի խմբապեղ պարոն Յովան նաւեր կը դրկէ (գիշերները) և կը րեղափոխէ կղզին՝ Առէն, Աննէկուս, Կարաբեշի, Արճրա և այլն գիւղերու օղլուշաղը (կին, երեխա)»²⁹: Խմբապեղ Հովհանը վկայում է, որ այսպես ավելի քան 600 մարդ է աղաղվում մահից³⁰: Նա նշում է նաեւ, որ **Կոճերերի, Խոռնանցի, Բարկաթի և Կուզելի** (Դուզել կամ Գյուզել) գյուղացիները ես նավերով հասնում են Լիմ³¹:

Կոճերերը (Կոճերեն) ծովափնյա գյուղ էր, ուսրի շրջակայքից՝ **Արճկեից, Վերին Սիփանից, Կուզելից, Անուշ-աղբյուրից**, ով կարողացել էր այսրեղ էր փախել՝ Լիմ հասնելու ակնկալիքով: Գյուղն ուներ նավեր, սակայն թուրքերը դրանք զավթել էին, և միայն մեկ հնամաշ նավ էր մնացել: Երբ թուրքերի ու քրդերի մեծաքանակ բաղմությունը պաշարում է գյուղը և հարձակվում անգն բնակչության վրա, վերջիններիս զգալի մասը կոտորվում է: Այլաղազցի մի վերապրած այս է պարմում. «Հասնելով Կոճերեր՝ հերեյալը րեսանք **Վ. Սիփան, Անուշ-Աղբիւր** և **Կոճերեր** գիւղի ընրանիքները բոլորովին մերկացուցած, վրա-

26 Խաչատուր քին. Զարարյանի վկայությունը, էջ 275:

27 Նշան Անդյանի և Մուշեղ Գառգյանի վկայությունները, էջ 295-296:

28 Գյուլիգար Մարգիսյանի և Կարապետ Դազարյանի վկայությունները, րեն անդ, էջ 307-309:

29 Անդ, էջ 309:

30 Հովհան Դարբինյանի վկայությունը, էջ 280-283:

31 Անդ, էջ 281:

նին մի մի խսիրի կտոր, լեցած էին գիւղին մէջ անտէր անտիրական: Քահանայի հետ միասին սկսանք մի նաւ ճարելու մասին մտածել, երբ մելիք Կարապետի Կողան՝ Նշանը յայտնեց, որ իրենց նաւը մի կողմով ծակուած կը գլխուի ծովափը»³²: Գլուղում եղած փղամարդիկ, թշնամու դեմն առնելով, փորձում են կազմակերպել բնակչության փրկությունը: Տեղավորելով իրենց հին եւ միակ նավակի մեջ հնարավորին չափ շար կանանց եւ երեխաների, վերցնելով բավականաչափ ալյուր՝ հասնում են կղզի, ուր միանում են այնտեղ ապաստանած հազարավոր մարդկանց. «... իրենց թաքցուցած առագաստի կտուր կը քաշեն նախն վրայ ու աննկատ կը հեռանան Լիմ Անապար, ուր համախմբուած էին նաեւ 8000-ի չափ ժողովուրդ (թիմարցի, արճէշ-ալճաւագցի եւ այլն)»³³: Այնուհետ Լիմից մի խումբ այրեր գինված վերադառնում են Կոճերներ եւ, կովի բռնկելով մօտ 400 քղերի հետ, հաջողում են Լիմ փեղափոխել եւս մի քանի հարյուր մարդ. «Զինուած կոճերէնցիք դիրք կը մտնեն խաչերու քարերուն ետեւ, մինչ նաւը հեղուկեմբ կը լեցուի 600-ի չափ կին ու երեխաներով (կոճերէնցի, վերին սիփանցի, գիւզլցի, անուշ-աղբիւրցի, ալճաւագցի), որոնք համախմբուած էին Կոճերէն գիւղը: 15 մէշուկի չափ ալ ալիւր ալ կառնուի նախն մէջ»³⁴: Նրանք Լիմից եւս մի քանի անգամ գնում են Կոճերներ, հավաքում այնտեղ անապարապան մնացած հայերին եւ բերում կղզի:

Այսպիսով, Լիմ են հասնում նաեւ **Արծկնից, Կոճերներ, Վերին Սիփան, Կուզել (կամ Գլուզել), Անուշ-աղբիւր, Խոռանց, Բարկաթ** եւ այլ գյուղերից: Ալջաւագցիներից ոմանք կարողանում են հեռանալ լեռները: Ներսէսը մի մասը եւս փեղափոխվում է Լիմ անապար, մյուսները թաքնվում են Թիմարի շրջանի փարբեր գլուղերում. «Կտորածէ ազատուած ալջաւագցիները ապաստանեցան լեռները. գիւղերը կիջնէին միայն գիշերները՝ հաց կամ որսէւ ուրիշիք ճարելու, իսկ յետոյ փեղափոխուեցան մի մասը՝ Լիմ Անապար, իսկ միւսները՝ Թիմարի շրջանի գիւղերը՝ մինչեւ ռուսներու վրայ հասնիլը»³⁵:

Մեծ եւ աննկարագրելի է Լիմի վանահոր՝ Նովհաննես վրդ. Նյուսյանի ծառայությունն իր ժողովրդին: Նա հոգում էր նաեւ այդ հազարավոր մարդկանց սնունդով ապահովելու խնդիրը. վանքում եղած մթերքի ողջ պաշարը փրվեց ժողովրդին: Ներագայում փրկվածները երախտագիտությամբ են սա հիշում: Թեւեւ վանքում սնունդը քիչ էր եւ հազիվհազ բավարարեց, սակայն ոչ ոք սովամահ չեղավ. «Եզներ կը մորթէին եւ միսը կերակուր ընելով՝ ժողովուրդին կը բաժնէին: Ուրիշիքի կողմէ ժողովուրդը, պէտք է ըսել, որ այնքան ալ չնեղուեցաւ, երբեմն չոր ցորեն բովելով (աղանձ), ժողովուրդին կը բաժնէին, երբեմն ալ մաքուր հացի հետ թանապուր կամ մածուն, պանիր կու փային: Նոս փեղն է յիշել, որ շար մեծ ծառայութիւն մը եւ հայրական խնամք ու հոգացութիւն մը ցոյց փուսա ժողովուրդին Լիմ Անապարի վանահայր Յովհաննէս վարդապետ Նիսեան (վանցի), որ գիւղացոց ցորենները, բոլոր վանքի անասունները սեփականացնելով՝ հաւասարապէս ժողովուրդին վրայ բաժանեց: Այս վիճակով ժողովուրդը Լիմ Անապարին մէջ ապրեցաւ մօտ 24 օր»³⁶: Բացի այդ, փրկվածներն իրենց հետ բերում էին ալյուր եւ այլ մթերքներ, իսկ երբեմն գիշերով գնում էին ափը եւ լքված գլուղերից սնունդ հայթայթում:

32 Մեղրակ Ասպարուրյանի վկայությունը, էջ 266: Սույն վկայությունում փրկվածների եւ կղզում հավաքվածների թիվը փարբերվում է մյուս վկայություններում եղածներից:

33 Գասպար Դավիթյանի վկայությունը, էջ 291. Կեն նաեւ Կարապետ Նակոբյանի, Մեղրակ Միսաքյանի, Տ. Արիստակես Բարեղամյանի վկայությունները, էջ 288-293:

34 Անդ, էջ 292:

35 Առաքել Ղարիբյանի վկայությունը, էջ 228:

36 Անդ, էջ 296:

Թշնամին փորձում էր գրավել Լիմ կղզին, բայց հանդիպում էր այնպեղ հասարակված հայերի զինված հակադարձությանը. «Ամեն օր թիւրք ու քիւրտն կու գային ծովափ, կը սկսէին ռմբակոծել ու սարսափ ազդել, որ մենք անձնաւորու լինէինք, սակայն ամեն անգամ հանդիպելով մեր դիմադրութեան՝ կը թողնէին, կը հեռանային»³⁷: Թեև հստակ չենք կարող նշել, թե որքան է եղել Լիմ գնացածների թիվը, սակայն իրենց իսկ փրկվածների վկայությունների համաձայն՝ այն անցել է 8000-ից: Խոսվում է անգամ 12000-ի մասին. «Ժողովուրդը նաւերով քրեղափոխեց անապար, դա քրեց երկու երեք օր. սարսափն ու նեղութիւնը սոսկալի էր. Լիմում հավաքեց աւելի քան 12000 ժողովուրդ»³⁸:

Կրուց անապարում պարսպարվածների մասին թեև ավելի սակավ, բայց խոսում վկայություններ ունենք: Ինչպես վերը նշեցինք, Թիմարի **Ասրվաձաձին** գյուղի բնակիչներից ռմանք փրկվում են՝ Լիմ հեռանալով: Սակայն գյուղում անպաշտպան մնացած կանայք եւ երեխաներ կային. նրանք էլ կարողանում են քաշվել Կրուց կղզի. «Երկու օր, երբ մնացինք գիւղին մէջ եւ քրեանք, որ մեր վիճակը պիտի գէշնար, բոլոր կիներս միացանք գաւիներ ծովափ կրակ ըրինք, Կրուց անապարի մէջ եղած մարդիկ նաւ դրկեցին, մեզ քարան հոն: Նաց չկար, ցորենէ աղանձ կը շինէինք եւ օրական երկու անգամ քիչ մը կուրէինք: Նացի պարճառաւ քրոջս երեք երեխաները մեռան: Մենք 30 օր մնացինք Կրուց անապարը, մինչեւ կամաւորներու գալը»³⁹: Երբ Վերին Սիփանից մի քանի գյուղացիներ կարողանում են հասնել Կոճերեր, քրեանում են որ կոճերերցիք պարսպարվում են նավերով գնալ դեպի Կրուց, իրենք էլ միանում են⁴⁰: Այսպիսով, Կրուց են հասել նաեւ **Վերին Սիփանի** եւ **Կոճերերի** բնակիչներից:

Լիմում ու Կրուցում ապաստանածները մնում են մինչեւ 1915 թ. մայիսի սկիզբը, երբ ռուսական զորքերն ու հայ կամավորական խմբերն ազատագրում են Վասպուրականը: Ապա կղզիներից վերադառնում են իրենց գյուղերը, փորձում կրկին վերականգնել ջանդված ու այրված քրեները, վարուցանք անել իրենց արքրերում: Այնուհանդերձ, 1915 թ. ապրիլյան եղեռնալից օրերը անթիվ ու անհամար անմեղ հայերի կյանք խլեցին: Շարունշար բնակավայրերից գրեթե ոչ ոք չփրկվեց: Բազում էին դեպքերը, երբ քրդերը կամ թուրքերը գերել էին հայ կանանց եւ երեխաների. ռուսական զորքերի եւ հայ կամավորական խմբերի՝ Վասպուրական մարտերու ժամանակ նրանց մի մասը կարողանում է փախչել եւ միանալ հայրենակիցներին, իսկ մյուսների ճակատագրերն անհայտ են:

Եղեռնի օրերին անդառնալի կորուստներ ունեցան նաեւ մենաստանների միաբանությունները: Լիմ անապարի միաբաններից Նակոբ վրդ. Նակոբյանը նահապարկվում է կորուսածների օրերին, Ավերիս վրդ. Սեդրաքյանը՝ վախճանվում գաղթի ճանապարհին⁴¹, իսկ Նովհաննես վրդ. Նյուսյանը՝ մնում է Լիմում մինչեւ հայերի վերջին նահանջը՝ 1918 թ., ապա հասարակվում Ս. Էջմիածնում⁴²: Կրուց անապարի վանահայրը՝ Եղիազար Ժ. վրդ. Պերրոսյանը եւ միաբան-

37 Անդ, էջ 143-144:

38 **Ա.Ղ.**, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Երեւան, 1917, էջ 213: Նույն փաստը քրեւ նաեւ **Ա. Փոխարեան**, նշվ. աշխ., էջ 53:

39 Ալլթուն Սահակյանի վկայությունը. «Նայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում», վերապրածների վկայություններ, հ. Ա., էջ 119-121:

40 Տե՛ս Զարո Շարոյանի վկայությունը, էջ 305-306:

41 Տե՛ս **Թեոդիկ**, Գողգոթա թրքահայ հոգևորականութեան եւ իր հօրին աղէքարի 1915 տարիին, Անթիլիաս-Լիբանան, 1966, էջ 35:

42 Նովհաննես վրդ. Նյուսյան. 1879-1943 թթ., վանեցի, ձեռնադրվել է 1908 թ., եղել Լիմ անապարի

ներ Պողոս վրդ. Տակոբյանն ու Ներսես սարկավազը նահապարկվում են եղեռնալից օրերին. մենաստրանի մյուս միաբաններն էին Սահակ վրդ. Արովմյանը, Պետրոս վրդ. Շահինյանը, Մարտիրոս վրդ. Աղազադյանը⁴³: 1915 թ. Վանի առաջնորդարանից Գեորգ Ե. Կաթողիկոսին ուղղված մի գրությունից (հունիսի 8) պարզ է դառնում, որ Կրուց մենաստրանը հայտնվել էր ծանր վիճակում. թուրք կառավարության կողմից իբր պահակ նշանակված 14 ոստիկանները սպանել էին մի վարդապետի ու մի դպրի, մակույկավարին և մշակին, թալանել եկեղեցու թանկարժեք սպասքը, գրքեր ու ձեռագրեր, հոգևորականների իրերը⁴⁴:

1915 թ. հուլիսին ռուսական զորքերը նահանջում են. դա ստիպում է Վասպուրականի հայությանը թողնել հայրենի եզերքը և գաղթել Արևելյան Հայաստան կամ Կովկասի այլ բնակավայրեր: Հովհաննես վարդապետ Նյուսյանը 1934 թ. գրած իր աշխատության մեջ ռուսական զորքերի՝ 1915 թ. հուլիսյան մեծ նահանջն անվանում է «դիպրոմնատոր և աղերարներ նահանջ... հարիւր հազարաւոր հայ ժողովրդեան կորստեան հետ կորստեան մարմուռեցան և փչացան նաւ ցեղին դարաւոր կուլտուրայի-սրբեղծագործութեան և գրականութեան անգին գանձերն և գոհարներն՝ հազարաւոր հարիւր գրչագրեր և գանազան հնութիւններ»⁴⁵:

Եղեռնալից իրադարձություններին սերտորեն առնչվում են հայ հոգևոր և նյութական մշակույթի մաս կազմող անգին գանձերի՝ ձեռագրերի ճակատագրերը: Ուստի՝ մի քանի խոսքով անդրադառնալով Լիմ և Կրուց անապատների ձեռագրական հավաքածուներին և Եղեռնի ժամանակ դրանց պահպանման խնդրին: 1915 թ. Արևմտյան Հայաստանում վանքերը համապարած թալանվեցին ու այրվեցին, հիմնահատակ քանդվեցին, իսկ այնպիսի պահվող անթիվ ու անհամար ձեռագրեր, փաթեղի գրքեր, անգամ ամբողջ գրադարաններ անվերադարձ ոչնչացան⁴⁶: Միայն մի փոքր մասը փրկվեց գաղթականների ձեռքով: Լիմում, Կրուցում, Աղթամարում, Վարազավանքում, Վանում գրվվող ձեռագրերի պահպանման և Ս. Էջմիածին տեղափոխման դժվարին, գերմարդկային ջանքեր պահանջող գործը նախաձեռնում է Հովհաննես վանահայրը: Նրա ջանքերի շնորհիվ այս ձեռագրական հավաքածուները մասնակիորեն փրկվեցին՝ հակառակ գաղթի ճանապարհին եղած զգալի կորուստներին: Այսպես, հուլիսյան մեծ գաղթի ժամանակ, Վասպուրականից Էջմիածին են տեղափոխվում 284 ձեռագիր (Աղթամարից՝ 201, Վանից և շրջակայից՝ 61, Լիմից՝ 22), իսկ մնացածը՝ առժամանակ թաքցվում: Նույն թվականի հոկտեմբերին Գեորգ Ե. Կաթողիկոսը,

վանահայր: 1941 թ. ազգային-եկեղեցական ժողովի ժամանակ Ս. Էջմիածնի միաբանությունը ուներ չորս հոգևորական, որոնցից մեկը Հովհաննես վրդ. Նյուսյանն էր, մյուսներն էին՝ կաթողիկոսական տեղակալ և Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ Գեորգ արքեպս. Չորեքյանը, Արսեն արքեպս. Դպրյանը, Մարթեոս վրդ. Աջեմեանը. րեն «Վավերագրեր Հայ Եկեղեցու պարմութեան», գիրք Զ., Երևան, 1999, էջ 282-283, 922:

43 Տե՛ս **Թեոդիկ**, նշվ. աշխ., էջ 35-36: Աղթամարի վանքի մասին նշենք, որ կուրորածի առաջին իսկ օրերին այն ամայանում է և անցնում թշնամու ձեռքը: Վանքի երկու միաբանները՝ կաթողիկոսական տեղակալի Եզնիկ վրդ. Ներկարարյանը և Դանիել վրդ. Զադյանը, թողնելով կղզին և անցնելով ցամաք, քաջաբար մասնակցում են Վանի հերոսամարտին, իսկ Աղթամարն անցնում է թշնամու ձեռքը. րեն **Տ. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 131:

44 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57 (Կաթողիկոսական դիվան), ց. 5, գ. 54, թ. 28-29:

45 **Յովհաննես վարդապետ Նյուսյան**, Նամասուր նկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանաւոր վանքերու, որոնք մինչեւ 1915 թուական շէն և միաբանական վանքեր էին, աշխ.՝ Գ. Տեր-Վարդանեանի. «Արեւագալ» պարբերական, 2004, էջ 111:

46 Արևմտյան Հայաստանի ձեռագրական կորուստների մասին հանգամանալից են Օնիկ Եզանյանի և Մուրեն Քոլանջյանի ուսումնասիրությունները. Վասպուրականի ձեռագրերի մասին րեն «Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մարտնադարանի», Կ. Ա., Օ. Եզայան, Երևան, 1965, էջ 93-105. **Ս. Քոլանջյան**, Հայկական կուրորածները և մեր ձեռագրական կորուստները. «Էջմիածին», 1965, Ե.-Է., էջ 133-144:

քաջ գիտակցելով Արեւմտյան Նայաստանում փրկող դժոխային կացությունը, կարգադրում է Նովհաննես վանահորը և Կրուց անապարի միաբան Սրեփան վարդապետին կրկին վերադառնալ հայրենիք, և, հավաքելով մենաստանների բոլոր ձեռագրերն ու թանկարժեք հնությունները, կանոնավոր ցուցակագրել և փոխադրել Ս. Էջմիածին⁴⁷:

Վանի և շրջակայքի մշակութային արժեքների պահպանման առթիվ մրահոգություն է հայտնում նաև Պերերբուրգի գիտությունների ակադեմիայի նախագահությունը: Վերջինիս հանձնարարությամբ Կովկասյան (Թիֆլիսի) թանգարանի ավագ հսկիչ Սմբատ Տեր-Ավերիսյանը մեկնում է Վան, սակայն մինչ այդ ուղերձ է գրում Գետրգ Ե. Կաթողիկոսին՝ խնդրելով, որ Վան գնացած վարդապետներից մեկը այս գործում նշանակվեր որպես հոգեւոր իշխանության ներկայացուցիչ⁴⁸: Կաթողիկոսը արտոնում է Նովհաննես վարդապետին և պարվիրում, որ հավաքված իրերը փեղափոխվեն ուղղակի Էջմիածին և ոչ Թիֆլիս:

Վերադառնալով Վասպուրական՝ Նովհաննես վարդապետը սրբի խոր ցավով ակնապարտում է լինում, որ բավականին թվով արժեքավոր ձեռագրեր և թանկարժեք սպասք բռնազրավված է: Այս մասին նա Վեհափառին ուղղված իր փեղեկագրության մեջ գրում է. «Ս. Օծու թեանդ հայրական բարձր հրամանի համաձայն ողջամբ հասանք երկիրը և Լիմ անապարի կողմի մորնելով գրանք զայն աւերակ և կողոպտուած վիճակի մէջ: Եկեղեցւոյ և ամբողջ սենեկաց դռները խորպակուած, ձեռագիրներու ընդիր մասը վերցուած է. կը մնան ճառքնորիք Յայամաուրքներ և մաս մը անարժէք ձեռագրեր...» (10 նոյեմբեր, 1915 թ.)⁴⁹: Նույն ուղերձում վանահայրը նշում է, որ Կրուց անապար դեռ չեն կարողացել գնալ նավ չունենալու պատճառով, իսկ Վարագա վանքը թալանված և այրված է. այնպեղ ձեռագրերով և թանկարժեք սպասքով միայն մեկ պահարան են գտնում, որ, բարեբախտաբար, վրիպել էր կողոպտիչների աչքից: Պահարանից ամենը հանում, փանում են Վան: Բոլոր եկեղեցիներն առհասարակ թալանված և այրված էին:

Ի վերջո, Նայաստանի պարվիրով (21 նոյեմբեր) Լիմի վանահայր Նովհաննես վարդապետի, Կրուցի միաբան Սրեփան վարդապետի, Աղթամարի միաբան Դանիել վարդապետ Զադոյանի և Սմբատ Տեր-Ավերիսյանի ջանքերով Լիմում մնացած ձեռագրերը, Վարագավանքում գտնվածները, Վանի եկեղեցիներից փրկվածները, նաև՝ Կրուցից և Աղթամարից բերվածները հավաքվում են, ցուցակագրվում և 1916 թ. հունվարի 27-ին փեղափոխվում Ս. Էջմիածին. ընդհանուրը՝ 1082 ձեռագիր (Աղթամարից՝ 84, Վանից՝ 173, Կրուցից՝ 187, Լիմից՝ 281, Վարագից՝ 357. սրանցից 9-ը եղել են փապգիր գրքեր): Էջմիածնում ձեռագրերը հանձնվում են մարենադարանապետ Նուսիկ արքեպս. Մովսիսյանի խնամապարտությանը⁵⁰: Ձեռագրերից բացի՝ փեղափոխվել են նաև թանկարժեք եկեղեցական սպասք, սրբերի մատուցներ⁵¹:

Վասպուրականից բերված բոլոր ձեռագրերը նկարագրվում են Էջմիածնի մարենադարանի գրքապահ Գագրիկ Ներսիսյանի կողմից (Գագրիկյան ցուցակ)⁵²: Այսպիսով, 1915-

47 Տե՛ս «Արարաք», 1915, էջ 811:

48 Տե՛ս անդ, էջ 860-862:

49 Անդ, էջ 863:

50 Տե՛ս «Արարաք», 1916, էջ 46-47:

51 Վանի և շրջակայքի եկեղեցիների վիճակի, պահպանված մշակութային արժեքների մասին րե՛ս նաև «Վան-պոսաք» շաբաթաթերթ, 1915, Թիֆլիս, հմր. 3, էջ 13. «Վավերագրեր Նայ Եկեղեցւո պարմութեան», գիրք ԺԳ., Երևան, 2005, էջ 570-571:

52 ՄՄ, Անդիպ ձեռագրացուցակների ֆոնդ, հմր. 6:

1916 թթ. Վասպուրականից Էջմիածին է տեղափոխվել 1366 ձեռագիր: Վասպուրականից եկած ձեռագրերի մասին ասենք, որ 1916-1917 թթ. Թիֆլիսում Մ. Մաքսուդյանի եւ Մ. Տեր-Մովսիսյանի ջանքերով Վասպուրականի գաղթականներից եւս 15 ձեռագիր է ստացվել, իսկ հետագայում փարբեր անձանց կողմից Մալեմադարան են բերվել եւս 18-ը: 1916 թ. մայիսին Նյուայան վարդապետը Վանից եւ մոտակայքից ձեռագրեր է ուղարկել Էջմիածին Զուլֆայի վրայով, սակայն մաքսային վարչությունը թույլ չի տվել դրանք անցկացնել: Միայն Վեհափառի կարգադրությունից հետո այս ձեռագրերը մուտք են գործել Էջմիածին, որոնք թվով 87-ն են (սրանցից 20-ը՝ այլալեզու)⁵³: Սակայն 1934 թ. Նովիանենս վարդապետը իր «Նամա-ռուր նկարագրություն...» աշխատության մեջ նշում է, որ եւս 660 ձեռագիր է ուղարկել Էջմիածին, որից 400-ը կապիքան Չանկալյանի, իսկ 260-ը՝ բժիշկ Առաքել Գարադոշյանի միջոցով: Մեզ, ցավոք, հայրնի չէ այս ձեռագրերի ճակատագիրը: Ո՛չ «Գագրիկյան» ցուցակում, ո՛չ էլ հետագա որեւէ արձանագրությունում սրանք չեն հիշարակվում: Ո՛ր կորան այդ ձեռագրերը. Նովիանենս վարդապետը կարո՞ղ էր արդյոք թուրիմացաբար նման բան գրել: Ի վերջո, խոսքը ոչ թե մի քանի փասնյակ, այլ մի քանի հարյուր ձեռագրերի մասին է. այս հարցը առայժմ մնում է անպատասխան:

Այսպիսով, Վանա լճի Աղթամար, Լիմ եւ Կրուց կղզիներից, Վանից եւ մերձակա գյուղերից 1915 թ. Մ. Էջմիածին է տեղափոխվել 284, 1916 թ. հունվարին՝ 1082 ձեռագիր, ապա՝ եւս 87-ը, սրանց գումարվել են գաղթականներից ձեռք բերված 15 եւ ընծայված 18 ձեռագիր: Այս 1496 միավորներից 9-ը եղել են փաղաքի գրքեր, 1-ը՝ այլեւայլ թղթերի հավաքածու, 4-ը մասն են կազմել այլ ձեռագրերի եւ հետագայում միացվել են դրանց, 9 ձեռագիր նորից եղել է հանձնվել Լիմի Նովիանենս վանահորը: **Արդյունքում՝ Մաշտոցյան Մալեմադարանում այժմ ունենք Վասպուրականից տեղափոխված 1473 ձեռագիր. Վանից եւ շրջակայքից՝ 335, Աղթամարից՝ 285, Լիմից՝ 306, Կրուցից՝ 202, Վարագից՝ 345**⁵⁴: Նշենք նաեւ, որ Լիմից երկու ձեռագիր պահպանվել եւ հասել են Քյուրդյան հավաքածու, իսկ Կրուց անապատից մի ձեռագիր գտնվում է Ղերեբբուրգում⁵⁵: Փորձենք ճշտել, թե շուրջ քանի՞ ձեռագիր կար Վանա լիճի կղզիներում Եղեռնից առաջ:

Դեռեւս համիդյան ջարդերի ժամանակ՝ 1895-96 թթ., ձեռագրերը ոչնչացումից փրկելու համար Լիմում, Կրուցում եւ Աղթամարում, շար այլ վանքերի պես, ձեռագրերը պահվել են թաքստոցներում: Եւ այսպես շուրջ 14 փարի մնացել են անձեռնմխելի, մինչեւ ազգագրագետ Ե. Լալայանը նախաձեռնում է Վասպուրականի գրչագրերի ցուցակի կազմման գործը⁵⁶: Այս նպատակով նա այցելում է Վանա լճի կղզիները, խոնավ թաքստոցներից հանում ձեռագրերը, դրանք մաքրում եւ չորացնում արեւի փայլ: Թեւեւ անվանի հայագետը մտադիր էր կազմել առհասարակ Վասպուրականի բոլոր ձեռագրերի ցուցակը, սակայն նրան հաջողվում է նկարագրել 1525 ձեռագիր, որոնք պահվում էին Աղթամար, Լիմ, Կրուց վանքերում, Վարագավանքում, Վան քաղաքի եւ շրջակայքի եկեղեցիներում⁵⁷: Հիմք ընդունելով Օ. Եզան-

53 Տե՛ս «Արարաք», 1916, էջ 344:

54 Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մալեմադարանի», հ. Ա., էջ 99-105:

55 Տե՛ս Մ. Քոլանջյան, նշվ. աշխ., էջ 140:

56 480 ձեռագրերի նկարագրությունները հրատարակվել են 1915 թ. Թիֆլիսում, մյուս մասը դեռեւս անփյառ է (Մալեմադարան անփառ ձեռագրացուցակների ֆ., հմր. 8):

57 Վասպուրականի ձեռագրերին անդրադարձել է նաեւ Վարագա վանքի միաբան Ղեռնոզ վ. Փիր-ղայեմյանը՝ իր «Նշխարք պարմութեան հայոց» աշխատության մեջ: Սակայն նա ընդօրինակել է միայն պարմական կարեւորություն ունեցող հիշատակարանները (ՄՄ, ձեռ. հմր. 4515, 6273): Ամբողջական չէ նաեւ Նովիանենս Բարադամյանի կազմած ցուցակը (ՄՄ, ձեռ. հմր. 6333):

յանի կազմած համեմատական ցուցակները՝ կարելի է ասել, որ Ե. Լալայանի նկարագրած ձեռագրերի մի մասը՝ շուրջ 650 ձեռագիր, կորել է Մեծ Եղեռնի օրերին: Ե. Լալայանի նշյալ ցուցակում րել են գրել Լիմից 374 ձեռագիր, որոնցից պահպանվել են 182-ը, Կրուցից՝ 264 ձեռագիր, պահպանվել են 154-ը, Աղթամարից՝ 286 ձեռագիր, պահպանվել են 202-ը: Միաժամանակ, այս կղզիներից մեզ հասել են ձեռագրեր, որոնք չկան Ե. Լալայանի ցուցակում: Բավականին կարելի է հովհաննես վանահոր այն րվյալը, թե մինչ Եղեռնը Լիմ անապարի ձեռագրերի թիվը հասնում էր 550-ի, իսկ րպագիր գրքերինը՝ 3 հազարի, Կրուց անապարն էլ ճոխ ու փարթամ էր ազգային եւ եկեղեցական թանկարժեք հնություններով, ուներ նաեւ մոտ 500 ձեռագիր մարյան⁵⁸: Ուարի, կարելի է ենթադրել, կղզիներում պահվող ոչ բոլոր ձեռագրերի նկարագրություններն են րել գրել Լալայանի ցուցակում: Սակայն, միանշանակ չէ նաեւ այն, որ Վանի, Վարագի, Աղթամարի, Լիմի եւ Կրուցի անունով Մարենադարան հասած այն բոլոր ձեռագրերը, որոնք չկան Լալայանի ցուցակում, պարկանել են այս վանքերին: Այսպես, Ս. Քոլանջյանը ենթադրում է, որ ձեռագրերը Ս. Էջմիածին րեղափոխելիս այլ վայրերից փրկված ձեռագրեր էլ են խառնվել, բայց չի նշվել դրանց պարկանելությունը⁵⁹: Ամփոփելով ասենք, որ Լիմում եւ Կրուցում պահվող ձեռագրերի շուրջ կեսը, րպագիր գրքերն ամբողջությամբ կորել են կամ ոչնչացել, իսկ հրաշքով փրկված, պահպանված ձեռագրերը միայն բացառիկ անձնագոհության արդյունք են:

Այսպիսով, Մեծ Եղեռնի օրերին Լիմ եւ Կրուց մենաստաններն արել են հնարավորը հայությանը բնաջնջումից փրկելու համար, ապաստանածներին րվել են ամենը, ինչ ունեին, իսկ Լիմի վանահոր ու մի քանի նվիրյալների ջանքերով ըստ հնարավորության փրկվել են շար ձեռագրեր՝ որպես սուրբ մասունքներ Վասպուրական աշխարհից: Վասպուրականում մնացած հայերը վերջին անգամ գաղթում են 1918 թվականին՝ թողնելով թշնամու ձեռքին մի ողջ հայրենիք:



58 Տե՛ս 3ովհաննէս վարդապետ Տիւնան, նշվ. աշխ., էջ 111, 114:

59 Տե՛ս Ս. Քոլանջյան, նշվ. աշխ., էջ 142:

ՀԱՂԱՌՊԴՈՒԲԱՆՆԵՐ

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ - ՆԱՄԱՍՏԵՂ. ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նամաստերի առաջին գրական քայլերը համընկան Նովիանոս Թումանյանի կյանքի մայրամուրին (պատմվածքների առաջին «Գյուղը» ժողովածուն լույս է տեսել 1924-ին): Նրանց ստեղծագործության կենսական ազդակները գալիս են Գյուղից, շնչում են հողի բուրմունքով և պապերից ժառանգած մարդասիրության ոգով:

Երկուսն էլ ապրել են քաղաքում, բայց Գյուղի երգիչ են՝ բառի ամենալայն ու խոր իմաստով. Գյուղ՝ փառապաղ հերոսներով ու հերոսուհիներով (Թումանյանը կասեր՝ խնդացող փխուր, սրտաբեկ ուրախ), աննման բնությամբ ու փանիքներին բազմած դդումների ոսկով, որ արելի հեղ է խաղում: Նրանց հերոսներն անբաժան են բնությունից, ապրում են Արարման օրենքներով ու չեն հասկանում, չեն կարող հասկանալ արյունարբու մարդակերպ էակներին: Չարն ու չարիքը Արարող մարդու գոյության ծիրից դուրս են ու քննարկման առարկա չեն: Արարման դաշտում թագավորում են բարության օրենքները: Զայրույթն ուղղված է աշխարհի հիմքում ընկած չարիքի դեմ, իսկ չար մարդիկ պարզապես մեղք են, որովհետև չգիտեն Արարման օրենքը, որ մարդուն մոլորեցնում է Աստծուն: Ն. Օշականը գրում է, որ ապրելու նահապետությանը դժվար է դիմանալ առանց բարության:

Նամաստերն էլ Թումանյանի պես «ջնջելական էր». պահպանված ձեռագրերը վկայում են, որ ստեղծագործությունը մի քանի անգամ արտագրելուց հետո է հրատարակել: Նա էլ Մեծ լոռեցու նման շարունակ խորացրել է մարդու ճանաչողության, նրա ներաշխարհը ներկայացնելու ստեղծագործական հնարավորությունները. Թումանյանի գրական ուղին սկսվում է սիրային առաջին ուրանավորից ու հասնում «Անուշ»-ին ու աննման քառյակներին (ընթերցողի կենսափորձի ու գրողի ստեղծագործության իմացության աստիճանի հեղ աշխարհարկումը փոխվում է), Նամաստերի դեպքում՝ առաջին մանրապատմությունից, բանաստեղծություններից մինչև «Սպիտակ ձիավորը» երկհատոր դյուցազնավեպը:

Գրականագետ Էդուարդ Զրբաշյանը Թումանյանի ստեղծագործական մեթոդն անվանում է համադրական ռեալիզմ: Գրողն իրականությանը հակադրում է Երազը՝ փայփայելով Մարդու իդեալը: Նամաստերը, որդեգրելով այդ սկզբունքը, պարկերում է օտար հողի վրա ապրող գյուղացուն, որի հոգին թեւավորվում է մանկության անմոռանալի հուշերով, հեքիաթով, Երազով:

Աստվածաշնչյան թեմաները Նամաստեղին միշտ հուզել են. այդ ճանապարհի ուղենիշներից են մանրապատմները, «Քրիստոսի երկրորդ գալուստը» դրամատիկական պատկերներն ու «Աղոթարան»-ը: Թումանյանը մարդակերպից մարդասպան ձգվող ճանապարհի վերջը չի տեսնում ու ցավով արձանագրում է մարդը դեռ երկար էսպես կմնա: Նամաստեղի դրամատիկական պատկերում խոսուք քարոզում է սիրել գոնե ինքն իրեն, որովհետև թշնամուն սիրելու երկուհագարամյա կոչերը ոչինչ չեն փոխել մարդու կյանքում: Այլ խոսքով, Նամաստեղն էլ Թումանյանի պես հուսահատ է ու փխուր, երբ խոսում է նյութական բարիքների առաքության մեջ հոգեւոր աշխարհի հետ կապերը խզած Արեւմուտքի մասին: Բայց գրողը հոգու խորքում փայփայում է Նայի օրինակը ու համոզված պնդում, որ մարդկությունը կորցրած իդեալները կգտնի, եթե հայը վերադառնա Բնաշխարհ ու կարողանա ապրել, արարել պապերից ժառանգած օրենքներով, որոնք հեռու են նյութից, ուժից ու բռնությունից:

Նամաստեղի գրականության հեղաբեկիչ էջերից է «Այծեւոմար» երգիծական պոեմը: Նա մեր ազգային էպոսին անդրադարձել է այլ տեսանկյունից. Ի. դարասկզբի արյունոտ դեպքերի պատճառներից է նաեւ այն փխուր փաստը, որ Դավիթ ծնած ժողովուրդը շրպակ է աշխարհը բարեփոխված հայտարարել. իբր խաղաղության ու մարդասիրության օրենքները փոխարինելու են եկել ուժի իրավունքին, ու բոլոր ժողովուրդները մրել են խաղաղության մեծ շուքալարը: Դեպքերի ավարտը հայտնի է. մեր հարեւանները բուք համառությամբ չրեսնելու են փալիս 1915-ին կարարվածը, եւ աշխարհում նորից մարդկային արյուն է հոսում... Թումանյանի հումորը՝ «ընդհանրապես ծիծաղելի եւ ցավալի միաժամանակ» (Է. Զրբաշյանի բնորոշումն է), Նամաստեղի «Այծեւոմար» երգիծական պոեմում, որ էպոսի նորոյա փարբերակներից է, փայլարակում է առանձին տեսարաններում, բայց մթնոլորտը ողբերգական է: Չոր գյուղի բնակիչները իմաստուն Մակարի, քահանա Տեր Մարութի, քաջ Թաթոսի առաջնորդությամբ խաղաղության շուքալարի են հրավիրում հարեւան գյուղի մոլլային... «Մի կաթիլ մեղրի» փխուր ավարտը կրկնվում է... Նամաստեղն էլ Թումանյանի նման իր հերոսներին, անկախ նրանց՝ աշխարհը փրկելու «հերոսական ջանքերի» արդյունքից, կարող է «Մերոնք» անվանել: Մեծ լոռեցու միամիտ ու աշխարհն իրենց կենսափորձով հասկանալ փորձող հերոսները Նամաստեղի երգիծական պոեմում շարունակում են ապրել առաջվա պես, այնինչ բնաշխարհով թուրքն է անցնում, ու մարդասիրության, խաղաղության կոչերը լսող չկա:

Նովի. Թումանյանը 1914-ին «Ազաշավանք» հոգվածում դառնությամբ գրում է քաղաքակիրթ աշխարհից ծանր հիասթափության մասին. աշխարհն ապրել ու ապրում է շահի օրենքներով, այնինչ մենք արդարություն ենք որոնում: Նամաստեղը 1938-ին քննում է մեր ազգային նկարագրի խոցելի գծերն ու փորձում ազգային մեծ ողբերգությունից դասեր քաղել հաջորդ սերունդների համար: Իսկ ամենամեծ դասը միաբանության կոչն է, առանց որի ժողովուրդը պարզապես ամբոխ է: Տեղին է հիշել Թումանյանի խոսքը. «Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթեւ...»: Ծ. Ծախնուրը հավելում է. «Ամբոխը չի մտածել: Ան կը հաւարայ»: Թումանյանի բնորոշմամբ՝ «միշտ անմահ ամբոխամրության» կանոններով՝ ամբոխը օրվա հերոս է ընտրում, հեղեղում նրան մինչեւ առաջին վրիպում, որ ծաղրածանակի ենթարկի, ու նույն պահին գրնում է հերթական հերոսին... Գյուղը, ավա՛ղ,

կործանվեց: Կապարվածից դաս քաղեցի՞րք, - հարցնում են Թումանյանն ու Համասյրեղը: Պապասխանը հանրահայտ է՝ ո՛չ: Ողբերգությունը սա է:

Նովիանենա Թումանյանի «քաջ Նազար»-ի համասյրեղի «Քաջ Նազար» հեքիաթների համեմատական քննությունը գրականագիտական հետաքրքիր, բայց ծավալուն խնդիր է: Նակիրճ ասենք միայն, որ մարդկանց՝ առասպել ստեղծելու ու առասպելին անվերապահ հավատալու բնածին հակումը հաճախ իշխանության է հասցնում Նազարի պես ապիկարներին: Թումանյանը հեքիաթի փիլիսոփայական խորքը բացում է ցավից ծնված հումորով, վերջում էլ անմահ հերոսը բազմում է գահին, ծիծաղում մարդկանց ու աշխարհի վրա: Համասյրեղը հեքիաթին անդրադառնում է հայի՝ հեքիաթով ապրելու եզակի ունակությունն ընդգծելու միտումով. աշխարհը հեռու է Երազից, ու հերոսի՝ Երազով ապրելու ձգտումը ոչ միայն անհասկանալի է, այլև ծիծաղելի:

Համասյրեղը «Պանն էր անցեր իմ պարտեզէն» գողտրիկ մանրապատումում՝ Համբարձման գիշերվա հեքիաթն է հյուսում, իսկ «Այծեպոմար»-ի Սրապ ամին Թումանյանի «Անուշ» պոեմի անանուն ծերունու պես երկարում է խոսելու, մարդկանց տեղեկություն տալով՝ իր անձի կարեւորությունն ընդգծելու եզակի հաճույքը:

Նովի. Թումանյանի մարդասիրությունը վեր է կրոնական չափից ու չափանիշներից. նրա չափն աշխարհն ու Մարդու իդեալն է, որ ուրիշ բառով կոչվում է Աստվածամարդ: Համասյրեղը հայի նկարագրի մեջ տեսնում է կես-հեթանոսի եւ կես-քրիստոնյայի համալուծում. հեթանոսականը Դավթի գեղով եկող ուժն է, որ միշտ ծառայում է մարդուն ու մարդկայինին, իսկ քրիստոնեությունը մեր ազգային նկարագրից անբաժան ծով մարդասիրություն է, որի ակունքները սնվում են Արարման դաշտից:

«Երրորդ զարկը» հոդվածում Թումանյանը հայ գրականության զարգացման երեք շրջան է առանձնացնում. առաջինը Խ. Աբովյանի «Վերքն» է, երկրորդը՝ Բաֆֆու եւ Պապկանյանի գրականությունը, երրորդը՝ «ազգային ազար» գրականությունն է լինելու: Համասյրեղի գրականությունն այդ երրորդ շրջանի դրսևորումներից է՝ դասական գրականության հետ խոր արմատներով կապված:

Համասյրեղի գրական ժառանգությունը հաստատում է, որ 1920-ական թվականներին արդեն հայ գրականության քարտեզի գույների մեջ Թվարինցու եւ Զարդարյանի կողքին կան Լուռու մեծ երգչի գրականության գույներն ու նրբերանգները: Համասյրեղի գրականությունն այս առումով հետաքրքիր զուգահեռներ է առաջադրում՝ համակցելով արեւմտահայ եւ արեւելահայ գրականության այս խոշոր դեմքերի (եւ ոչ միայն նրանց) գրական ավանդույթները:

Ճիշտ է, մարդկային խառնվածքով Թումանյանն ու Ամերիկայի Բոստոն քաղաքում հայտնված խարբերոցի հայը տարբեր էին, տարբեր էին նաեւ գրական-հասարակական կյանքին մասնակցելու հնարավորությունները, բայց նրանց գրական ժառանգության հայրենիքը Նայասարանն է: Համասյրեղն ապրում էր արտաքինապես խաղաղ կյանքով, բայց քիչ չէին նաեւ «փոթորիկները»: Երկու գրողն էլ անվիճելի հեղինակություն էին եւ զարմանալի զուգադիպությամբ ակամա հայտնվում էին մարդկային հարաբերությունների խաչմերուկում. հանրահայտ է Թումանյանի բարեկամությունն Ադրանիկի հետ, իսկ Համասյրեղը չվարանց

պաշտպանել Դրոյին, երբ ինչ-ինչ հանգամանքներում նրա գործունեությունը վերանայելու ու վերագնահատելու անհաջող փորձ էր արվում: Նամաստեղը շուրթերը երբեք չալոճեց անեծքով ու միշտ մնաց Նայաստան երկրի պաշտպանի դիրքերում՝ անկախ ռեժիմից (իր բառն է):

Նովի. Թումանյանը տեսավ Նայաստան երկրի՝ նոր ու հզոր Նայրենիք դառնալու հնարավորությունը: Ճիշտ է, այդ ընթացքում Նայաստանի Նանրապետությունը հասցրեց փրամագծորեն փոխել անվանումն ու զարգացման հեռանկարը, բայց եղավ ու է հայության Նայրենիքը: 1926-ին Նամաստեղը ծրագրել էր տեղափոխվել Նայաստան. Ավ. Իսահակյանը Ս. Վրացյանի միջոցով բանավոր փոստով խորհուրդ տվեց տեղից չշարժվել: Այդպես էլ Աբովյան փողոցով քայլելն ու Արարարի շուքի տակ կոնյակ խմելը մնացին երազանք: «Առաջին սէրը» ինքնակենսագրական վիպակում Նամաստեղն աշխարհասփյուռ հայությանը Վահրամի օրինակով խորհուրդ է տալիս հավաքվել Մայր հայրենիքում, ծառ տնկել ու որդիներ մեծացնել հայրենի հողի վրա:

Մի նմանություն եւս. Թումանյանի «Նայրենիքիս հետ» (1915) բանաստեղծության կողքին Սփյուռքում հաճախ է հնչում Նամաստեղի «Նայու ոգին» (1963). ստեղծագործությունները նման են ծով լավարեսությամբ, բառի, պարկերի անկրկնելի զգացողությամբ, տարողունակությամբ: Այս բանաստեղծություններն այսօր էլ Նայրենիքում եւ Սփյուռքում դահլիճներ են հուզում ու հայերի աչքերն արցունքալից: Եզրակացությունը մեկն է՝ դժբախտաբար ինչպես ստեղծագործությունների գրության միջև ընկած երկար ու ձիգ տարիներին, այնպես էլ մեր օրերում հայության արդար դապրելի լուծվել, ու կրկին հույսին ենք ապավինում:

Նամաստեղի բանաստեղծական առաջին փորձերը, ճիշտ է, կրում են Դանիել Վարուժանի քնարի ազդեցությունը, բայց Նովի. Թումանյանից եկող ստեղծագործական ազդակներ զգալի են մի քանի բանաստեղծություններում («Ամեն անգամ, որ կ'երթամ ծանօթի մը դագաղին», «Նոգույս մէջ յոյսը վաղուան») եւ հատկապես՝ քառյակներում, որոնք շնչում են Մեծ լուռեցու գրական գոհարների մարդասիրությամբ ու լավատեսությամբ, կյանքն ու մարդու գործը իմաստավորող անմոռաց պարկերներով:

Բազմաթիվ հոգվածներում, հայ գրականության պարմության անավարտ դասագրքի պահպանված հարվածներում Նամաստեղը բազմիցս արժեւորում է Նովի. Թումանյանի գրական ժառանգությունը, քննում նախորդների հետ կապերը եւ ուրախությամբ շեշտում, որ այսօր էլ Նայաստանում սիրում են նրա գրականությունը, եւ գրողները հավատարիմ են Մեծ լուռեցու գրական ավանդներին:



ԱՐՓԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՆՈՒՇՈՂ Ն. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ «ՆՈՎԱԿԻՄԻ ԹՈՌՆԵՐԸ» ՎԵՊՈՒՄ

«Ես ուզեցի, գյուղ եւ անապատ իրարու բերելով, վկայել անապատի կողմն աշխարհի՝ բաց աչքերով դեպի մահ քալող պարզունակ մարդոց ա՛յնքան ֆիզիկական, որքան եւ հոգեկան խաչելությունը, անպատում ողբերգությունը անոնց հոգիին: Եւ դեռ՝ ուզեցի արձանագրել ապրի՛լ ուզող, կամ, հակառակ պարագային, գոնե հա՛յ մեռնիլ ուզող խոնարհ հոգիներու վերջին իղձերը եւ հնամյա ժողովուրդի մը առեակական իմաստությունեն քիտղ զարմանալիորեն խորունկ մտորումները»:⁶⁰

Նայոց ցեղասպանության անդամալի հերետանքներից անմասն չմնաց նաեւ արեւմտահայ նշանավոր գրող Նակոր Ասատուրյանը. նա ծնվել է 1903 թ. պարսկական Գամիքքում՝ Կապադովկիայի Մաժակ գավառի Չոմախլու գյուղում: Այս հիմնավորց գյուղում ապրում էին շուրջ երկու հազար հայեր: Նակորի երեք փարին դեռ չլրացած՝ մահանում է հայրը, եւ վաղ փարիքից ընտանիքի հոգսը ընկնում է նրա ուսերին:

1915-ի Մեծ Եղեռնը ամայացնում է այս ավանը, եւ այնպեղ մնում է միայն ինը թուրք ընտանիքներ: Նայ երիտասարդներին զինվորագրում են, մեծահասակներին՝ բանտ լցնում, իսկ շուրջ հազար վեց հարյուր մարդու բշտում են դեպի հարավ՝ անապատներ: Նրանց մեջ էր նաեւ փասնամյա Նակորը՝ մոր եւ քույրերի հետ: Նրանք քառասուն օր ուրքով քայլում են դեպի Նալեա, որից հետո գնացք են նստում: Օրեր անց գնացքը կանգ է առնում անհայտ մի փեղ՝ Ժուրֆ կայարանում: Տասնվեց վագոններում լցված մարդկանց բաժանում են երեք մասի եւ բշտում արաբական զանազան գյուղեր: Ասատուրյանների ընտանիքը հանգրվանում է Պոսեյրա կոչվող գյուղում: Գաղթի ճանապարհն եւ, հատկապես այսփեղ, նոսրանում են մարդկանց շարքերը: Գրեթե մահամերձ մարդիկ ձեռքերով իրենց համար գերեզման են փորում, որպեսզի անթաղ չմնան, իսկ ոմանց էլ հաճախ նեւում են բլրի վրա գրնվող քարն եզրեր ունեցող «Ահարոնի» անտակ հորը: Այսփեղ էլ փոքրիկ Նակորին վիճակվում է դժվարագույնը. նա ընկերոջ օգնությամբ իր թույլ ձեռքերով մոր դիակը նեւում է «Ահարոնի» հորը, որպեսզի մայրը անապատում անթաղ չմնա եւ «բորենիներին» կեր չդառնա:

Աքսորված այս խմբի երեք հարյուր երեսուամեկ համապայտագիներից մնում են միայն քսանինը: Նակորն ընկնում է հայոց որբանոցները. սկզբում Երուսաղեմի, ապա Պորտ Մայիդի (Եգիպտոս) եւ Մերսինի (Կիլիկիա): 1920 թ. հորեղբոր կանչով Նակորը գնում է Նյու Յորք, որպեղ էլ անցկացնում է կյանքի մնացած փարիները:

Ցեղասպանությունից փասնամյակներ անց Նակոր Ասատուրյանը թղթին է հանձնում մեր ժողովրդի մռայլ օրերի պատմությունը՝ «Նովակիմի թոռները» վեպը: «Վեպի հեղինակը ամենից առաջ ականապես է. նա կրել է աքսորի ողջ սարսափները, արյուն-արցունք թափել,

⁶⁰ Նակոր Ասատուրյան, Նովակիմի թոռները, Երեսան, 1974, էջ 154: Այսուհետեւ՝ էջը շարադրանքի հետ:

մղկրացել այրող ավազուրներում եւ րեսել իր հայրենի գյուղի մարդկանց րառապանքը՝ մահվան երախում»⁶¹:

Թեկուզեւ վեպում շար անուններ փոխված են, այնուամենայնիվ սա ինքնակենսագրական վեպ է, որի միջոցով մենք պարկերացում ենք կազմում մի ողջ հայկական ավանի եւ նրա բնակիչների ոչնչացման մասին, ինչը «բարեխղճորեն» արեցին թուրքերը:

«Դուք անշուշտ չեք րեսած Չոմախլու գյուղը ու թերես ուզեք գիւրնալ թե հիմա՝ ուր է ան.

Գլխում անանկ զարկին, որ գյուղը ինքն ալ չի գիւրեր, թե ուր է հիմա»(17):

Վեպի սկզբում Հակոբ Ասարուրյանը ներկայացնում է հայրենի գյուղը, գյուղ, որ ապրում է ներփակ կյանքով, որեւէ բանով նման չէ հեռավոր քաղաքին. փողոցները նեղ են ու ծուռումուռ, բայց մարդկանց սրբերը լայն են ու բաց ամենքի առջեւ: Նրանք ապրում են մեկը մյուսի րառապանքով ու երջանկությամբ: Հենց այս փոքր ու երջանիկ գյուղում են ծնվում Հովակիմի թոռները, որոնց ցավոք սրտի վիճակված էր անցնելու դժոխքի պարունակների միջով:

Գյուղի խաղաղ կյանքը հաճախ էր խռովվում թուրք ոսրիկանների կողմից, որոնց անկուշտ աչքերը մշտապես հայի համեստ ունեցվածքի վրա էին: Նրանք հարկերի միջոցով անվերջ թալանում ու նսեմացնում են գյուղացուն: Շար բնութագրական են Խոջա Դայու խոսքերը, ով մի որդուն թուրքական բանակ էր ուղարկել, բայց սրիաված էր հարկեր վճարել թուրք ոսրիկանին, որն էլ, չբավարարվելով րվածից, վերցնում է միակ վերմակն ու ջրի սափորը: Նրա հեռանալուց հետո Խոջա Դային կնոջն ասում է.

—Ո՛վ գիւրե... գուցե որպեսզի սամայան մշտածարավ պեւությունը վերմակին րակ իր դարավոր մերկությունը ծածկելն առաջ նախշուն կուժեն ջուր խմեր սրտովը: 17):

Այսպիսի բնութագրություն րալով Հակոբ Ասարուրյանը երեւի թե չպարկերացներ, որ թուրք գազանը միլիոնավոր հայերի արյամբ իր մերկությունը ծածկել փորձելուց հետո այժմ էլ մրսում է ու հոխորտալով ջանում մեծ րերությունների վերմակի մի ծայրը իր վրա բերել:

Հայ Ժողովուրդը, լինելով դարավոր արժեքների կրող, ունի հարակ ընդգծված բնավորություն, որը պայմանավորում է նաեւ փոքր-ինչ միամրությունը եւ հավարը օրարների նկարմամբ: Թերես հենց այս հավարն էլ հասցրեց նրան, որ մի օր Չոմախլու գյուղի բնակիչները բոնեցին գաղթի ճամփան՝ Արգեսից մինչև Դամասկոս: Գնում են կանայք, երեխաներ, ծերեր, ու ճանապարհին ասրիճանաբար մեռնում են ապրելու բոլոր հույսերը: Ժողովուրդը դեռ սպասում էր, որ գյուղ վերադառնալու հրաման պիտի գար, նույնիսկ բարձրասրիճան թուրք պաշտոնյային վախվորած հարցնում են, թե երբ է գալու հրամանը ու սրանում պափասան, թե հրամանը «անշուշտ ճամփան է»:

Գաղթի ճամփան ուղեկցվում է մի շարք սարսափներով: Մայրերը ամեն կերպ փորձում են իրենց աղջիկներին հեռու պահել թուրք զինվորների աչքից, սակայն փաշան գաղթականների մեջ րեսնում է Հովակիմի թոռ րասներեքամյա Սրբուհուն ու երկու ոսկի առաջարկում մորը՝ աղջկան որպես հոգեզավակ վերցնելու համար: Բնականաբար մայրը չի համաձայնում, բայց համագյուղացիները սկսում են համոզել նրան՝ կրկին միամրաբար հավարալով, որ Սրբուհին փաշայի րանը երջանիկ կլինի, կուշտ փորով հաց կուտի, եւ որ փաշան բնավ

61 Նրանք Թամրազյան, Հակոբ Ասարուրյան, Երեսն, 1993, էջ 62:

նպատակ չունի նրան իր հարեմի անդամ դարձնելու: Նայ «խմաստուն» ծերերը գրեթե հարկադրաբար մոր ձեռքը մեկնում են այդ ոսկիներին, և փաշան փանում է Սրբուհուն, որ գնում է լուռ և առանց եր նայելու: Միայն հաջորդ օրն է մայրը սթափվում ու, վերցնելով որդուն՝ Նարությունին, փախչում է փաշայի փուն, որի կինը, անսպով մայրական աղեկություն ճիչերին, եր է վերադարձնում Սրբուհուն:

Սրբուհիներ անշուշտ եղել են գաղթի ճանապարհներին, որոնց մայրերը պարզապես վաճառել կամ ուղղակի հանձնել են թուրքերին, միայն թե իրենց զավակները կենդանի մնան՝ առանց մարածելու սպասվող աղետների մասին:

Դամասկոս հասնելու համար գաղթականների քարավանը անցնում է Նալեպով: Այս արվեստներով լի քաղաքը լցվում է հիվանդ ու հյուժված փարագիրներով: Գաղթականներին նստեցնում են գնացք, և օրեր անց գնացքը գիշերով կանգ է առնում մի անհայտ վայրում. «Ժողովուրդը կոստրին մեքենաբար և երկչուր նախիրի պես կսկսի վագոններեն դուրս թափվիլ: Թափվելն ետք, զարմանքով կրեսնեն, թե մեզ Նալեպեն Նամա, Նոմա և դեպի հարավ փոխադրող փաստուք վագոններու երկար գնացքեն հագիվ վեցը կմնար Ժուրֆ հասնող կառաշարին հետ: Մյուս փաստերկուքը լուծվեր ու անհետացեր էին գիշերին մեջ, նահապետական գյուղը բաժան-բաժան ընելով և նույն ընտանիքին անդամները կրոր բրդում, իրարմեն հավիլերնապես բաժնելով»(191):

Իրավիճակից խուճապահար՝ մարդիկ սկսում են փնտրել միմյանց և հարցուփորձ անել, թե ուր են և մինչև երբ է շարունակվելու այդ վիճակը: Ննչում է պատասխանը, որ օսմանյան բարեխնամ կառավարությունը ընդամենը օդափոխության համար է նրանց այդ գեղեցիկ վայրերը բերել: Թուրք զինվորականը ասում է, որ բնավ մտախոցվելու կարիք չկա, որովհետև նրանց Նոբի ավերարանական երկիրը պիտի փանեն, որը այդպեղից հագիվ մի քանի բուրայն կողմ է:

Ողջ ճանապարհը ուղեկցվում է թուրք ոստիկանների պատրճառած ստորագումներով ու հալածանքներով. «Յուրաքանչյուր հերթափոխին, ճիշտ է, թե ոստիկանն ոստիկան դեմքերը կփոխվեին, բայց համազգեստի մեջ մտնող ամեն թուրքի կաղապարը կմնար նույնը: Կմնար՝ հինգ հարյուր փարի շարունակ չփոխվող փխպր թուրք հոխորտ պաշտոնավարի, որ երբեք չէր կրցած կարիճի մը աննպատակ կերպով խայթելու բնագոն վեր բարձրանալ»(194):

Գաղթի ճանապարհը գրեթե խելագարության է հասցնում շարերին: Մարդիկ, որոնք մշտապես հավաքացել ու պաշտել են Քրիստոսին որպես իրենց աստված, այսպեղ հրաժարվում են նրանից ու ամեն ինչի համար նրան մեղադրում: Երիտասարդ Վարդուհին, որի ամուսինը ծառայում էր թուրքական բանակում, սկսում է բարձրաձայն բողոքել Աստծուն, ասում է, որ միայն նա է մեղավոր իրենց չարչարանքների համար, և որ նա միայնակ գոհվեց, իսկ իրենց հարյուրներով է գոհ փալիս թուրքին, որի ձեռքին հենց նա է գնեք քվել:

Այս դաժան իրականությունը հավասարապես նսեմացնում է ամենքին՝ հարուստ, թե աղքատ, ծեր, թե մանուկ: Նամայնքի գյուղապետ Օհանը ինքն էր ողջ գյուղի օրենքը, ինքն էր, որ մի անգամ գոռալով ամեն անկարգություն կարգի էր բերում. «Երեկ ազդեցիկ գյուղապետ՝ այսօր ո՛չ իսկ հովիվ»:

Պարմության քառուղիներով անցած մեր ժողովրդի այս մի հափկը հասնում է Պոսեյրա, որը արաբական գյուղ էր, ուր «խանձող արեւեն ու բորոս քարքարուրեն բացի հրամց-նելիք բան չունեն»։ Այսպես նույնիսկ ջուր չկար, որը կկարողանար հագեցնել արդեն երազում ջուր տեսնող մարդկանց ծարավը։

Գյուղում ապրող արաբական ընտանիքները ապրում էին սարսափելի հեղափոխականում։ Նրանց միակ նպատակը ուրելն ու բազմանալն էր եւ ոչ մի ձեռով չեն ուզում օգնել թշվառ գաղթականներին։

Ջուր գրնելու համար ամեն անգամ Նովակիմի թոռ Նարությունը ստիպված է լինում կտրելու երկար ճանապարհ եւ տանելու արաբ աղջիկների հեզնանքն ու ծաղրը։ Պոսեյրայում հանգրվանած գաղթականի վիճակը հեքթումն էր մարդկային բնականոն կենսաբանական տեսքի։ Օդապարիկի պես ուռած փորերով ուրվականների էին նմանվում՝ անշունչ եւ անաղյուս։ «այնքան ձեւագեղ, որ գերեզմանոցի մը սովորական ոգիներն իսկ պիտի վախ-նային գիշեր արեն դեմ հանդիման գալ հայ գաղթականին ու տեսնել արտառոց դեզերում-ները անոր»(241)։

Թեւեւ մեծահասակները որեւէ ձեռով դիմադրում էին մահվանը, բայց այդ բանը այլեւս անել չէին կարողանում փոքրերը։ Նովակիմի թոռնորդիները մեռնում են զանազան հիվան-դություններից։ Սարսափելի է մանավանդ այն պահը, երբ Աստվածը նկարագրում է, թե ինչպես է մայրը անգոր նայում զավակների անշունչանալուն։ Անչափելի ցավից նա նույ-նիսկ արտաքին չի կարողանում. «անապատն էր միայն, որ այն գիշեր, հոնգո՛ւր-հոնգո՛ւր... անձրեւեց դուրսը»։

Աստիճանաբար մեծանում է մեռյալների թիվը, եւ այլեւս հնարավոր չի լինում նրանց թա-ղելու։ Միակ հույսը մնում է «Ահարոնի» անտակ հորը, որը դարեր առաջ էր կառուցվել։ Նենց այս հորն են ներվում տասնյակ հայերի դիեր։

Շատ սրտառու է Նովակիմի թոռներ Սրբուհու եւ Պայծառի գրույցը, երբ քաղցը այլեւս մթաղնում է նրանց ուղեղները.

- Աշխարհի մեջ ո՞րչափ հաց կա։

- Աշխարհի մեջ... այնչափ հաց կա, որքան քար, գնա դուրսեն ժողվեն ներս բեր...

- Կրնա՞ ըլլալ հացի սեղան՝ ուրկե ամեն մարդ ուզածին չափ ուրե, կշտանա՞ եւ ըսե ա՛յ չեմ կրնար ուրել... Աշխարհի մեջ, որեւէ տեղ, կըլլա՞ աղքատ հաց (310)։

Ջարմանալիորեն դեռ մաքառման ոգին չկորցրած մարդիկ հույս ունենին, որ կտրկվեն այդ դժոխքից, բայց չգիտեին, որ հաջորդ պարունակ պիտի տեսնեին։ Նովակիմի հար-սին մշտապես փառնում է այն հարցը, թե ինչու Նիսուսը այդ դժվար պահին լքեց իրենց.

- Նարություն, տղաս, Նիսուս հայերեն կհասկնա՞ր։

- Չեմ կարծեր, _ պարասխանեցի, դե՛ռ շփոթ։

- Նապա ի՞նչպես Ավետարանը հայերեն գրեց։

- Թարգմանություն է, մայրիկ։

- Այո՞, ո՞վ թարգմանեց, _ ուզեց գիտնալ զարմացած։

- Սուրբ Մեսրոպը։

- Տիմա հասկցա, թե ինչո՞ւ ասքան արեն մեզի լսող ու հասկցող չեղավ(314)։

Արաբական անապատներում դեզերող հայի հոգին կիզիչ արեւի փակ էլ փնջում է Մասիսի ձյունապատ գագաթները: Պարոն Թովմասը մահվան մահճում գգում է մոտալուր մահը եւ կնոջը պարզվիրում իրեն շրջել Մասիսի կողմը: Մեռնում է պարոն Թովմասը՝ դեմքը դարձրած Մասիսի կողմը: Մեռնում է նաեւ Սրբուհին՝ խոր կասկած թողնելով մոր սրտում. արդյոք ինքը ճիշտ վարվեց Սրբուհուն թուրք փաշայի փնից երբ բերելով:

Նովակիմի հարսը գործադրում է բոլոր ճիգերը, որպեսզի ողջ մնա եւ կարողանա փրկել մնացած զավակներին: Օրեր շարունակ նա հաց չի ուրում՝ թողնելով զավակներին, սակայն մարդկային նյութական մարմինն այլեւս դիմադրել չի կարողանում: Խոր փրկամոլության մեջ մեռնում է Նովակիմի հարսը: Մահից առաջ նա կրակում է որդուն. «Աստված քեզի զավկի ցավ չդա. անոթի եւ անպաշտպան զավակ չդեսնեն, որպեսզի ինձի պես չսփրկվին ասանկ բաներով միտք մաշեցնել. չն՛մ գիտեր:

Մայրս, այդ օր, Նայոց պարմությունն էր՝ իր վիրավոր էջերեն խոսող:

Մայրս, այն օր, չմեռնող պարմությունն էր Նայոց»(329):

Որդին՝ Հարությունը, իր ընկերներ Մեծիկի ու Կարապետի հետ իրենց թույլ թեւերով փանում են ժայթից էլ ծանր թվացող Նովակիմի հարսի դին: Նրանք դիակը հասցնում են «Ահարոնի» հորի մոտ ու դժվարությամբ այն ցած նետում:

Գրեթե կես դար անց Հակոբ Աստուրյանը գրում է. «Սենյալ՝ մը մենավոր, առանձին: Թուրջ ու մուր: Ե ահա՛... հեռավոր հորեն քակվող մղձավանջային սա շարժանկարը փխուր: Շարժանկարային սեւ վարագույրի մը երեսեն երերուն մոմի մը ցոլքերով ուրվագծվող՝ ահա՛, նորոն, ձո՛նն այս նիհար, ցորենի ամենասիրելի այն հափիկին, որ Անապատի Կողմն Աշխարհի, իր իսկ հարազատ զավակին հիմա այրվող սա ձորքերովը, «Ահարոնի» համայնակով հո՛րն իջավ...»(335):

Այնուհետեւ մնացած հայերը պիտի մեկնեն Թֆիլե: Նովակիմի թոռները մնում են մեծ թոռան՝ Աղավնու հույսին: Երեք հարյուր երեսունմեկ մարդուց Թֆիլե հասնում են միայն փասը, որոնց մեջ եւ Հարությունը: Տասն էլ միասին ապրում են մի նեղիկ խցում՝ ուրելիքը անընդհատ խնայելով, որպեսզի հաջորդ օրը եւս ուրելու բան ունենային: Նրանցից էլ ոչ բոլորն են ողջ մնում:

Հարությունի փժգույն օրերին հաջորդում են օրերը որբանոցներում, ապա փարագրի կյանքը Ամերիկայում: Չնայած անհավաքալի փորձություններին՝ Հարությունը ողջ է մնում, քանի որ մայրը կրակել էր.

«Չէ՛, փղաս, դուն պե՛տք էր, որ ապրեիր, հորդ օջախը պե՛տք էր, որ խավար չմնար...

Որովհետեւ գրված է կորսված Ավետարանի մը ծոցը... թե Առաքել ծնավ Արսեն, Արսեն ծնավ Նովակիմ, Նովակիմ ծնավ Նովհաննես, եւ Նովհաննես ծնավ Հարություն...»:(334):

Այս գիրքը եւս մի պարզամ է մեզ՝ Ցեղասպանությունը չապրածներիս համար, որպեսզի, պարմության դասերը սերտելով, կարողանանք օրինակ առնել ու պայքարի ոգին արթնացնել ամենքիս մեջ՝ հանուն միլիոնավոր անմեղ հոգիների, հանուն մեր անցյալի ու ապագայի:

ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ

«ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ուստա Կարոն» իր կառուցվածքով եւ բովանդակությամբ, բնականի եւ իդեալականի գուգադրությամբ նորություն է հայ վեպի պատմության մեջ եւ էպիկական շնչով կերտված լայնակվալ սրեղծագործություն է, որպեսզի միահյուսված են մեր ժողովրդի անցյալն ու ներկան, ընկերային, քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր կյանքի ըմբռնումները, կենցաղը, ավանդույթները, ազատագրական պայքարի անմահ ոգին: Ինչպես նշում է ակադ. Ս. Սարինյանը. «Համաշխարհային գեղարվեստական փորձի յուրացմամբ Իսահակյանն սրեղծել է իսկական իմաստով ազգային էպոս, հայոց էթնիկ բնավորության, կենցաղի ու բարքերի, պատմության, առասպելի ու իրականության միֆոլոգիան՝ անկրկնելի մի երեսույթ հայ վեպի պատմության մեջ»¹: Վեպում Իսահակյանը մարմնավորել է հայ ժողովրդի հոգեկերտվածքի եւ ազգային բնավորության ինքնատիպ գծերը, որոնք ձեւավորում են մեր ժողովրդի մարդասիրությունը, փոկությունը, ինչպես նաեւ ազատության, խաղաղության եւ ժողովուրդների բարեկամության մասին հեղինակի երազանքները:

«Ուստա Կարո» վեպն ազգի համար օրհասական այդ օրերին «հիշողության կորստով» տառապող անտարբեր եւ անհոգ մարդկանց համար փազնապի կոչնակ էր: Հայ ժողովրդի մարտիրոսությունը ցնցում է նրա զգայուն հոգին: Վեպի պատմական հենքը համիդյան արյունալի բռնապետության եւ Առաջին աշխարհամարտի տարիների մղձավանջային իրականությունն է: Իսահակյանի ցանկությունը մեկն է՝ համախմբել ազգի ճակատագրով մտահոգված բոլոր ուժերին, որովհետեւ վրանգի տակ էին նաեւ նրանք, նրանց ֆիզիկական եւ հոգեւոր գոյությունը: Թերեւս հենց այդ նպատակով էլ գրել էր՝ «Ամեն հայ փոքր-ինչ Ուստա Կարո է» խորիմաստ բնաբանը: Նա դիմում է իր սրեղծագործական երեսակայությանը, սրեղծում այն հոգեւոր փարածքը, որպեսզի մարդը կարող է ազատ ապրել ու սրեղծագործել՝ կերտելով այն միակ հանգրվանը, որպեսզից դեպի լույսն ու ազատությունը գնալն ավելի դյուրին է: Գրողն իր հոգեւոր փարածքին համապատասխան հերոս պետք է ընտրեր, որը պետք է դառնար իր մտքերն ու իդեաներն իրականացնողը:

Թե՛ Գեորգյան ճեմարանում, թե՛ Գերմանիայում ուսանելու տարիներին, երբ տարվել էր Նիցշեի եւ Շոպենհաուերի փիլիսոփայությամբ, Իսահակյանը հաստատականության շնորհիվ կարողանում է ուսումնասիրել հակասություններով լի աշխարհն ու հասարակական կյանքը, հետեւում բնության խորհրդին եւ երկրասարդական վառ երեսակայությամբ կազմում է իր գեղարվեստական աշխարհը, սրեղծագործության ծրագիրը, ժամանակի հետ անվերջ մշակում այն՝ իր երկերում առաջին հերթին սերն ու հոգին դնելու եւ այդպես մարդկանց ներկայանալու նպատակով:

Մտորելով ապագա «օրիգինալ գրքի» մասին, 1894 թ. նոյեմբերի 26-ին գրում է, որ իր գրքի հերոսների մոտ առաջնակարգ տեղ պիտի գրավի «ազատության սերը, վրեժի սերը... ճնշված մասսայի բողոքը»², իսկ մի քանի օր անց, դեկտեմբերի 11-ին, կատարած գիշերային

1 Ավ. Իսահակյան, Ուստա Կարո, Երևան, 2006, էջ 18:

2 Անդ, էջ 103:

գրառմամբ ներկայացնում է ապագա վեպի հերոսին. «Ներգիտերն մշակում եմ այն փիպը, որ իմ գրվածքում ես պիտի ինձ նկարագրեմ: Ես պիտի իմ մեջ մարմնացնեմ մի հոգի, որին ես պիտի Գերմարդ (Übermensch) անունը»: Գրողը խոսում է նիցշեական Գերմարդի մասին, որը լիովին համապատասխանում է հերագայում կերպած Կարոյի նկարագրին: Գրական աշխարհի նոր ուրբ դրած երիտասարդը գտնում է, որ իր ապագա հերոսը պիտի լինի «Խել-լուք, մտածող ու քննող, անալիզ անող ու հարցասեր, սկեպտիկ եւ միշտ մտորող...», պիտի ունենա «գեղեցիկ դեմք, կնճռուր ճակատ, փխուր, բայց փայլող, մարող աչքեր», «նա պիտի պատվասեր ու ասպելու լինի, հերոս ու դյուցազն, պատերազմում զենքը ձեռին պիտի մեռնի փանջվողի ու թշվառի համար եւ պիտի հսկա քարի փակ թաղվի, զինվորների հետ, ուռնու փակ», «պիտի անբռն մնա, սոված ու ծարավ», «պիտի բոլորին կարեկցե, բայց պիտի բոլորից սիրվի ու պաշտվի», «պիտի բոլորին ձեռք փառն օգնե, բայց ուրիշից մերժե այդ. ուրիշից նա պատկառանք է ուզում դեպի իրեն, նա ուզում է քնել, որ երազ փեսանի, որպեսզի երազի մեջ լա ու ոգևորվի ու մտորե»³:

Վեպի գլխավոր հերոս Կարոն Նախճվան գյուղում կազմակերպվող միջոցառումների հոգին ու աղն էր. նա ամենքի կողմից ընդունված եւ հարգված իմաստախոս էր, խորհրդավոր, վեճերը հարթող, կատարակալ ու զվարճախոս անհատականություն էր, որը հոգով ապրում էր միանգամայն այլ աշխարհում, ինչը հասանելի չէր շրջապատի մարդկանց: Նա ամենքի ուշադրության կենտրոնում էր՝ ժողովրդական բանաստեղծի նման ուրախացնելով եւ ոգևորելով մարդկանց: Գյուղացիները հավատում էին նրա հորինած արկածներին, երեւակայական «երազի մարմին հագած» քարավանով «ներսի ու դրսի, վերելի ու ներքեի» երկրներ կատարած ճամփորդություններին, որոնց մասին Ուսույայի հյուրերը ու զարմանահրաշ պատումը «գյուղացիների հայացքի առջև փռում էր նրանց փափագած աշխարհների փեսիկները, որոնք դուրս թափված ուրվականի պես գրկում, քաշում, հեռացնում էին նրանց հոգիները իրականության չոր ու չար շրջապատից»⁴: Կարոյից չէին նեղանում, նրան չէին նեղացնում, որովհետեւ նա ամենքին օգնության էր հասնում, անշահախնդրորեն պարտք էր փախի, ծանոթների հարսանիքների կամ կազմակերպված խրախճանքների ժամանակ աչքի էր ընկնում արտասովոր առարկաձեւերով:

Կարոն արկածախնդիր անձնավորությանը յուրահատուկ մեծամտության եւ ինքնափափ մտածողության փեր է, բայց եւ իր ապրածի ու զգացածի մասին ծանրակշիռ խորհող, հայրենի հողին ամուր կապված եւ փիլիսոփայական աշխարհընկալում ունեցող ինքնափափ մի անհատականություն, որ գերազանց գիտի լավն ու բարին, ունի կյանքը գնահատելու սեփական չափանիշները, որոնցով առաջնորդվում է: Նա ձգտում է ճանաչել աշխարհը, շրջապատի մարդկանց, ջանում է զանազանել եւ զարթել չարն ու բարին, բայց հասկանում է այնքան, որքան ի գորտ է: Իստահակյանը Կարոյի կերպարն ընթերցողին փեսանելի եւ հասկանալի է դարձնում նաեւ ներքին էության՝ լուռ խոհերի, մտորումների եւ ապրումների շնորհիվ: Թափառումների, փորձությունների եւ զանազան բարդ իրավիճակներում հայտնվելու ընթացքում փոխվում է նրա ներաշխարհը, նա կենսափորձ է ձեռք բերում, գաղափարապես հասունանում, երազում է անպայման դառնալ հայրենիքի փրկության գործի նվիրյալ զինվոր, բարին ու ճշմարիտը որոնող անհատականություն է, որովհետեւ քաջ գիտակցում է, որ աշխարհի էության հիմքը բարությունն է, դիմացինին հասկանալու, կարեկցելու եւ օգնելու ունակությունը:

3 Անդ, էջ 121-123:

4 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 215:

Գրողը Կարոյին իրավամբ անվանում է Ուսպա, քանի որ ցանկացած պարագայում իր գործի գիտակ է հմուտ վարպետ է: Կարոն աշխարհին, նրա ներկային ու ապագային նայում է ընկերոջ՝ Մահմուդ Չավուշի միջոցով. որոշ առումով նրանք լրացնում են միմյանց, որով Կարոյի կերպարն ավելի ամբողջական ու համոզիչ է դառնում: Չավուշն ամենուր Կարոյի ուղեկիցն է, նրա անբաժան եւ անդավաճան ընկերը, նրա մտացածին պարմությունների ճշմարտացիությունը հաստատողը, վեպում երբեմն առանձին գործողություններով հանդես չի գալիս, երբեք չի հակառակվում ընկերոջը, ավելին, գերադասում է հանգիստ, խաղաղ ու անխռով կյանքը: Ճակարագրապաշտ այս անհայտ աշխարհի մասին սեփական փիլիսոփայությունն ունի: «Չավուշը ֆարալիսը է, - գրում է Բասահայանը, - միշտ ասում է ինչ եղավ, պիտի եղներ, էն որ չեղավ, պիտի չեղներ, չէր կրնա եղնի, ինչ որ եղելոց է, եղնելոց է, ինչ որ չեղնելոց է, չեղնելոց է»⁵: Մի դիտարկում. թե՛ Կարոն, թե՛ Չավուշը պնդում են, որ իրենց ծննդավայրերից հեռացել են սիրած աղջիկների պարճառով, ինչը հավասար չի ներշնչում: Չավուշը՝ Կարոյի հավատարիմ ընկերն ու զինակիցը, պարզապես է անգամ նրա հետ դժոխք գնալ, թեև պայքարող եւ ըմբոստ անհատ չէ, սակայն մանկության փորձիների բոլոր երազանքները Կարոյի հետ է կապում, որովհետեւ գիտի, որ հավատարիմ ընկերը շրջապատում ժողովրդականություն վայելող արտասովոր մարդ է՝ անհիշատակ եւ անքնն, իր ապրելակերպով, նիստուկացով նկատելիորեն փոքրեկամ շրջապատի մարդկանցից:

Թեև կենսասեր Կարոյի մեջ կյանքի ուժը զորեղ է, սակայն, որպես բանական մարդ, նա վախենում է ծերությունից՝ ամենեւին չառաքափելով նրանից, որպեսզի չմամուլի Օրթն Նարութին, նրա նման չդառնա, նրա պես չմտածի, որովհետեւ «...Ասրված կա, ասել է՝ ծերանալուց, մեռնելուց, վախենալու չէ: Ասրված սրելով է եւ էնքան բարի է ու ողորմած, որ չի կորցնի իրան սրելովածին»⁶: Կարոյի համար կյանքն ամեն օր նոր իմաստ է պարանում, որովհետեւ անպարտ է անիմաստ օրեր չէր անցկացնում եւ հավատացած էր, որ ժամանակից շուրջ ու ժամանակի հետ ֆիզիկապես ծերանում են նրանք, ովքեր ի վերուստ փրկված կյանքն աննպատակ են վաւորում, մինչդեռ ինքը չի ծերանալու, հոգին միշտ խիղձով եւ երկրասարդական ավյուրով լեցուն է մնալու: «Մարդ քանի դեռ բաղձանքներ ունի, հույսեր, կրքեր ու երազներ, փակված ծերացած չէ, - գրում է նա, - իսկ միայն զառամած, նորից երկրասարդացած հասակում գուրկ է ցանկություններից, երազից, բաղձանքներից: Ծերը չի փեսնում, չի կարողանում փեսնել իրականությունը, իր ապրելու բաղձանքը, սրելով է պարտանքային, երազային իրականություն-պարտանք, երեւակայություն, այնպեղ է ապաստանում ծեր հոգին եւ ինքնախաբովում, մխիթարվում»⁷: Մարդը ծերանում է այն ժամանակ, երբ անցյալը երանությամբ է հիշում եւ պարտանքների գիրկն ընկնում. սա է Բասահայանի եզրահանգումը:

Մանկության օրերին հուսահատության եզրին հասած Կարոյի միակ մխիթարանքը աշխարհով մեկ դեգերումներն էին, իր հրաշք քարավանով թափառելը, ինչպես մինչ այդ վարվել էին Բասահայանի «Իմ կարավանը» (1906 թ.) պոեմի քնարական կերպարը եւ աշխարհից ու մարդկանցից վիրավորված «Աբու-Լալա Մահարի» (1909 թ.) պոեմի հերոսը: Այս պոեմներում, ինչպես նաեւ «Ուսպա Կարո» վեպի երկրորդ փոքրերակում Բասահայանը մեծ տեղ է հատկացնում քարավանի պարկերին, որը դառնում է հերոսի հույզերի մարմնացումը: Անիրական քարավանի ժամանակի ու հեքիաթային պարմությունների միջոցով գրողն իր վեպում առավել ամբողջական է բացահայտում երագող «աշխարհարես» հերոսի կերպարը: Քարա-

5 Գրականության արվեստի թանգարան (ԳԱԹ), Ավերիք Բասահայանի ֆ., 285-II, էջ 10:

6 Անդ, 347-II, 17:

7 Անդ, 327/5-II, 14:

վանի խորհրդանիշով և պատմություններով Իսահակյանը ընթերցողի դարին է հանձնում իր փիլիսոփայական խորհրդածությունները: Աշխարհի անկախությունից դառնացած, բայց հույսը երբեք չկորցնող Կարոն երազանքներով ապրող և հոգու գեղեցկությունը չկորցրած, հայրենիքն ամեն ինչից վեր դասող անհավականություն է, պարտասպար է կյանքի թելադրանքով զորք հավաքել, գնալ Արեւմտյան Նայասպան՝ կռվելու արյունախում սուլթանի դեմ և ազատելու հայրենի հողը:

Քարավանը Կարոյի երազի խորհրդանիշն է, այն րեսակաւոր, որ ծնվում է նրա հոգում ու մարմնում: Անուշներով ապրել կարողացող և հոգու գեղեցկությունն ու երազելու ընդունակությունը երբեւէ չկորցնող Կարոյի համար քարավանը կյանքի ոգին է, առանց որի այն կիմաստազրկվի: Քարավանի պատմություններով արտահայտվող հերոսի երազարեսույթյան հիմնական նպատակը Նայասպանի ազատագրության գաղափարին հանգելն է, բայց այն որքան վեհ, նույնքան դժվարին է, որովհետեւ Կարոյի ծրագրերն անիրական են, ավելին, նա իր անելիքը հստակ չգիտի: Գնում է Սուլթանի դեմ կռվելու ոչ միայն հայ, այլև թուրք ժողովրդին նրա ճշմունքից ազատելու նպատակով, ինչն անհավանական է: Այս հարցում ընդհանրություն ենք տեսնում նրա և Դոն Կիխոտի կերպարների միջև: Նայ ժողովրդի կյանքից երգիծական վեպ ստեղծելու նպատակ հետապնդող Իսահակյանը նախնական փորձերակում իր հերոսին շարժելու համար ներկայացրել է ծիծաղելի իրադրություններում, բայց հետզհետեւ Կարոյի կերպարն ավելի իրական է դառնում, կենսագրական փաստերը (որքի ցավալի և փխտուր մանկություն, հարկադրված փախուստը հայրենի գյուղից, օտար ու ամենակույ աշխարհում գոյությունը պահպանելու համար թափած ջանքեր) ավելի հավաստի են, քան քարավանի պատմությունները: Գրողն ավելի շատ է կարեւորել հերոսի, նույնն է թե իր երազանքը, ցանկությունը՝ իրականացած տեսնելու սրբազան գաղափարը, հանուն որի պարտասպար է կյանքը զոհաբերել: Երազարես Կարոն այն աստիճան է փարվում իր առաքելությամբ, ոգևորվում, որ նույնիսկ չի կասկածում, թե ազատելու է Նայասպանը:

Նյանքն ամբողջությամբ ընդգրկելու նպատակ հետապնդող գրողը սովորական վեպ գրելու խնդիր չէր դրել իր առաջ: Թե՛ պոեմեն, թե՛ հերոսը նրա րեսական ու րառապագին խորհրդածությունների և հայեցակարգային որոնումների գեղարվեստական արդյունքն են: Կարոն և Չավուշը նոր ժամանակների հերոսներ են, մասնակի բացառությամբ նույնն է նաև Օրթն Նարոյը: Բացահայտելով իրականության և հերոսի աշխարհընկալման հակադրությունները՝ Ավ. Իսահակյանը գեղարվեստական բարձր մակարդակով և համոզիչ կերպով ներկայացրել է ստեղծված դրամատիզմը: Նյանքը խորտակում է Կարոյի նվիրական ձգտումները: Ուրեմն ի՞նչ պետք է անել նա. ընտրե՞ր մահը, մեկնե՞ր Արեւմտյան Նայասպան, թե՛ հեռանար մայր բնության գիրկը՝ իսահակյանական Օհան ամու պես «աշխարհաթող» լինելու նպատակով: Եթե հանուն ժողովրդի ազատության զոհվել, կանմահանար, կապեր մարդկանց հիշողության ծալքերում, սակայն Իսահակյանը կանխամրադված մի այլ ճանապարհ է ընտրում՝ Կարոյի կրկին վերադարձի հող նախապատրաստելով, այնպես, ինչպես քարայրում փակված Փոքր Միքըլ պիտի վերադառնար: Կարոյի, ինչպես և Միքի փախուստը կյանքից կրած պարտություն չէր, այլ ժամանակավոր մեկուսացում, ինչն ավելի է ուժեղացնում կերպարի անհավականությունը: Կարոն իսկական միջնադարյան ասպետ է՝ անձնագոհ, հանդուգն, խիզախ, համարձակ: Մենք պարզորոշ տեսնում ենք նրա վարքագիծն առօրյա կյանքում, դժվարին իրավիճակներում և խրախճանքների ժամանակ, երբ լիովին բացահայտվում է հերոսի հարուստ ներաշխարհը, ուրվագծվում են կամքը և ձգտումները: Այդ ամենին զուգահեռ առանձնապես ընդգծվում է նրա բնավորության գլխավոր գիծը՝ հայ-

րենիքի ազատության համար պայքարի նվիրվելու բուռն ցանկությունը, մարտնչելու կամքը: Կարոյի կերպարը լրացնում են Չավուշը, Օրթն Հարություն, Սանամը, Օսկանը, Պոպոս Տացուն, Ռես Նշանը, որոնք հավասարի միջավայր են ստեղծում հերոսի գործունեության համար, նպաստում կերպարի ամբողջական բացահայտմանը, օգնում ողջ ծավալով ներկայացնելու ժամանակի պարկերը և ավարտուն՝ սրեղծագործության գաղափարը:

«Ուստի Կարո» վեպը խոհափիլիսոփայական սրեղծագործություն է, ուր հայ ժողովրդի կյանքը պարկերված է պարմական զարգացման որոշակի ժամանակահատվածում, ընթացքի մեջ: Գրողի գաղափարակիրները հարկապես երկրորդ փարբերակում Ուստի Կարոն և Օրթն Հարություն են: Ի դեմս նրանց դժվար չէ ճանաչել Բաախակյանին՝ իր խոհերով ու հույզերով, դեպի աշխարհն ու մարդիկ ունեցած վերաբերմունքով: Կարոն աշխարհին, իրերին և երևույթներին նայում է լավատեսորեն, ամենուր լուսավոր կեր է նկատում, իսկ Հարությունը իրարես է: Նեղինակը գրառումներից մեկում այսպես է բնութագրում Հարություն. «Պեսիմիզմը իրատեսություն է, նա իրականությունը տեսնում է առանց շարքի, մերկապարանոց ճշմարտությունը և դրա պարճառով էլ նա դառն է, վշտացնող, հուսահատեցնող: Նա տեսնում է աշխարհ-բնությունը դաժան, անգութ, գայլանոց, մարդը՝ էգոիստ, զազանային, կյանքը՝ կռիվ, անգութ կռիվ, մարդկային կյանքը՝ փանջանք, ցավեր, ախտեր, ծերություն, մահ...»⁸:

Օրթն Հարություն մանուկ հասակից արագորեն յուրացնում է աստվածաշնչյան դասերը՝ պարբերաբար հոգեւորական դառնալ, սակայն հարազատների համար միանգամայն անսպասելի որոշում է կայացնում՝ հրաժարվելով Եկեղեցու անունը լսելուց, որից հետո նրա հետ փարօրինակ բաներ են կատարվում: Ազգականները Հարություն դարձի բերելու նպատակով բազմաթիվ քայլեր են ձեռնարկում, բայց ապարդյուն. նա շարունակում է իր անկառավարելի և անբացատրելի արարքները, իսկ հոգու խռովքը ձգտում է փարատել մենության մեջ, մարդկանցից հեռու, ջրաղացում կամ սարերում, այրերի մեջ, լուռ և մութ տեղերում, ուր ինքնամիտի անձնավոր էր լինում իր խորհրդածություններին ու երազանքներին: Նրա երազներում հանկարծակի հայտնվում է Նրեղենը՝ եթերային և անգութ մի էակ՝ անդամալիորեն փոխելով Հարության կյանքի ընթացքը: Սանամը նույնպես անսպասելիորեն է հայտնվում և փոխում Կարոյի կյանքը: Նրեղենը Հարության երազային աշխարհից իրականություն վերադարձնելու միջոց է, որպեսզի նա վերստին համոզվի կյանքի հավերժության գաղափարի մեջ: Նենց կյանքի ու մահվան հավերժության թեմաներն էլ շարք հաճախ դառնում են Կարոյի և Հարության մտորումների առարկան: Հարություն կյանքի մարդ է, չի փրկում սին պարբերակներին, հոգու մտայն գրելու նպատակով կարող է կարակներ անել, խնջույքների մասնակից դառնալ և մրաժել կյանքի հավերժության մասին: Նա լավ է գիտակցում, որ կյանքի բնական ընթացքն է վերջո հասնելու է մահվան սահմանագծին, բայց ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե մարդն ինչու է անցավոր: Նրա համար անհասկանալի է նաև Կարոյի այն կարծիքը, թե պիտի ընդունել անխուսափելի մահը, քիչ մրաժել մահվան մասին, քանի որ Աստված մարդուն կյանք է տվել, որը պետք է վայելել՝ լիովին զգալով կյանքի բերկրանքն ու քաղցրությունը: Մարդն աշխարհ է եկել ապրելու, նաև մեռնելու համար, ուստի մահվան գաղափարի հանդեպ նրա վախի, այդ վախից անվերջ ծնվող ներքին փազնապանքի և սեփական անգործության մասին երկարատև մտորումներից, առավել ևս Մոլոմոն Իմաստունի երազային հանդիպումից հետո Օրթն Հարություն համակերպվում է այն մտքի հետ, որ կյանքում անխուսափելին այն է, որ մարդը ծնվում է հողից, հող էլ պիտի դառնա, որ աշխարհի մեջ բոլոր իրերն ու երևույթները ժամանակ առ ժամանակ կրկնվում են: Այդ շրջապատյորի մեջ

8 Անդ, 285-II, էջ 365:

մարդու կյանքն անցողիկ է, ուստի անհրաժեշտ է ի վերուստ նրան փրկած կյանքը լիարժեք ապրել և վայելել, այլապես հետո ուշացած կզոջաս: Կյանքին փիլիսոփայորեն նայող գրողն իր հերոսին այլ կերպ չէր կարող ներկայացնել, որովհետև փիլիսոփայական այդ հարցերն առաջին հերթին իրեն էին հետաքրքրում:

Իսահակյանը կանխամրաված է լավատես Կարոյի կողքին ներկայացրել աշխարհը մերժող և Աստուծոց երես թեքած խենթ փիլիսոփա Նարութին, որպեսզի վերջինս Կարոյի հետ համապարփակ ներկայացնի ժողովրդի ծոցից եկած հայ մարդու էությունը, ներաշխարհը, հոգեբանությունը: Նայրենիքի ճակատագիրը սեփական ճակատագիր ընդունող Իսահակյանը փիեզերական վիշտն զգում և հասկանում էր հայության վշտի միջոցով, որովհետև վերջինս համամարդկային վիշտ էր համարում, ինչին ծայր առած գոյության անողորմ պայքարում աշխարհի անիրավ հզորներն անտարբեր էին նայում: Սեփական ժողովրդի վիշտը համամարդկային վիշտ ընկալող Իսահակյանը միավում է դեպի համամարդկային-փիլիսոփայական խնդիրների բարդ ոլորտը՝ ներդաշնակելով համագայինն ու համամարդկայինը՝ միաժամանակ դառնալով իր ապրած փոթորկոտ ժամանակի ծանրաչափը: Ազատության գոցված դուռը բացված փեսնելու հույսը չկորցրած Վարպետը չի կորցնում հավատը հարազատ ժողովրդի կենսունակության և վաղվա օրվա հանդեպ, նրա նյութական և հոգեւոր մշակույթի զարթոնքի նկատմամբ: Նայրենագուրկ ժողովրդի ցավը սեփական վերքի պես զգացող գրողը թեև փակուղու առաջ էր կանգնած, սակայն չէր հուսահատվում, լավատեսությունը չէր կորցնում, հավատացած էր, որ ի վերջո արյունուշտ բռնակալներն անցյալի գիրկն են անցնելու և փոխհատուցումը չի ուշանալու: Փիլիսոփայական այս եզրահանգմանը վեպի վերջում գալիս են Նարութն ու Կարոն, որոնք մահն ընդունում են որպես աշխարհի անողորմ հզորների գործած մեղքերի ու չարիքների համար պարծող արդարադատություն՝ «Նա, մահը հեջն է, հեջը մահն է»⁹:

Ո՞րն է աշխարհի գոյության իմաստը, եթե մարդը ծնվում է և մահանում, մի՞թե միայն ցանկությունից գուրկ մարդն է երջանիկ, թե՛ մարդն ուրախ է, միայն այն ժամանակ, երբ դադարում է անխուսափելի մահվան մասին մտածելուց: Կյանքի և մահվան մասին իրարամերձ դադողությունների խառնաշփոթում Օրթն Նարութն այնուամենայնիվ շարունակում է աշխարհը սիրել, հավատում է հոգու գոյությանը, որովհետև աշխարհում եղած հեքիաթներից ամենագեղեցիկն անմահության մասին նրա կերպած հեքիաթն է: Երջանկություն որոնելու ճանապարհին մարդն անվերջ խոչընդոտների է հանդիպում ու հաղթահարում, դեմ առ դեմ կանգնում մահվան առաջ, անընդհատ երջանկություն է որոնում և այն չգտած, չվայելած՝ հեռանում է աշխարհից: Սա կյանքի անբացափակելի խորհուրդներից է: Իսկ միգուցե հենց այդ պարզաբանում է Իսահակյանը Վենետիկում Սաադիի շուրթերով ասում. «Ծնվում ենք ակամա, ապրում զարմացած, մեռնում կարտով»: Ի փարբերություն Նարութի՝ Կարոն այն կարծիքին չէ, թե մարդն աշխարհ է եկել մեռնելու համար: Ընկալ է, նա նույնպես, ինչպես ցանկացած բանական արարած, վախենում է մահից, սակայն մահվան պարզաբանում չի կարող Աստուծոն չար համարել, ընդհակառակը, հավատում է հոգու անմահությանը, դրախտի և դժոխքի գոյությանը, գտնում է, որ աստվածատուր կյանքը պետք է ապրել արարելով և ոչ թե վախով. «... մի՛ վախենար, վախը լավ բան չէ, վախից մարդ ավելի շուր կմեռնի. մահի սարսափը ո՞րն է, անուն թող, հիշարակ թող»¹⁰: Նա գտնում է, որ մարդն իրապես ի գորտ է և պարտավոր

9 Ավետիք Իսահակյան, Ուստա Կարո, 2006, էջ 542:

10 ԳԱԹ, ԱԻՖ, 349-II, էջ 5:

է չարն ու բարին իրարից զանազանել բանականության շնորհիվ: Կարոն մահվան մասին չի մտածում, նրա համար երազի աշխարհը թվացյալ իրական աշխարհն է, որովհետև նրա երազը կյանքի գեղեցկության արդյունք է, որն ավելի կատարյալ տեսնելու ցանկություն ունի: Կարոն իրական կյանքին նայում է բաց աչքերով:

Վեպը ավանդականի եւ արդիականի, ինչպես նաեւ ընդհանուրի եւ անհատականի միասնությունն է: Կարոն միշտ ապրում է ներկայով, բայց անընդհատ հիշում է իր անցյալը, սկիզբը: Ավանդականի եւ արդիականի միասնությունն են հին ու նոր կյանքի հակադրությունների, հարափոփոխ ժամանակի քաղաքական հարցերի մեկնաբանումների, երկրի տերերի երգիծական, երբեմն գրոտեսկային բացահայտումները: Վեպը կրում է սրեղծագործող անհատ Բասիականի կնիքը: Ժանրային առումով բավական է հիշել, թե համաշխարհային վեպի պարմության մեջ ինչ վիթխարի դեր են խաղացել Սերվանտեսը, Բալզակը, Դոստոևսկին, Խաչատուր Աբովյանն ու Րաֆֆին: Նրանց գործը շարունակողի իր առաքելությունը պարփով կատարեց նաեւ Ավ. Բասիականը: Միանգամայն ճիշդ է նկատել Ավիկ Բասիականը գրելով՝ «Ուստա Կարոն» ոչ այլ ինչ էր, եթե ոչ «Նայկական հարցի» գեղարվեստական վերապարտմը դասական վեպի արտահայտչաձևերով»¹¹: Գործը նպատակ է ունեցել սրելով այնպիսի վեպ, որի մեջ լիովին բացահայտվեն հայ ժողովրդի ճակատագրական հարցերը, հավասարապես զուգակցվեն քաղաքականությունն ու կենցաղը, հերոսականն ու երգիծականը, իրականն ու գերբնականը, ընկերային կյանքի պարկերն ու ազգային-ազատագրական պայքարը: Վեպում ամեն ինչ պայմանավորված է հայրենիքի եւ ժողովրդի մասին գլխավոր հերոսի խոհերով, ձգտումներով, ապրումներով: Կարոն իր շիրակ բնավորությամբ, արարքներով, մտորումներով, Արեւմտյան Նայաստանում սրեղծված իրավիճակի, քաղաքական իրադարձությունների փիլիսոփայական, ողբերգական, քնարական, երգիծական մեկնաբանությամբ փալխա է ապրած ժամանակի ամբողջական նկարագիրը: Իրականության հերոսականն ու ողբերգականը, անցյալն ու ապագան պարկերելու խառնակյանական կարողությունն անմրցելի է, եւ, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում վեպը ներքին կառուցվածքով ու շոշափած խնդիրներով նա վերափոխումների է ենթարկել՝ անցյալը ներկայի միջոցով ապագային կամրջելու համար:

Վեպի ծավալը գրողին ընդհանրապես չի մտաբանել, նա ճշմարտացիորեն պարկերել է կյանքը կյանքի մեջ ու կյանքի պես: Իր առջեւ դրած խնդրի լուծման համար անխնայ մշակել է գրածը եւ ավարտին չի հասցրել՝ հավանաբար ասելիքը հավաքական ամբողջությամբ ներկայացնելու խնդրի լուծումը չգտնելով: Միգուցե դա բացատրվում է գրականությամբ կյանքը փրկելու նրա մեծ ցանկությամբ, չնայած Վարպերը ներքուստ համոզված էր, որ անհնար է արվեստով կյանքի անկախությունները լիովին շրկել, խոչընդոտները վերացնել: Նա ձեռքը միշտ կյանքի զարկերակի վրա է պահում, ամեն վայրկյան զգում կյանքի ռիթմը, այն սահմանը, որտեղ միաձուլվում են կյանքն ու գրականությունը, եւ ընթերցողը հաղորդակից է դառնում ժողովրդի ցավով տառապող ազնիվ գավակի խոհերին ու զգացումներին: Միանգամայն իրավացի է Արամ Ղանալանյանը, երբ գրում է. «Դոմիտրասի պես Բասիականը եւս համազգային մեծություն է: Նա հայ ժողովրդի ամենամասսայական բանաստեղծներից մեկն է, նրա վերքերի փաղանդավոր երգիչը»¹²:

11 Ավերիք Բասիական, Ուստա Կարո, Երևան, 2000, էջ 287:

12 Ա. Ղանալանյան, Բասիականի սրեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, 1955, էջ 101:

ՀՈԳԵԲՈՐ ԸՆԹԵՐՑՈՒԲՈՒՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

ԼԵԶՎԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԳԼՈՍՍԱԼԱԼԻԱՅԻ ՄԱՍԻՆ (ՄԱՍ Բ.)

ՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

Սուրբ Հոգով մկրտության եւ Սուրբ Հոգին ընդունելու վերաբերյալ ժամանակակից նեոպենտեկոստալները յուրահատուկ վերաբերմունք ունեն։ Ինչպե՞ս մեկնաբանել սուրբգրային այն մի քանի համարները, ուր խոսվում է Սուրբ Հոգով մկրտության եւ Սուրբ Հոգին ընդունելու մասին։ Մերօրյա մոնոտանականները՝ նեոպենտեկոստալները, կարծես սեփականաշնորհել են Սուրբ Հոգու մկրտության վարդապետությունը, համարելով, որ միայն իրենց է հայտնվել այդ եւ միայն իրենք են այդ մկրտության ու դրա հետեւանքների կրողները։ Ինչպես արդեն նշել ենք, նրանք պնդում են, որ Սուրբ Հոգով մկրտությանը եւ Սուրբ Հոգին ընդունելուն պետք է հաջորդի, որպես ապացույց, լեզվախոսությունը՝ գլոսալալիայի երեսույթը։

Այսպես, ավետարաններում Սուրբ Հոգու մկրտության մասին հիշվում է չորս անգամ՝ Մատթ. Գ. 11, Մարկ. Ա. 8, Ղուկ. Գ. 16 եւ Յովհ. Ա. 33 համարներում։ Այդ տեղերում Հովհաննես Մկրտիչն ասում է, որ ինքը մկրտում է ջրով, բայց իրենից հետո գալու է Հիսուս, որ մկրտելու է Սուրբ Հոգով եւ կրակով², ընդ որում «կրակով» բառը չկա Մարկոսի ավետարանում։

Բնագրում օգտագործված է ջն նախդիրը³, որը նշանակում է թե՛ «-ով» եւ թե՛ «-մեջ»։ Այսինքն՝ հունարեն բնագիրը կարելի է կարդալ ինչպես «ես մկրտում եմ ջրով, բայց նա կմկրտի Սուրբ Հոգով եւ կրակով», այնպես էլ՝ «ես մկրտում եմ ջրի մեջ, բայց նա կմկրտի Սուրբ Հոգու եւ կրակի մեջ»։

Հիսուս Գործք Ա. 5 համարում դարձյալ ասում է Սուրբ Հոգու մկրտության մասին, նկատի ունենալով Հոգեգալուստը՝ Սուրբ Հոգու կրակե լեզուներով իջնելը առաքյալների վրա Վերնատանը, ուր աշակերտները գործություն պիտի ստանային (Գործք Ա. 8) եւ Հիսուսի վկաները դառնային (Ղուկ. ԻԴ. 49, Գործք Ա. 4)։ Աշակերտները պիտի սպասեին մինչեւ գործություն ստանալը, և այդ օրը նրանք, Սուրբ Հոգու գործությունն ընդունելով, սկսեցին խոսել այլ լեզուներով (Գործք Բ. 1-4)։

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-ԺԲ., 2013, Ա-Գ.։

² Հունարեն՝ βαπτίζω ἐν πνεύματι ὁγίῳ καὶ πυρὶ։

³ Տե՛ս Соболевский, Древнегреческий язык, II., 1975, էջ 275, նաև "New Testament greek", An Introductory Grammar, by Eric G. Jay, SPCK, London, 1958, էջ 30։

Սուրբ Հոգու այդ պարգևի մասին Նախնական եկեղեցում հիշատակվում է Գործք Ը. 14-17, Ժ. 44-48, ԺԹ. 1-6 համարներում, ինչպես նաև Ա. Կորնթ. ԺԲ.-ԺԴ. գլուխներում: Բերված համարներում նշված է լեզուներով խոսելու մասին՝ ἡρώσαντο λαλεῖν ἐτέραις γλώσσαις: Իսկ Գործքի այլ տեղերում, ուր խոսվում է Սուրբ Հոգու ընդունելության մասին (Գործք Ը. 12-18; 38, 39; Թ. 17, 18, ԺԶ. 14, 15, 33; ԺԸ. 8) ոչինչ չի ասվում գոսսալալիայի մասին: Մի քանի համարներում էլ Պողոս առաքյալը թվարկում է Ս. Հոգու գործության եւ պարգևն ընդունելու մասին (Ա. Տիմ. Դ. 14, Բ. Տիմ. Ա. 6), ուր դարձյալ ակնարկ անգամ չկա գոսսալալիայի մասին: Հետևաբար պնդել, թե Սուրբ Հոգով մկրտությանը պարտադիր պետք է հետևի լեզվախոսությունը՝ սուրբգրային հիմնավորում չունի:

Ս. Գիրքը սովորեցնում է, որ Սուրբ Հոգին բնակվելով հավատացյալների մեջ գործում է տարբեր ճանապարհներով եւ տարբեր ձևերով: Մարդը չի կարող իր ուզածը թելադրել Սուրբ Հոգուն, Սուրբ Հոգին Ինքը պետք է թելադրի եւ գործի Իր ուզած ձևերով եւ ճանապարհներով:

Յովհ. Ի. 22 համարում, մինչև Հոգեգալուստը, Հիսուս փչելով առաքյալների վրա՝ ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Այս պարագայում Հիսուսի արածը Վերնատանը սպասվող դեպքին սպասելու համար գործության մի մասնավոր «տվյալություն» էր, որպեսզի տակավին թույլ, թերի աշակերտները կարող լինեին, պատրաստվեին հոգեգալստյանը⁴: Այսինքն դա պարզապես առաքյալների հոգին գորացնելու սկիզբն էր, քանի որ առաքյալները այդ ժամանակ անգամ Հիսուսի վրա դեռ կատարյալ հավատ չունեին: Այդ փչումով Հիսուս իշխանություն է տալիս իր աշակերտներին՝ մեղքերը կապելու եւ արձակելու, ինչպես խոստացել էր նրանց (Մատթ. ԺԶ. 19, ԺԸ. 15): «Այստեղ, որպես ընդհանուր սկզբունք, - գրում է Մ. արք. Օրմանյանը, - կարող ենք նշել, որ Հիսուսի հարությունից հետո ասածներն ու արածները մահվանից առաջ բոլոր ասածների ու արածների պաշտոնական լրացումներն ու գործադրություններն են»⁵:

Գործքում Սուրբ Հոգու մկրտության երեւոյթը նկարագրված է բազում տեղերում, տարբեր ձևերով ու անվանումներով:

Այսպես.

Գործք Ա. 5, ԺԱ. 16 - Սուրբ Հոգու մկրտության մասին է,

Գործք Ա. 8 - գործություն ընդունելու մասին է,

Գործք Ա. 8, Ա. 16, Ժ. 44, ԺԱ. 15, ԺԹ. 6 - անհատների վրա Սուրբ Հոգու գալու եւ իջնելու մասին է,

Գործք Բ. 4, Դ. 31, Թ. 17 - Սուրբ Հոգով լցվելու մասին է,

Գործք Ժ. 45 - Սուրբ Հոգու պարգևով լցվելու մասին է,

Գործք Ը. 15, Ժ. 47, ԺԸ. 2 - Սուրբ Հոգին ընդունելու մասին է:

Այն աշակերտները, որոնք Հիսուսի տված գործությամբ դեւեր էին հանում եւ հրաշքներ գործում, հետագայում ընդունեցին Սուրբ Հոգին (Յովհ. Ի. 22) եւ, ավելի ուշ, դարձյալ լցվեցին Սուրբ Հոգով (Գործք Բ. 1-4): Վերնատանը Սուրբ Հոգով լցվելուց հետո նույնը կրկնվեց եւ քիչ անց՝ Գործք Դ. 31 համարում:

4 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղեմ, 1974, § 103:

5 Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին, 1996, § 370:

Հետևաբար պարզ է դառնում, որ միևնույն երեւոյթը Գործքում ունի տարբեր անվանումներ եւ տարբեր ձեւերով է ի հայտ գալիս, տարբեր ժամանակներում կարող է կրկնվել եւ այլն: Ընդ որում այդ երեւոյթը (Սուրբ Հոգու մկրտությունը) չի ենթարկվում մեր տրամաբանությանը, եւ երբեք հնարավոր չէ նրա գործունեությունը սահմանափակել ինչ-որ շրջանակներում, ինչ-որ պայմաններ դնելով:

Այսպես, Սուրբ Հոգին ընդունելու փորձառությունը որոշ դեպքերում երեւաց այն ընդունելուց անմիջապես հետո (Գործք Բ. 4), իսկ մի ուրիշ անգամ՝ ջրով մկրտվելուց մի քանի օր հետո (Գործք Ը. 9-17), իսկ Գործք Ժ. 44-48 համարներում՝ ջրով մկրտվելուց առաջ: Մի քանի տեղերում էլ այն ի հայտ եկավ ձեռքերը դնելուց հետո (Գործք Բ. 17, Թ. 17, ԺԹ. 6, Բ. Տիմ. Ա. 6):

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Նախնական եկեղեցում Սուրբ Հոգու գործունեությունը արտահայտվել է ոչ թե մարդու կամքի համաձայն, այլ ըստ Իր՝ Սուրբ Հոգու հայեցողության: Այն երբեք չի սահմանափակվել մարդկային տրամաբանության շրջանակներում, նա գործել է մի նպատակով, երկրի վրա հաստատել Քրիստոսի եկեղեցին, տալով նրան իշխանություն, շնորհաբաշխություն, գորություն՝ այս աշխարհում Հիսուսի գործը շարունակելու համար:

Ժամանակակից աղանդավորները (ոչ միայն հոգեգալստականները), հենվելով վերը բերված համարներից որեւէ մեկի վրա՝ փաստորեն «ստիպում են» Սուրբ Հոգուն գործել իրենց «թելադրանքով»: Ինչպես տեսանք, այստեղից դեռ չի կարելի եզրակացնել, որ Սուրբ Հոգու ընդունելը անպայման պետք է ընթանա այդ ձեւերից միայն ու միայն մեկ՝ մեր ընտրած ու ցանկացած ձեւով: Այդ տրամաբանությունը սուրբգրային չէ, քանի որ սահմանափակում է Սուրբ Հոգու գործունեությունը, իսկ այդ սահմանափակումը որեւէ կրոնական շարժման համար հավասարագոր է այդ շարժման անհետացմանը՝ ժամանակի ընթացքում:

Եկեղեցու պատմությունն հաստատում է այդ սկզբունքը: Ընդհանրական եկեղեցուն բնորոշ է եղել մի հատկանիշ՝ կայունություն: Այն իր գոյության ընթացքում (մոտ երկու հազար տարի) հազվադեպ է տրոհվել եւ ժամանակն անգամ ի գործ չի եղել սասանել այդ կայունությունը: Այսպես, Կաթոլիկ եկեղեցին իր գոյության ընթացքում տրոհվել է ընդամենը երկու անգամ (X-XI դդ. եւ XVI դ.): Հայ եկեղեցին իր գոյության 2000 տարվա ընթացքում ընդհանրապես չի տրոհվել, եթե չհաշվենք պատմական պատճառների հետեւանքով եկեղեցու ծոցից հայ բողոքականների անջատումը (թեւեւ դա տրոհում չի կարելի համարել): Նույնը չի կարելի ասել արդի կրոնական շարժումների մասին: Բողոքականության առաջացումից մինչեւ մեր օրերը (մոտ 500 տարի) այդ շարժումը տրոհվել է հազարավոր ճյուղերի, մեկը մյուսից տարբեր դավանանքով, մինչեւ իսկ ոչ քրիստոնեական ուղղությունների վերածվելով (մորմոններ, Եհովայի վկաներ):

Հաջորդ հարցը Մատթ. Գ. 11 համարում «կրակով» բառի հետ կապված խնդիրներն են: Ի՞նչ է նշանակում «Նա կմկրտի... կրակով»: Ս. Ներսես Շնորհալին⁶ այդ

6 Տե՛ս Ս. Ներսես Շնորհալի, Մեկնություն Մատթեոսի ավետարանի, Ս. Էջմիածին, 2008, էջ 141-142:

հատվածը մեկնաբանում է այսպես. Հովհաննես Մկրտչի մարգարեությունը՝ մկրտելու Հոգով ու կրակով, իրականացավ Վերնատանը, երբ կրակե լեզուները նստեցին ներկաների վրա, և նրանք մկրտվեցին «ի Հոգին Սուրբ եւ ի հուր երեւելի տեւեամբ»։ Եւ ապա, շարունակում է Շնորհալին, թեւեւ ոչ այդպես հայտնի, այլ աներեւութաբար՝ ըստ հավատքի, նույն ձեւով մկրտվում են մարդիկ Հոգով ու կրակով։ «Կրակով» ասելը ցույց է տալիս շնորհների ընդունելությունը, որդեգրությունը։ Եւ ինչպես հուրը սկսելով փոքր տարածքում տարածվում է և ընդարձակվում, այնպես էլ Հոգու շնորհները՝ մկրտվելուց հետո գալով՝ մարդկանց բնությունը լցնում են ուղիղ հավատով ու մաքուր վարքով, դարձնելով նրանց վառման նյութ։

Մատթ. Գ. 11 համարի մարգարեական կանխատեսման մեջ կարելի է առանձնացնել երկու ուղղություն՝ **ընդհանրական** եւ **անհատական**։ Ընդհանրական ուղղությունը վերաբերում է Եկեղեցու հաստատվելու փաստին, որը տեղի ունեցավ Վերնատանը։ Այսպես, սուրբգրային այն համարները, որոնք վերաբերում են Վերնատանը եւ գրված են մինչեւ Գործք Բ. 1-4 համարի դեպքերը (ժամանակագրական առումով) օգտագործում են բայի ապառնի ժամանակը (Նա պիտի մկրտի՝ βαπτισει), իսկ Վերնատան դեպքից հետո՝ օգտագործում է բայի անցյալ ժամանակը (ավելի ճիշտ՝ aorist-ը, անցյալ կատարյալը), այսինքն, դիտում է այդ երեւոյթը որպես կատարված դեպք՝ (...մեկ Հոգով մկրտվեցինք..., Գործք ԺԱ. 16, Ա. Կորնթ. ԺԲ. 13 - βαπτισθησθε)։ Հետեւաբար Հովհաննես Մկրտչի մարգարեությունը Սուրբ Հոգով մկրտելու մասին վերաբերում է Վերնատանը Եկեղեցու հիմնադրմանը⁷։

Անհատական ուղղությունը վերաբերում է եկեղեցու անդամին, որը մկրտությամբ դառնում է եկեղեցու անդամ, Դրոշմով կնքվում եւ վերստին ծնունդ առնելով իր կյանքի ընթացքում վերածվում է վառման նյութի՝ փաստելով եւ վկայելով Հիսուսին ու Ավետարանը։

Այսպիսով, Սուրբ Հոգու մկրտությունը ներկայացնել որպես մի երրորդ օրհնություն՝ լեզվախոսության ուղեկցությամբ սուրբգրային չի կարող համարվել, այլ կամայական մեկնաբանության արդյունք է։

Այս առումով, հոգեգալստականների հետ շփվելիս, պետք է նկատի ունենալ

- որ նրանք դժվարությամբ են հրաժարվելու իրենց խմացած ու իրենց մեջ արմատավորված գլոսապալիայի վարդապետությունից, որի ճշմարտացիության մեջ չեն էլ կասկածում,

- որ միանգամից չեն կարող ընդունել իրենց վարդապետության ոչ սուրբգրային հիմնավորումը, մանավանդ որ վստահ են, թե իրենց վարդապետությունն է միակ սուրբգրայինը։

(Շարունակելի)

ՂԵՒՈՂԻ ԶԱՀԱՐԱ ՄԱՅԻՆՅԱՆ



⁷ Տե՛ս Ա. Պ., Дары Духа или фанатизм ?, GBV, 1991, էջ 9-10։

ԳԻՐԱԿԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ,

ԱՐՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐՎԱՆԴ ԴԵՏՐՈՍՅԱՆ

«ՇՇՈՒԿՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԻ» ՄԱՍԻՆ՝ ԲԱՐՁՐԱԶԱՅՆ

Այո՛, սա մի գիրք է, որի մասին անկարելի է շշուկով կամ կեսքերան խոսել:

Ամփոփում է վերջին ավելի քան հարյուր տարվա հայոց պատմությունը: Բայց ոչ միայն հայոց: Ինչ-որ չափով այն կարծես նաև Ի. դարի համաշխարհային պատմություն լինի, որովհետև չափազանց խոր ու ընդարձակ են նրա ընդգրկումները՝ մարդկության ամենամեծ պատերազմներ, ցեղասպանություններ, համակենտրոնացման ճամբարներ ու ընդհանուր գերեզմանոցներ, հեղափոխություններ ու կոլեկտիվացման սարսափներ, կրոնների ու գաղափարախոսությունների պայքար եւ այդ ամենի հետ մեկտեղ՝ մարդ արարածի մարմնի ու հոգու պառապալի խաշտանգումներ ու քննություններ:

Սակայն, նախքան «Շշուկների մադյանին»⁸ ավելի հանգամանորեն անդրադառնալը, փորձենք ծանոթանալ հեղինակի՝ Վարուժան Ոսկանյանի, նրա ծննդավայրի ու շրջապատի, ինչպես եւ այս գիրքն ստեղծելու շարժառիթների ու հանգամանքների հետ:

Միանգամից ասենք, որ նա ծնվել է Ռումինիայի Կրայովա քաղաքում, 1958 թ.: Մանկությունն ու պատանեկությունն անցել են Ֆոկշանում: Ավարտել է Կեդի Յոան Կուզա լիցեյը, այնուհետև՝ Բուխարեստի Տնտեսական գիտությունների ակադեմիայի առևտրի ֆակուլտետն ու Բուխարեստի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: 1990 թվականից ի վեր եղել է Ռումինիայի Խորհրդարանի անդամ, սենատոր, 2006-2008 թթ. Ռումինիայի Ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարար: Այժմ կրկին վարում է նույն պաշտոնը:

Իսկ թե ե՞րբ եւ ինչպե՞ս են Ոսկանյաններն ու մյուս հայերը հայրնվել Ռումինիայում, պարզ է. Թուրքիոյ ողջ տարածքում ԺԹ. դ. վերջում եւ ապա հաջորդ դարի առաջին տասնամյակներին իրագործված կոտորածներից առաջ կամ հետո՝ մի կերպ փախչելով, ինչ-որ հրաշքներով ողջ մնալով ու իրար գտնելով կամ չգտնելով:

Այնքան սարսափելի ու աննկարագրելի են հայ ականապետների տեսածն ու ապրածը, որ թվում էր, թե ոչ միայն սակավաթիվ վերապրածները, այլև նրանց ժառանգներն ի վիճա-

8 Վարուժան Ոսկանյան, Շշուկների մադյան, թարգմ.՝ Սարգիս Սեյան, Բուխարեստ, «Արարապ» հրատ., 2012, 482 էջ:

կի չեն լինի հաղթահարելու դժոխային հոգեվիճակն ու սառնասրտորեն նկարագրելու այդ ամենը:

Դրա համար էլ կարծիք էր ստեղծվում, թե միայն այլազգի գրողները կարող են անաչառորեն այդ անել, ինչպես արեց Ֆրանց Վերֆելը՝ գրելով իր մեծարժեք «Մուսա լեռան 40 օրը» վեպը:

Սկզբնապես դա, իրոք, այդպես էր, քանի դեռ թարմ էր վերքը եւ ցավն անտանելի էր: Բայց ժամանակ անցավ եւ այս ու այնտեղ երեսան եկան մեծարժեք այլ ստեղծագործություններ, որոնց հեղինակները հայեր են: Նրանք հարազատորեն, ցավով ու կսկիծով անցնում են ավագակախմբերով ու մարդասպաններով լեցուն նույն սար ու ձորերով, դաշտ ու անապատներով, որոնցով արյուն ու վերքերով քարշ են եկել իրենց պապ ու փապերը, խոշորանգված հարազատները՝ հիշեցնելու մեզ եւ աշխարհին, որ այդ ամենը մոռացության մատնելն ու իր անունով չկոչելը հոգի է նոր ոճիրներով ու անմարդկային վայրագություններով: Այդպիսի գրքերի հեղինակներ դարձան Մայքլ Ադլեն Կրպսերը («Անցում դեպի Արարար»), Էդուարդո Պեյրոսյանը («Նայրիկ. մեկ ու կես միլիոն ձայնի լռության երեսում»), Պիտեր Բալաքյանը («Ճակատագրի սև շունը»), Մուշեղ Գալշոյանը, Նովհանես Մելքոնյանը, Վահագն Գրիգորյանը եւ էլի ուրիշներ, որոնք արժանի են ամենայն դրվատանքի:

Է՛լ ավելի լայն արձագանք է գտնում, ահա, Վարուժան Ոսկանյանի սույն վեպը, որ Ռումինիայում բուժիկներն լույս ընծայվելուց հետո, (2009 թ.) շուրջով սկսում է իր հաղթարշավը: Նախ ճանաչվում է Ռումինիայի փարվա լավագույն գիրքը, որին շնորհվում է Ռումինիայի Ակադեմիայի գրական գլխավոր մրցանակը, այնուհետև ներկայացվում է գրքի մի շարք հեղինակավոր փոնավաճառների, ապա եւ թարգմանվում իտալերեն, իսպաներեն, եբրայերեն, անշուշտ, եւ հայերեն...

Այսօր, վաղը կավելանան նաեւ գերմաներենը, շվեդերենը, բուլղարերենը եւ ուրիշներ...

Նկատենք, սակայն, որ այս գիրքը առանձնապես լայն արձագանք է գտել Լատինական Ամերիկայի երկրներում, որտեղ շատերը «Շշուկների մարյանը» համեմատում են կոլումբիացի աշխարհահռչակ գրող Գաբրիել Գարսիա Մարկեսի «Նարյուր փարվա մենություն» գրքի հետ:

Շեշտվում է, որ հայ գրողի գիրքը շատ լավ է ընդունվել գրաքննադատության կողմից եւ դասվել ամենաշատ վաճառվող գրքերի շարքում: Կոլումբիական թերթերից մեկի տված հարցին, թե «Ինչպե՞ս եք բացատրում այս հաջողությունը Ռումինիայից եւ Նոյաստանից հեռու ընկած աշխարհի այս հատվածում», Վարուժան Ոսկանյանը պատասխանել է. «Կան համամարդկային մեծ թեմաներ, որոնց համար գոյություն չունեն փարածություններ կամ, այլ կերպ ասած, երկրագնդի վրա չկան հեռու կետեր: «Շշուկների մարյանը» Ի. դարի պատմությունն է՝ դիված այն մարդկանց աչքերով, ովքեր փառապեցին պատմությունից՝ այն ապրելու փոխարեն:

Այն հայ ժողովրդի ինքնության գիրքն է: Նրա էջերում դուք կարող եք գտնել այս ժողովրդի բնորոշ գծերը, ավանդույթները, կրոնական հավատալիքները, երգերն ու ասքերը, հին ու նոր հերոսներին, նրանց վշտերն ու իղձերը: Սակայն, այն գիրք չէ միայն հայերի մասին... Պատմությունն սկսվում է Ֆոկշանի մեր փան բակից եւ փարածվում է գրեթե բոլոր աշխարհամասերի վրա: Իրադարձությունների մի փոքրիկ մասն էլ կատարվում է Լատինական Ամերիկայում»:

Այն հարցին, թե որքա՞ն ժամանակ է պահանջվել փաստեր հավաքելու և գիրքը գրելու համար, հեղինակն ասել է. «Ես չսպիացած վերքի գրող եմ... փխրության զավակ: Գիրքը գրել եմ 2003 թ. ապրիլից մինչև 2006 թ. սեպտեմբեր: Այնուհետև, մոտ երեք տարի, այն նորից եմ գրել ու կրճատել մոտ երեք անգամ: Նյութ հավաքելը շատ ավելի երկար էր, ինչ-որ առումով իմ ողջ կյանքում նյութ եմ հավաքել այս գրքի համար»:

Այժմ՝ այն մասին, թե գիրքն ինչո՞ւ է կրում «Շշուկների մադյան» խորագիրը: Այս և բազում այլ հարցերի պատասխանները կարելի է գտնել հենց գրքում:

Ահա, էջերից մեկում կարդում ենք. «Մանկությանս տարիներին շշուկների ինչ-որ աշխարհում ապրեցի: Նրանք արտաբերվում էին զգուշորեն... Կային որոշ բաներ, որոնց մասին խոսելու իրավունք չունեի: Մասնավորապես՝ խիստ սպառնալիքի տակ անգամ ոչ ոքի իրավունք չունեի ասելու՝ լինե՞ր մանկապարտեզում թե որե՞ւ անձանոթի, որ մեր տանը խոսում են շշուկով: «Ի՞նչ կրես շշուկով, - հարցնում էի: «Կարդում, - պատասխանում էր Կարապետ մեծ հայրս: «Ինչո՞ւր կկարդաս: Ո՞ր է գիրքը»: «Այ պետք չունիմ: Գոց գիտեմ»: «Լավ, բայց ի՞նչ անուն ունի այդ գիրքը, ո՞վ գրած է»: «Կարելի է՝ դու, օր մը»: Ինչ-որ հիմա անում եմ: Եւ այդպես էլ անվանում եմ՝ «Շշուկների մադյան»:

Եւ գնալով մենք համոզվում ենք, որ ավելի տեղին վերնագիր դժվար էր գտնել կամ հորինել: Այլեւայլ աղբյուրներից ու գրքերից մեզ հայտնի էր, որ նախնիների միջով անցած և հրաշքով փրկված մարդիկ կարծես զրկված լինեն լեզվից, լռակյաց են դառնում կամ խոսում շշուկով: Ինչե՞ր են տեսել ու ապրել, բայց, ահա, թվում է՝ խոսելու բան չունեն... Ակամա հիշում ենք Վիլյամ Մարոյանի պատմվածքը, երբ երկու հայ (հենց այդ հայերից) հեռավոր Ամենրիկայում անգամ դժվարությամբ են բերանները բացում. լուռ ու մուռն նստում են իրար մոտ, ժամերով լռում, ավելի շատ տալիս-առնում են իրենք իրենց հեղի և իրարից դժվարությամբ են բաժանվում՝ անհամբեր սպասելով հաջորդ հանդիպմանը, որ կողք կողքի նստած՝ դարձյալ լռեն...

Ինչպես ասացինք, այս վեպի ընդգրկումները շատ լայն են, բայց սկզբնական օղակը հեղինակին շատ մոտ է և, ինչպես ինքն է նշում էջերից մեկում, «մանկությանս օրերի ծերունիների մասին է գրված» և ապա «մեծանալուս համեմատ պապերս սկսեցին երիտասարդանալ»: Ամենից առաջ դա իր Կարապետ մեծ հայրն է (պապը)՝ ժողովրդական իմաստունը, փիլիսոփան, գրքասերը, երաժշտասերը, մարդասերը, ամենքի կողմից հարգված մեծ մարդը, մեծ պապը, ապա՝ մոր կողմից մեծ հայրը՝ Մեղրակ Մելիքյանը, Կարապետ մեծ հոր քննակալ Սահակ Շեյթանյանը, կոշկակար Անտոն Մերգյանը, մեծ փողոցի վրայի մյուս կոշկակար Գրիգոր Մինասյանը, ապա՝ Օվանես Գրիգորյանն ու շեկ Արշակը՝ հայկական եկեղեցու ժամկոչը և թոջնորսը... և այդպես՝ մոտ ու հեռու շա՛տ ու շատ այլ ծերունիներ, մեծ ու փոքր շրջանակների հայ մարդիկ՝ իրենց խճճված կենսագրություններով, հանգիստ չտվող հիշողություններով, փրկության ավի գլուխ ներկայով և անորոշ երազներով: Նրանց մասին վիպագիրը նկատում է. «Ո՛չ որ իր մասին չէր պատմում: Յուրաքանչյուրը գործող անձի էր վերածվում մյուսի պատմության մեջ, և միշտ հարկավոր էր մեկի պատմածի շարունակությունը որոնել մյուսի մոտ: Այդ պատճառով մանկությանս տարիների հայերի պատմությունն անվերջ պատմություն է»:

Մեկ այլ տեղ կարդում ենք. «Գրեթե բոլոր մարդիկ, որոնց մեջ մանկությունս անցկացրի, ծեր էին: «Ի՞նչ գործ ունի աս երախտն մեր մեջ», - ծիծաղելով հարցնում էր ժամկոչ Արշակը:

«Ձգե՛, - ասում էր Կարապետ մեծ հայրս: - Սովորական երախա չէ: Օրերով ծեր երախա մըն է...» և ասում էր ինձ. «ինչ որ չապրեցանք մենք և մերինները, քեզի կավելնա»:

Եւ զարմանալի է, իսկապես. ուրիշները գրում են իրենց ընկերների, հասակակիցների մասին, իսկ սա՝ ժամիկական փոքրիկ այս քաղաքում՝ Ֆոկշանում, իրար գլխի հավաքված և քիչ առ քիչ պակասող մի բուռ հայ ծերունիների:

Եւ մեր ավանդությունների, սովորությունների, շահի ու շարք բաների մասին: Ու այնպես է գրում, որ հաճախ չես կարող զսպել ցանկությունդ՝ ընդգծելու այս կամ այն միտքն ու պատկերը, որ ուզում ես չմոռանալ: Եւ կարմիր ու սև թանաքով իմ ընդգծումները (կախված նյութի բնույթից ու էությունից) գնալով շարաւում են:

Ահա առաջին ընդգծումներիցս մի քանիսը. «Բուրմունքների միջոցով կարելի է նկարագրել մի ողջ կյանք, մանկությունս նույնպես կարելի է պատմել»:

Եւ սկսում է նկարագրել խմորն ու նրա անկրկնելի հոտը, նրա տեսքը, կենդանի օրգանիզմի նման նրա աճել-բարձրանալը... «Ներսիս՝ քունջութուճախների հոտը: Թաքուն, մութ կամ տեսանելի տեղեր, որոնք, սակայն, հազվադեպ էին բացվում և քանի որ արգելված էին, առավել հրապուրիչ էին թվում: Առանց քրքրելիք քունջութուճախների՝ մանկությունն անիմաստ է»:

Այդպես, մեկը մեկի երեւից հիշարարկվում ու շոշոփելիորեն նկարագրվում են գրքերի պահարանի ու գրքերի հոտերը («Գրքերը ճանաչում էի հոտերով»): Ապա հաջորդում են գորգերի, մյուս իրերի և վերջապես՝ սուրճի բուրմունքը: Վերջինիս գնումը, բովումը, աղալը, եփելը, հափուկ գավաթներում լցնելն ու մատուցելը հիշեցնում է չինական թեյի մատուցման արարողակարգն ու հմայքը, որ կան առանձին չին գրողների սրբազանություններում:

Այսպես համով-հոտով ու կարծես անշարապ սկսվում ու հոսում է պատմւմը, բայց մեկ էլ հանկարծ ինչ-որ մի հուշ արթնացնում է մեկ այլ պարմություն, և դու սկսում ես հետեւել այդ նորին՝ զգալով, որ հին թե նոր շաղկապված են իրար, օգնում, լրացնում են մեկ-մեկու՝ ամբողջացնելու վիպական կառույցը: Ճիշտ այդպես, ահա, իր արմատների, իր հոր ու մոր պապերի, նրանց ծննդավայրերի մասին պարմություններն ընդհատվում են, ասենք, իր օրերի Ֆոկշանում հրեա վաճառականների հայտնությամբ, ովքեր ժամանակ էին վաճառում. վաշխառուներ էին, որ տոկոսով ու ժամանակով փող էին փալխա...

Դրանք, իրենց հերթին, շուրով իրենց տեղը գիջում են այլ իրադարձությունների, որ կարարվել են Օսմանյան կայսրությունում կամ Ռուսիայում, Երկրորդ աշխարհամարտից առաջ կամ հետո: Եւ այդ ամենը ներկայացվում է ակնանարեսի տեսած-ապրածի հավաստիությամբ ու անմիջականությամբ: Կոլումբիական թերթի հարցերին տված պատասխաններում այդ առնչությամբ կան այսպիսի տողեր. «Թեև գիրքն ինքնակենսագրություն է թվում, իրականում հիշողություններն իմը չեն: Դրանք իմ պապերինն են, իմ մանկության տարեց հայերինը կամ, գուցե, նրանցից ավելի տարեցներինը»:

Այդպես էլ, ահա, ընթերցողը դեմ է առնում նաև Զորավար Դրոյի ներկայությանը ռումինահայության շրջապատում (1920-ական թվականներ) Հայաստանի առաջին Հանրապետության պաշտպանության նախարար, Բաշ Ապարանի հերոս Դրաստամատ Կոնսյանը հեղափոխում, երբ սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչպես ասված է «Շշուկների մատյանում», ընտրեց բոլշևիկյան Ռուսաստանի դեմ նացիստական Գերմանիայի հետ գործակցելը՝ այդպիսով համարելով, որ երկու նպատակ միանգամից պիտի կա-

փարի. գերմանացիների գրաված Երուսալյի հայերին պաշտպանելն ու բոլշևիկների գրաված Նայասարան ազատագրելը: Ոչ մեկը հաջողվեց կատարել, ոչ մյուսը:

Եւ այսպես է բացատրվում.

«Բոլշևիկների դեմ ուղղված իր արելության պարճառով Դրոն երեք բան անրեսեց.

I. Գերմանացիներն, առանց օգուր քաղելու, չէին զինի ամբողջ մի դիվիզիա, իսկ հայերի ու Նայասարանի ճակատագիրը նրանց նույնքան քիչ էր հետաքրքրում, որքան հետաքրքրել էր դաշնակից ուժերին Առաջին համաշխարհային պատերազմից հետո:

II. Տիրուրը ոչ մի դեպքում մրադիր չէր ազատ Նայասարան թողնել, այնպես, ինչպես մրադիր չէր որեւէ ազատ րարածք թողնել Երուսալյում:

III. Դրոն չէր գիտակցում, որ ուզած-չուզած՝ դեպի Նայասարան ճանապարհն անցնում էր Սրալինգրադով ու Դոնի արմունկով եւ մանավանդ չէր պարկերացնում, թե դա ինչ նշանակություն պիտի ունենար գերմանական բանակի համար»:

Նույն կերպ բազմաշերտ այս վեպի մեջ իրենց ուրույն րեղն են գրնում նաեւ հայերի հայրենադարձությունը, ապա եւ բռնի կոլեկտիվացումը Ռումինիայում, որ րեղի ունեցան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Ինչ խոսք, ըստ ժամանակագրության, մինչ այդ եղել են սարսափելի իրադարձություններ Արեւմտյան Նայասարանում, առհասարակ Թուրքիո ողջ րարածքում, Սիմանթոյի րոդով ասած՝ կոտորած, կոտորած, կոտորած... սակայն, ինչպես վիպագիրը (մեծ մասամբ), այնպես էլ մենք, չենք ուզում նախ բացել արյունոտ այդ մեջերը եւ հետո անդրադառնալ այլ իրադարձությունների:

Եւ այսպես՝ Ռումինիայից հայերի հարենադարձության մասին: Ինչպես հայրնի է, Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհի րարքեր երկրներից հայրենադարձություն կազմակերպվեց դեպի Սովետական Նայասարան: Տարբեր երկրներում ապաստանած եւ արդեն քիչ թե շատ բարեկեցիկ կյանք ապահոված հայերից ոչ քչերը, ոգևորված այն գաղափարով, որ Սովետական Միությունը (ուրեմն՝ նաեւ Նայասարանը) հաղթել են պատերազմում, լի են ամեն հնարավորություններով եւ դրա հետ մեկրեղ՝ իրենց հայրենակիցներն են, հայության հայրենիքը, շրապեցին մասնակից դառնալ այդ մեծ ներհոսքին, գալ, իրենց կարողություններով մասնակից դառնալ Նայասարանի էլ ավելի շենացմանը:

Նրանցից մեկն էլ Սիմոն Շեյթանյանն է դառնում՝ կնոջ ու դուստրերի հետ: Նա ֆոկշանցի ընկեր-բարեկամներին ասում է. «թե ինչ դրություն է Սովետական Նայասարանում, լուսանկար մը կորկեմ, որմն կհասկնաք: Եթե նկարի մեջ ուրքի եմ, կնշանակե, որ լավ է: Եթե կոթնած եմ պարի մը կամ աթոռի մը, կնշանակե՝ կամաց-կամաց: Եթե նաւած եմ, կնշանակե, որ գեշ է»:

Սիմոնն այդպես էլ անում է. ուղարկում է խոսարացված լուսանկարը, սակայն 1946 թ. ուղարկված այդ նամակը Ռումինիա, հասցեատրերին է հասնում երեք րարի հետո, 1949 թ., երբ արդեն դադարել էր հայրենադարձությունը: Այնուհանդերձ, նամակն ու լուսանկարը ձեռքից ձեռք էին անցնում, մանավանդ՝ նկարը, որում պարկերված էին Սիմոնի ընրանիքը եւ ինքը՝ Սիմոնը, խոտրերի մեջ պառկած:

Դե, դա բնական էր, պատերազմից հետո քայքայված երկրում ինչպես կարող էր լավ լինել հայրենադարձների համար, երբ րեղացիներն անգամ մի կերպ էին ծայրը ծայրին հասցնում: Դեռ լավ էր, որ Սիմոնի ընրանիքը խուսափում է 1949 թ. սկսված աքաորից, որին հանրապի արժանանում էին շատ հայրենադարձներ, որպես այս կամ այն երկրից եկած լրրեսներ:

Անկարելի է շրջանցել հայրենադարձության հետ կապված մի դրվագ: Հայրենադարձներն այս կամ այն երկրում մնացած հարազատներին իրենց վիճակի մասին փոխանցում էին ոչ միայն լուսանկարների պայմանական նշաններով: Ռումինիայից ներգաղթածները, օրինակ, շուրով գրան մեկ այլ միջոց: Նամակներում գրեթե բոլորը ջերմագին բարեկներ էին հղում մեծապատիվ պարոն Սրապյեկոյանին, որ ռումիներեն իմացողի համար նշանակում էր՝ Տեղամասցիդյանին, այսինքն՝ փողում մնա, փողիցդ չշարժվես, չգաս հանկարծ:

Բոլոր նամակները ստուգվում, կարդացվում էին, անշուշտ, բայց ստուգողներն այդպես էլ զլխի չէին ընկնում, թե ո՞վ կամ ի՞նչ է այդ հարգարժան Սրապյեկոյանը, որին բոլոր հայրենադարձները ջերմագին ողջույններ էին ուղարկում:

«Լավ էր, - ասվում է վեպում, - 1953 թ. Սրապինը մեռավ եւ Սովետական Հայաստանից աքսորը դեպի Սիբիր դադարեց, թե չէ՝ հայրենադարձների հետ մեկտեղ փողացի հայերն էլ հա՛կաքորվեին, ու երբ հայության թիվն այնպեղ մեկ միլիոնից պակասեր, այն կդադարեր լինել հանրապետություն ու կբաժանվեր Վրաստանի ու Ադրբեջանի միջև, եւ միաժամանակ կփակվեին Լեռնային Ղարաբաղի ու Նախիջևանի հարցերը»:

Այդ ժամանակներում դրությունը լավ չէր նաեւ Ռումինիայում: Պատերազմից հետո սոցիալիստական դարձված այլ երկրների պես Ռումինիայում եւս սկսվել էր բռնի կոլեկտիվացումը: Ընտանիքներով, գյուղերով մարդիկ դեմ էին կանգնում, բայց իշխանություններն ու իշխանավորները (Նիկոլաե Չաուշեսկու) գեներ ու զորքով, փանկ ու գնդացիներով, արյուն թափելով, կոլեկտիվացման համար ճանապարհ էին հարթում:

Ամեն պահ, ամեն մի առիթով «Շշուկների մափյանի» ծերունիները, նախ իբրեւ երեխաներ եւ ապա, քիչ առ քիչ մեծանալով իբրեւ երիտասարդներ, մութլի նորից ու նորից իրենց ծննդավայրերում են լինում, իրենց ծնողների, հարազատների, ընկեր-բարեկամների, սիրած էակների, այն օրերի իրենց զբաղմունքի ու հեղափոխությունների հետ եւ հանկարծ այդ ամենը ներկվում է արյան կարմիրով, ավեր-ավարներով, կոտորածներով, որ ամեն-ամեն ինչ դարձնում է սեւ ու անգույն:

Վիպագիրն ամեն անգամ փորձում է զսպել այդ պոռթկումները, շարունակել այլեւայլ բնույթի իր պատմւմները, բայց դա երբեմն հաջողվում է նրան, երբեմն՝ ոչ:

Այնպես որ, անկախ պատմությունների էությունից եւ ուղղվածությունից, ամեն ինչ այս գրքում կապված է հայերի մեծ ցեղասպանության հետ, որ սկիզբ է առնում ԺԹ. դարի վերջերից եւ շարունակվում մինչեւ հաջորդ դարի 20-ական թվականները, Թուրքիայի ողջ փարածքում եւ նրա սահմաններից էլ դուրս: Դեռեւս սուլթան Համիդի օրոք, նրա՛, որ պատմության մեջ մնաց «արյունոտ» մականունով, սանձազերծվեցին հայերի անօրինակ ջարդերը Տրապիզոնից մինչեւ Ադանա՝ խլելով ավելի քան 200 հազար հայերի կյանք:

Դա դեռ սկիզբն էր, որ ընդհափումներով շարունակվեց մինչեւ Երիտթուրքերի իշխանության գալը եւ ապա մինչեւ Առաջին աշխարհամարտը, որ իսկական մի առիթ էր՝ իրագործելու թուրք ազգայնականների վաղեմի երազանքը, մեկընդմիջ պաշարվելու համաթուրքական ծրագրերի իրագործմանը խոչընդոտող հայությունից եւ Հայաստանից:

Աշխարհն իրար էր խառնվել, էլ ո՞ւմ վեջն էր, թե թուրքերն ի՞նչ են անում, ո՞ւմ են կոտորում, մանավանդ, որ նման հարցերից իրենց ապառնակագրելու համար, հայաբարբել էին, թե քանի որ պատերազմական վիճակ է աշխարհում, հայերին փողափոխում են ավելի ապառնակ վայրեր:

Բայց նույնպիսի անտարբերություն ու անտերություն էր նաև դեռ պարերագմից առաջ, համիդյան ջարդերի ժամանակներում: Եւ դա էր, որ խիզախ հայորդիների 25 հոգուց բաղկացած մի խմբի՝ 23-ամյա Արմեն Կարոյի գլխավորությամբ, մղեց հանդուգն մի քայլի:

1896 թ. օգոստոսի 26-ին գրավեցին Կ. Պոլսի Բանկ Օթոմանը՝ դրամատրան անձնակազմից վերցնելով 140 պարանդ եւ սպառնալով, թե կայսրության մեծ գանձարանը կայաթեցնեն, եթե օրար պետությունները չմիջամտեն՝ դադարեցնելու հայության սպանողը:

Միաժամանակ դեսպանություններին ուղղված կոչում կային հայ ժողովրդի ճակատագրով մրախոգ երկրասարդ հայրենասերների ծանրակշիռ խոսքերը. «Մենք ոճրագործներ չենք: Բայց մարդկության ոճրային անտարբերությունը մեզ այս գործին մղեց»:

Եւ հանդուգն խիզախությունը րվեց իր դրական արդյունքը. արյունարբու սուլթանը «հուսահատ, որ իր գանձարանը կայաթեցնեն, նաև Բանկ Օթոմանի պահոցներում սեփական գանձեր ունեցող օրար պետությունների հորդորով, ընդունեց հակահայկական դաժանությունների դադարեցման պայմանն ու խմբին թույլարեց գանձարանի փնտրեն սրը Էդգար Վինսենթի անձնական առագաստարանավով Մարսել գնալ...»:

...Ներագայում Արմեն Կարոն (Գարեգին Պատրիմյան) ակնապես եղավ իր ժողովրդի առավել ընդգրկուն ու դաժան կոտորածների, ավեր-ավարների, շարունակական ոչնչացման եւ զայրույթից ու ցավից խոշորանգվելով, չգիտեր, թե ի՞նչ կարելի է անել ցեղասպանություն իրագործող մի ողջ կայսրության դեմ: Ու եթե կայսերական մեքենայի դեմն առնել չէր կարող, մնում էր հնարավորին չափով վրեժխնդիր լինել կատարվածի համար գլխավոր կատարողներից: Եւ 1920 թ. նա, Շահան Նաթալիի հետ մեկտեղ, կազմակերպում է Նաբուկ գործ անվանված առաքելությունը, սրելով «Նեմեսիս» (հին հույների վրեժխնդրության աստվածուհու անունով) վրիժառուների խումբ՝ Սողոմոն Թեհլերյան, Արշավիր Շիրակյան, Մկրտիչ Ծաղիկյան, Արամ Երկանյան, Միսաք Թողլաքյան, Հրաչ Փափազյան եւ ուրիշներ, ովքեր աշխարհի փարբեր կողմերում հաջորդ 1-2 փարում հեղափոխում եւ շանսափակ են անում ցեղասպանության կազմակերպիչներից ու ղեկավարներից շարերին, հատկապես՝ Թալեաթին, Էնվերին, Ջեմալին, Սաիդ Նալեմին, Բեհանդդին Շաքիրին, Բահրուդ խան Զիվանդիրին...

Նախկանշական է, որ նախ պարբերաբարվում է ջարդերի ու րեղահանությունների կազմակերպիչներից 600-ի անուններով ցուցակ, որը, սակայն, այլեւայլ նկատառումներով, քիչ առ քիչ կրճատվում է՝ թողնելով միայն ամենագլխավոր դահճապետերին, որոնց արդեն թվարկեցինք՝ նորից ու նորից մրաբերելով նրանցից ամեն մեկի դերը արյունոտ այդ խրախճանքում: Եւ վրիժառուներից յուրաքանչյուրն իր րեսածն ու լսածն էր հիշարակում՝ պահանջելով դրա դիմաց հարուցում:

Հիշվում են քարեղարյան եղանակներով սպանված մեր մեծերը՝ Միամանթոն, Վարուժանը, Զոհրապը, Մեսկը, ճանաչված այլ մրավորականներ, պարվարժան ընրանիքներ, ծերեր ու երեխաներ եւ առհասարակ հայեր, հայեր, հայեր... Իսկ Կոմիտասը, այդ ամենին ի րես, խելագարվեց:

- Տրապիզոնի մեջ, - ասաց Միսաք Թողլաքյանը, - քանի մը հազար կիներ, իրենց երախաներուն ու ծերերուն հետ, որոնք չէին կրնար քալել, լսաբերու վրա դրին եւ բաց ծով դրկեցին: Կիները ուրախացան... Բայց հաջորդ օրը լսաբերը պարապ վերադարձան ափ: Կիները ծովուն մեջ խեղդված էին: Նույն բանը պարահեցավ Ունին, Օրդու, Տրիպոլի, Կերասուն, Ռիզե...

- Գերմանական որբանոցի հայ որբերը մոտակա լիճին մեջ խեղդեցին, - ավելացրեց Սոդոմոն Թեխլերյանը:

- Առաջին կիները, որոնք Մեսքենե, Ռաքքա եւ Դեյր Էզ-Ջոր հասան, - ասաց Արամ Երկանյանը, - Եփրատի վրա լողացող դիակներն էին:

Տիշեցին նաեւ Նալեպի գերմանացի հյուպարոս Ռոյսերի վկայությունը. «Եփրատի վրայով անընդհար դիակներ են անցնում: Բոլոր մարմինները կապված են նույն ձեռով՝ երկուսական եւ մեջք մեջքի, մի բան, որ ցույց է տալիս, որ սպանությունները պատահական չէին, այլ՝ կազմակերպված...»:

Նման վկայություններն են հիմք հանդիսացել՝ Եփրատը համարելու հոսող երկա՛ր ու երկար գերեզման:

Մեկը մեկից սահմոկեցուցիչ են հազար ու մի վկայությունները, թե ինչպես մերկ, վերքերով պարված երեխաներին թողել են գիշակեր թռչունների հարձակումների տակ, մեկ այլ տեղ՝ լցրել են քարանձավներն ու մուրքի մոտ հսկայական խարույկներ են վառել՝ երեխաներին ծխախեղդ անելու համար, իսկ զանգվածային գերեզմանոցների կամ ամայի վայրերում, խոշտանակելու եւ տեղում թողնելու վկայությունները անթիվ ու անհամար էին:

Եւ այս մտայլ համայնապարկերի վրա լույսի պես են հնչում Արմեն Դարոյի խոսքերը՝ ուղղված «Նեմեսիսի» անձնուրաց վրիժառուներին.

- Անոնց կիներուն չղպի՛ք, ո՛չ ալ երախաներուն:

Այսինքն՝ ա՛յս դժոխքում էլ չիջնել, չհավասարվել ցեղասպան ոճրագործներին: Եւ վրիժառուներն այդպես էլ վարվեցին:

Բայց հիշյալ ոճրագործների սպանությունն ընդամենը կաթիլներ էին նրանց նյութած չարագործությունների ծովի դիմաց: Շարասյուներով անասունների պես տարվող հայ կանանց, ինչպես էին, թալանում ու բռնաբարում թուրքական բանտներից հարկապես ազատ արձակված ու զինված հանցագործները, քրդական ավազակախմբերը, չեչեններն ու բեղուիները: Եւ անճանաչելի էին դառնում մերկանդամ դիակները՝ փռված ամենուրեք:

Դրանում անձամբ համոզվեց մանավանդ Գրիգոր Զոհրապի որդին՝ Լեւոնը, որն իր հոր ձեռքակալումից ու աքսորումից հետո փորձեց հասնել նրան, ինչ-որ հնարով ազատել, բայց... միշտ ուշանում էր, քանի որ հայ երեսփոխաններին՝ Գրիգոր Զոհրապին եւ Վարդգես Մերիցույանին գնացքով, ապա մեքենայով էին տարել մինչեւ Նալեպ: Եւ երբ Լեւոնը հասավ այնտեղ, իմացավ հարբած սպաններից, որ շարերի հետ այդ 2-ին էլ ահավոր դաժանությամբ են սպանել ու թողել դաշտում: Մութավորապես իմանալով սպանության վայրը, Զոհրապի տղան վարձում է տեղացիներից երկուսին, որ իր հետ սայլով գնան ու փորձեն գտնել հոր դիակը, բայց դիակները շար էին եւ դժվար էր նրանց տարբերելը:

Եւ Լեւոնն սկսում է թաղել բոլորին՝ մտածելով, թե մեկն էլ, գուցե, իր հայրն է: Այդպես՝ մի քանի շաբաթ, մինչեւ որ տեղացիներն այլեւս չեն ուզում օգնել նրան՝ անկախ գնից, եւ ինքն էլ, ի վերջո, ուժասպառ է լինում...

Իսկ կոտորածները շարունակվում էին եւ դեպի անապատները ձգվող հայ անպաշտպան, մերկ ու քաղցած կանանց ու երեխաների շարասյուները գնալով հալվում ու ոչնչանում էին: Դրա փոխարեն ավելանում էին զանգվածային գերեզմանները, որոնց հեղինակն անվանում է պարմության խարաններից: Եւ, առհասարակ, ամեն բոլոր հանդիպում եւ հեղինակի դիպուկ բնորոշումներին, քանի որ նա շարադրանքն առաջ է տալիս ոչ թե սովորական մի

պարամոթյան նման, այլ՝ մեր ցավն զգալով ու խորապես սպրելով: Ահա՛ դրանցից մի քանիսը.

«Գաղթականների համար զինվորները նույն դեմքն ունեին, իսկ զինվորների համար աքսորյալներն անդեմ էին ու նույնիսկ՝ մարդկային հասկացություններից զուրկ»։ Ահա եւ մեկ ուրիշը. «Մինչ գաղթականները հեղզհեղու մերկանդամ ու ցնցոտիապատ էին դառնում, զինվորների համազգեստները նորոգվում էին, ավելի փայլուն երեսում, իսկ նրանց ձիերը՝ պճնված»։

Մեջբերել եմ ուզում նաև հայ սովալլուկ երեխաների նկարագրությունները, որ օր օրի պակասում էին ու պակասում:

Արտաբուստ Զար Է մեծ չէ «Շշուկների մաքրանք», բայց անկախ իր ծավալից, այն Զար Կարողունակ է, ասես մի քանի գրքերի միախառնում լինի եւ Զար դժվար է ամբողջական խոսք ասել այս վեպի ողջ ընդգրկման ու ճյուղավորումների մասին: Ճիշտ այդպես՝ մեր այս խոսքում ի վիճակի չէզանք անդրադառնալու Յուսուֆի պարամոթյանը (թե ինչպես մանուկ Սահակին մի քույրակ ալյուրի դիմաց բեղովինները փանում են, թլպափում, դարձնում Յուսուֆ ու թեեւ նա հեղափոխում փախչում է, սակայն... կարծես երկակի կյանքով է ապրում), Նարթին Ֆրինկյանի կյանքին (որ մեծ վաճառական է դառնում, կոչվում է Ռուֆինիայի «շաքարի թագավոր», բայց հետո ունեզրկվում ու կիսաքաղց կյանք է վարում: Եւ նրա կրակի պարամոթյունը...): Ինչպես պետք է, չանդրադարձանք Միսաք Թուրաքյանի անցած խորդուբորդ ճանապարհներին (I համաշխարհայինում ռուսների կողքին կռվել է գերմանացիների դեմ, II աշխարհամարտում գերմանացիների կողքին կռվել է ռուսների, բոլշևիկների դեմ), Միքայել Նորափունկյանի մասոնական ծրագրերին ու քարտեզներին...

Բայց այն էլ, ինչ կարողացանք ի մի բերել ու ներկայացնել, բավական է վկայելու, որ Վարուժան Ոսկանյանին, իրոք, հաջողվել է ստեղծել ո՛չ միայն հայերիս, այլև՝ Կարբեր ժողովուրդների ընթերցողներին հեղափոխող գրական արժեքավոր ստեղծագործություն, ինչպես Իսրայելում արված մի գնահատականում էր ասված՝ «Հազվադեպ գլուխգործոց, վերջին Կարբերի համաշխարհային գրականության ամենացայտուն եւ արժեքավոր ստեղծագործություններից մեկը»:

Եւ համոզվում ես, որ «Շուկաների մաքսանի» փոխանցելիորեն նկարագրված ծերունիների ընկերակցությամբ ապրող «Բացառիկ» երեխան, որ ինքը՝ հեղինակն է, արդարացրել է իր շատ սիրելի մեծ հոր՝ Կարապետ Ոսկանյանի հույսերը. «Փոքր հասակում գրիչը ձեռքս ավելց ու սպիտակ թղթերով շրջապատեց, այնպես, ինչպես այլ երեխաները շրջապատված էին անուշեղեններով կամ խաղալիքներով»:

Եւ ընթերցողներս վկայում ենք, որ արդարացել են Կարապետ մեծ հոր հույսերը:

ԵՐՎԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹԵ ԻՆՉՊԵՍ «ԱՐՅՈՒՆԻՑ ԿԱՐՄՐԱԾ ԳԵՏԸ...»

Ասում են հայը աշխարհի ո՛ր ծագում էլ ծնվի, միեւնույնն է՝ իր գենի, արյան հիշողության նախանձախնդիր կրողն է մնում: Ամեն ընտանիք հին մասնաբաժանում ամբարած, պահած մի հուշ ունի՝ անցյալի փայլի ու կործանման, կորստի մասին: Մի փխուր պարմություն, որ իր անջնջելի հետքն է թողնում, դաջվում է ասես մեր աչքերի մեջ ու անշփոթելի, ճանաչելի դարձնում համաշխարհային «ամբոխի» երթուները: Ու գրեթե, «հայրնաբերում» ենք իրար աչքերով, հայի աչքերով...

Գրեթե միշտ համոզված եմ եղել, որ թուրքն էլ ծնվում է դահճի բարդությամբ: Ու որքան ուզում է իրեն ու քաղաքակրթ ժողովրդի համոզել, թե մրացածին ու սրահող են հայերի ցեղասպանության մասին պնդումները, այնքան ավելի կարողի, մոլի ու գազանաբարո է դառնում ձախողվելիս: Իսկ ձախողումն անխուսափելի է, սրի ուրքը կարճ է...

Երբեմնի մշտնոր կռահումներս մի ումպով հասարակացին Աբրամ Այլիսի (Ագուլիսի) թրքացված անվանումից է գրողի կեղծանունը) «Քարակերպ երագներ» վեպ-ռեքվիեմը կարդալիս¹: Ասում եմ մի ումպով, քանզի հենց այդ արագությամբ է ընթերցողը կլանում փոքրածավալ այս երկը: Կարդացի ու մի ավելորդ անգամ համոզվեցի, որ բոլորովին հեշտ բան չէ թուրք լինելը... «զավակները վերին պատիժ են կրում ծնողների մեղքերի համար, նրանց ոգիները, ում մենք տանջել ենք, մեզ հանգիստ ապրել չեն տալիս», - գրում է հեղինակը Ագուլիսի 1919 թվականի արյունոտ իրադարձությունների մասին պարմելիս ու հավելում, թե «ամենաառաջնակարգ» հայերին խոշորանգել-սպանելուց հետո, նրանց փնտրում հասարակված բոլոր թուրքերի երեխաները տառապում էին հոգեկան լուրջ ու ծանր դրսևորումով ընթացող հիվանդություններով. «Ես կարծում եմ, որ դա նույնիսկ ոչ թե հիվանդություն է, այլ երկնային պատիժ անների վարքի համար»: Մի պատիժ էլ հեղինակի այս ինքնախտաբանություն-վեպը պետք է լինի, քանզի ակնհայտ է, որ նրա հայրենակիցները ի գորտ չեն ընդունելու եւ արժանապարվորեն կրելու այն խարանը, որ իրենք դրոշմեցին իրենց ճակատին: Ասենք, խարանը ինչպե՞ս կրես արժանապարվորեն...

Վեպի գլխավոր հերոսը ծնունդով ագուլիսցի ազերի դերասան է: Իրադարձությունները ծավալվում են Նախիջևանում եւ Բաքվում, պարմվում է անցյալ դարի սկզբին, ապա նաեւ վերջում հայերի դեմ ազերիների գործած բռնաբարքների մասին, որ մեկ, հստակ բնորոշում ունի՝ ցեղասպանություն: Բայց որպեսզի ընթերցողին չմոլորեցնի ու չթվա, թե քսաներորդ հարյուրամյակը թուրք հրոսակախմբերին աննախադեպ քայլերի էր մղում, հեղինակը առաքորեն զուգակշիռ-մեջբերումներ է անում «Զաքարիա Ագուլիսցու օրագրից». 1653, 1657, 1667... ասպարակեցին, կողոպտեցին, խոշորանգեցին, սպանեցին, գողացան... Պարմության պարույրաձեւ զարգացման վկաներն են այս փարթեվները...

Ներսի մանկության մասին պարմող դրվագներում ակնառու է հեղինակի՝ Ագուլիսի նկարմամբ սերը ու անվերապահ համոզմունքը, թե քաղաքի կառուցում-կառուցապարտ-

¹ Աբրամ Այլիսի, Քարակերպ երագներ, վեպ-ռեքվիեմ, ռուսերենից թարգմանությունը Նալոբ Մոդոմոնյանի եւ Լեոն Գալստյանի, «Էդիթ Պրինտ» հրապարակչություն, Երևան, 2013, 157 էջ, 2012-ին լույս է տեսել «Դրուժբա նարոտով» մոսկովյան ամսագրում:

մը «մահմեդական բնակչությունը, բնականաբար երբեք չէր տեսել»: Եւ չէր կարող տեսնել, «բնականաբար»՝ որովհետեւ Նեռավոր Արեւելքի կիսաանապատ-տափաստաններից տեսնել չէին կարող պարզապես...

Գլխավոր հերոսի սերը կույր չէր, նա փարիսների հետ «սկսեց լիովին գիտակցել Այլիս կոչվող պատիկ աշխարհագրական փարածքի իրական արժեքը, որը թերեւս իր բարեշնչության, փողոցների ու բակերի աներեւակայելի, զարմանահրաշ մաքրության շնորհիվ ժամանակին կոչվել է «փոքր Փարիզ»... Միայն այդ ժամանակ նա ընկալեց Ասործուն խորապես հավատացող մարդկանց փքնանքով ու խելքով սպեղծված անօրինակ մշակույթի նշանակությունը...»: Խորապես հավատացյալ, աշխարհող ու արարող հայերի ընդհանրական կերպարից հեղինակը առանձնացնում է երկու հայուհու՝ Նայկանուշին (նկարչուհի Լուսիկ Ազուլցու մեծ մայրիկին) եւ Անիկոյին: Վերջինս ամուսնացել էր ազերիի հետ, համագյուղացիները համոզված էին, որ դավանափոխ է եղել, բայց ամեն Ասործու օր, արեւածագին Անիկոն շրապում էր եկեղեցի՝ շրջակայքը մաքրելու, ծառ ու ծաղիկը խնամելու, խոնարհվելու եւ երկիր պազանելու սրբաբաշտ, ամրակուռ ոգեղեն ամրոցի առջեւ...

«Ասում են՝ մի ժամանակ այնպեղ շատ հայեր են եղել: Եւ նրանք, այսինքն՝ այդ հայերը, պարզվում է՝ շատ հաշի են ապրել մեր մահմեդականների հետ: ...Այդպիսի կիրթ, ազնիվ, աշխատասեր մարդիկ աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չկան», -վավերազրի ազնվությամբ փաստում է Այլիսին ու մեզ անվերապահորեն իրավունք է տալիս պնդելու, թե քաղաքակիրթ Արեւմուտքի, այսօր այդպես հնչեղ շեփոթվող խաղաղ գոյակցության սկզբունքի օրինակ ենք տվել մենք, բայց ո՞ւմ, մի ամբոխի, որ այդպես էլ ժողովուրդ դառնալու, հասարակության վերածվելու ուժ, կամք, ընդունակություն չցուցաբերեց: Մի ամբոխի, որի սիրելի կերակուրը եղել ու մնում է այլ ժողովուրդների հող հայրենին սեփականելը, մշակույթային արժեքները խժեղ-սրբելը Երկրի մոլորակի երեսից: Խաժամուժի դիպուկ նկարագրությունը հեղինակը տալիս է 1989-90 թվականների Բաքուն նկարագրելիս. «Հիմա մարդիկ շրջում են ամբոխով, հոտերով: Եւ խոսելու, բղավելու ու բարբառելու լիիշխան իրավունքը տրված է միայն այդ ամբոխին: ... Եւ բառերի քանակությունը, որ բղավում էին այդ արարածները, հավասար էր այն քանակին, որը հավանաբար, օգտագործել են նախնադարյան մարդիկ որսի ժամանակ...»: Ամեն ինչ ավելի քան իրավասական ու ճշմարիտ է, բացի մի հանգամանքից: Ժամանակային սահմանափակումը՝ 1989-1990 թթ., գուր է...

Վեպի հերոսները մեկը՝ բժիշկ Ֆարգանին քսաներորդ դարի վերջին ընդամենը երեք տարի Բաքվում ապրելով. «...կտրուկ փոխեց վերաբերմունքը եւ կրոնի, եւ հայրենիքի, եւ հենց Մարգարեի նկատմամբ: ...առանձնապես ցնցված էր հայերի հանդեպ Բաքվի մահմեդական բնակչության դաժանությունից, հավանաբար այն պատճառով, որ հայերի կողմից մահմեդականների հանդեպ նման դաժանություն ինքը չէր տեսել...»: Իրականում, ոճրագործությունները ամենեւին էլ հանցագործություն չեն առանձին վերցրած մի ժողովրդի հանդեպ: Դրանք, ավելի շուտ, ապարակ են քաղաքակրթության երեսին, որի նրբին դիմագծերը մարդկությունը փորձում է հղկել, կերտել, արարել հազարամյակներ շարունակ...

Գազանաբար ձեռագրի մի պատկեր տեսնում ենք 1919 թվականի իրադարձությունների նկարագրության մեջ. «Եղել է այսպես. որպեսզի Այլիսի հայ բնակչությունը ոչինչ չկռահի, Ադիֆ բեյի 30-40 հեծյալները վաղ առավոտից շրջել են եւ հայերի, եւ մահմեդականների տներով, հայտարարել, որ այսօր զինադադար է հռչակվելու, ուստի բոլորը շրապ պիտի հավաքվեն այսինչ հայի բակում: Երբ ժողովուրդը հավաքվել է մարտնչված տեղում, թուրք

զինվորները մահմեդականներին առանձնացրել են հայերից: Տանկարձ հնչել է բարձր հրաման. «Կրակ»: Եւ բակը բոլոր կողմերից շրջապատած թուրք զինվորները կրակի կարկուտ են փողացել հայերի վրա: Շարքերը գոհվել են անմիջապես, ողջ մնացածներին՝ մինչեւ վերջին մարդը, դաշույնով կտրել են կոկորդները կամ խողխողել ավիտահար: Նրանց, ում հնարավոր է եղել թաղել փողում, թաղել են իսկույն, մեծ փոս փորելով: Ում համար բակում եւ այցում փող չի ճարվել, նեղել են փողերի նկուղներն ու վառել... Բոլոր առուների ջրերը մի ամբողջ շաբաթ կարմրել էին... Թվում էր՝ դժոխքի երախը բացվել է, արեւն ուր որ է կընկնի աշխարհի վրա...»:

Բայց վերադառնալու գլխավոր հերոսի՝ Ազուլիսի նկարմամբ անթաքույց սիրուն, որն արտահայտվում է քաղաքի, հարկապես «12 վեհաշուք» եկեղեցիներից մի քանիսի վանք, Աստվածածին, Սպիտակ եկեղեցիների նկարագրություններում. «Եկեղեցում օդն իսկ մի փոսակ վերերկրային էր՝ փարաշխարհիկ, անդրկողմնային: Եւ գմբեթի չորս նեղլիկ պատուհաններից ներթափանցող լույսը... թվում է ճառագում էր հեռավոր եւ անիմանալի աշխարհներից»: Այս սրբափայլների, բնակավայրերի անվանումները եկվորները պետք է աղավաղեին, որ հեղու իրավունք ունենային պնդելու, թե «ապերախար» հարեւան հայերը փրկացել են «հնազույն թուրքերի՝ աղվանների, երկրին»: Ըստ այդմ՝ Օդերմանը Գարդման ենթ դարձրել, Գյուրսուն Գորիս, Գուրբաղը՝ Ղարաբաղ, Էլվենդը՝ Երեւան, հնագույն «Էրմենների»՝ թուրք քաղաքի այրերի անունն էլ սեփականել ու ինքնակոչերով դարձրել ենթ հայ: Ի պատասխան վեպի «միամիտ» հերոսուհու հարցի, թե ասում են այդ եկեղեցիները հայկական չեն, աղվանական են, հայերը հեղու սեփականել են դրանք, հնչում է կրթուկ պատասխանը. «Կարծաշալ փիմարություն ես դուքս փալիս: ... Զգիտե՛մ ովքեր են եղել այդ աղվանները, որքեղ են ապրել: Բայց զգիտե՛մ, որ այլիսցիները հայ էին: Ընդ որում ամենաառաջնակարգ հայեր»:

Գրքի բոլոր՝ չորս գլուխներում, գլխավոր հերոսին փանջում ու մորմոքի պես հանգիստ չի փալիս Ս. Էջմիածին գնալու, Կաթողիկոսի օրհնությամբ քրիստոնյա դառնալու, ցեղակիցների մեղքերի համար ապաշխարելու, Աստված թողություն խնդրելու սեւեռուն միտքը, որը ծագել է անմեղայնության ողբերգությունից հեղու. «Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցոլքը լուսնի լույսից վառ կլինի...»: Անշուշտ, ազնիվ կլինեք, որ վեպի՝ այս ամենի մասին պատմող հարվածներում, գլխավոր հերոսին հակադրականների շուրթերից անվայել արտահայտություններ չհնչեին հայոց գլխավոր խորհրդանիշ, պաշտելի անունների՝ հասցեին:

Օրերս, ժամանակակից ակադմիկ պատմաբաններից մեկը՝ ՆՇ ԳԱԱ թղթակից-անդամ Աշոտ Մելքոնյանը, հայոց պահանջարկության եզրույթների շարքը համալրեց եւս մեկ՝ պատրիարքից բառով: Յեղատապանություն է իրագործվել եւ իրագործվել է մեր պատմական հայրենիքի սահմաններում, որի հեղուանքով մենք կորցրինք ոչ միայն մեր կենսական ուժը, մեր գորեղ գեներ կրողներին, այլեւ պատմական հայրենիքի երկու երրորդից ավելին: Աքրամ Ալիալին մեկն է թուրքերի փոքրաթիվ այն փաղանգից, որ կարողացավ հաղթահարել ներքին բարդություն ու ասել պատմական ճշմարտություններ, ապաշխարելու համար, գեղի պես, գեղի հեղու հոսող արյան հեղքը իր ցեղակիցների ձեռքերից մաքրելու համար: Եկավ ինքնամաքրվելու...

ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵԱ...

ԼՈՒՐԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՎՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՈՎ
(7 ապրիլի, 2013 թ.)**

Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում փիկնանց եւ օրիորդաց Սուրբ Աստվածածնի Ավետման փոռնի եւ Մայրության ու գեղեցկության օրվա առիթով:

Ավետման փոռնը առ Աստված փառաբանության եւ Բարձյալի ամենագոր կամքին Սուրբ Կույսի օրինակով հնազանդվելու լուսավոր խորհուրդն է կրում, ով իր մաքուր հավատի, համեստության ու խոնարհության շնորհիվ դարձավ Տիրոջ շնորհներակալը եւ օրհնյալ համարվեց կանանց մեջ:

Մեր մաղթանքն է, որ Սուրբ Կույսի պայծառ կերպարը միշտ ներշնչման աղբյուր եւ օրինակ լինի մեր մայրերի, քույրերի ու դուստրերի համար, որպեսզի ջերմ հավատքով ապրեն իրենց կյանքը եւ նվիրումով, ազնիվ ու բարի գործերի օրհնությամբ լցնեն իրենց ընտանեկան հարկերը եւ հոգևոր ու ազգային մեր կյանքը:

Բոլոր փիկնանց ու օրիորդաց համար հայցում ենք զթառափ բարեխոսությունը Սուրբ Տիրամոր, որ նրա Որդու եւ մեր Տիրոջ օրհնության ներքո ապրեն խաղաղության մեջ, քաջամոլջ, բարօր ու երջանիկ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներն ու սերը թող լինեն ամենքիդ հետ. Ամեն:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՄԱԿԱՐԳ

**ԱՄԵՆԱՅՆ ՎՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՍՆԱՎՈՐ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ ՎՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ**

Ապրիլի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ձեռամբ Վանական խորհրդի փնօրեն Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի փնօրեն Տ. Վարդան արեղա Նավասարդյանը, Մայր Աթոռի պաշտոնական մամուլի գրասենյակի փնօրեն Տ. Շահեն արեղա Անանյանը, Տաթևի վանքի վանահայր Տ. Միքայել արեղա Գևորգյանն ու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Ծիսա-հայեցակարգային հարցերի գրասենյակի Տ. Զաքարիա արեղա Բաղդույանը սպացան մասնավոր վարդապետության աստիճան: Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նորընծա վարդապետներին ընդունեց Ամենայն հայոց Կաթողիկոսը՝ նրանց բերելով իր օրհնությունն ու շնորհավորանքները: Ուրախություն հայտնելով փվճության առի-

թով՝ Նորին Սրբությունը մասնավորապես ընդգծեց անհրաժեշտությունը հավաքի խորը ապրում եւ խոնարհ սիրտ ու հոգի ունեցող եկեղեցականների՝ նշելով, որ առանց խոնարհության ու ծառայանվիրումի գիտելիքները չարիք են դառնում անձի համար՝ նրանում գորացնելով մեծամտությունը: Վեհափառ Նայրապետը հորդորեց Նայր Վարդանին, Շահին, Միքայելին ու Զաքարիային վարդապետության այս նոր հանգամանքի մեջ առավել պարասխանաւորությամբ եւ եռանդով ծառայել՝ ի պայծառություն Նայոց Եկեղեցու եւ ի բարօրություն մեր ժողովրդի:

Վերջում հայցելով Աստուծոյ ամենաապ շնորհներն ու գորակցությունը նորընծաներին իրենց առաքելության այդ նոր ճանապարհին՝ Ամենայն Նայոց Կաթողիկոսը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց վարդապետներին եւ նրանց շնորհեց վարդապետական լուսնախաչեր:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՒԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈՒԿ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ

Ապրիլի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Մոմպելիէ քաղաքից Նայաստան ժամանած կաթոլիկ ուխտավորների՝ առաջնորդությամբ Նայր Քրիստիան Դամեռոնի:

Նանդիպման սկզբում Նայր Դամեռոնն ուրախություն հայտնեց Սուրբ Էջմիածնում գտնվելու կապակցությամբ, ապա Կաթողիկոսին, որ խումբն այցելել է Նայաստան՝ Նայ Եկեղեցուն ու հայկական մշակույթին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով:

Այնուհետեւ կաթոլիկ ուխտավորներին իր օրհնությունը բերեց Վեհափառ Նայրապետը՝ ողջունելով Քույր Եկեղեցու հավաքավոր զավակների այցը Նայաստան: Նորին Սրբությունն ուխտավորներին համառոր ներկայացրեց Նայ Եկեղեցու պատմությունը՝ ընդգծելով, որ Նայոց Եկեղեցին, հակառակ պատմության ընթացքում կրած բազմաթիվ դժվարություններին ու խոչընդոտներին, այսօր էլ շարունակում է իր ծառայությունը բերել հավաքավոր հայ ժողովրդին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ կրթադաստիարակչական եւ ընկերային ոլորտներում Եկեղեցու կողմից կատարվող աշխատանքներին, ինչպես նաեւ Նայ Առաքելական եւ Նոմի Կաթոլիկ եկեղեցիների ջերմ հարաբերություններին ու համագործակցությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԵՆԻ ՆԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՐ ՍԵՂԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

Ապրիլի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Կաթողիկոս Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Նայաստանյան Կոր սեղանի միջեկեղեցական հիմնադրամի Կորսեկան ժողովը, որին մասնակցում էին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները, հիմնադրամի հետ համագործակցող թեմական-եկեղեցական կառույցների, հասարակական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ժողովը սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո բացման խոսքով հանդես եկան Գեղարքունյաց թեմի առաջնորդ, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տ. Մարկոս եպիսկոպոս Նովհաննիսյանը և գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը: Ժողովականներին ողջունեցին նաև Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Տ. Նովակիմ եպիսկոպոս Մանուկյանը և ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ռայներ Մո-րելը:

ՀԿՄ տարեկան ժողովին ըստ ավանդության ներկայացվում է բանախոսություն որեւէ ոլորտի վերաբերյալ: Այս ժողովին հրավիրված էր բանախոսելու ՀՀ Արտաքին գործերի փոխնախարար Շավարշ Քոչարյանը, որ խոսեց «ՀՀ արտաքին քաղաքականության արդի մարտահրավերները» թեմայի շուրջ: ՀՀ ԱԳ փոխնախարարը պարտախանեց նաև ժողովա-կանների հարցերին:

Այնուհետև ներկայացվեցին Կոր սեղանի 2012-2013 թթ. ծրագրային և ֆինանսական հաշվետվությունները, որից հետո առանձին խմբերով տեղի ունեցան քննարկումներ՝ 2014-2015 թթ. հիմնադրամի գործունեության գերակա ուղղությունների ու անելիքների վերաբեր-յալ:

Տարեկան ժողովն ամփոփեցին ՀԿՄ գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը և հոգա-բարձուների խորհրդի անդամ Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:

ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՀՆԳԿԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Ապրիլի 17-ին Մայր Աթոռ Ս.Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ճայրագույն Պապ-րիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբուին: Հանդիպմանը՝ Նորին Սրբությունն իր շնորհավորանքներն ուղղեց Հնդկաստանի դեսպանին նշանակման առիթով և արդյունավետ գործունեություն մաղթեց նրան Հայաս-տանում:

Ջրույցի ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների դարավոր բարեկամական հարա-բերությունների, Հնդկաստանում հայ համայնքի պարամական ներկայության, ինչպես նաև Կալկաթայի հայ համայնքի և Հնդկաստանում հայկական եկեղեցիների ներկայիս վիճակի մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի գործունեությանը՝ այս առնչությամբ շնորհակալություն հայտնելով Հնդկաս-տանի դեսպանապարհը՝ Մայր Աթոռին ցուցաբերվող գորակցության համար: Վեհափառ Մայրապետը վարածություն հայտնեց, որ նոր դեսպանի ջանքերի շնորհիվ Մայր Աթոռի և դեսպանապարհ միջև հարաբերությունները կշարունակեն հարկանշվել նույն ջերմությամբ ու արդյունավետությամբ:

ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապի հարք եւ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդին:

Ողջունելով Յագլանդի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Նայրապետը գոհունակություն հայտնեց Նայաստանում իրականացվող բարեփոխումների գործընթացում եւ կողմից ցուցաբերվող աջակցության համար: Նորին Սրբությունը նշեց, որ Նայաստանի ներկայությունը Եւրոպայի խորհրդում մեծապես նպաստում է երկրում ժողովրդավարական գործընթացների ամրապնդմանը, ինչը քրիստոնեական արժեհամակարգի կարևոր բաղկացուցիչներից մեկն է:

Զրույցի ընթացքում Ամենայն Նայոց Կաթողիկոսը մասնավորաբար մրախոցություն արտահայտեց «Զինապարության մասին» եւ «Այլընտրանքային ծառայության մասին» ՆՇ օրենքների գործադրության առնչությամբ եւրոպական պարբեր կառույցների կողմից առնվող որոշումների կապակցությամբ՝ ընդգծելով, որ նման պարագաներում հարկ է նկատի առնել վրդյալ երկրի առանձնահատկություններն ու կացությունը:

Նանդիպմանն անդրադարձ կատարվեց հավաքի եւ կրոնի նկատմամբ հասարակության վերաբերմունքին, պարաժաշտական խնդիրների լուծման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում պարաժաշտանի հոգևոր առաջնորդների գործադրած ջանքերին, ինչպես նաեւ միջկրոնական երկխոսության կարևոր դերակատարությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ

ՊՈԵԶԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԻ ԱՅՅՐ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Ապրիլի 16-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մադենադարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապի հարք եւ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց Պոեզիայի առաջին միջազգային փառապոնի մասնակիցներին՝ ուղեկցությամբ Նայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանի: Ողջունելով փառապոնի մասնակիցների այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Նայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Նայաստանի գրողների միության նախագահին Երեսնամյա Պոեզիայի միջազգային առաջին փառապոնի կազմակերպման, ինչպես նաեւ փառապոնը հայոց նվիրական սրբավայր այցելությամբ սկսելու համար:

Վեհափառ Նայրապետը, իր խոսքում անդրադառնալով պոեզիայի բարձր կոչմանը, հորդորեց պոեզիայի մշակներին իրենց ասարվածաշնորհ կարողություններն ի բարին ծառայեցնել՝ մարդկության բարօրության, ժողովուրդների միջև բարեկամության կերպման համար:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց փարբեր երկրներից ժամանած գրողներին հեղափոխությունը հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՅՈՒ ՄՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ

Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ուխտավորաբար գտնվող Վրաստանի Լատին Եկեղեցու առաջնորդ Զուգեպյան արքեպիսկոպոս Պազուրյուրյանին, հոգևոր սպասավորներին ու միանձնուհիներին՝ ուղեկցությամբ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եւրոպայում Կաթողիկոս Եկեղեցու առաջնորդ Տ. Ռաֆայել արքեպիսկոպոս Մանուկյանի:

Հանդիպման սկզբում Տ. Ռաֆայել արքեպ. Մանուկյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ուխտավորներին՝ շնորհակալություն հայտնելով հայոց հոգևոր կենտրոնում Քույր Եկեղեցու հոգևոր սպասավորներին հյուրընկալելու համար:

Այնուհետեւ կաթոլիկ ուխտավորներին հայրապետական իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Նորին Սրբությունը: Շնորհավորելով ներկաներին Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս պապի գահակալության առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Մայր Աթոռի եւ Վարիկյանի ջերմ փոխհարաբերություններին:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը Տիրոջ օգնականությունն ու զորակցությունը մաղթեց Կաթոլիկ Եկեղեցու սպասավորներին՝ քրիստոնապապվել իրենց ծառայության արդյունավորման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ՎԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒՄ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ՄԻՄՊՈԶԻՈՒՄ ԶԱՅՔՈՒՐԳՈՒՄ

Ապրիլի 15-16-ին Ավստրիայի Զալցբուրգ քաղաքում Կոնգրեսի «Վանական կյանքը Հայ Եկեղեցում» խորագրով սիմպոզիում՝ նվիրված հայ վանականության անցյալին եւ ներկա մարտահրավերներին: Կոնֆերանսը կազմակերպել էին Զալցբուրգի համալսարանը, «Պրո-Օրիենտ» կազմակերպությունը եւ Զալցբուրգի Բենեդիկտյան միաբանությունը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ սիմպոզիումին մասնակցեցին եւ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Կոնգրեսի եւ Արթիկի թեմի առաջնորդ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Քրեակալադատական հիմնարկների հոգևոր տեսուչ Տ. Ռուբեն արեղա Զարգարյանը: Միջոցառմանը զեկույցներով հանդես եկան նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի Կոնգրեսի Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից Կալվադոն տեսուչ Տ. Բագրատ վարդապետ Բերջեքյանը եւ Ամերիկայի Հայոց Արեւելյան թեմից Տ. Դանիել վարդապետ Ֆեդիկյանը:

Հայ եւ ընդհանուր վանականության վերաբերյալ զեկույցներ կարդացին Զալցբուրգի

համալսարանի պրոֆեսոր Դիմար Վինկլերը, հայագետ Ժամին Դոմ-Տրագուրը, ֆրանգիսկյան միաբանության անդամ Յոհաննես Շնայդերը, Բենեդիկտյան միաբանության անդամներ Գուրֆրիդ Գլասները եւ Պաուլուս Կոսին:

Կոնֆերանսին ներկա էին նաեւ Զայցբուրգի Արքեպիսկոպոս Ալոիզ Կոլթգասերն ու Ավստրիայում ՐՏ արքայակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ «ՎԵՐԱԾՆՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԺՅՈՒՐԻԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց «Վերածնունդ» միջազգային 5-րդ մրցույթ-փառապոնի ժյուրիի անդամներին: Ամենամյա այս մրցույթ-փառապոնն անցկացվում է Ամենայն Նայոց Կաթողիկոսի օրինությամբ եւ հովանավորությամբ «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական բարեգործական հիմնադրամի:

Նանդիպման սկզբում ԵՂՆ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը Վեհափառ Նայրապետին ներկայացրեց փառապոնի ժյուրիի անդամներին:

Այնուհետեւ աշխարհի քաղաքներ երկրներից ժամանած երաժիշկների այցը հայոց նվիրական հոգեւոր կենտրոն ողջունեց եւ հայրապետական իր օրհնությունը բերեց Ամենայն Նայոց Կաթողիկոսը: Վեհափառ Նայրապետն իր գնահատանքը հայրենեց «Փյունիկ» հիմնադրամին, հանձին հիմնադրամի համանախագահ եւ ազգային բարերար Գաբրիել Զամբարջի, ինչպես նաեւ մրցույթի կազմակերպիչներին ու ժյուրիի անդամներին՝ միջազգային փառապոնի անցկացման համար ներդրած գովարժան աշխատանքի համար: Ամենայն Նայոց Կաթողիկոսը հույս հայրենեց, որ ավանդույթ դարձած այդ գեղեցիկ նախաձեռնությունը շարունակական կլինի, որի շնորհիվ խրախուսվում է երիտասարդ կադրերի փառապաշտը եւ հարստացվում նրանց փորձառությունը: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Նայ Եկեղեցու անցած դժվարին ճանապարհին եւ վերջին տարիների ձեռքբերումներին ու առաքելությանը հայ ժողովրդի կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ

ՆԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Նայոց Կաթողիկոսն ընդունեց Սյուվակիայի Նանրապետության Տրնավայի երկրամասի նահանգապետ Տիբոր Միկուշին՝ ուղեկցությամբ ՐՏ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղափառմանյանի:

Զրույցի ընթացքում Ամենայն Նայոց Նայրապետը գոհունակություն հայրենեց Տրնավայի երկրամասի եւ Արմավիրի մարզի միջեւ ձեռավորվող համագործակցության առիթով՝ վստահություն հայրենելով, որ այն մեծապես կնպաստի երկու ժողովուրդների կապերի սերտացմանը:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց փխար Միկուշին՝ Սլովակիայի Ազգային խորհրդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Հանդիպման անդրադարձ կատարվեց երկու երկրների հոգևոր կյանքին և միջեկեղեցական հարաբերություններին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց և իր օրհնությունը բերեց Փրանսահայ մի խումբ երիտասարդների՝ ուղեկցությամբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու բարերար Սարգիս Պեպոյանի:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ողջունեց պատանի ուխտավորների այցը Հայրենիք և համայն հայ ժողովրդի նվիրական հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս Էջմիածին: Ընդգծելով նման այցելությունների կարևորությունը՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ հայրենի հարուստ մշակույթի և սրբազան արժեքների անմիջական ճանաչողությունը ավելի է խանդավառում ու ոգեշնչում Սփյուռքի երիտասարդ հայորդիներին՝ գորացնելով նրանց սերն ու նվիրումը Հայրենիքի ու Եկեղեցու հանդեպ: Իր խոսքում Նորին Սրբությունը մասնավորապես հորդորեց Փրանսահայ պատանիներին հեղինակ իրենց ուսումնառությանը, ակտիվ մասնակցություն բերել ազգային-եկեղեցական կյանքին:

Ամենայն Հայոց Հայրապետը նաև իր գնահատանքն ու օրհնությունը բերեց փխար Սարգիս Պեպոյանին իր եկեղեցասեր գործունեության համար, ում ազնիվ բարերարությամբ կառուցվում է Մեան քաղաքի եկեղեցին:

Հանդիպմանը երիտասարդներն ասմունքեցին, հանդես եկան հոգևոր և ազգային երգերի կատարումներով:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ 98-ԲԴ ՏԱՐԵԼԻՅԸ

Ապրիլի 24-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևորականաց դասի ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, և ներկայությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու պետական ավագանու՝ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայոց Եղեռնի նահատակների:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի Վանորենիք պետուհ Տ. Արքայի եպիսկոպոս Տիգրանյանը: Արարողության ընթացքում Սրբազան Հայրը հրապարակեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հայտարարությունը, որով կոչ է ուղղվում Թուրքիայի պետությանը ճանաչել Հայոց Յեղասպանությունը, ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների և մարդկային ու ազգային ուրանահարված իրավունքների դիմաց, ինչպես նաև անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավապիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապարկան կալվածքները և հոգևոր-մշակութային արժեքները:

Ս. Պատարագի ավարտին Մայր Տաճարի շրջաբակում ի հիշատակ 1915 թ. Հայոց Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ԵՐԱՄՈՐՆՐԴԱՐԱՆԻ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապրիսարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպական խորհրդարանի հայաստանի հետ բարեկամության խմբի հայաստան ժամանած պարզվիրական անդամներին՝ ուղեկցությամբ ՎՎ ԱՄԻ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Զաքարյանի եւ Բելգիայի Թագավորությունում հայաստանի հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ավետ Ադունցի:

Կարեւորելով Եւրոպական հայոց Կաթողիկոսն խմբի ձեւավորումը՝ Վեհափառ Մայրապետը բարձր գնահատեց այն ջանքերը, որ խմբի անդամները ներդրում են հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ հայաստանի՝ Եւրամիության անդամագրվելու գործընթացի ուղղությամբ:

Ի դեմս խմբի անդամների Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց բոլոր այն կազմակերպություններին, պետություններին եւ անհատ անձանց, ովքեր կարեւոր ներդրում են բերում հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատաւարարման գործում: Իր խոսքում Վեհափառ Մայրապետն ընդգծեց, որ հայոց Ցեղասպանության համաշխարհային ճանաչումը կնպաստի նաեւ մարդկության կյանքում փեղ գրնոդ նման երեւոյթների կանխմանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց Եւրոպական հայոց Կաթողիկոսն խմբի առաքելությանը՝ նշելով, որ թեւեւ այն ուղղված է Եւրամիության եւ հայաստանի հարաբերությունների սերտացմանը, հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանը, սակայն դուրս է գալիս այդ սահմաններից եւ համամարդկային բնույթ ստանում՝ ի նպաստ արդար ու խաղաղ աշխարհի կառուցման:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻՄԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՅ ՆՈՎՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆՆԵՐԻՆ

Ապրիլի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապրիսարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Նովնախյան դպրոցի (Նյու Ջերսի, ԱՄՆ) սաներին՝ Մայր Աթոռի բարերար փխար հրաչ Թուֆայանի ուղեկցությամբ:

Ողջունելով սաների այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Ամենայն հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց Նովնախյան դպրոցի փնթեւանությանն ու մանկավարժներին՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելու համար այցելելու հայրենիք, հաղորդակցվելու սրբություններին եւ ազգային արժեքներին: Վեհափառ Մայրապետը նշեց, որ նման այցերը կարեւոր խթան են ավելի գորացնելու հայրենիքի նկատմամբ նվիրվածությունը, իսկ հայրենի հողը փեսնելու խանդավառությունը նպաստում է լավագույնս զգալու եւ գիտակցելու հայրենի երկրի սրբությունը:

Ամենայն հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդ հայորդիներին այդ ոգով եւ գիտակցությամբ ապրել ողջ կյանքի ընթացքում, բարի եւ արժանավոր գավակներ մեծանալ եւ ուժ դառնալ հայրենիքի համար:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻՄԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ

(Մեղրաձորի միջնակարգ դպրոց, Կոտայքի մարզ) եւ Դավիթ Գրիգորյանը (Խնձորեսկի միջնակարգ դպրոց, Սյունիքի մարզ):

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

**ԵՆ ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՌԵՖԹՈՐՄԱՏՆԵՐԻ ԽՄԲԻ
ՊԱՏՎԱՐԱԿՈՐՆԵՐԻ ԱՅՅԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ**

Ապրիլի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Եւրոպական խորհրդարանի պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբի պատգամավորների պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՆՇ ԱԺ պատգամավոր Ալեքսանդր Արզումանյանի:

Հանդիպմանը Ամենայն հայոց Կաթողիկոսը կարևորեց նման այցելությունները, որոնք նպաստում են ԵՆ-հայաստան կապերի ամրապնդմանը: Վեհափառ հայրապետն իր գնահատանքը հայտնեց պատգամավորներին այն ջանքերի համար, որ ներդրվում են հայաստանի երախներգրման ճանապարհին:

Վեհափառ հայրապետը նաև պարասխանեց ԵՆ պատգամավորների հարցերին, որոնք հիմնականում առնչվում էին հայ Եկեղեցու հարաբերություններին Քույր եկեղեցիների հետ, փարաժաշխանում խաղաղության հաստատմանն ուղղված հոգեւոր առաջնորդների ջանքերին եւ հասարակության կյանքում կրոնի եւ հոգևոր արժեքների դերակատարությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

**ԼՈՒՍԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՔ. ՊԱՆԵՈՋԵԱՆԻ ՏԻՇԱՏԱԿԻՆ
ԱՎԱՍՐԱԿԱՅԻՆՈՒՄ ԿԱՆԳՆԵՑՎԵՑ ՆԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐ**

25 ապրիլի, 2013թ

Սույն թվականի ապրիլի 14-ին՝ կիրակի, Սիդնեյի Ուիլբրի քաղաքի կենտրոնական վայրում, քաղաքապետարանի նորակառույց Concourse համալիրի բացօթյա այգում գեղեցիկ հայկական խաչքար: Կատարվեց հանդիսավոր բացում եւ խաչքարի օրհնություն:

Իրրեւ հայ Առաքելական Ս. Եկեղեցու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի հոգեւոր առաջնորդ, Աղան արք. Պաւլոգեանի 37 երկարամյա փորձի արդյունավետ գործունեության, հայ համայնքի բարի համբավին եւ փեղական իշխանությունների հետ եղած բարիդրացիական հարաբերություններին առ ի գնահատանք, քաղաքապետարանի կողմից (քաղաքապետ՝ Փաթ Ռայել) հայ համայնքը արժանացավ այս բացառիկ պարգևին:

Խաչքարը Ավստրալիա փոխադրվել էր հայաստանից (քանդակագործ՝ Վարազդար համբարձումյան), բացման եւ օրհնության արարողությունը հանդիսավորեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի հոգեւոր առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. հայկազուն եպս. Նաճարեանը քաղաքապետի հետ միասին:

Հանդիսությունը ներկա էին Պելական պաշտոնյաներ, հայ Առաքելական Ս. Եկեղեցու Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմական եւ ծխական խորհրդի անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ, հարյուրավոր հայորդիներ եւ այլ հյուրեր:

Ապրիլի 23-ի երեկոյան նույն վայրում՝ Concourse սրահի ներսում, փեղի ունեցավ հայոց Յեղասպանության 98-րդ փարեկիցին նվիրված հուշ-երեկո, ավարտին խաչքարի առջև

Գերաշնորհ Ս. Նայկագուն Եպս-ի գլխավորությամբ կարարվեց հոգեհանգստյան արարողություն:

Խաչքարի գերեզմանը մեծ ոգևորություն ներշնչեց ավստրալահայությանը, հույսով, որ ապագայում այն կծառայի ոչ միայն որպես հայկական քաղաքացիության յուրօրինակ հուշակոթող հայ եւ օտար այցելուների համար, այլև կդառնա աղոթքի վայր՝ հիշատակելու 1915թ. ապրիլյան եղեռնի զոհերին, ինչպես նաև այլ ազգային-եկեղեցական հիշատակի եւ փոն օրերի նշանավորման վայր:

ԴԻՎԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՔԱՆԱԿԱՅԱԿԱՆ ՁԵՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 21-ին՝ Կարմիր կիրակիին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում կարարվեց քահանայական ձեռնադրություն: Պատարագիցն էր Մայր Աթոռի հոգևոր կրթական հաստատությունների վերադեսուց, Գեորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գեորգ եպիսկոպոս Սարգսյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տասը միաբան սարկավագներ:

Ս. Պատարագի ընթացքում Գեորգ Սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ Սրբալույս Մյուռնով օծելով նրանց ճակատներն ու ձեռքերը եւ շնորհելով հոգևոր նոր անուններ: Արման սրկ. Վարդանյանը վերակոչվեց Ս. Գաբրիել քահանա, Միքի սրկ. Մուրադյանը՝ Ս. Տրաչ քահանա, Գոռ սրկ. Նակոբյանը՝ Ս. Տիրայր քահանա, Էդգար սրկ. Սեփանյանը՝ Ս. Նարություն քահանա, Արթուր սրկ. Անդրեասյանը՝ Ս. Վանանդ քահանա, Լեւոն սրկ. Երեզակյանը՝ Ս. Աղան քահանա, Գոռ սրկ. Թարվերդյանը՝ Ս. Նթում քահանա, Խաչատուր սրկ. Տյոմկիկը՝ Ս. Ղևոնդ քահանա, Գերասիմ սրկ. Նայրապետյանը՝ Ս. Օշին քահանա, Արմեն սրկ. Սահակյանը՝ Ս. Դերենիկ քահանա: Ձեռնադրության արարողության ավարտին քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխեցին ներկաներին:

Այնուհետև ձեռնադրող Սրբազան Հայրը, շնորհավորելով նորընծա քահանա հայրերին, իր քարոզում անդրադարձավ հայ ժողովրդի եւ Եկեղեցու կյանքում հոգևորականի կարևոր դերակատարությանը:

Այնուհետև Մայր Աթոռի միաբաններն առաջնորդությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձրացան Ս. Խորան՝ շնորհավորելու քահանաներին եւ համբուրելու նրանց մյուռնաբույր ճակատներն ու ձեռքերը:

Նույն օրը՝ երեկոյան, կարարվեց նաև վեղարի փվռության արարողությունը: Ս. Տիրայր, Ս. Աղան եւ Ս. Դերենիկ քահանաները վեղար ստացան՝ համալրելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքերը:

Վեղարի փվռության արարողությունից հետո նորած եկեղեցականներին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեցին Մայր Աթոռի լուսարարապետ Ս. Նովնան եպիսկոպոս Նակոբյանը եւ Մայր Աթոռի հոգևոր կրթական հաստատությունների վերադեսուց, Գեորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Գեորգ եպիսկոպոս Սարգսյանը՝ հայցելով Վեհափառ Նայրապետի օրհնությունը նրանց հետագա հոգևոր սպասավորության համար: Վերադին շնորհավորելով ձեռնադրության կապակցությամբ՝ Նորին Սրբությունը նորած հոգևորականներին բարի ծառայություն, ամուր կամք եւ արդյունաշատ աշխատանք մաղթեց՝ ի պայծառություն եւ ի շինություն Նայստրանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառասնօրյա պարասպության և աղոթական շրջանից հետո նորընթանները ծառայության կկոչվեն Նայ Եկեղեցու փարբեր կառույցներում և թեմերում:

ԿԵՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐԵՂԱ ՆԱԿՈՐՅԱՆ

(ավագանի անունը՝ Գոռ)

Ծնվել է 1986 թ. Վանաձոր քաղաքում:

2003 թ. ավարտել է փեղի թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2003 թ. ընդունվել է Գետրգյան հոգևոր ճեմարան:

2003-2004 թթ. սովորել է Գյումրիի ընծայարանում:

2004-2007 թթ. ուսումը շարունակել է Սեանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

2007-2009 թթ. ուսումը շարունակել է Գետրգյան հոգևոր ճեմարանում:

2007 թ. ձեռամբ Տ. Արարատ եպս. Գալթագճյանի ձեռնադրվել է սարկավագ:

2009 թ. Վեհափառ Նայրապետի բարձր փնօրինությամբ պաշտոնի է կոչվել Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում՝ որպես գործավար-քարտուղար:

2010 թ. հունիսին Վեհափառ Նայրապետի փնօրինությամբ կոչվել է հոգևոր ծառայության ՆՇ ԶՈՒ-ում:

2013 թ. ապրիլի 21 ձեռամբ Տ. Գետրգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԱՂԱՆ ԱՐԵՂԱ ԵՐՆՋԱԿՅԱՆ

(ավագանի անունը՝ Լևոն)

Ծնվել է 1987 թ. հունվարի 25-ին Երևանում:

1995 թ. ընդունվել է Երևանի թիվ 62 միջնակարգ դպրոց և ավարտել գերազանց առաջադիմությամբ:

2005 թ. ընդունվել է Գետրգյան հոգևոր ճեմարան:

2009 թ. դեկտեմբերի 26-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Սահակ եպս. Մաշալյանի ձեռնադրվել է սարկավագ:

2011 թ. ավարտելով Գետրգյան հոգևոր ճեմարանը՝ պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Զաքարյան իշխանական ընտանիքի եկեղեցակաշին գործունեությունը» թեմայով:

2011 թ. հուլիսի 12-ին ծառայության է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիվանադարանը նախ որպես Եկեղեցի-պետություն հարաբերությունների գրասենյակի գործավար-քարտուղար, ապա՝ որպես դիվանապետի գործավար:

2012 թ. դեկտեմբերի 25-ից ծառայության է անցել Վեհարանում:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Գերաշնորհ Տ. Գետրգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱՐԵՂԱ ՍԱՆԱԿՅԱՆ

(ավագանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1988 թ. հունվարի 30-ին Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում:

1995 թ. ընդունվել է Մեղրաձորի միջնակարգ դպրոց և ավարտել գերազանց առաջադիմությամբ:

2005 թ. ընդունվել է Գետրգյան հոգևոր ճեմարան:

2010 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Գերաշնորհ Ս. Արտակ եպս. Տիգրանյանի ձեռնադրվել է սարկավագ:

2011 թ. ավարտել է Գեորգյան հոգևոր ճեմարանը:

2012 թ. պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Նայ եկեղեցու և հոգևորականության հալածանքները համայնավարության առաջին տասնամյակներին (1920-1940 թթ.)» թեմայով:

2011 թ. հուլիսի 12-ին ծառայության է նշանակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջնեկեղեցական հարաբերությունների բաժնում՝ որպես գործավար-քարտուղար:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Գերաշնորհ Ս. Գեորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ԳԱՐԵԻՆԷՆ ԲԱՋԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Արման)

Ծնվել է 1981թ. մայիսի 18-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1987-1998 թթ. հաճախել է Ոսկեհատ գյուղի միջնակարգ դպրոց:

1998-2000 թթ. սովորել է Շիրակի թեմի հոգևոր ընծայարանում:

2000-2006 թթ. սովորել է Գեորգյան հոգևոր ճեմարանում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ և ստացել աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

2006 թ. փետրվարի 23-ին Ս. Վարդանանց փոխի օրը՝ ձեռամբ լուսահոգի Ս. Ներսես արք. Պողոսյանի ձեռնադրվել է սարկավագ:

2006 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Նախաբանությունները գեղարվեստական խոսքում» թեմայով և ստացել քաջալավ գնահատական:

2006 թ. Գարեգին Բ. Ամենայն Նայոց Կաթողիկոսի բարձր փնտրվածությամբ ծառայության է անցել «Գարեգին Ա. աստվածաբանական և հայագիտական կենտրոնում»՝ որպես գործավար-քարտուղար:

2007-2012 թթ. Գարեգին Բ. Նայրապետի օրինությամբ ուսումը շարունակել է Աթենքի պետական համալսարանի Աստվածաբանության բաժնում և ստացել աստվածաբանության բակալավրի աստիճան:

2012 թ. մարտի ամսից մինչև հոկտեմբեր ծառայության է անցել Վազգենյան հոգևոր դպրանոցում որպես վերակազմի միաժամանակ դասավանդելով «Սուրբ Գրքի ուսուցում» և «Քրիստոնեական» առարկաները:

2012 թ. հոկտեմբերից ծառայության է անցել Գեորգյան հոգևոր ճեմարանում որպես վերակազմի միաժամանակ դասավանդելով «Նին Կրակարանի ներածություն» և «Սուրբ Գրքի ուսուցում» առարկաները:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Ս. Գեորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՆՐԱԶ ԲԱՋԱՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

(ավագանի անունը՝ Մհեր)

Ծնվել է 1984 թ. նոյեմբերի 4-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում:

Ավարտել է գյուղի Մ. Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցը:

2002 թթ. սովորել է Սեւանի Վազգենյան հոգևոր դպրանոցում, այնուհետև 2006-2008 թթ. ուսումը շարունակել է Գեորգյան հոգևոր ճեմարանում:

2006 թ. ձեռամբ Ս. Արարատ եպս. Գալթագյանի ձեռնադրվել է սարկավագ:

2008 թ. ճեմարանն ավարտելուց հետո նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ճարտարապետաշինարարական բաժնում՝ որպես գործավար-քարտուղար:

2008 թ. դեկտեմբերին գործավար-քարտուղար է նշանակվել Վեհաբանի Ընդհանուր բաժնում:

2010-ի մայիսից մինչև 2012 թ. հուլիս ամիսը ծառայել է ՆՇ ԶՈւ հոգևոր սպասավորությունում:

2012 թ. օգոստոսից մինչև 2013 թ. ապրիլի ծառայել է Ս. Խոր Վիրապ վանքում:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Տ. Գևորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆ ՔԱՆԱՆԱ ՄԵՓԱՆՅԱՆ

(ավագանի անունը՝ Էդգար)

Ծնվել է 1987 թ. Էջմիածին քաղաքում:

1994-1997 թթ. սովորել է Էջմիածնի Վ. Ռշտունու անվան 11 միջնակարգ դպրոցում:

1997-2004 թթ. սովորել է ավարտել է Էջմիածնի Ներսիսյան վարժարանը:

2004-2007 թթ. սովորել է Սեանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

2007-2010 թթ. սովորել է ավարտել է Գևորգյան հոգևոր ճեմարանը:

2008 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Տ. Արարապ եպս. Գալթագճյանի ձեռնադրվել է սարկավագ:

2010 թ. հուլիսի 1-ին նշանակվել է Մայր Աթոռի Ֆինանսական բաժնում՝ որպես հաշվիչ հանձնախմբի անդամ:

2010 թ. հուլիսի 16-ին պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Կարապետ եպս. Տեր-Սկրպչյանի բարենորոգչական փեսակերպերը» թեմայով:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Տ. Գևորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՎԱՆԱՆԴ ՔԱՆԱՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

(ավագանի անունը՝ Արթուր)

Ծնվել է 1984 թ. Արարապի մարզի Ավշար գյուղում:

1990-2001 թթ. սովորել է Ավշարի միջնակարգ դպրոցում:

2001-2005 թթ. սովորել է Սեանի Վազգենյան դպրանոցում:

2005-2006 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

2006-2008 թթ. ծառայել է ՆՇ ԶՈՒ-ում որպես զինվոր:

2009-2011 թթ. շարունակել է ավարտել է ուսումը Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

2010 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Սրեփանոս Նախավկայի փոնին, ձեռամբ Սահակ եպս. Մաշալյանի ձեռնադրվել է սարկավագ:

Ուսումն ավարտելուց հետո նշանակվել է Մայրավանքի փեսայությունում՝ որպես փեսի օգնական:

2012 թ. հունվարից նշանակվել է ՆՇ ԶՈՒ-ում որպես հոգևոր սպասավոր:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Գևորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Տ. ՆԵԹՈՒՄ ՔԱՆԱՆԱ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

(ավագանի անունը՝ Գոռ)

Ծնվել է 1988 թ. Երևանում:

1995-2005 թթ. սովորել է ավարդել է Երևանի 189 միջնակարգ դպրոցը:

2005-2011 թթ. սովորել է Էջմիածնի Գեորգյան հոգևոր ճեմարանում:

2009 թ. դեկտեմբերի 26-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Սահակ եպս. Մաշալյանի:

2011 թ. նշանակվել է ՔԴԿ գործավար-քարտուղար:

2011 թ. Գեորգյան հոգևոր ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ «Նայ- ասորական եկեղեցական առնչությունները VI դ. երկրորդ կեսից մինչև VII դ. սկիզբ» թեմայով:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ ձեռամբ Տ. Գեորգ եպս. Սարոյանի:

Տ. ՂԵՒՈՆԴ ՔԱՆԱՆԱ ՏՅՈՄԿԻՆ

(ավագանի անունը՝ Խաչատուր)

Ծնվել է 1986 թ. ԽՍՀՄ Լենինգրադ քաղաքում:

1993-2001 թթ. սովորել է Մանկր Պերերբուրգի թիվ 200 միջնակարգ դպրոցում:

2001-2004 թթ. սովորել է Մանկր Պերերբուրգի պերական ծովային փրինիկական համալսարանում:

2004 թ. մշրական բնակություն է հասրարել Նայասրանում եւ ուսումը շարունակել Նայասրանի պերական ճարարագիտական համալսարանում:

2007 թ. ավարդել է վերոհիշյալ բուիը եւ ընդունվել Գեորգյան հոգևոր ճեմարան:

2010 թ. դեկտեմբերի 25-ին ձեռամբ Տ. Արրակ եպս. Տիգրանյանի ձեռնադրվել է սարկավագ:

2012 թ. ավարդել է Գեորգյան ճեմարանը եւ նույն փարվա հուլիսի 19-ին նշանակվել է ճեմարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2012 թ. օգոսրոսի 12-ին ամուսնացել է:

2012 թ. օգոսրոսի 23-ին պաշտպանել է մագիսրոսական թեզ՝ «Քրիսրոսսրանական վեճերը Ե.-Զ. դարերում եւ Նայ Եկեղեցին» թեմայով:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Տ. Գեորգ եպս. Սարոյանի ձեռնադրվել է քահանա:

ՏԵՐ ՕՇԻՆ ՔԱՆԱՆԱ ՆԱՅՐԱՊԵՏՅԱՆ

(ավագանի անունը՝ Գերասիմ)

Ծնվել է 1986 թ. սեպրեմբերի 16-ին Արմավիրի մարզի Ոսկեհար գյուղում:

1993-2003 թթ. հաճախել է Ոսկեհար գյուղի միջնակարգ դպրոց:

1994-2001 թթ. սովորել է Էջմիածնի Մակար Եկմալյանի անվան երաժշտական դպրոցում:

2004-2009 թթ. սովորել է Մեանի Վազգենյան հոգևոր դպրանոցում:

2009-2011 թթ. ուսումը շարունակել է Գեորգյան հոգևոր ճեմարանում եւ սրացել ասրվածսրանության մասգիսրոսի ասրիճան:

2010 թ. դեկտեմբերի 26-ին՝ Ս. Սրեփանոս Նախավկայի փոնին, ձեռամբ Տ. Արրակ եպս. Տիգրանյանի ձեռնադրվել է սարկավագ:

2012 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Նակոը պարրիարը Նալյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով եւ սրացել քաշալավ գնահատական:

2011 թ. հունիսից Գարեգին Բ. Ամենայն հայոց հայրապետի փնտրիչությամբ ծառայության է կոչվել Մայր Աթոռում որպես լուսարարի օգնական՝ միեւնոյն ժամանակ Գեորգյան հոգեւոր ճեմարանում դասավանդելով «Եկեղեցական երաժշտություն» առարկան:

2013 թ. ապրիլի 21-ին ձեռամբ Տ. Գեորգ Նալ. Սարոյանի ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ՄԵԿՆԱՐԿԵՅ «ՆՈԳԵԻՈՐ ԱԶԱՅՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՄՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՆԵՐԹԱԿԱՆ ՓՈԽԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ հՀ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի աջակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ԵՆՏ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի եւ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համապեղ կազմակերպեց «Նոգեւոր աջակցություն ընտանիքներին» ծրագրի հերթական՝ երրորդ փուլը:

Ծրագրի շրջանակներում ապրիլի 17-19-ը Ծաղկաձորում կազմակերպվել է համաժողով՝ գեոդերային հիմնախնդիրների, գեոդերային բռնության եւ հայրական պատասխանավորության վերաբերյալ, որին մասնակցեցին հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան թեմերի ներկայացուցիչ քահանա հայրեր եւ ՔԴԿ տարածաշրջանային պատասխանատուներ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ԾՔԱՆԾԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ

Հակոբ Սուրեն Սրեփան Աթիսթալ (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

Հայկ Մովսիսյան (Արմավիրի թեմ)

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ

Թեմական պարզամալորական ժողով (Ավստրալիայի թեմ)

Պարզամալորական ժողով (ԱՄՆ Արեւելյան թեմ)

Հոգեւորականաց համագումար (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

Պարզամալորական ժողով (ԱՄՆ Արեւմտյան թեմ)

Իրաքի թեմի առաջնորդարանի պաշտոնություն (Իրաքի թեմ)

ԼԱՆՋԱԽԱՂ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ Է ՍՏԱՅԵԼ

Արշակ քին. Նազարյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ Է ՍՏԱՅԵԼ

Սեպուի քին. Ամիրյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)



CONTENTS

EDITORIAL.....	3
 PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING	
Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the inauguration of Mr. Serzh Sargsyan, President of the Republic of Armenia	5
HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS, HIS HOLINESS ARAM I, CATHOLICOS OF THE GREAT HOUSE OF CILICIA – We require that Turkey return the occupied Armenian churches and properties that belong to the Church	7
 OFFICIAL	
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the President of the Chamber of Deputies of the Parliament of Romania	9
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Mayor of Bucharest	9
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Ambassador of Brazil to the Republic of Armenia	10
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Minister of Culture and Islamic Guidance of Iran	11
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Apostolic Nuncio	11
Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Managing Director of ECLOF	12
 SERMONS	
Sermon delivered by His Grace Bishop Gevorg Saroyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the occasion of Red Sunday and priests' ordination.....	13
Sermon delivered by His Grace Bishop Artak Tigranyan during the Divine Liturgy celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin on the commemoration day of the Armenian Genocide	16
 RELIGIOUS STUDIES	
FR. ADAM MAKARYAN – Genocide and Divine Revelation	18
 HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES	
AVETIS HAROUTIUNYAN – Armenian massacres in provinces of Van-Vaspourakan (1914-1915)	33
SAMVEL POGHOSYAN – Correspondence between Catholicos Kevork V and Poghos Noubar	45
ASHOT HAYROUNY – Johannes Lepsius and Armenian figures	60
VAROUZHAN POGHOSYAN - Renn Pinon's concept on the Armenian Genocide	87

LOUSINE TOUMANYAN – Monasteries of Lim and Ketouts during the days of the Armenian Genocide	96
ESSAYS	
M. KHACHATRYAN – Toumanyan – Hamastegh: Literary Relations	108
ARPINE AVETISYAN – Recollection of Genocide in the novel of “Hovakim’s Grandchildren” by H. Assatouryan	112
ANI GHAZARYAN – Philosophy of the novel entitled “Master Karo”	117
SPIRITUAL READINGS	
FR. GHEVOND MAYILYAN – New challenges.....	124
LITERARY REVIEW	
YERVAND PETROSYAN – Aloud on the “Book of Whispers”	128
ANI KHOUDAVERDYAN – How “River reddened by blood...”	137
BRIEF CHURCH NEWS	140

СОДЕРЖАНИЕ

От Редакции	3
ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ. БЛАГОСЛОВИТЕЛЬНЫЕ ГРАМОТЫ.	
Слово Его Святейшества Католикоса Всех Армян Гарегина II по поводу принесения присяги Президентом Республики Армения г-ном Сержем Саргсяном.....	5
КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ГАРЕГИН II, КАТОЛИКОС ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИЙСКОГО АРАМ I. – Мы требуем у Турции возвращения захваченных армянских церквей и церковного имущества.	
	7
ОФИЦИАЛЬНОЕ	
Католикос Всех Армян принял председателя Палаты депутатов Парламента Румынии.....	9
Католикос Всех Армян принял мэра Бухареста.....	9
Католикос Всех Армян принял посла Бразилии в Республике Армения.	10
Католикос Всех Армян принял министра культуры и исламской ориентации Ирана	11
Католикос Всех Армян принял папского нунция.	11
Католикос Всех Армян принял генерального директора фонда ЭКЛЮФ	12
ПРОПОВЕДИ	
Проповедь епископа Геворга Сарояна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина в связи с Красным Воскресеньем о Добром Пастыре и рукоположением в иереи.	13
Проповедь епископа Артака Тиграняна, читанная в Кафедральном соборе Св. Эчмиадзина в связи с Днем памяти жертв Геноцида армян.....	16

РЕЛИГИЕВЕДЕНИЕ

ИЕРЕЙ АДАМ МАКАРЯН – Геноцид и Божественное явление. 18

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АВЕТИС АРУТЮНЯН – Резня армян в гаварах Ван-Васпуракана (1914-1915 гг). 33

САМВЕЛ ПОГОСЯН – Переписка Католикоса Георга V и Погося Нубара. 45

АШОТ АЙРУНИ – Иоганн Лепсиус и армянские деятели. 60

ВАРУЖАН ПОГОСЯН – Геноцид Армян в концепции Рене Пинона. 87

ЛУСИНЭ ТУМАНЯН – Обители Лим и Ктуц в дни Геноцида. 96

СООБЩЕНИЯ

М. ХАЧАТРЯН – Туманян – Амастех. Литературные связи. 108

АРПИНЕ АВЕТИСЯН – Воспоминания о Геноциде в романе

А. Асатуряна “Внуки Овакима” 112

АНИ КАЗАРЯН – Философия романа “Уста Каро” 117

ДУХОВНЫЕ ЧТЕНИЯ

ИЕРЕЙ ГЕВОНД МАИЛЯН - Новые вызовы. 124

РЕЦЕНЗИИ. БИБЛИОГРАФИЯ

ЕРВАНД ПЕТРОСЯН – О “Книге шепотов” – в голос. 128

АНИ ХУДАВЕРДЯН – Как “От крови покраснела река...” 137

ЦЕРКОВНАЯ ЖИЗНЬ. НОВОСТИ 140

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՍԻՐԱԳՐԱԿԱՆ 3

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՆՆՈՒԹԵՄՆ ԳԻՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայաստանի

Հանրապետության նախագահ Կիար Մերժ Սարգսյանի երդմնակալության առիթով 5

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ԱՐԱՄ Ա. ՄԵԾԻ ՏԱՆՆ

ԿԻՒԽԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ - Թուրքիայից պահանջում ենք վերադարձնել

բռնազավթված հայկական եկեղեցիներն ու եկեղեցապարկան կալվածքները 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսինիայի Խորհրդարանի պարզամավորների

պալարի նախագահին 9

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուխարեստի քաղաքապետին 9

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՆՆ-ում Բրազիլիայի դեսպանին 10

Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդման նախարարին	11
Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց պապական նվիրակին	11
Ամենայն հայոց Կաթողիկոսն ընդունեց ԷՎԼՕՖ հիմնադրամի գլխավոր փնթորենին.....	12

ՔԱՐՈՋԻՍՍԱԿԱՆ

Տ. Գեորգ եպիսկոպոս Սարգյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Կարմիր կիրակիի եւ քահանայական ձեռնադրության առիթով	13
Տ. Արքայ եպիսկոպոս Տիգրանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ.....	16

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԱՂԱՄ ՔՆՆ. ՄԱԿԱՐՅԱՆ – Յեղասպանություն եւ Աստվածային հայրություն.....	18
--	----

ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ՆԱՐԻՌԻՍՏՈՒՆՅԱՆ – Հայկական կոյուրածները Վան-Վասպուրականի գավառներում (1914-1915 թթ.)	33
ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ – Գեորգ Ե. Կաթողիկոսի եւ Պողոս Նուբարի նամակագրությունը.....	45
ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ – Յոհաննես Լեւիսիուր եւ հայ գործիչները.....	60
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ – Հայոց ցեղասպանության՝ Ռենե Պիլոնի հայեցակարգը.....	87
ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ – Լիմ եւ Կարուց մեղսարանները Մեծ Եղեռնի օրերին.....	96

ՆԱՐԱՐԱՌՈՒՄՆԵՐ

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ – Թումանյան - Համասարեղ. Գրական առնչություններ.....	108
ԱՐՓԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ – Յեղասպանության վերնուշը Ն. Ասատուրյանի «Հովակիմի թոռները» վեպում	112
ԱՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ – «Ուստա Կարո» վեպի փիլիսոփայությունը.....	117

ՆՈԳԵԻՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Տ. ՂԵՐՈՆԴ ՔՆՆ. ՄԱՅԻՆՅԱՆ – Նոր մարտահրավերներ.....	124
---	-----

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐՎԱՆԴ. ՊԵՏՐՈՍՅԱՆ – «Շշուկների մալյանի» մասին՝ բարձրաձայն.....	128
ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ – Թե ինչպես «Արյունից կարմրած գեպը...»	137
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒԻՆԵՐ.....	140



ԴԱՍԻՉ՝ 77764

ԳԼԽԱՒՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՐՇԱԿ ՍԱԴՈՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱՍՅԷՆ՝
ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Զ. ՎԱՂԱՐՇԱԳԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԱՍՍԱԳԻՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Republic of Armenia, Etchmiadzin, Redaction of Review «Etchmiadzin».

Web կայքի հասցեն՝ www.etchmiadzine.am

Էլ. փոստ՝ mayratoriamsagir@gmail.com **կամ** etchmiadzinamsagir@gmail.com

Նոմ. (+374-10) 517-296/174

Ստորագրուած է պաշտօնական՝ 09. 05. 2013 թ.

Չափսը՝ 70X100 1/16: Ծաղկալը՝ 10 րպ. մամուլ: Թուղթը՝ օֆսէթ: Տպարանակը՝ 400:



ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ